

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ԵՐԵՎԱՆ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2018

ՀՏԴ 378.4(091)

ԳՄԴ 74.58

Ե 813

Խմբագրական խորհուրդ

նախագահ՝

ԵՊՀ ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,

պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

անդամներ՝

փիլ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

բան. գիտ. թեկնածու

բան. գիտ. թեկնածու

Արամ Սիմոնյան

Հրաչիկ Միրզոյան

Վլադիմիր Մաղալյան

Կարեն Գրիգորյան

Աշխատասիրության՝

Հեղինե Գասպարյանի

Քարտեզը կազմեց՝

պատմ. գիտ. թեկնածու

Վարդան Մխիթարյանը

Ե813 «Երևանի պետական համալսարանի պատմությունից» - Եր. ԵՊՀ հրատ. - 2018 թ.

Գրքում ներկայացվում են Երևանի պետական համալսարանի պատմության հիշարժան էջեր՝ նրա հիմնադրումից մինչև մեր օրերը: Ժամանակագրական կարգով՝ կարևոր տեղեկություններ են հաղորդվում համալսարանի սկզբնավորման և նրա գործունեության տարբեր փուլերի վերաբերյալ: Ներկայացվում են համալսարանի կարևոր ձեռքբերումները հանրապետության կրթության, գիտության և մշակույթի զարգացման ոլորտներում:

ՀՏԴ 378.4(091)

ԳՄԴ 74.58

ISBN 978-5-8084-2325-1

© ԵՊՀ հրատարակչություն, 2018 թ.

© Հ. Զ. Գասպարյան, 2018 թ.


Նվիրվում է
Երեւանի Կերպարան համալսարանի
հիմնադրման 100-ամյակին




Երևանի Արքույան (նախկին՝ Աստաֆյան) փողոցի թիվ 52 հասցեն ունեցող այս երկհարկանի տուֆաշեն շենքը ուսուցչական սեմինարիայի համար 1902 – 1905 թթ. իր միջոցներով կառուցել է բարեգործ Երվանդ Տեր-Ավետիքյանը՝ Ստեփան Ավետիքյանին պատկանող այգու տեղում։ Նախագծի հեղինակները և կառուցողները եղել են Վ. Միրզոյանը և Ն. Կիտկինը։ 1921 թ. շենքը հատկացվել է Երևանի համալսարանին։ 1933 – 1935 թթ. կառուցվել է շենքի 3-րդ հարկը, իսկ 1939 թ. շահագործման է հանձնվել նրա աջ թևը՝ Երևանի գլխ. ճարտարապետ, համալսարանի դասախոս Նիկողայոս Բունիաթյանի նախագծով։ Այն վերակառուցվել է 1990-ականներին։



ԵՊՀ կենտրոնական մասնաշենքը,
նարտարապետ՝ Էդ. Տիգրանյան



Երաժշտ.՝ Ռոբերտ Ամիրխանյանի
Խոսքերը՝ Հովիկ Հովեյանի



Փառք քեզ, դպրանոց, դու մեր կաճան,
Մեր սեզ դպրության տաճար,
Փառք, քեզ փառք, Չվարթնոց մեծահանճար,
Դեպի յույս կանչող հանճար:

Մաշտոցի երգ երգոց, հանգ ու բառ,
Վարք մեծաց ձայնիվ
Ելիր միշտ վեր, հյուսի՛ր նոր գարուններ,
Գարուններ քո փառքով հոոր:

Դու հար ցնձալու ես
Քո վարար լույսով շողակնյա
Հայոց համալսարան:

Դու ճախարհի մեր արծիվ յոթնաթև,
Որ ճյուղն ես ծառի խաչքն,
Դու հին մագաղաթ մեր մայր տաճարի,
Մեր նորոթյա Տաթև:

Սրտիկ հարատև մեր հին բարբառի,
Սյունն ես մեր Հայոց մեծ տան:

Դարերից եկած դեռ նոր դարեր կանցնեն՝
Մեր Մեսրոպ Մաշտոց, Սահակ Պարթևի յույսերով օծված:



Երևանի պետական համալսարանն իր ստեղծման օրից եղել է համապետական ու համահայկական նշանակության և առաքելության հաստատություն: Որպես Համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր և շրջանավարտ՝ հպարտ եմ, որ անցած 100 տարիների ընթացքում ոչ մի անգամ չի նսեմացել Մայր բուհի դերն ու նշանակությունը, մշտապես անսասան է եղել նրա հայրենանպաստ առաքելությունը:

Հետադարձ հայացք նետելով Համալսարանի անցած 100-ամյա դժվարին, բայց և փառավոր ուղուն՝ տեսնում ենք, որ 1919 թվականից մինչ օրս Մայր բուհի շարժընթացի կորը մշտապես բարձրացել ու բարձրանում է: ԵՊՀ-ի բազմահազար շրջանավարտներ հաջողությամբ ներգրավվել են մեր երկրի պետականաշինության, բանակաշինության, տնտեսության զարգացման ու մշակութակերտման գործընթացներում: Համալսարանում բացված ու զարգացում ապրած բազմաթիվ մասնագիտություններ դրվել են երկրի

տնտեսական շինարարության, արտաքին ու ներքին բազում հիմնախնդիրների լուծմանն ուղղված քաղաքականության մշակման հիմքերում: Մայր բուհը վաստակել է ոչ միայն համապետական, այլև համահայկական մասշտաբի համբավ և հեղինակություն:

Համալսարանն իր ղեկավարության արհեստավարժության, դասախոսների անձնվիրության և ուսանողների աշխատասիրության շնորհիվ ոչ միայն դիմակայել է երկրի սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակին, ստալինյան բռնություններին, Հայրենական Մեծ պատերազմի և հետպատերազմյան տարիների դժվարություններին, այլև իր մեծ նպաստն է բերել կրթության ու գիտության կազմակերպմանն ու զարգացմանը և բազում այլ խնդիրների կարգավորմանը: Անկախ պետականության վերականգնման առաջին տարիների իրողությունները՝ պատերազմը, երկրաշարժի հետևանքները, ֆինանսավորման շեշտակի անկումը ևս լրջորեն վտանգել են բուհերի բնականոն գործունեությունը: Սակայն ցածր աշխատավարձերի, ցրտի ու մթության պայմաններում գործող Համալսարանի կյանքը թույլ անգամ կանգ չի առել:

Համալսարանն այսօր ևս հեշտ ու անխոչընդոտ ուղի չի անցնում: Ֆինանսական միջոցների սղությունը, գործարար դաշտի և բուհի միջև համագործակցության ոչ բավարար վիճակը որոշակի դժվարություններ են հարուցում նրա առաքելությունը լիարժեք իրականացնելու հարցում: Միաժամանակ, առկա ռեսուրսների պայմաններում, Համալսարանն անում է հնարավոր ամեն ինչ՝ բարձրորակ կրթություն, բարձրակարգ հետազոտություն և հանրային ներգրավման պատշաճ մակարդակ ապահովելու համար:

Մայր բուհն այսօր տալիս է հանրապետության գիտահետազոտական արդյունքի 1/3-ը, իրականացնում է նոր և ժամանակակից, աշխատաշուկայի պահանջներից բխող և միջազգային չափանիշներին համապատասխան բազմաթիվ կրթական ծրագրեր, ներդնում դասախոսների կատարելագործման արդի համակարգ, ստեղծում նորարարական, կիրառական հետազոտական կենտրոններ, համագործակցում աշխարհի 50 երկրների շուրջ 200 բուհերի ու գիտական կազմակերպությունների հետ, զարգացնում տեղեկատվության ու փաստաթղթավորման մեխանիզմները, առողջ ապրելակերպի ու ժամանցի լայն հնարավորություններ տրամադրում իր ուսանողներին:

ԵՊՀ ռեկտոր,
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
Արամ Սիմոնյան



Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բացառիկ է Երևանի պետական համալսարանի դերը: Համալսարանը՝ որպես ազգային բարձրագույն կրթօջախ, մեծ ավանդ է ներդրել հայ մտավորականության համախմբման, գիտության զարգացման գործում, նաև անփոխարինելի է նրա դերը հանրապետության հասարակական-քաղաքական կյանքում: Ընդհանուր առմամբ համալսարանի անցած ճանապարհը համապատասխանում և արտացոլում է մեր երկրի պատմության ինչպես հերոսական, այնպես էլ ցավալի դրվագները:

Երևանի պետական համալսարանը իր 100-ամյա պատմության ընթացքում անցել է բազմափուլ զարգացման ճանապարհ՝ էական ներդրում կատարելով Հայաստանի գիտակրթական, մշակութային, քաղաքական և սոցիալ-տնտեսական առաջընթացում:

1990-ական թթ. սկզբին անկախացած Հայաստանը վերստին կանգնեց պետականության կերտման խնդրի առջև: Հանրապետությունում քաղաքական, գաղափարական, տնտեսական և մշակութային նոր իրադրությամբ պայմանավորված նոր պահանջներ ծառացան համալսարանի առջև. ձեռք բերել կրթության նոր որակ՝ պահպանելով լավագույն ավանդույթները: Անհրաժեշտություն դարձան ԵՊՀ-ի գործունեության վերափոխման իրավական հիմքի ստեղծումը և կրթական համակարգի վերափոխումը:

1992 թ. ՀՀ նախագահի հրամանագրով ԵՊՀ-ին առանձնաշնորհվեց կրթական, գիտական և մշակութային ինքնավար հաստատության կարգավիճակ: Այդ ոգով 1996 թ. ստեղծվեց համալսարանի օրենսդրությունը: 1999 թ. ընդունված «կրթության մասին» ՀՀ օրենքն օրենսդրորեն հաստատեց ԵՊՀ-ի կարգավիճակը՝ հռչակելով նաև համալսարանական կրթության ազատականությունը: Զարգացման իրավական ապահովմանը և ինքնավարության ընդլայնմանը զուգընթաց ԵՊՀ-ում սկիզբ առավ վերափոխում, որը ներառում էր նրա գործառության բոլոր ուղղությունները: 1994 թ. մշակվեց համալսարանի զարգացման

առաջին ծրագիրը, որի իրականացմամբ 1995 – 1996 ուստարվանից անցում կատարվեց բազմաստիճան կրթական համակարգի: Վերափոխման առաջին փուլում համալսարանն ունեցավ որոշակի ձեռքբերումներ. ուսումնական գործընթացի համար բնականոն պայմանների ստեղծում, կրթության հումանիտարացում, միջազգային հաղորդակցության ընդլայնում, դասախոսների սոցիալական ապահովում: Ընդլայնվեց ուսանողական համակազմը, աճեց բուհի հեղինակությունը:

Մայր բուհի գիտակրթական ներուժի արժևորումը վստահեցնում է, որ Երևանի պետական համալսարանը կհասնի նորանոր նվաճումների և միջազգային ասպարեզում կունենա իր հաստատուն տեղը:

ՀՀ ԳԱԱ նախագահ,
Ֆիզմաթ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Ռադիկ Մարտիրոսյան

Թերևս անհավատալի թվա, եթե ասեմ, որ Հայաստանը Ասիայի համար ամենանշանավոր ակադեմիան է եղել ... IX–XIII դարերում Հայաստանը մեծապես կարող էր այս աշխարհամասի ուսուցիչը լինել: Նա այդ ամբողջ ժամանակաշրջանի բոլոր գիտությունները հարստացրել է բազմահմուտ մարդկանցով՝ աստվածաբաններով, հռետորներով, քերականներով, փիլիսոփաներով, եկեղեցական մատենագիրներով, պատմիչներով, աստղագետներով, ասորերենին ու արաբերենին, պարսկերենին ու լատիներենին գերազանց տիրապետող թարգմանիչներով:

ԳՈՒԼԻԵԼՄՈՒՍ ՎԻԼՖՐՈՒՍ
Ֆրանսիացի արևելագետ, XVIII դար

ՀԱՅ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱՎՈՐ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ





Հաղպատ



Սամահին

ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱՎՈՐ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ

Քազրևանդի բարձրագույն տիպի դպրոց (630-ականներ)
Հիմնադրել է Ամանիա Շիրակացին:

Հաղպատի դպրոց (X դ.)

Միջնադարյան Հայաստանի ուսումնագիտական և գրչության նշանավոր կենտրոններից էր: Հիմնել է Հաղպատի վանքի հիմնադիր և առաջին վանահայր, նշանավոր գրիչ Սիմեոն վարդապետը:

Նարեկավանքի դպրոց (X դ.)

Եղել է գրչության կենտրոն: Հիմնադրվել է մատենագիր, փիլիսոփա, եկեղեցական գործիչ Ամանիա Նարեկացու ջանքերով:

Սամահինի համալսարան (966 թ.)

Եղել է միջնադարյան Հայաստանի նշանավոր ուսումնադաստիարակչական և գրչության կենտրոն:

Հիմնադրվել է Աշոտ Գ. Ողորմածի կնոջ՝ Խոսրովանույշ թագուհու պատվերով:

Անիի համալսարան (XI դ.)

Ձևավորվել է Հովհաննես Իմաստասերի ջանքերով:

Գլաձորի համալսարան (1284 թ.)

Եղել է միջնադարյան Հայաստանի նշանավոր ուսումնագիտական կաճառ:

Հիմնադրվել է Աղբերց վանքում (Եղեգնաձորի մոտ) Ներսես Մշեցու ջանքերով:

Գործել է մինչև 1340-ական թվականները:

Որպես համալսարան հիշատակվում է 1291 թվականից:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի որոշմամբ 1984 թ. մեծ շուքով նշվել է Գլաձորի համալսարանի 700-ամյակը:



Գլաձոր

Ապրակունյաց դպրոց (1369 թ.)

Հիմնադրվել է Սյունիքի Երնջակ գավառի Ս. Գևորգ վանքում, վարդապետ Մաղաթիա Ղրիմեցու ջանքերով:



Տաթև

Տաթևի համալսարան (1390 թ.)

Եղել է միջնադարյան Հայաստանի խոշորագույն ուսումնագիտական կենտրոն: Հիմնադրել է Հովհաննես Ռրոտնեցին: Որպես համալսարան հիշատակվում է 1390 թվականից: Գործել է մինչև 1435 թվականը:

Ավագ վանքի համալսարան (1460 թ.)

Ձևավորվել է Բարձր Հայքի նահանգի Դարանաղի (այժմ՝ Կամախ՝ Էրզրումի նահանգում) գավառի վանքի դպրոցի հիմքի վրա փիլիսոփա, եկեղեցական գործիչ Հովհաննես Համենցու ջանքերով:



Նարեկավանք



Մխիթարյան միաբանություն



Լազարյան ճեմարան



Լազարյան ճեմարան

Մխիթարյան միաբանություն (1701 թ.)

Հիմնադրվել է Կոստանդնուպոլսում Մխիթար Սեբաստացու կողմից: 1706 թ. միաբանությունը տեղափոխվել է Հունաստանի վենետիկապատկան Մորեա թերակղզու Մեթոն բերդաքաղաք: 1712 թ. Վատիկանը հաստատությունը հռչակել է գիտակրթական կենտրոն և կոչել «Հայկական ակադեմիա»: 1717 թ. միաբանությունը հաստատվել է Վենետիկի Սբ. Ղազար կղզում:

Այստեղ են նախապատրաստվել և տպագրվել հայագիտական բազմաթիվ աշխատություններ. հայ պատմիչների երկերի քննական բնագրեր, գրաբարի քերականությանը նվիրված ուսումնասիրություններ, արժեքավոր բառգրքեր, դասագրքեր, գեղարվեստական գրականություն:

Մեսրոպյան վարժարան (1799 թ.)

Հիմնադրվել է Զմյուռնիայում: Գործել է մինչև 1922 թվականը:

Լազարյան ճեմարան (1815 թ.)

Եղել է հայագիտության և արևելագիտության ուսումնագիտական խոշոր կենտրոն:

Հիմնադրվել է Մոսկվայում, մեծահարուստ ազնվականներ Լազարև (Դազարյան, Եղիազարյան) եղբայրների նախաձեռնությամբ և միջոցներով: Գործել է մինչև 1921 թվականը:

Լազարյան ճեմարանում, բացի հայերից, կրթվել են նաև այլազգի մտավորականներ, այդ թվում՝ Լ. Տոլստոյը, Ի. Տուրգենևը, Ա. Գլինկան, Կ. Ստանիսլավսկին և ուրիշներ:

Ճեմարանը գրքեր է հրատարակել 13 լեզուներով:

Ներսիսյան դպրոց (1824 թ.)

Հիմնադրվել է Թիֆլիսում, Ներսես Աշտարակեցու նախաձեռնությամբ:

Գործել է մինչև 1924 թվականը:

Ներսիսյան դպրոցը եղել է Անդրկովկասի հայկական ամենանշանավոր կրթօջախը: Այնտեղ են կրթվել հայ մշակույթի նշանավոր գործիչներից շատերը՝ Խ. Աբովյան, Պ. Պռոշյան, Դ. Աղայան, Հովհ. Թումանյան, Դ. Դեմիրճյան և ուրիշներ:



Ներսիսյան դպրոց

Սամվել Մուրադյան վարժարան (1832 թ.)

Հիմնադրվել է Իտալիայի Պադուա քաղաքում, Վենետիկի Մխիթարյան միաբանության նախաձեռնությամբ, եվդոկացի մեծահարուստ Սամուել Մուրատյանի կտակով:

1846 թվականին տեղափոխվել է Փարիզ:



Մեսրոպյան վարժարան

Ռափայելյան վարժարան (1836 թ.)

Հիմնադրվել է 1836 թ. Վենետիկում, Մխիթարյան միաբանության նախաձեռնությամբ, Էդուարդ Ռափայելի Դահրամանյանի միջոցներով և կոչվել Ռափայելյան վարժարան: 1870 թ. Սամվել Մուրադյան վարժարանը Փարիզից տեղափոխվել է Վենետիկ, որտեղ միացվել է Ռափայելյան վարժարանին և գույգ կրթակենտրոնների անվամբ կոչվել Մուրատ-Ռափայելյան: Մխիթարյան միաբանները ստանալով ֆրանսիական կառավարության համաձայնությունը 1929 թ. վարժարանը վերաբացել են Փարիզում: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին այն փակվել է և 1946 թ. կրկին վերաբացվել: Բացի հայերից այստեղ ուսանել են հայագետներ Հյուբշմանը, Բրոսսեն, Յորզանը և ուրիշներ:



Ռափայելյան վարժարան



Վարագավանք

Սկյուտարի ճեմարան (1838 թ.)

Հիմնադրվել է Կ. Պոլսի Սկյուտար թաղամասում, Երուսաղեմի հայոց միաբանության աջակցությամբ:
Ընդմիջումներով գործել է մինչև 1859 թվականը:

Այնթափի Ներսիսյան վարժարան (1856 թ.)

Հիմնադրվել է Կիլիկիայի Այնթափ քաղաքում, կոչվել է Ներսես Շնորհալու անունով:

Վարագավանքի ժառանգավորաց դպրոց (1857 թ.)

Հիմնադրվել է Խրիմյան Հայրիկի ջանքերով:
Դպրոցում ուսուցիչ է աշխատել հայ մեծ գրող Բաֆֆին:
Չնայած 1896-ի կոտորածների և Վանի ինքնապաշտպանության օրերին Վարագա վանքը և դպրոցը ավերվեցին ու թալանվեցին, աշակերտներից և ուսուցիչներից շատերը սպանվեցին, այնուամենայնիվ դպրոցը գոյատևեց մինչև 1915 թվականը:

Գևորգյան ճեմարան (1874 թ.)

Հիմնադրվել է Էջմիածնում, Գևորգ Գ Կաթողիկոսի նախաձեռնությամբ:

Փակվել է 1917 թ.: 1945 թ. վերաբացվել է Գևորգ Զ Չորեքյանի ջանքերով:

Տարբեր տարիների ճեմարանում դասախոսել են Կոմիտասը, Բ. Կարա-Մուրզան, Վ. Սուրենյանցը, Մ. Աբեղյանը, Հր. Աճառյանը, Գ. Էդիլյանը և այլք: Դասախոսներից շատերը եղել են ճեմարանի նախկին սաներ: Ճեմարանը հայկական դպրոցների համար մշակել է ուսումնական ծրագրեր, կազմել և հրատարակել է դասագրքեր, արվեստի և գիտության զարգացմանը նպաստող աշխատություններ:

2001-2002 թթ. ՀՀ Կրթության և գիտության նախարարությունը
Գևորգյան հոգևոր ճեմարանին շնորհել է Աստվածաբանական
համալսարանի կարգավիճակ:

Պերպերյան վարժարան (1876 թ.)

Հիմնադրվել է Կ. Պոլսում Ռեթեոս Պերպերյանի ջանքերով:
Առաջին աշխարհամարտի տարիներին (1914 – 1918 թթ.) փակվել է,
պատերազմից հետո՝ վերաբացվել:

1924 թ. տեղափոխվել է Կահիրե, փակվել է 1934-ին:

Վարժարանի շրջանավարտներից են եղել Ռ. Սևակը, Շ. Շահ-
նուրը, Վ. Թեքեյանը և գիտության ու մշակույթի այլ գործիչներ:

Վանի կեդրոնական վարժարան (1881 թ.)


Հիմնադրվել է Վանում, Խրիմյան Հայրիկի, Մ. Փորթուգալյանի
և այլ մտավորականների ջանքերով: Գործել է մինչև 1896 թ. Վանի
ինքնապաշտպանական կռիվները:



Գևորգյան ճեմարան



Գրիգոր Նարեկացի



Գրիգոր Տաթևացի

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՍՏԱՆԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ

Երևանի համալսարանի հիմնադրումը հայ ժողովրդի նորագույն պատմության կարևորագույն իրադարձություններից էր: Այն ըստ էության իրականացրեց մեր ժողովրդի կրթության ու լուսավորության ձգտումներն ու երազանքները: Համալսարանի ստեղծումը խորհրդանշեց հայ ժողովրդի հոգևոր վերածնունդը:

Հայոց գրերի ստեղծումից հետո, հիմք դրվեց հայկական դպրոցի պատմությանը: 405 – 407 թթ. Մ. Մաշտոցի ջանքերով Վաղարշապատում և Ամարասուն ստեղծվեցին առաջին դպրոցները: Հետագայում Հայաստանի տարբեր գավառներում դրանք գնալով ավելանում և մեծ ճանաչում էին ստանում:

V դարում՝ հայ մշակույթի Ոսկեդարում, ծնունդ առավ նաև թարգմանական արվեստը: Հայոց նորաստեղծ տառերով թարգմանված առաջին նախադասությունը (Սողոմոն Իմաստունի առակաց գրքի հանրահայտ միտքը)՝ «Ճանաչել զիմաստությիւն և զիւրատ, իմանալ զբանս հանճարոյ» հետագա դարերի համար դարձավ մարգարեական: Մ. Մաշտոցն ու նրա աշակերտները այնքան կատարյալ թարգմանեցին Աստվածաշունչը՝ Գրքերի գիրքը, որ դարեր անց ֆրանսիացի գիտնական Լա Կրոզը այն համարեց «Թագուհի թարգմանութեանց»: Հետագայում հայերեն թարգմանվեցին գրա-

կան և մշակութային արժեքավոր գանձեր. հնագույն փիլիսոփաների՝ Պլատոնի, Արիստոտելի և այլոց աշխատությունները: Պատահական չէ, որ Մ. Աբեղյանն իրավացիորեն գիրք համարում էր մշակութային պայքարի ու մաքառման զենք: Գիրն այդպիսի զենք էր դեռևս V դարասկզբին:

IX դարի վերջին տասնամյակներում, երբ Բագրատունիները վերականգնեցին հայկական պետականությունը, իսկ XII դարում Կիլիկիայում հաստատվեց հայկական թագավորություն, հայ մշակույթը մինչև XV դարասկիզբ հզոր վերելք ապրեց: Ուսումնակրթական գործն այնպիսի ծավալ ստացավ, որ մի շարք վայրերում հիմնվեցին գիտակրթական կարևոր կենտրոններ՝ «վարդապետարաններ»: Հայ մշակույթի ու դպրության նշանավոր կրթօջախներ բացվեցին Հաղպատում, Սանահինում, Անիում, Գետիկում, Կարսում, Կեչառիսում, Գլաճորում, Տաթևում, Կիլիկյան Հայաստանում՝ Սիսում, Տարսնում, Սկևռայում, Լամբրոնում և այլուր: Բարձրագույն այդ դպրոցներում դասավանդում էին միջնադարյան Հայաստանի գիտության, գրականության, արվեստի ու աստվածաբանության նշանավոր ներկայացուցիչներ: Աստվածաբանական առարկաներից գատ դասավանդվում էին քերականություն, ճարտասանություն, տրամաբանություն, պատմություն, մատենագիտություն, իմաստասիրություն, դիցաբանություն, մաթեմատիկա, երկրաչափություն, տոմարագիտություն, աշխարհագրություն, բնագիտություն, աստղաբաշխություն, տիեզերագիտություն, բժշկություն, երաժշտություն, գրչության արվեստ և, իհարկե, օտար լեզուներ: Դպրոցներից շատերն ունեցել են ձեռագրատուն-մատենադա-

րան և գրչատուն, որտեղ ընդօրինակվել են մեծ թվով ձեռագիր գրքեր: Գլաձորի, Տաթևի համալսարանների, Մեծոփա վանքի բարձր տիպի դպրոցի շրջանավարտները հանդես էին գալիս գրավոր ատենախոսություններով, ստանում գիտական կոչումներ:

Թաթար-մոնղոլական և ապա թուրք-պարսկական ավերիչ արշավանքների ու դաժան լծի հետևանքով Հայաստանում գիտամշակութային կյանքն անկում ապրեց և կանգնեց վերացման վտանգի առջև: Սակայն պատմական ճակատագրի հարվածները ի զորու չեղան կասեցնելու կրթության ու գիտության հետագա զարգացումը երկրում: Ավելին՝ 1512 թ. հայ առաջին տպագրիչ Հակոբ Մեղապարտը Վենետիկում հիմնադրեց առաջին հայկական տպարանը, որը 1512 – 1513 թթ. տպագրեց հինգ գիրք՝ պահպանելով ձեռագրի տեսքն ու ոճը: XVI – XVII դարերում հայերեն գրքեր տպագրվեցին նաև Հռոմում, Փարիզում, Լվովում, Նոր Զուղայում, Ամստերդամում, Մարսելում, Չմյուռնիայում, Լայպցիգում, հետագայում՝ Հնդկաստանում, Անգլիայում, Սանկտ-Պետերբուրգում, Աստրախանում, Մոսկվայում, Վիեննայում և այլուր: Սա քաղաքակրթության մեջ բացառիկ երևույթ էր, որ պետականության բացակայության պայմաններում ծաղկում էր հայ գրատպությունը: Հայաստանում առաջին հայկական տպագրատունը հիմնադրվեց 1771 թ. Վաղարշապատում՝ Ամենայն Հայոց կաթողիկոս Սեմեոն Ա Երևանցու անմիջական ղեկավարությամբ:

XIX դարում Արևելյան և Արևմտյան Հայաստանում, ինչպես և հայաբնակ վայրերում ստեղծվեցին բազմաթիվ կրթական կենտրոններ, որոնցից առավել նշանավոր էին Մոսկվայի Լազարյան (1815),

Կալկաթայի Հայոց մարդասիրական (1821), Էջմիածնի Գևորգյան (1874) ճեմարանները, Արմաշի դպրեվանքը (1889), Չմյուռնիայի Մեսրոպյան (1799), Կահիրեի Գալուստյան ազգային (1828), Փարիզի Սամվել-Մուրադյան (1832), Վենետիկի Ռափայելյան (1836), Մուրատ-Ռափայելյան (1870), Կոստանդնուպոլսի Կեղրոնական (1886), Մուշի Ազգային կեղրոնական (1878), Վանի Կեղրոնական (1881) վարժարանները, Աստրախանի Աղաբաբյան (1810), Թիֆլիսի Ներսիսյան (1824), Երևանի Սբ. Հռիփսիմեի օրիորդաց (1850), Թիֆլիսի Գայանյան օրիորդաց (1869) դպրոցները և այլն: Դարերի ընթացքում հայ ժողովուրդը ստեղծեց կրթական հարուստ ժառանգություն:

Հայաստանում տիրող անբարենպաստ պայմանների հետևանքով հայը ուսման ծարավը հագեցնում էր տարբեր երկրների կրթական հաստատություններում և աշխարհի մի շարք քաղաքներում (Վենետիկ, Վիեննա, Թիֆլիս, Մոսկվա, Կ. Պոլիս և այլն) իր իսկ հիմնադրած կրթօջախներում: Օտար երկրներում մեծ դժվարությամբ կրթություն ստացած հայ մտավորականները երազում էին Հայաստանում սեփական համալսարան ունենալու մասին, որը կարող էր ոչ միայն օգնել հայ երիտասարդներին հաղթահարելու բարձրագույն կրթություն ստանալու ճանապարհի խոչընդոտները, այլև մեծապես նպաստել երկրի սոցիալ-տնտեսական ու գիտամշակութային կյանքի զարգացմանը:

Հայրենիքում գիտակրթական գործի կազմակերպման համար կարևոր նախադրյալներ էին դեռևս V դարից ձևավորված փորձն ու ավանդույթները:

ՕՐԻՆԱԳԻԾ
ԵՐԵՎԱՆՈՒՄ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ա. Քաղ. Երևանում հիմնել համալսարան՝ կազմված չորս ֆակուլտետից՝ պատմաբանասիրական, իրավատնտեսագիտական, բժշկական և ֆիզմաթ՝ տեխնիկական բաժանմունքներով:

Բ. 1919-20 ուս. տարում Համալսարանի ստեղծման և ապահովման համար Հանրային կրթության նախարարի տնօրինության ներքո բացել վարկային գիծ 5.000.000 չափով, մասնավորապես՝

ուսումնական մասին՝ 1.000.000

չինարարական աշխատանքներին՝ 4.000.000

Գ. Համալսարանի բացման ժամկետը՝ սեպտեմբեր 1919 թ.:

Դ. Հանրային կրթության նախարարին ընձեռել Համալսարանի արտակարգ կազմակերպչի և առաջին ռեկտորի նշանակման իրավունք:

Ե. Հանրային կրթության նախարարին ընձեռել Համալսարանի պրոֆեսորների ընտրության համար նախատեսված հատուկ հանձնաժողով կազմելու իրավունք՝ մինչև Խորհրդի և ֆակուլտետների կազմավորումը, որոնց ստեղծումից հետո պրոֆեսորների ընտրության իրավունքը փոխանցվում է Համալսարանի խորհրդին:

Զ. Համալսարանի բացման ժամանակն ու քայլերի հերթականությունը որոշվում է նախարարների Խորհրդի կողմից՝ Հանրային կրթության նախարարի ներկայացմամբ:

Հանրային կրթության նախարար՝
Գ. ՄԵԼԻՔ-ՂԱՐԱԳՅՈՋՅԱՆ

Մայր հայրենիքում հայկական համալսարան հիմնելու գաղափարը օրակարգային դարձավ հատկապես XIX դարի 40 – 50-ական թվականներից: Խաչատուր Աբովյանը, Միքայել Նալբանդյանը և ուրիշներ չափազանց կարևորում էին հայ երիտասարդին իր հայրենիքում ու մայրենի լեզվով ուսուցանելու միտքը: Այդ գաղափարը կենսագործելու ուղղությամբ լուրջ քայլեր կատարեց Հովհաննես Թումանյանը:

1918 թ., երբ Հայաստանն անկախություն ձեռք բերեց և վերականգնեց դարեր առաջ կորցրած պետականությունը, հոգևոր կյանքի զարգացումը կրկին դարձավ պետության հոգածության առարկա և առաջին Հանրապետության կառավարությունը օրինագիծ ներկայացրեց Երևանում համալսարան հիմնելու մասին:

Ինչպես վկայում են վավերագրերը, իր գոյության մեկ տարին չբոլորած նորանկախ Հայաստանի Հանրապետությունը 1919 թ. մայիսի 16-ին ընդունեց համալսարանի հիմնադրման մասին օրենքը:



Գևորգ Մելիք-Արագյոզյան
Հանրային կրթության նախարար

«Հայաստանի համար բացվող լուսավոր ապագան նրա բոլոր մտավոր ուժերի լարումն է մեզնից պահանջում: Ողջ մտավորականությունը պետք է միտվի հայրենիքի համար աշխատելուն»:

ՕՐԵՆՔ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ԲԱՆԱԼՈՒ ԵՎ
ՆՐԱ ՆԱԽՆԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՀԱՄԱՐ
300000 Ռ. ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հիմնել երևանում համալսարան հետևյալ չորս բաժին-ներով՝

- ա) պատմա-լեզվաբանական,
- բ) տնտեսա-իրավաբանական,
- գ) բժշկական
- դ) ֆիզիկա-մաթեմատիկական՝ տեխնիկական
ստորաբաժանումով:

2. Համալսարանը բանալ 1919-20 ճեմարանական տարում:

3. Առաջին հերթին բանալ պատմա-լեզվաբանական բաժինը:


4. Մնացած բաժինները բանալու ժամանակը և հերթը սահմանում է Մինիստրների խորհուրդը ըստ Հանրային կրթության մինիստրի առաջարկության:

5. Համալսարանը բանալու նախնական ծախսերը հոգալու համար հատկացնել երեք հարյուր հազար ռուբլի (300000 ռ.), հանձնարարելով ֆինանսների մինիստրությանը բանալ համապատասխան վարկ հանրային կրթության մինիստրությանը:

Մինիստրների խորհրդի գործերի կառավարիչ՝
Գ. Խատիսյան:

Սույն օրենքը հաստատված է Մինիստրների խորհրդի 1919 թ. մայիսի 16-ի նիստում ըստ Հայաստանի խորհրդի 1919 թ. ապրիլի 27-ի ընդունած օրենքի:

Մինիստրների խորհրդի գործերի կառավարիչ՝
Գ. Խատիսյան



Հովհաննես Թումանյան
Ամենայն հայոց բանաստեղծ

«Պետք է ստեղծել Հայոց Համալսարան, ուր կարելի կլինի բարձրագույն գիտությունները ավանդել ու սովորեցնել հայերեն լեզվով: Մեր տարրական ու միջնակարգ դպրոցների մեջտեղը պետք է կառուցանել ու պահել մի գիտության տաճար, մեր մանր ու մեծ ճրագների մեջտեղը պետք է վառել մի մեծ ջահ՝ Հայկական Համալսարանը...»

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՕՐԵՆՔ
ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

1. 1919 թ. աշնանից բաց անել Երևանի Համալսարանի պատմա-լեզվաբանական և իրավաբանական ֆակուլտետները:

2. Հաստատել պրոֆեսոր Ղամբարյանին Համալսարանի տեսուչ:

3. Ռոճիկների Համար ընդունել Հետևյալ չափը.

պրոֆեսորներին՝ մինիստրական, դոցենտներին՝ մինիստրների օգնականի և պրիվատ դոցենտներին՝ բաժանմունքների կառավարչի ռոճիկ:

Ծանոթություն - Արտասահմանի Համալսարաններից Հայտնի գիտնականներ Հրավիրելու դեպքում կարելի է վճարել ավելի բարձր ռոճիկ, ամեն անգամ ստանալով Մինիստրների խորհրդից հավելյալ վարկ:

4. Հանձնարարել Համալսարանի տեսչին և Հանրային կրթության մինիստրին մշակել ուսանողների կողմից Համալսարանին վճարելիք ուսման վարձի քանակը և ձևը:

5. Շտառները և նախահաշիվը հաստատել և բանալ Հանրային կրթության և արվեստի մինիստրությանը երկու միլիոն երկու հարյուր հիսունինը հազար երկու հարյուր /2259200/ ռուբլու վարկ առաջիկա 1919-20 ճեմարանական տարվա համար:

6. Համալսարանի կառավարության ժամանակավոր կանոնների և մշտական կանոնադրության մշակումը հանձնարարել Համալսարանի տեսչին:

7. Հաստատել Երևանի Համալսարանի ժամանակավոր կանոնները:

Մինիստրների խորհրդի գործերի կառավարիչ՝ Գ. Խոջամիրյան:

Սույն օրենքը հաստատված է Մինիստրների խորհրդի 1919 թ. հուլիսի 17-ի նիստում, համաձայն Հայաստանի խորհրդի 1919 թ. հունիսի 5-ին ընդունած օրենքի:

Մինիստրների խորհրդի

գործերի կառավարիչ՝

Գ. Խոջամիրյան

Համալսարան հիմնելու նպատակով ստեղծվեց կազմակերպիչ հանձնաժողով Յուրի Ղամբարյանի և Դավիթ Չավրիյանի համա-նախագահությամբ: Հաշվի առնելով Երևանում համալսարանի հա-մար անհրաժեշտ պայմանների (հատկապես շենքային) բացակա-յությունը՝ հանրապետության Նախարարների խորհուրդը որոշեց համալսարանը ժամանակավորապես բացել Ալեքսանդրապոլում (այժմ՝ Գյումրի): Հաղթահարելով բազում խնդիրներ՝ 1920 թ. հուն-վարի 31-ին, Ալեքսանդրապոլի առևտրային դպրոցի շենքում մեծ շուքով տեղի ունեցավ Հայաստանի համալսարանի բացման հանդի-սավոր արարողությունը, որը վերածվեց ազգային տոնի:

Բացման արարողությանը ներկա էին Հայաստանի Հանրա-պետության խորհրդարանի նախագահ Ա. Սահակյանը, նախարա-րապետ (վարչապետ) Ալեքսանդր Խատիսյանը, բարձրաստիճան այլ պաշտոնյաներ, օտարերկրյա դիվանագետներ: Բացման խոս-քով հանդես եկավ համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Յուրի Ղամ-բարյանը, ապա՝ հանրային կրթության նախարար Նիկոլ Աղբալյանը:

Համալսարանի բացման օրը լույս է տեսել «Հայաստանի հա-մալսարան» մեկօրյա թերթը, որի բնաբանն էր «Գիտութիւնն ոյժ է»: Թերթի վաճառքից ստացված հասույթը հատկացվել է չքավոր ուսա-նողների օգնության ֆոնդին:

Թերթի առաջնորդողը գրել է պրոֆ. Յու. Ղամբարյանը՝ «Դեմո-կրատիկ համալսարանը» խորագրով, որտեղ մասնավորապես աս-ված է. «Կեցցե՛ ուրեմն մեր համալսարանը, ո՛չ միապետական, ո՛չ եկեղեցական, ո՛չ արիստոկրատական, այլ՝ ազատ, աշխարհիկ և դեմոկրատիկ համալսարանը, որ կոչված է մշակելու հավասարապես



Աղբալյան Նիկոլ Պողոսի

Հանրային կրթության և արվեստի
նախարար,
գրականագետ, մանկավարժ,
հրապարակախոս, հասարակական-
քաղաքական գործիչ, համալսարանի
կազմակերպիչներից և առաջին
դասախոսներից

«Չնայած որ մեր երկիրն ավերված է,
մեր ժողովուրդը աղքատության մեջ, մենք
հիմնում ենք բարձր կրթարան: Այն, ինչ մենք ունենք այսօր, ձեռք է
բերված սերունդների արյունով... Մենք վերաշինում ենք մեր տունը
և հիմնում կրթության տաճարներ, առանց խորհելու, թե ի՞նչ են
մտածում մեր մասին մեր թշնամիները, որոնք միշտ քանդել են մեր
շինածը: Մեր մեջ հավատ կա, որ այս անգամ հայոց ազգի նավը դուրս
կգա փոթորկից անփորձանք: Մեր թշնամիները չեն հաջողելու, և այն
ջահը, որ մենք վառում ենք Հայաստանի բարձրավանդակի վրա, չի
հանգչի և կլուսավորե Առաջավոր Ասիան: Անցնում է մղձավանջը
և պայծառանում է Հայաստանի երկինքը: Դեռ մեզ համար բոլոր
վտանգներն անցած չեն, դեռ մեկ ձեռքում սուր պիտի ունենանք,
բայց արդեն ժամանակն է, որ մյուս ձեռքում գրիչ բռնենք»:



Հայտարարություն
համալսարանի ընդունելության մասին, 1920 թ.



Կառավարական շենքը



Հայաստանի առաջին հանրապետության
վարչապետ Ալեքսանդր Խատիսյան



գիտությունը և առաքինությունը, առանց որոնց դեմոկրատիան կամ խաբեություն կլիներ, կամ դատարկ հնչյուն»:

Թերթում տպագրվել են մասն ապատմալեզվաբանական ֆակուլտետի դեկան Մեսրոպ արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյանի «Ողջույն Հայաստանի համալսարանին», Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանի՝ «Երա՞զ, թե՞ իրականություն», Երվանդ Տեր-Մինասյանի «Հայաստանի համալսարանը», Ստեփան Մալխասյանցի «Համալսարանը և լեզուն», Սուրեն Երզնկյանի «Գիտության կաճառը» հոդվածները, Հայաստանի համալսարանի պատմալեզվաբանական ֆակուլտետի առաջին կիսամյակի դասացուցակը և այլ նյութեր:

Թերթն ավարտվում է Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ V-ի համալսարանի ռեկտորին, դասախոսներին և ուսանողությանն ուղղված հայրապետական ջերմ ուղերձով:


Համալսարանում դասերն սկսվել են 1920 թ. փետրվարի 1-ին: Առաջին հանդիսավոր դասախոսությունը կարդալու պատիվն է ունեցել անվանի գիտնական, հայագետ Ստեփան Մալխասյանցը: Դասախոսությանը ներկա էին համալսարանի ռեկտոր, պրոֆ. Յուրի Ղամբարյանը, ՀՀ հանրային կրթության նախարար Նիկոլ Աղբալյանը, դասախոսներ և մտավորականներ:


Սկզբնական շրջանում ամենալուրջ դժվարությունը համապատասխան մասնագիտական որակավորում և տեսական բարձր պատրաստվածություն ունեցող դասախոսական կազմի ապահովումն էր: Կարևորելով համալսարանի գործունեությունը կայուն հիմքերի վրա սկսելու գործը՝ կազմակերպիչները ստեղծեցին հզոր ներուժով դասախոսական կոլեկտիվ: Նորաստեղծ համալսարանում

դասախոսներ նշանակվեցին Մանուկ Աբեղյանը (հայ գրականություն), Ստեփան Մալխասյանը (պատմական լեզվաբանություն), Մեսրոպ արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյանը (հայոց պատմություն), Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը (հայ եկեղեցու պատմություն և գրչության արվեստ), Սիրական Տիգրանյանը (հայ իրավունքի պատմություն և հոգեբանություն), Հակոբ Մանանդյանը (հայոց պատմություն), Գրիգոր Ղափանցյանը (համեմատական լեզվաբանություն), Սավիչ-Չաբլոցկին՝ Խարկովից (երկրաբանություն), Աշխարհբեկ Լոռու Մելիք-Քալանթարը (հնագիտություն), որոնք գործի անցան անձնուրաց նվիրումով: Համալսարանն ուներ մեկ՝ պատմա-լեզվաբանական ֆակուլտետ (262 ուսանող, 32 դասախոս): Անհրաժեշտ էր համալրել դասախոսական կազմը: Յու. Ղամբարյանի ջանքերով Երևանի համալսարան հրավիրվեցին Ռուսաստանում և Եվրոպայում կրթություն ստացած մանկավարժական ու գիտական մեծ փորձառությամբ անվանի մասնագետներ, որոնք կարող էին պատիվ բերել աշխարհի ցանկացած առաջնակարգ համալսարանի: Նրանց զգալի մասը, երկար տարիներ աշխատելով համալսարանում, անմնացորդ նվիրվեց երիտասարդ մասնագետների աճեցման ու գիտության զարգացման կարևորագույն գործին:

Դասերը համալսարանում տեղեցին մեկ կիսամյակ՝ փետրվարից մինչև մայիս ամիսը:

ՀՀ նախարարների խորհրդի 1920 թ. հունիսի 21-ի նիստում որոշվեց համալսարանը Ալեքսանդրապոլից տեղափոխել Երևան և նրան հատկացնել ուսուցչական սեմինարիայի շենքը: Պետք է բացվեին նաև իրավաբանական ու բնագիտական ֆակուլտետներ, պա-





ԵՊՀ առաջին կանոնադրությանը, 1919 թ.

րապմունքները վերսկսվեին հոկտեմբերի 16-ին: Սակայն 1920 թ. սեպտեմբերին սկսված թուրք-հայկական պատերազմի, երկրում ստեղծված քաղաքական լարված իրավիճակի պատճառով հնարավոր չեղավ այդ որոշումն իրագործել:



Ալեքսանդրապոլի առևտրային դպրոցի շենքը

ԴԱՍԱՏՈՒՑԱԿ. ՊԱՏՄԱ-ԼԵԶԻԱԲԱՆԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՅԻ

Առաջին սեմեստր. փետրվար—մայիս 1920

ԴԱՍԱԽՈՍ.	ԱՌ-ՍՐԿԱՅ.	ՇԶՔ. ԺԱՄ.
Պրոֆ. Մեսրոպ եպ.	Հայոց գրականութիւն (հին շրջան)	2
Պրոֆ. Ե. Տէր-Մինասեան	Դասընթաց հայոց պատմութեան (հին շրջան)	2
Դոցէնտ Ստ. Մալխասեան	Հայերէն (չրտարար)	2+2 ¹⁾
Դոցէնտ Դարեգին եպ.	Գրչութեան արվեստ	2
Դոց. պաշտ. Ռ. Արքահամեան	Համեմատական լեզւաբանութիւն	2
	Յունարէն	2
Դ. պաշտ. Ս. Տիգրանեան	Հոգեբանութիւն	2
Պրիվ. դ. Աշխ. Քալանթար	Արեւելի պատմութիւն	2
Դասախօսուհի Ն. Սիմոնեան	Ընդհանուր պատմութիւն (նոր դար)	2
Դաս. Է. Ուսպենսկայա	Ֆրանսերէն	2+2 ¹⁾

Դասախօսութիւններն սկսւում են երեկոյեան 5 ժամից.

¹⁾ Արհու ժամ անդադուրաստներէ համար և երկու ժամ պատրաստներէ.

Թիֆլիսի պոլիտեխնիկական ինստիտուտը ողջունում է Հայաստանի համալսարանի, տեսական գիտութիւնների աշխարհին անկարանի բացումը. Դասախօսների կազմը շեղանկութիւն է յայտնում, որ նա լիակատար համալսարան դառնայ և յաջողակ նեմարանական զործունէութիւն ունենայ.

Թեկտարի փոխանորդ պրոֆ. Դիգերուլիձէ.

Կովկասեան պատմա-մատենական ինստիտուտի գիտնական անդամների մոգովր ողջունում է Հայաստանի համալսարանի բացումը. հաստատում է որ գրանով հարաւորութիւն է բացում միաւամու գիտականութիւն աշխատելու երկրի հետազոտման ապարդիւմ.

Կովկասեան բժշկական ընկերութիւնը շեղանկէն ողջունում է Հայաստ. համալսարանի բացումը. Արշանիկ ենը, որ Ս. Տասնունաթի օրը գիտութիւնը հարստանում է լուսաւորութեան և կուլտուրայի էյի մի նոր անկարանով. Թող գիտութեան վառուած ջահը ոչ միայն գիտելիքների տնկարին լինի, այլ և հշմարիտ և անսուտ արտայայտիչ իւր մոգովրդի բարձր կուլտուրական իգէայների Թող սպիտակագիտա Արարատ լեռան անբար լոյսի անուպայթները նորից փայլեն հայրենի երկրի և համալսարանը մշտապէս ծաղկած մնայ.

Նախագահ՝ Ստրեսորանեկի Բարսուղար՝ Դաս. Թեան



ԵՊՀ առաջին կնիքը, 1920 թ.

ԵՊՀ առաջին դասացուցակը, 1920 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ՝
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
Հմ.24 17 դեկտեմբերի 1920 թ.
ք. Երևան

1. Երևանի համալսարանը վերակազմվում է և վերակոչվում Երևանի ժողովրդական համալսարան:
2. Նախկին համալսարանի ֆակուլտետները փակվում են և հիմնվում է երկու բաժանմունք՝ բնագիտական և հասարակագիտական:
3. Նախկին համալսարանի բոլոր պրոֆեսորները, դոցենտները, պրիվատ-դոցենտները, դասատուները և ասիստենտները համարվում են արձակված:
4. Նախկին համալսարանի դույլի պահպանության ամբողջ պատասխանատվությունն ընկնում է հին վարչության վրա:
5. Լուսավորության ժողովրդական կոմիսարիատին կից կազմակերպվում է համալսարանի վերակազմության հանձնաժողով, որի վրա պարտականություն է դրվում սույն հրամանը հրատարակելու օրից մի շաբաթվա ընթացքում ներկայացնել կոմիսարիատիս հաստատության նոր համալսարանի կազմակերպության հիմունքները, ծրագիրը, դասախոսները կազմը ու շտապները:
6. Հանձնաժողովի նախագահ է նշանակվում ընկ. Կողբետլյանցը, անդամներ՝ ընկ. Զուբարյանը, Պիճիկյանը և ուսանողության երկու ներկայացուցիչներ:

Լուսժողովոմ՝ Ա. Հովհաննիսյան

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ

1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանում հաստատվեցին խորհրդային կարգեր: Անհրաժեշտ էր անմիջապես ձեռնամուխ լինել քայքայված երկրի տնտեսության ու մշակույթի զարգացմանը, որի համար խիստ անհրաժեշտ էին բարձրորակ մասնագետներ: Չնայած հանրապետության չափազանց ծանր պայմաններին, առաջնահերթ խնդիրներից էր համալսարանի վերականգնումը: Եվ ՀՍԽՀ առաջին լուսժողովոմ Աշոտ Հովհաննիսյանը 1920 թ. դեկտեմբերի 17-ին ստորագրեց իր թիվ 1 առաջին հրամանը՝ «Երևանի համալսարանը վերակազմելու մասին»: Որոշվեց Երևանի Աբովյան փողոցում գտնվող ուսուցչական սեմինարիայի սև տուֆաշեն երկհարկանի շենքի առաջին հարկը հատկացնել վերաբացվող համալսարանին: Ստեղծվեց 3 հոգուց բաղկացած հանձնաժողով (նախագահ՝ Գրիգոր Չուբարյան) վերակազմելիք համալսարանի կանոնադրությունը մշակելու համար:

1920 թ. դեկտեմբերի 28-ին լուսժողովոմատում հաստատվեցին համալսարանի հաստիքները (57 հաստիք): Սակայն համապատասխան կադրեր չունենալու պատճառով նշանակվեցին 23-ը. հասարակագիտության ֆակուլտետում՝ Մանուկ Աբեղյան, Նիկոլ Աղբալյան, Արսեն Տերտերյան, Գրիգոր Ղափանցյան, Ռուբեն

Աբրահամյան, Լևոն Լիսիցյան, Հակոբ Մանանդյան, Գրիգոր Մելիք-Ալավերդյան, Գուրգեն Պիճիկյան, Սիրական Տիգրանյան, Գուրգեն Էդիկյան, Թորոս Թորամանյան, Գրիգոր Չուբարյան, Արշամ Խոնդկարյան, բնագիտական ֆակուլտետում՝ Ալեքսանդր Հակոբյան, Տ. Նալբանդյան, Արամ Վարդապետյան, Ավետիք Տեր-Պողոսյան, Դավիթ Զավրիյան, Գուրգեն Գուրգենյան, Ստեփան Ղամբարյան, Կոնստանտին Սավիչ-Զաբլոցկի և Երվանդ Կողբետլյանց:

Շուրջ մեկամսյա նախապատրաստական աշխատանքներից հետո համալսարանի հանդիսավոր վերաբացման արարողությունը տեղի ունեցավ 1921 թ. հունվարի 23-ին, կիրակի օրը, Ստեփան Շահումյանի անվան բանվորական ակումբի դահլիճում, որի տեղում այսօր Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնի շենքն է: Առաջին դասախոսությունը՝ «Խորհրդային իրավունքը և Հայաստանի ժողովրդական համալսարանը» թեմայով, կարդալու պատիվն ունեցավ անվանի իրավաբան Գրիգոր Չուբարյանը: Հունվարի 24-ին վերսկսվեցին 1920 թ. մայիսին ընդհատված պարապմունքները: Վերաբացված համալսարանը կոչվեց Երևանի ժողովրդական համալսարան և նախկին մեկ ֆակուլտետի փոխարեն բացվեց երկու՝ բնագիտական ու հասարակագիտական ֆակուլտետ: Համալսարանի ռեկտոր ընտրվեց ականավոր պատմաբան Հակոբ Մանանդյանը:

Սակայն 1921 թ. փետրվարի կեսերին սկսված քաղաքացիական կռիվների հետևանքով Երևանի ժողովրդական համալսարանը դադարեց գործելուց: Ապրիլին քաղաքացիական կռիվներն ավարտվեցին, բայց համալսարանի պարապմունքները հնարավոր եղավ

վերսկսել միայն նույն թվականի հոկտեմբերի 10-ին:

1921 թ. համալսարանն ուներ 5 ֆակուլտետ. մանկավարժական, խորհրդային շինարարության, արևելագիտական, գյուղատնտեսական և տեխնիկական:

Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը համալրելու նպատակով 1921 – 1923 և 1924 – 1928 թթ. հրավիրվեցին եվրոպական և այլ համալսարաններ ավարտած բանիմաց ու փորձառու մասնագետներ, որոնք տարբեր քաղաքներից անմիջապես ժամանեցին Հայաստան, քանի որ Երևանի համալսարանի վերաբացումը բացառիկ իրադարձություն էր հայ ժողովրդի համար: Այնքան մեծ էր նրանց ոգևորությունն ու մղումը համալսարանում աշխատելու և իրենց գիտելիքները ուսանողներին փոխանցելու, որ եղան նվիրյալներ, ովքեր ժամանակ չկորցնելով, Երևան ժամանեցին նույնիսկ ապրանքատար գնացքով:



Ապրանքատար գնացքը

1919 – 1920 թթ. համալսարան հրավիրված դասախոսներ



Համբարյան Յուրի




Աղբալյան Նիկոլ



Արեղյան Մանուկ




Հովսեփյան Գարեգին



Տեք - Մովսիսյան
Մեսրոպ




Մանանդյան Հակոբ



Մալխասյանց Ստեփան



Զաքրիյան Դավիթ



Տեք-Մինասյան Երվանդ



Տիգրանյան Սիրական



Բալանթար Աշխարիբեկ



Հակոբյան Ալեքսանդր



Համբարյան Ստեփան




Ղափանցյան Գրիգոր



Չուբարյան Գրիգոր




Տերտերյան Արսեն



Տեր-Պողոսյան Ավետիք



Էդիլյան Գուրգեն



Լիսիցյան Լևոն

1921 – 1923 թթ. համալսարան հրավիրված դասախոսներ



Հովհաննիսյան Աշոտ




Ասատուր Գևորգ



Ավդալբեգյան Թադևոս



Ագառյան Հայկ



Անժուր (Զեքոտարյան)
Հարություն



Ավետիսյան Տիգրան



Նավակատիկյան
Հովհաննես



Քալանթարյան Պապա




Տոնյան Արշակ




Մելիք-Օհանջանյան
Կարապետ




Շավարշյան Արշավիր



Արծրունի Վահան



Արեշյան Գրիգոր



Հովհաննիսյան Հակոբ



Գրձելյան Գևորգ



Հակոբյան Արշակ



Կամսարական
Սպանդարատ



Շիրմազանյան Գրիգոր



Խանգաղյան Յոլակ



Խոջանեքյան Զեյնեք



Աճառյան Հրաչյա




Գյուլիքիսյան Հայկ




Բեդեյան Հովակիմ



Թամանյան Ալեքսանդր



Ռոտինյանց Լևոն



Աբովյան Սարգիս



Սիրգախանյան Ժիրայր



Քեչեկ Համբարձում




Տրիցյան Խորեն



Հովհաննիսյան Լևոն



Հովհաննիսյան
Հայրապետ



Մեղնիկյան Գրիգոր



Բահարյան Բահարյուր

1924 – 1928 թթ. համալսարան հրավիրված դասախոսներ



Բաբախանյան Առաքել
Լեո



Լիսիցյան Ստեփան



Բունիաթյան
Նիկողայոս



Գալիկյան Հրանտ



Հակոբյան Սիմոն



Ներսիսյան Ստեփան




Թումանյան Միքայել




Հախնախչյան
Հախանդուխտ



Զորյան Հակոբ



Կանայան Հայկ



Մեղիք-Աղանյան
Արտաշես




Ռշտունի Վահան



Գալստյան Բոգդան



Եսայան Արամ



Գաբրիելյան Հովնան



Ջրբաշյան Տիգրան



Տեր-Սկրտչյան Աշոտ




Սանթրոսյան Մուշեղ



Արիսյան Լևոն




Ֆանարջյան
Բարդուղիմեոս



Եղիազարյան
Արտավազդ (Արտուր)

Կառավարության 1923 թ. հոկտեմբերի 23-ի որոշման համաձայն՝ Երևանի ժողովրդական համալսարանը վերանվանվեց ՀՍԽՀ պետական համալսարան:



Բուհի արդյունավետ գործունեության չափանիշը միշտ էլ եղել է ուսումնական ծրագրերի կատարելությունը, պրոֆեսորադասախոսական կազմի և դիմորդների մասնագիտական ճիշտ ընտրությունը: Երևանի համալսարանն ապահովել է այս պահանջների միասնությունը:

Համալսարանն իր հիմնադրման առաջին օրերից հատուկ ուշադրություն է դարձրել ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպմանը: 1920 թ. պատմալեզվաբանական ֆակուլտետում պարապմունքների հիմնական ձևը դասախոսությունն էր, որի նյութը ընտրում էին դասախոսները, իսկ Երևանի ժողովրդական համալսարանում, որն արդեն ուներ նաև բնագիտական ֆակուլտետներ, դասախոսությունների հետ մեկտեղ կազմակերպվում էին գործնական, լաբորատոր աշխատանքներ և սեմինարներ, որոնք ամրապնդում և խորացնում էին ուսանողի լսարանում ստացած տեսական գիտելիքները:

Բնագիտական ֆակուլտետներում 1923 թվականից հիմք դրվեց նաև արտադրական պրակտիկային, որը կարևորվում էր ուսանողի տեսական գիտելիքները գործնականի հետ համադրելու առումով: Շուտով այն պարտադիր դարձավ համալսարանի բոլոր ֆակուլտետներում:

Ուսուցման գործընթացի առաջնահերթ խնդիրներից էր ուսանողությանն անհրաժեշտ դասագրքերով ու ձեռնարկներով ապահովելը: 1922 թ., համալսարանում ապակետիպ տպագրության սկզբնավորումից հետո, դասախոսներից շատերը ձեռնամուխ եղան դասագրքերի թարգմանության և հայերեն ձեռնարկների կազմման

գործին: Միայն 1922 թ. հրատարակվեցին Մանուկ Աբեղյանի «Համառոտագրություն հայոց գրականության պատմության», Հակոբ Մանանդյանի «Հայաստանի պատմությունը թուրք-թաթարական արշավանքի ժամանակ», Արսեն Տերտեղյանի «Հայոց նոր գրականություն», Գուրգեն Էդիլյանի «Աշխատանքային դպրոց», Հովհաննես Նավակատիկյանի «Հանրահաշիվ», «Վերլուծական երկրաչափություն», «Դետերմինանտներ», Ալեքսանդր Հակոբյանի «Ֆիզիկա» ձեռնարկները: Նույն թվականին լույս տեսան Վահան Արծրունու «Մարդակազմություն» ձեռնարկի 1-ին (ոսկրաբանություն) և 2-րդ (հոդաբանություն), ապա նաև՝ 3-րդ և 4-րդ մասերը: Հաջորդ տարիներին թարգմանվեցին Գուտմանի «Ֆիզիկայի հիմունքներ» (թարգմանիչ՝ Դ. Հակոբջանյան) գիրքը, Պոսյեի «Դիֆերենցիալ և ինտեգրալ հաշիվներ» դասընթացը (թարգմանիչ՝ Արշակ Տոնյան), Մեշչերսկու «Տեսական մեխանիկա» (թարգմանիչ՝ Դ. Հակոբջանյան), Մրոչեկի «Ուղղագիծ եռանկյունաչափություն» (թարգմանիչ՝ Արշակ Տոնյան), Գրոսհայմի «Բույսերի կարգաբանություն», Կուշների «Հասարակական ձևերի զարգացումը» ձեռնարկները: Ավետիք Տեր-Պողոսյանը գրեց և հրատարակեց «Ընդհանուր կենդանաբանություն», Արշակ Հակոբյանը՝ «Ֆիզիոլոգիա», Ռուբեն Գաբրիելյանը՝ «Կենսաբանություն», Սարգիս Աբովյանը՝ «Կաթնատնտեսություն» ձեռնարկները: Երկու մասով հրատարակվեցին Լեոյի «Հայոց պատմության նորագույն շրջանը» դասախոսությունների շարքը և այլն:

1920 թ. դեկտեմբերին վերաբացված համալսարանն ուներ աղքատիկ նյութատեխնիկական բազա. չկային լաբորատորիաներ, կաբինետներ, գրադարաններ արհեստանոցներ, գործնական աշ-



ՀՍԽՀ կառավարության նախագահ
Ալեքսանդր Մյասնիկյան

«Մեր կուլտուրայի կենտրոնն է կազմելու պետական համալսարանը Երևանում: Նրա համար միջոցներ չպետք է խնայել, ինչպես և գրագիտության տարածման համար: Մրանք անհրաժեշտ և կենսական մեծություններ են: Որովհետև համալսարանը այն հնոցն է ու լաբորատորիան, որից կենսատու ճառագայթներ են ցրվում դեպի ծայրերը: Գիրն ու ընթերցանությունը տարածելու համար պետք են լուսավոր գլուխներ, որ կտա համալսարանը: Հողի մշակությունը պահանջում է դաշտագետներ, որոնց ստեղծելու է դարձյալ համալսարանը: Արդյունաբերությունն ու արհեստը չեն կարող բարգավաճել առանց ճարտարապետի, որին նույնպես պատրաստելու է համալսարանը: Ընդհանուր կուլտուրայի զարկերակը բանելու է շարունակ և անընդհատ, եթե առողջ պահվի սիրտը: Համալսարանը այդ սիրտն է»:

1923 թ.



Անատոմիկումի հին շենքը

խատանքի համար անհրաժեշտ սարքավորումներ, չէին բավարարում լսարանները:

1922 – 1923 ուստարում համալսարանն արդեն ունենալով հաստատված բյուջե, ինչպես նաև զանազան արտաբյուջետային գումարներ, որոնք ստացվում էին տարբեր կազմակերպություններից, երբեմն էլ առանձին անհատների նվիրատվություններից, սկսեց ընդլայնվել: Հայաստանի ժողովրդական տնտեսության, գիտության ու մշակույթի տարբեր ոլորտների համար կադրեր պատրաստելու նպատակով բացվեցին նոր ֆակուլտետներ, ամբիոններ ու մասնագիտություններ, լաբորատորիաներ, կաբինետներ ու արհեստանոցներ: Համալսարանի վարչությունը, կառավարության օժանդակությամբ, հիմնեց քիմիայի, ֆիզիկայի լաբորատորիաներ, հանքաբանության կաբինետ, մեխանիկական արհեստանոց և այլն:

1922 թ. Ստեփան Դամբարյանի ջանքերով ստեղծվեց վերլուծական քիմիայի լաբորատորիան, 1922 թ. Հարություն Անժուրի (Չեքոտարյանի) ջանքերով՝ ֆիզիկայի լաբորատորիան: 1925 թ. համալսարանը Անժուրին գործուղեց Փարիզ՝ անհրաժեշտ սարքավորումներ ձեռք բերելու նպատակով, և այդ գործը նա կատարեց պատվախնդրորեն: Այսօր արդեն այդ սարքավորումներից մի քանիսը ԵՊՀ պատմության թանգարանի ցուցանմուշների շարքում են: 1922 թ. բժիշկ Վահան Արծրունու ղեկավարությամբ հիմնվեց անատոմիայի աշխատանոցը: 1922 թ. հիմնադրվեց նաև ֆիզիոլոգիայի լաբորատորիան: Այդ գործում մեծ դեր կատարեց բժիշկ Արշակ Հակոբյանը: Նույն շրջանում Տիգրան Մուշեղյանը կազմակերպեց կենդանիների ֆիզիոլոգիայի, իսկ բժիշկ Գրիգոր Հայրա-

պետյանը՝ հյուսվածաբանական լաբորատորիաները: 1925 թ. ստեղծվեցին նաև ֆիզիոլոգիական քիմիայի (հիմնադիր՝ Հակոբ Հովհաննիսյան), դեղագործության (հիմնադիր՝ Գրիգոր Մեդնիկյան) լաբորատորիաները, ինչպես նաև մի շարք այլ աշխատանոցներ ու արհեստանոցներ, որոնցից յուրաքանչյուրի բացումը կարևոր իրադարձություն էր համալսարանի կյանքում:

Հիմնադրված լաբորատորիաների համար տարբեր հանրապետություններից ու արտերկրից ստացվում էին թանկարժեք սարքավորումներ՝ ռենտգենապարատ, մանրադիտակներ և այլն: 1926 թ. համալսարանի լաբորատորիաների համար սարքավորումներ է ձեռք բերել նաև անվանի ֆիզիոլոգ, այն ժամանակ Լենինգրադի բժշկական ինստիտուտի պրոֆեսոր Լևոն Օրբելին:

1925 թ. Ալ. Թամանյանի նախագծով սկսվեց անատոմիկումի նոր շենքի կառուցումը, որը նպաստեց համալսարանի բժշկական ֆակուլտետի ուսումնագիտական աշխատանքների զարգացմանը, իսկ 1927 թ. Տերյան փողոցում կառուցվեց մի նոր մասնաշենք (Պոլիտեխնիկական ինստիտուտի հին մասնաշենքը), որտեղ տեղավորվեցին համալսարանի լաբորատորիաները:

Շրջանային փողոցում (այժմ՝ Կորյունի փող.) կառուցվեց երկհարկանի, 25 սենյակից բաղկացած ուսանողական հանրակացարան, որը Երևանի առաջին շենքերից էր, իսկ նույն փողոցի մի այլ հատվածում՝ եռահարկ հանրակացարան՝ դասախոսների համար:

1924 թ. Ալ. Թամանյանը նախագծեց ՀՍԽՀ պետական համալսարանի ընդհանուր հատակագիծը, որը մասն էր Երևանի գլխավոր հատակագծի և նախատեսում էր համալսարան 2000 ուսանողի



Անատոմիկումի նոր շենքը



Ալեքսանդր Թամանյան



Համալսարանի ընդհանուր հատակագիծը՝
ըստ ճարտարապետ Ալ. Թամանյանի, 1924 թ.

համար: Այն ընդգրկում էր Աստաֆյան (ներկայիս՝ Աբովյան) փողոցում գտնվող հիմնական շենքի շրջակա շուրջ 25 հեկտար տարածք՝ Աբովյան, Տերյան և Սունդուկյան (այժմ՝ Մաշտոցի պողոտա) փողոցների՝ Շրջանային (հետագայում՝ Կիրովի, այժմ՝ Կորյունի) փողոցից հյուսիս ընկած ամբողջ հատվածը: Ըստ այդ հատակագծի՝ համալսարանի գլխավոր մասնաշենքից հարավ կառուցվեցին բժշկական ֆակուլտետի տեսական ամբիոնների համալիրը, կլինիկաների շենքերը, ապա՝ աստղադիտարանը, գյուղատնտեսական և պոլիտեխնիկական ինստիտուտների շենքերը:

Շինարարական աշխատանքների ծավալումը հնարավորություն ընձեռեց ընդլայնելու բուհի ուսումնաօժանդակ հիմնարկների ցանցը, որի շնորհիվ համալսարանը դարձավ ուսումնագիտական կենտրոն՝ արժանանալով համընդհանուր ճանաչման:

Թամանյանի նախագծով է կառուցվել Կառավարական տունը, որի համար ականավոր ճարտարապետը 1942 թ. հետմահու արժանացել է ԽՍՀՄ Պետական մրցանակի:

Հետագայում Թամանյանի ստեղծագործությունները նշանակալի դեր ունեցան Հայաստանում թամանյանական ճարտարապետական դպրոցի ստեղծման և Հայաստանի նորագույն ճարտարապետության կազմավորման ու զարգացման գործում:

1925 թ. համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետը և մանկավարժական ֆակուլտետի պատմագրական բաժինը տվեցին առաջին 58 շրջանավարտները: Հետագա տարիներին համալսարանն ավարտեցին նորանոր բարձրորակ մասնագետներ՝ տնտեսագետներ, իրավաբաններ, բժիշկներ ու ճարտարագետներ, որոնց

կարիքը մեծապես զգացվում էր երկրի կրթության և ժողովրդական տնտեսության տարբեր ոլորտներում:

1926 – 1930 թթ. համալսարանի շրջանավարտների թվում էին պատմաբաններ Գրիգոր Միքայելյանը, Աբգար Հովհաննիսյանը, լեզվաբաններ Արարատ Դարիբյանը, Գուրգեն Սևակը, գրականագետ Մկրտիչ Մկրյանը, գրողներ Նաիրի Զարյանը, Գուրգեն Մահարին, Սողոմոն Տարոնցին և ուրիշներ:

Այդ տարիներին էր, որ գյուղատնտեսական ֆակուլտետն ավարտեցին և հետագայում գիտության տարբեր ոլորտներում մեծ ճանաչում ստացան ֆիզիոլոգ Էզրաս Հասրաթյանը, ագրոքիմիկոս Գագիկ Դավթյանը, կենսաբաններ Վարդան Գուլքանյանը, Հրանտ Բատիկյանը, գյուղատնտես Գեղամ Աղաջանյանը, բույսերի ֆիզիոլոգ Միքայել Զայլախյանը, մանրէաբան Հարություն Փանոսյանը, քիմիկոսներ Հովհաննես Զալթիկյանը, Արաքսի Բաբայանը, Մամիկոն Դարբինյանը և շատ ուրիշներ:

1928 – 1930 թթ. մանկավարժական ֆակուլտետի ֆիզիկամաթեմատիկական բաժինը տվեց 22 շրջանավարտ, որոնց թվում էին անվանի մաթեմատիկոս Արտաշես Շահինյանը, Արամ Նալբանդյանը (մաթեմատիկական անալիզի և ֆունկցիաների տեսության ամբիոնի վարիչ), Արմենակ Վարդանյանը (ֆիզմաթ. գիտ. դոկտոր, Լենինգրադի պոլիտեխնիկական ինստիտուտի պրոֆեսոր) և ուրիշներ:

Տեխնիկական ֆակուլտետն ավարտած 47 ճարտարագետները մեծ աշխատանք կատարեցին ինչպես նախագծային հիմնարկների ստեղծման ու նրանց գործունեության ծավալման, այնպես էլ շինարարության բնագավառում, իսկ ճարտարապետներ Հովհաննես



Աստղադիտարանի կառուցման վայրը



Աստղադիտարանի շենքը



Ուսանողական առաջին հանրակացարանը
1925 – 1926 թթ.

Մարգարյանը, Մարկ Գրիգորյանը, Սամվել Սաֆարյանը և ուրիշներ համալսարանն ավարտելուց հետո, ակադեմիկոս Ալ. Թամանյանի ղեկավարությամբ, ձեռնարկեցին քաղաքամայր Երևանի և հանրապետության մյուս քաղաքների ու շրջանների նախագծումն ու կառուցապատումը:

Մինչև 1930 թ. չորս անգամ շրջանավարտներ տվեց բժշկական ֆակուլտետը (137 բժիշկ), որոնք հերոսական աշխատանք կատարեցին ինչպես Հայաստանի շրջաններում տարածված համաճարակային հիվանդությունների (հատկապես մալարիայի) դեմ արդյունավետ պայքարում, այնպես էլ առողջապահական գործը կազմակերպելու՝ հիվանդանոցներ և բժշկական կետեր հիմնելու ուղղությամբ: Ֆակուլտետի այդ տարիների շրջանավարտներից էին Հրաչյա Բունիաթյանը (հետագայում ԵՊՀ ռեկտոր), Լևոն Հարությունյանը, Պարթև Մարգարյանը, Վերգինե Միքայելյանը, Գարեգին Միրզոյանը, Գրիգոր Մուշեղյանը և ուրիշներ:

1925 – 1930 թթ. շրջանավարտների թիվը հասնում էր 931-ի, որոնց մի մասը աշխատանքի անցավ համալսարանում, մյուսը՝ հանրապետության գյուղական շրջաններում, իսկ շատերն էլ գիտահետազոտական գործունեություն ծավալեցին գիտության տարբեր բնագավառներում՝ հետագայում դառնալով անվանի գիտնականներ:

Այդուհանդերձ, որակյալ մասնագետների պակասը հանրապետությունում դեռևս զգալի էր:

1923 – 1924 ուստարվանից սկսած համալսարանը ձեռնամուխ եղավ դասախոսական կադրերի պատրաստման կարևոր գործին: Լավագույն ուսանողներն ընդգրկվում էին լաբորանտական և ասիս-

տենտական աշխատանքներում՝ հետագայում դասախոսական աշխատանքի անցնելու նպատակով: Ավագ սերունդը մեծ հոգատարությամբ էր շրջապատում նրանց և աճեցնում բարձրորակ դասախոս-մանկավարժներ: Այս գործընթացը 1928 թվականից ստանում է կազմակերպված բնույթ, երբ ԵՊՀ-ում հիմնադրվում է ասպիրանտուրա: Ասպիրանտուրայում սովորելու համար ներկայացվեցին մանկավարժական ֆակուլտետի պատմագրական բաժնի շրջանավարտներ Աբգար Հովհաննիսյանը (ընդհանուր պատմություն մասնագիտությամբ, ղեկավարներ՝ Հայկ Գյուլիքիսյան, Հայկ Ազատյան), Արարատ Դարիբյանը (լեզվի պատմություն մասնագիտությամբ, ղեկավար՝ Հրաչյա Աճառյան): Համալսարանի առաջին ասպիրանտներից էին նաև Հենրի Գաբրիելյանը՝ պատմական մատերիալիզմի, Նորայր Դաբադյանը՝ ընդհանուր գրականության, Հովհաննես Չալքիկյանը՝ քիմիայի, Վարդան Գուլքանյանը՝ մասնավոր երկրագործության և Հարություն Փանոսյանը՝ գյուղատնտեսական մանրէաբանության մասնագիտություններով:



Երևանի օպերայի և բալետի
ազգային ակադեմիական թատրոնի Թամանյանի
նախագիծը Փարիզի՝ 1937 թ. համաշխարհային
ցուցահանդեսում շահել է Մեծ ոսկե մեդալ:

Հաջորդ տարում արդեն ավելանում է ասպիրանտների թիվը. տեխնիկական ֆակուլտետից՝ Լիպարիտ Ճարակյանը, գյուղատնտեսական ֆակուլտետից՝ Ամալյա Ազատյանը, մանկավարժական ֆակուլտետից՝ Գուրգեն Վանանդեցին և ուրիշներ: Ասպիրանտներից շատերը գործուղվում էին գիտական խոշոր կենտրոններում (Մոսկվա, Լենինգրադ) մասնագիտանալու:

ՀՄԽՀ լուսժողկոմատը և համալսարանի վարչությունը մտավորականության լավագույն ներկայացուցիչների ուժերի խելամիտ օգտագործման և դասախոսական նոր կադրերի պատրաստման միջոցով կարողացան լուծել համալսարանը պրոֆեսորադասախոսական որակյալ կադրերով ապահովելու դժվարին և խիստ կարևոր խնդիրը:

ԵՊՀ առաջին ասպիրանտները



Հովհաննիսյան Արգար



Գարրիելյան Հենրի



Գուրբանյան Վարդան



Գաբալյան Նորայր



Չալիկյան Հովհաննես



Դարիբյան Արարատ



Փանոսյան Հարություն

ՀՍԽՀ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՈՒՄԸ

1930 թ. ԽՍՀՄ-ում իրականացվում է բարձրագույն դպրոցի ընդհանուր վերակառուցում: Համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետի հիմքի վրա ՀՍԽՀ ժողովրդների 1930 թ. մարտի 7-ի որոշմամբ արդեն ստեղծվել էր Երևանի գյուղատնտեսական ինստիտուտը, իսկ Անդրկովկասի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության ժողովրդական կոմիսարների խորհրդի 1930 թ. հունիսի 14-ի որոշմամբ վերակառուցվեց նաև ՀՍԽՀ պետական համալսարանը: Մի քանի ֆակուլտետների հիմքի վրա ստեղծվեցին ինքնուրույն ինստիտուտներ. տեխնիկական ֆակուլտետը վերածվեց ինժեներատեխնիկական (շինարարական) ինստիտուտի, տնտեսագիտական ֆակուլտետը՝ առևտրակոոպերատիվ ինստիտուտի, բժշկական ֆակուլտետը՝ բժշկական ինստիտուտի, մանկավարժական ֆակուլտետը՝ մանկավարժական ինստիտուտի: Վերջինս 1930 – 1933 թթ. զբաղեցնում էր համալսարանի շենքը և կոչվում էր Մանկավարժական ինստիտուտ:

Այսպիսով, համալսարանի հիմքի վրա ձևավորվեց Հայաստանի բարձրագույն կրթության համակարգը:

1933 թ. հունիսի 10-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոյի որոշմամբ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՖԵԴԵՐԱՏԻՎ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ
ՄԱՍԻՆ

14 հունիսի, 1930 թ.

թ. Թիֆլիս

Անդրկովկասի Սոցիալիստական ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության ժողովրդական կոմիսարների խորհուրդը որոշում է ԱՍՖԽՀ-ում անցկացնել բարձրագույն և միջնակարգ կրթության հետևյալ վերակառուցումը.

2. Հայաստանում

5. Հայաստանի ՍԽՀ գյուղատնտեսական ինստիտուտը հանձնել ՀՍԽՀ Հողագործության ժողովրդական կոմիսարիատի իրավասությանը, վերջինիս հանձնարարելով որոշել ինստիտուտի ֆակուլտետների թիվը, նախատեսելով նրանում անասնապահության ֆակուլտետ:

6. Հայաստանի ՍԽՀ Պետական համալսարանը վերակառուցել հետևյալ ինքնուրույն-մասնագիտական ինստիտուտներ՝

ա) Տեխնիկական ֆակուլտետը՝ ինժեներատեխնիկական (շինարարական) ինստիտուտի, հանձնելով այն Հայաստանի ՍԽՀ ժողովրդական տնտեսության բարձրագույն խորհրդի իրավասությանը:

բ) Տնտեսագիտական ֆակուլտետը՝ առևտրա-կոոպերատիվ ինստիտուտի, ապահովելով ֆինանսական աշխատողների պատրաստումը, հանձնելով այն կոոպերացիայի իրավասությանը:

գ) Մանկավարժական ֆակուլտետը՝ մանկավարժական ինստիտուտի, թողնելով այն Հայաստանի ՍԽՀ Լուսավորության ժողովրդական կոմիսարիատի իրավասության տակ:

դ) Բժշկական ֆակուլտետը՝ բժշկական ինստիտուտի, հանձնելով այն Հայաստանի ՍԽՀ Առողջապահության ժողովրդական կոմիսարիատի իրավասությանը:

Հայաստանի ՍԽՀ բոլոր բարձրագույն ուսումնական հաստատություններում դասավանդման լեզուն սահմանել հայերենը:

ԱՍՖԽՀ ժողովրդական կոմիսարների
խորհրդի նախագահ Շ. Էլիավա

ՀՍԽՀ Ժողկոմխորհի կառուցման հանձնաժողովին առաջարկվում է երկամսյա ժամկետում կառուցել համալսարանի շենքի (Մանկավարժական ինստիտուտի) երրորդ հարկը:

Այդ շրջանում Խորհրդային Միության ողջ տարածքում մասնագիտական բարձրագույն ուսումնական հաստատությունների հիմնումն, իրոք, կենսական անհրաժեշտություն էր, մինչդեռ համալսարանները ճյուղային ինստիտուտների վերածելը ոչ միայն չէր արդարացվում, այլև կոպիտ սխալ էր, որը, բարեբախտաբար, շտկվեց



Համալսարանի եռահարկ սև շենքը

և որոշ ժամանակ անց համալսարանները կրկին վերաբացվեցին:

ՀԿ(Բ)Կ Կենտկոմի բյուրոյի 1933 թ. հուլիսի 15-ի որոշմամբ, որը բխում էր երկրի ժողովրդական տնտեսության, գիտության ու տեխնիկայի զարգացման առավել բարձր պահանջներից, նույն թվականի սեպտեմբերին կրկին վերաբացվում է Երևանի պետական համալսարանը՝ իր մեջ միավորելով մանկավարժական և կոոպերատիվ-տնտեսագիտական ինստիտուտները: Սեպտեմբերի 10-ին տեղի է ունենում համալսարանի վերաբացման հանդիսավոր արարողությունը, որին ներկա էին Ադասի Խանջյանը, Սահակ Տեր-Գաբրիելյանը և ուրիշներ:

1934 թ. համալսարանից մանկավարժական ֆակուլտետը վերստին անջատվում է և նրա հիմքի վրա ստեղծվում է մանկավարժական ինստիտուտը՝ որպես ինքնուրույն կառույց: Նույն թվականին բնագիտական ֆակուլտետը բաժանվում է երկու՝ կենսաբանական և քիմիական ֆակուլտետների, իսկ տնտեսագիտական ֆակուլտետի բաժինների հիման վրա ստեղծվում են երկրաբանական-աշխարհագրական և խորհրդային շինարարության առանձին ֆակուլտետները: 1934 – 1935 թթ. զգալի աշխատանք է տարվում համալսարանում ուսումնագիտական գործընթացի բարելավման ուղղությամբ:

1936 – 1937 ուստարում համալսարանում գործում էր ութ ֆակուլտետ. պատմության, բանասիրական, իրավաբանական, երկրաբանական-աշխարհագրական, քիմիական, կենսաբանական, ֆիզիկամաթեմատիկական, տնտեսագիտական:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ

ՍՏԱԼԻՆՅԱՆ ԲՈՒՆԱՃՆՇՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Երևանի պետական համալսարանի շուրջ 100-ամյա պատմությունն իր մեջ խտացված ամփոփում է այդ նույն ժամանակահատվածում մեր ժողովրդի ու երկրի լավագույն նվաճումները, իհարկե, նաև կրած դժվարություններն ու կորուստները:

1930-ական թվականներից Խորհրդային Միության ողջ տարածքում մոլեգնում էին ստալինյան բռնաճնշումներն ու զանգվածային սպանությունները: Բոլորը, սկսած ամենաքարձրաստիճան պաշտոնյայից մինչև սովորական մահկանացուն ահ ու սարսափի մեջ էին: Չկար որևէ մեկը, որն ապահովագրված լիներ կուսակցությունից վտարվելուց, ձերբակալումից, աքսորվելուց կամ գնդակահարվելուց: Իսկ 1937 թվականը Խորհրդային ողջ երկրի պատմության մեջ դարձավ սարսափելի տարի, երբ բանտարկություններն ու գնդակահարությունները հասան անասելի չափերի: Բազմաթիվ մտավորականներ ձերբակալվեցին՝ ենթարկվելով անհիմն մեղադրանքների ու հալածանքների, աքսորվեցին Սիբիրի խորքերը: Համակենտրոնացման ճամբարներում տառապում էին միլիոնավոր անմեղ մարդիկ:

Անասելի կորուստներ կրեց նաև մեր հանրապետությունը: Հայ մտավորականների ջարդը սկսվեց 1936 թ. հուլիսին, Թիֆլիսում՝



*Հովհաննիսյան Հակոբ Գարեգինի
Քրիստիան գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ,
ԵՊՀ ռեկտոր 1922 թ. փետրվար – 1930 թ. հուլիս*

1937 թ. սեպտեմբերի 20-ին հեռացվել է կոմկուսի շարքերից՝ մեղադրվելով հակահեղափոխական տարրերի և Ա. Խանջյանի հետ կապեր ունենալու մեջ: 1937 թ. սեպտեմբերի 24-ին ձերբակալվել և 1941 թ. սեպտեմբերի 3-ին դատապարտվել է 5 տարվա ազատազրկման, աքսորվել Ղազախստան, որտեղ և մահացել է նույն թվականի նոյեմբերին: Արդարացվել է 1955 թ.: Գործը կարճվել է հանցակազմի բացակայության պատճառով:



*Կոստանյան Վահաբ Գրիստափորի
Տնտեսագետ, պրոֆեսոր,
ԵՊՀ ռեկտոր 1935 թ. հուլիս – 1937 թ. հունվար*

Ձերբակալվել է 1937 թ. սեպտեմբերի 23-ին հայաստանյան հակասովետական աջ տրոցկիստական ազգայնական կազմակերպության անդամ լինելու և սովետական իշխանության դեմ ակտիվ աշխատանք տանելու մեղադրանքով: 1939 թ. մայիսի 29-ին դատապարտվել է 8 տարվա ազատազրկման ուղղիչ աշխատանքային գաղութում: Մահացել է 1941 թ. նոյեմբերի 3-ին աքսորավայրում: Արդարացվել է 1955 թ.: Գործը կարճվել է հանցակազմի բացակայության պատճառով:



*Ենգիբարյան Միքայել Ավետիսի
Կոնսակցական-պետական գործիչ,
ԵՊՀ ռեկտոր 1937 թ. հունվար - ապրիլ*

1937 թ. հեռացվել է կոմկուսի շարքերից, զրկվել Լենինի շքանշանից և ձերբակալվել Հայաստանյան հակասովետական աջ տրոց-կիստական ազգայնական կազմակերպության անդամակցելու մեղադրանքով: Հարցաքննվել է ընդամենը մեկ անգամ՝ հոկտեմբերի 28-ին,

դեկտեմբերի 28-ին դատապարտվել է զնդակահարության:

Դատաճիռն ի կատար է ածվել նույն օրը:

Արդարացվել է 1955 թ.: Գործը կարճվել է հանցակազմի բացակայության պատճառով:



*Գաբրիելյան Հենրի (Հարություն) Գաբրիելի
Փիլիսոփայական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀԽՍՀ գիտություն վաստակավոր գործիչ,
ԵՊՀ ռեկտոր 1937 թ. ապրիլ - օգոստոս*

1937 թ. հեռացվել է ԽՄԿԿ շարքերից և նոյեմբերի 5-ին ձերբակալվել՝ մեղադրվելով հակահեղափոխական, աջ տրոցկիստական ազգայնական կազմակերպության անդամ լինելու, Հայաստանը

Խորհրդային Միության կազմից անջատելու ուղղությամբ վնասակար աշխատանքներ կատարելու մեջ: 1938 թ. հունիսի 20-ին դատապարտվել է 12 տարվա ազատազրկման ուղղիչ աշխատանքային գաղութում՝ 5 տարի քաղաքական իրավունքի զրկմամբ և գույքի բռնագրավմամբ:

1941 թ. մարտի 6-ին դատալծիւր համարվել է չեղյալ և նա ազատվել է պատժի կրումից:



*Արզումանյան Անուշավան Աղաֆոնի
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,
ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս,
ԵՊՀ ռեկտոր 1937 թ. օգոստոս - սեպտեմբեր*

Ձերբակալվել է 1937 թ. ազգայնականներին և հատկապես «Ժողովրդի թշնամի, Հայտնի ազգայնական» համարված Ա. Խանջյանին պաշտպանելու մեղադրանքով:

Ասկայն նա կարողացել է ապացուցել իր անմեղությունը և 1939 թ. հունիսի 11-ին ազատ է արձակվել:



*Առաքելյան Կամսար Արշակի
Պատմաբան,
ԵՊՀ ռեկտոր 1937 թ. նոյեմբեր - 1938 թ. հունվար*

Ձերբակալվել է 1938 թ. հունվարի 8-ին հակահեղափոխական աջ տրոցկիստական ազգայնական կազմակերպության անդամ լինելու, հակահեղափոխական ագիտացիա վարելու, առանց թույլտվության զենք պահելու, ինչպես նաև Բաքվի մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի տե-

ուրիստական խմբավորման անդամ լինելու մեղադրանքով: 1939 թ. հունիսի 9-ին դատապարտվել է 8 տարվա ազատազրկման ուղղիչ աշխատանքային գաղութում և աքսորվել Վլադիվոստոկ: 1947 թ. հունվարի 9-ին ազատվել է պատժի կրումից, փետրվարի 9-ին վերադարձել Հայաստան:

1949 թ. փետրվարի 18-ին կրկին ձերբակալվել է նույն մեղադրանքով: 1949 թ. հունիսի 18-ին դատապարտվել է ազատ աքսորի և ուղարկվել Կրասնոյարսկ: Աքսորից ազատվել է 1954 թ.:

Արդարացվել է 1955 թ.: Գործը կարճվել է հանցակազմի բացակայության պատճառով:

ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար, նվիրյալ կոմունիստ Ադասի Խանջյանի սպանությամբ: Մարդիկ իրենց տներում իսկ հանգիստ չունեին, բոլորի հոգիները պաշարել էին սարսափն ու դաժան սպանումի պահերը: Դռան ամեն թակոցից կամ հեռախոսագանգից վեր էին թռչում և առաջին միտքը, որ ծագում էր նրանց գլխում, այն էր, որ եկել են իրենց տանելու... Հետագայում ի թիվս այլոց ձերբակալվեցին Եղիշե Չարենցը, Ակսել Բակունցը, Գուրգեն Մահարին, Վահրամ Ալազանը, Լեո Կամսարը, Մկրտիչ Արմենը, Վաղարշակ Նորենցը և շատ ուրիշներ:

Բռնությունների ու զանգվածային ձերբակալությունների հետևանքով Հայաստանի բանտերը հեղեղվեցին անմեղ մարդկանցով, որոնց ներկայացվում էին ամենատարբեր մտացածին մեղադրանքներ. «խորհրդային իշխանության դեմ ակտիվ պայքար», «ազգայնամոլ», «ժողովրդի թշնամի», «հայրենիքի դավաճան» և այլն:

Այդ տարիներին փակվեցին, նաև քանդվեցին Հայաստանի շատ եկեղեցիներ, վանքապատկան տարածքները հանվեցին եկեղեցիների ենթակայությունից, բռնությունների, հալածանքների ենթարկվեցին ու գնդակահարվեցին բազմաթիվ հոգևորականներ: 1937 թ. խեղդամահ արվեց Կաթողիկոս Խորեն Մուրադբեկյանը: Իսկ 1938 թ. օգոստոսի 4-ին ՀԿԿ Կենտկոմը որոշում ընդունեց, որի համաձայն պետք է փակվեր Էջմիածնի վանքը և վերացվեր հայ հոգևորականության համազգային կենտրոնը՝ Էջմիածնի կաթողիկոսությունը: Սակայն, բարեբախտաբար, Սփյուռքի, միջազգային հանրության ու կաթողիկոսական տեղապահ արքեպիսկոպոս Գևորգ Չորեքչյանի (հետագայում Գևորգ VI կաթողիկոս) ջանքերով



*Ավգալբեգյան Թադևոս Հայրապետի
Պատմաբան, բանասեր, տնտեսագետ*

Զերբակալվել է 1937 թ. հուլիսի 26-ին
Հակահեղափոխական գործունեություն
ծավալելու մեղադրանքով: Գնդակահարման
մասին վճիռը կայացվել է 1937 թ.
դեկտեմբերի 28-ին:
Արդարացվել է 1955 թ.:



*Արիսյան Լևոն Եղիայի
Փիլիսոփա, պրոֆեսոր,
կուսակցական-պետական գործիչ*

Զերբակալվել է 1937 թ. սեպտեմբերի
20-ին Հայաստանյան Հակասովետական
աջ տրոցկիստական ազգայնական
կազմակերպության մասնակից լինելու
մեղադրանքով:

1938 թ. հուլիսի 18-ին դատապարտվել է գնդակահարման:
Դատաճիռն ի կատար է ածվել նույն գիշերը:
Արդարացվել է 1955 թ.: Գործը կարճվել է հանցակազմի
բացակայության պատճառով:



*Գալիկյան Հրանտ Ավետիսի
Իրավագետ, պրոֆեսոր, հասարակական
գործիչ*

Զերբակավել է 1937 թ. հուլիսի 29-ին
հակասովետական ագիտացիա անելու
մեղադրանքով: 1938 թ. փետրվարի 28-ին
դատապարտվել է զնդակահարության:
Դատաճիռն է կատար է ածվել նույն օրը:
Արդարացվել է 1956 թ.: Գործը կարճվել
է հանցակազմի բացակայության պատճառով:



*Գալստյան Բոգդան Հակոբի
Հողագետ, պրոֆեսոր, մանկավարժ*

Զերբակավել է 1937 թ. նոյեմբերին
հողագործության բնագավառում վնասակար
աշխատանքներ կատարելու և դյուղատնտե-
սության զարգացմանը խոչընդոտելու
մեղադրանքով:
Մահացել է 1938 թ. օգոստոսի 29-ին բանտում:
Արդարացվել է հետմահու:



*Եսայան Զապել Մկրտչի
Գրող, հրապարակախոս, գրականագետ*

Զերբակավել է 1937 թ. հունիսի 27-ին
ֆրանսիական հետախուզության լրտես
լինելու մեղադրանքով: 1939 թ. հունվարի
23-ին կայացվել է մահվան դատավճիռ,
բայց մեղադրյալի բողոք դիմումի հիման
վրա 1939 թ. մայիսի 8-ին մահապատիժը
փոխարինվել է 10 տարվա ազատազրկմամբ:
Բաքվի բանտում կրելով անլուր տառապանքներ՝ մահացել է
1943 թ.:
Արդարացվել է 1957 թ.: Գործը կարճվել է հանցակազմի
բացակայության պատճառով:



*Ջուրյան Հակոբ Նշանի
Պատմաբան, փիլիսոփայության դոկտոր,
պրոֆեսոր*

Զերբակավել է 1937 թ. օգոստոսի 10-ին
հակասովետական ագգայնական ընդհատակյա
կազմակերպության անդամ լինելու մեղադրան-
քով: 1939 թ. սեպտեմբերի 6-ին դատապարտվել
է զնդակահարության: Դատաճիռը 1940 թ.
մարտի 17-ին բեկանվել և ուղարկվել է վերանայման: 1941 թ.
սեպտեմբերի 3-ին մահապատիժը փոխարինվել է 8 տարվա
ազատազրկման ուղղիչ աշխատանքային զաղուլթում:
Մահացել է 1942 թ.:
Արդարացվել է 1955 թ.: Գործը կարճվել է հանցակազմի բացա-
կայության պատճառով:

այդ որոշումը չիրականացվեց:

Ստալինյան բռնապետական քաղաքականությունը չորջանցեց նաև Երևանի պետական համալսարանը: Միայն 1937 թվականի 12 ահասարսուռ ամիսների ընթացքում համալսարանում փոխվեց 6 ռեկտոր, որոնցից և ոչ մեկը, բնականաբար, չհասցրեց քիչ թե շատ լուրջ ավանդ ներդնել Մայր բուհի զարգացման գործում:

Դաժան ճակատագիր ունեցան նաև շատ դասախոսներ և ուսանողներ, որոնք հեռացվեցին համալսարանից, ենթարկվեցին անլուր հալածանքների, բռնադատվեցին շինծու մեղադրանքներով: Ենթարկվելով անասելի խոշտանգումների, արժանապատվության ոտնահարման և անմարդկային կտտանքների՝ նրանցից շատերը իրենց մահկանացուն կնքեցին բանտերում ու աքսորավայրերում: Քչերին հաջողվեց մի կերպ խուսափել այդ ահավոր մահադաշից: Իսկ այդ գեհեմում առողջությունը կորցրած ու հրաշքով փրկվածները՝ վերադառնալով հայրենիք, առնվազն հինգ տարի իրավունք չունեին ապրելու մայրաքաղաքում, իրենց իսկ տանը:

Անվանի հայագետ, ակադեմիկոս Հրաչյա Աճառյանը, երջանիկ պատահականությամբ փրկվելով 1915 թ. կոտորածներից, Խորհրդային Հայաստանում հայտնվեց ստալինյան եղեռնի ճիրաններում: Ահա, թե այդ մասին ինչ է գրում նրա դուստրը.

«1937 թ. Հր. Աճառյանին ձերբակալում են, կնոջը՝ տիկին Սոֆիկին, վտարում են քաղաքից, բնակարանը կնքում՝ թողնելով միայն խոհանոցը ռուս աղախնու տրամադրության տակ:

Հերթական տեսակցության ժամանակ Աճառյանը խնդրում է կնոջը՝ փրկել իր անտիպ ձեռագրերից «Հայոց անձնանունների բառարանը»: Տիկին Սոֆիկը, իր կյանքը մեծ վտանգի ենթարկելով,



Թոթովենց Վահան Հովհաննեսի Գրող, Հրապարակախոս, մանկավարժ

Զերբակալվել է 1936 թ. հուլիսի 20-ին Հայաստանյան Հակասովետական աջ տրոց-կիստական ահաբեկչական ազդայնական կազմակերպության մասնակից լինելու մեղադրանքով: 1938 թ. հուլիսի 18-ին դատապարտվել է զնդակահարության:

Դատավճիռն ի կատար է ածվել նույն օրը:

Արդարացվել է 1956 թ.:

Գործը կարճվել է հանցակազմի բացակայության պատճառով:



Կամսարական Սպանդարատ Հովհաննեսի Բժշկական գիտությունների թեկնածու

Զերբակալվել է 1937 թ. հուլիսի 11-ին հակահեղափոխական ազդայնական խմբակցության անդամ լինելու և հակասովետական ագիտացիա անելու մեղադրանքով:

1938 թ. հուլիսի 18-ին դատապարտվել է մահապատժի:

Դատավճիռն ի կատար է ածվել նույն օրը:

Արդարացվել է 1956 թ.:

Գործը կարճվել է հանցակազմի բացակայության պատճառով:



*Հակոբյան Հովհաննես Հակոբի
Պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր*

Զերբակավել է 1937 թ. հունիսի 25-ին
Հակահեղափոխական ագիտացիա անելու,
անգլիական լրտես լինելու և Ա. Խանջյանի
հետ սերտ կապեր ունենալու մեղադրանքով:
1938 թ. հունիսի 18-ին դատապարտվել է

մահապատժի, որն ի կատար է ածվել նույն օրը:

Արդարացվել է 1956 թ.: Գործը կարճվել է հանցակազմի
բացակայության պատճառով:



*Ջրբաշյան Տիգրան Արշակի
երկրաբան, պրոֆեսոր*

Զերբակավել է 1937 թ. հունիսի 28-ին՝ մեղա-
դրվելով արտասահմանյան պետություններից
մեկի հետախուզական գործակալ լինելու մեջ:
Մահացել է 1937 թ. սեպտեմբերի 16-ին
բանտում: Գործը կարճվել է մեղադրյալի
մահվան պատճառով:
Արդարացվել է 1955 թ.:



*Էդիլյան Գուրգեն Մեսրոպի
Մանկավարժ, հոգեբան, փիլիսոփայական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

Զերբակավել է 1937 թ. նոյեմբերի 1-ին
Հակահեղափոխական ագիտացիա անելու
մեղադրանքով: Նույն թվականի դեկտեմբերի
5-ին դատապարտվել է 10 տարվա ազատա-
զրկման ուղղիչ աշխատանքային գաղութում:

Մահացել է 1942 թ. հունվարի 15-ին Օմսկում:

Արդարացվել է 1955 թ.:

Գործը կարճվել է հանցակազմի բացակայության պատճառով:



*Միրզա-Ավագյան Հարություն Գրիգորի
Վիրաբույժ, պրոֆեսոր*

Զերբակավել է 1937 թ. հունիսի 29-ին՝
մեղադրվելով ֆաշիստական ազգայնական
տրամադրվածության, հակասովետական կազ-
մակերպության անդամների հետ մտերիմ
կապեր ունենալու, հակասովետական ագիտա-
ցիա վարելու, կոմկուսի քաղաքականությունը

և ղեկավարներին վարկաբեկելու մեջ:

Մահացել է 1938 թ. օգոստոսի 5-ին բանտում:

Արդարացվել է 1955 թվականին:

կարողանում է համոզել աղախնուն՝ թույլ տալ պատշգամբի լուսամուտի օդանցքից ներս սողոսկել կնքված բնակարանը: Տնային ծառայողը, նախապես լվացքի տեսք տալով, պատշգամբում սավաններ է փռում և տանից դուրս գալիս՝ ասելով, որ բռնվելու դեպքում ինքն անտեղյակ է: Եվ տիկին Սոֆիկն իր խոշոր մարմնով մի կերպ սողոսկում է օդանցքից ներս: Սենյակում եղած և ոչ մի ուրիշ արժեքավոր բանի ձեռք չտալով՝ վերցնում է միայն ձեռագիր մատյանը և նույն ճանապարհով, ավելի մեծ դժվարությամբ, մի կերպ դուրս ելնում: Եվ տան տիկինն իր սեփական տանից «գողություն» է անում: Ձեռագիր մատյանը կապում է փոքին, մի շաբաթ այդպես ման է գալիս՝ փնտրելով մի ապահով տեղ, վստահելի մարդու (այն ժամանակ վախենում էին նույնիսկ հարազատների հետ կապ ունենալ): Վերջապես մտաբերելով, որ Երևանի ծայրամասում՝ Բութանիա կոչվող թաղամասում, հեռավոր մի ազգական ունի՝ սեփական տնով ու այգիով, գիշերով մենակ, ոտքով հասնում է Բութանիա, թախանձագին խնդրում ազգականին՝ գիրքը թաքցնել: Տանտերերը մի քանի տակ գիրքը փաթաթում են շորով, ապա մոմլաթով, դնում մետաղյա արկղի մեջ և գիշերով թաղում մի ծառի տակ, որի պատճառով ծառը չի ջրվում, չորանում է, սակայն կյանք է տալիս գրքին:

Շուրջ երեք տարի հետո, երբ Հր. Աճառյանը ազատվում է կալանքից, առաջին խնդիրն է լինում տեսնել ձեռագիրը: Տիկին Սոֆիկը Ավետիք Իսահակյանի հետ գնում և բերում է գիրքը՝ աշխարհի չափ երջանկություն պարգևելով ամուսնուն»¹:

¹ **Քնարիկ Աճառյան**, Հրաչյա Աճառյանի կյանքի ու գործունեության չիրապարակված էջերից, «Հանդես Երևանի համալսարանի», 1997 թ., N 1, էջ 110:



Խաչատրյան Աստվածատուր Խաչատուրի Պատմաբան, պրոֆեսոր, մանկավարժ

Զերբակավել է 1938 թ. մարտի 18-ին գերմանական և անգլիական լրտես, ինչպես նաև «Հակահեղափոխական կենտրոն»-ի ղեկավար լինելու մեղադրանքով: Դատապարտվել է գնդակահարության: Վճիռն է կատար է ածվել 1938 թ. նոյեմբերի 20-ին: Արդարացվել է հետմահու:



Հարությունյան Հակոբ Պողոսի Փիլիսոփա, գրականագետ, երաժշտագետ

Զերբակավել է 1941 թ. հունիսի 23-ին հակասովետական ագիտացիա վարելու մեղադրանքով: 1942 թ. մայիսի 9-ին դատապարտվել է 8 տարվա ազատազրկման և ուղարկվել Կարաբանդայի մարզի Կարլազ ուղղիչ աշխատանքային գաղութ: Մահացել է 1943 թ.:

Արդարացվել է 1957 թ.:

Գործը կարճվել է հանցակազմի բացակայության պատճառով:



*Տիգրանյան Սիրական Թադևոսի
Իրավաբան, Հոգեբան, պետական գործիչ*

Զերբակավել է 1937 թ. «Հակահեղափոխական
գործունեության համար»:
1937 թ. դեկտեմբերի 5-ին դատապարտվել է
մահապատժի: Դատավճիռն ի կատար է ածվել
1937 թ. դեկտեմբերի 17-ին:
Արդարացվել է 1958 թ.: Գործը կարճվել է
Հանցակազմի բացակայության պատճառով:



*Հակոբյան Սիմոն Հարությունի
Գրականագետ, պրոֆեսոր*

Զերբակավել է 1938 թ. մայիսի 21-ին:
1939 թ. սեպտեմբերի 6-ին դատապարտվել է
գնդակահարության:
Արդարացվել է 1955 թ.:
Գործը կարճվել է Հանցակազմի բացակայու-
թյան պատճառով:



*Տոնյան Արշակ Հովսեփի
Մաթեմատիկոս, պրոֆեսոր*

Զերբակավել է 1937 թ. ապրիլի 14-ին՝
մեղադրվելով արտասահմանյան հետախու-
զական լրտեսության և դաշնակցական անլեզալ
կազմակերպության ղեկավար լինելու մեջ:
1939 թ. սեպտեմբերի 6-ին դատապարտվել է
12 տարվա ազատազրկման ուղղիչ աշխատան-
քային գաղութում: 1940 թ. մարտի 17-ին վճիռը բեկանվել և
գործն ուղարկվել է վերանայման: 1941 թ. սեպտեմբերի 3-ին
փոխվել է դատավճիռը և որոշվել 8 տարվա ազատազրկում
աշխատանքային գաղութում:
Մահացել է 1942 թ. մարտի 18-ին Սվերդլովսկի շրջանի դատա-
պարտյանների հիվանդանոցում:
Արդարացվել է 1955 թ.: Գործը կարճվել է Հանցակազմի
բացակայության պատճառով:



*Քալանթար Աշխարհբեկ Աղալոյի
Հնագետ, պրոֆեսոր*

Զերբակավել է 1938 թ. մարտի 19-ին
այսպես կոչված «պրոֆեսորների գործով»՝
մեղադրվելով հայրենիքի դավաճանության
մեջ: 1939 թ. սեպտեմբերի 6-ին
դատապարտվել է գնդակահարության, բայց
մահապատիժը փոխարինվել է 8 տարվա
ազատազրկմամբ: Աքսորվել է Սիբիր, որտեղ մահացել է 1942 թ.
Հունիսին:
Արդարացվել է 1955 թ.:
Գործը կարճվել է Հանցակազմի բացակայության պատճառով:

«Հիշում եմ, - գրում է նա, - երբ 1945 թ. հրատարակության հանձնված «Հայոց լեզվի պատմություն» գրքի II մասի շարվածքը 1948-ին կարգադրվեց ոչնչացնել, որի պատճառներից մեկն այն էր, որ հեղինակը V դարը՝ մեր գիր ու գրականության դարը, անվանել է ոսկեդար, մինչդեռ մեր «խելոք» պաշտոնյաները արգելել էին գիրքը հրատարակել՝ պատճառաբանելով, որ ոսկե դարը ոչ թե V, այլ սովետական դարն է: Դրան հաջորդեց այն, որ Աճառյանը այդ գրքի ձեռագիրն իր ձեռքով այրեց լողասենյակում՝ հոգեկան ծանր, խելացնոր վիճակում: Մայրս, թիկունքից գրկած, համոզում, հորդորում էր ետ կանգնել իր գործողությունից, բայց նա չէր լսում, շարունակում էր այրել: Գուցե հետևանքը լինե՞ր սպասվածից ավելի վատ, եթե օգնության չկանչեինք մեր հարևանությամբ ապրող ակադեմիկոս Աբգար Հովհաննիսյանին, որը հանգստացրեց ու հուսադրեց սիրելի ուսուցչին: Մի գիշեր մեր դուռը զգուշությամբ թակեցին: Սարսափած Աճառյանը նախապատրաստել էր իրեն, որ պետք է ընտանյոք արտրվենք, սակայն կատարվեց անսպասելին: Գիշերային մթության մեջ, չտեսանք ովքեր էին, դռան արանքից մայրիկիս են մեկնում փաթաթված «Հայոց լեզվի պատմություն» գրքի այրված մամուլներից անշուք կազմով կազմված հատորը և հեռանում: Այդ վերաբերմունքի համար գիտնականը շատ հուզվեց և ասաց. «Չայներից ճանաչեցի, տպարանի գրաշար բանվորներից էին»: Լինելով խիստ զգույշ՝ երբեք բարձրաձայն չխոսեց նրանց մասին և միայն իր աղոթքներում էր մրմնջում նրանց անունները»²:

² Նույն տեղում, էջ 109:



Քաղղասարյան Ստեփան Խաչատուրի Բժիշկ, մանկավարժ, դրամատուրգ

Զերբակավել է 1937 թ. հուլիսի 6-ին հակահեղափոխական ազդեցության անելու մեղադրանքով: 1938 թ. փետրվարի 28-ին դատապարտվել 10 տարվա ազատազրկման ուղղիչ աշխատանքային դադուծում: Մահացել է 1941 թ. նոյեմբերի 24-ին:

Արդարացվել է 1955 թ.:

Գործը կարճվել է Հանցակազմի բացակայության պատճառով:



Քաջազնունի (Իգիթխանյան)

*Հովհաննես Մաթևոսի
Ճարտարապետ, պրոֆեսոր,
Հայաստանի առաջին Հանրապետության
վարչապետ*

Զերբակավել է 1937 թ. հուլիսի 28-ին և դատապարտվել մահապատժի, բայց 1938 թ. հունվարի 15-ին մահացել է բանտի հիվանդանոցում պալարախտից:

Արդարացվել է 1992 թ.:



*Պողոսյան Հուսիկ Պողոսի
ինժեներ-տեխնոլոգ, քիմիկոս*

Զերբակավել է 1937 թ. նոյեմբերի 3-ին
Հակահեղափոխական տրոցկիստական-ֆաշիս-
տական ագիտացիա անելու մեղադրանքով:
1938 թ. փետրվարի 28-ին դատապարտվել է
մահապատժի:
Արդարացվել է 1956 թ.:
Գործը կարճվել է Հանցակազմի բացակա-
յունության պատճառով:



*Քալանթարյան Պապա Բեջանի
Գյուղատնտեսական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀԽՍՀ գիտություն վաստակավոր գործիչ*

Զերբակավել է 1937 թ. սեպտեմբերի 23-ին:
1939 թ. սեպտեմբերի 6-ին դատապարտվել է 6
տարվա ազատազրկման ուղղիչ աշխատանքային
գաղութում: 1940 թ. մարտի 17-ին վճիռը համար-
վել է չեղյալ և գործն ուղարկվել վերանայման:

1941 թ. սեպտեմբերի 3-ի դատավճռով աքսորվել է Ղազախստան
5 տարի ժամկետով:
1942 թ. փետրվարի 20-ին մահացել է բանտի հիվանդանոցում:
Արդարացվել է 1955 թ.:
Գործը կարճվել է Հանցակազմի բացակայության պատճառով:



*Ակունյան Հովհաննես Համբարձումի
Քիմիկոս, պրոֆեսոր*

Զերբակավել է 1937 թ. հուլիսի 27-ին Հակասո-
վետական ագիտացիա ծավալելու մեղադրանքով
և 5 տարով աքսորվել Ղազախստան, որտեղ 1942
– 1944 թթ. աշխատել է Սեմիպալատինսկի մարզի
Կազան-Չունկուր գյուղի միջնակարգ դպրոցում
որպես ուսուցիչ, իսկ 1944 – 1947 թթ.՝ գլխավորել

Բլազովեչենսկ քաղաքի Կալինինի անվան պետական մանկավարժական
ինստիտուտի քիմիայի ամբիոնը:
Մահացել է 1947 թ. օգոստոսի 14-ին Բլազովեչենսկում:
Արդարացվել է 1955 թ.:
Գործը կարճվել է Հանցակազմի բացակայության պատճառով:



*Ստեփանյան Ներսիկ Միքայելի
Կուսակցական գործիչ, տնտեսագետ,
պրոֆեսոր*

Զերբակավել է 1936 թ. մայիսի 21-ին
Ս. Կիրովի սպանության մասնակից և Հակահե-
ղափոխական տեռորիստական տրոցկիստական
ազգայնական կազմակերպության անդամ լինելու
մեղադրանքով:

1938 թ. հուլիսի 8-ին դատապարտվել է զնակահարություն, վճիռն
ի կատար է ածվել նույն օրը:
Արդարացվել է 1956 թ.:
Գործը կարճվել է Հանցակազմի բացակայության պատճառով:

Մեծանուն գիտնականի դուստրը ներկայացնում է ևս մի դրվագ Աճառյանի «ոդիսականից»։ «1949-50-ական թվականներ. զանգահարում են Կենտրոնական Կոմիտեի քարտուղարությունից, թե Կենտկոմի քարտուղարներից մեկն ուզում է տեսնել Աճառյանին։ Այդ ժամանակ ընդունվում էր Մառի՝ լեզվի դասակարգայնության տեսությունը, իսկ Աճառյանը, որպես հակամառական, վտարված էր համալսարանից։ Նա ԱԿ-ն շփոթել էր ԿԿ-ի հետ, որի պատճառով ողջ գիշեր չքնեց, ահն ու սարսափը պատել էր նրան. առհասարակ չէր սիրում որևէ պետական պաշտոնյայի հետ գործ ունենալ։ Կնոջ՝ տիկին Սոֆիկի հետ ներկայանում է Կենտկոմ, սակայն նրան մենակ են հրավիրում ներս՝ մայրիկիս թողնելով սպասասրահում։ Այս բաժանումն ավելի է ահաբեկում գիտնականին։ Շուրջ մեկ ժամ հետո, երբ դուրս է գալիս քարտուղարի ընդունարանից գունատված ու այլայլված, տեսնելով սիրելի կնոջը, ուղղակի փլվում է նրա թևերին։ Պարզվում է, որ այնտեղ նրան առաջարկել են անցնել կոմունիստական կուսակցության շարքերը, հրաժարվել իր գիտական ուղղությունից, ընդունել Մառի տեսությունը։ Իսկ թե ինչո՞ւ չի կամենում անցնել կոմունիստական կուսակցության շարքերը, հոգու խռովքը զսպելով, պատասխանել է. «Ես ոչ մի կուսակցության հետ գործ չունիմ, իմ կուսակցությունը իմ հայ ժողովուրդն է։ Վերջապես, եթե ես ընդունիմ Մառի տեսակետը, կնշանակի գիտնական կոչվելու իրավունք չունիմ։ 70 տարի ունեցել եմ իմ գիտական ուղղությունը (իմ տեսակետը). կնշանակի խաչ պիտի դնեմ այսքան տարվա գիտությանս վրա»։ Այդ օրվանից սկսած, ինը ամիս ամեն օր, ամեն վայրկյան սպասում էր իր դատավճռին։ Լեզվաբանական այդ հարցը վերանայվեց



*Հովհաննիսյան Աշոտ Գարեգինի
Պատմաբան, պետական-կուսակցական գործիչ,
փիլիսոփայական և պատմական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս*

Ջերբակավել է 1937 թ. հուլիսի 8-ին 1931 թ. հակահեղափոխական աջ տրոցկիստական ազգայնական կազմակերպության ղեկավարներից լինելու մեղադրանքով։ 1941 թ. հուլիսի 9-ին դատապարտվել է 8 տարվա ազատազրկման ուղղիչ աշխատանքային գաղութում (Կոմի ԻՍՍՀ)՝ 3 տարով քաղաքական իրավունքի կասեցմամբ։ 1943 թ. ապրիլի 15-ին վաղաժամկետ ազատ է արձակվել կալանքից և տեղափոխվել Ուզբեկստանի Յանգիյուլ քաղաք։ 1949 թ. վերադարձել է Հայաստան և 5 տարի հարկադրված ապրել Կիրովականում (այժմ՝ Վանաձոր)։ 1954 թ. գործի վարույթը կարճվել է հանցակազմի բացակայության պատճառով։



*Աշրաֆյան Զարմայր Անդրեասի
Իրավաբան, քաղաքական-կուսակցական գործիչ*

Ջերբակավել է 1936 թ. նոյեմբերին։ Դատապարտվել է 10 տարվա ազատազրկման։ Մահացել է նույն թվականին աքսորավայրում։ Արդարացվել է 1955 թ.



Ռոտինյան Լեոն Ալեքսանդրի
Քրիստիան գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ գիտություն և տեխնիկայի վաստակավոր
գործիչ

Ձերբակալվել է 1938 թ. Հունիսի 17-ին արտասահմանյան պետութ்յուններից մեկի հետախուզական գործակալ լինելու մեղադրանքով: 1939 թ. սեպտեմբերի 6-ին դատապարտվել է 10 տարվա ազատազրկման ուղղիչ աշխատանքային գաղութում: 1941 թ. սեպտեմբերի 3-ին գործը վերանայելուց հետո պատիժը փոխարինվել է 5 տարվա Ղազախստան աքսորով:

Արդարացվել է 1955 թ.:

Վախճանվել է 1964 թ. դեկտեմբերի 30-ին Երևանում:



Մելիք-Օհանջանյան Կարապետ Աղաբեկի
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ

Զերբակալվել է 1937 թ. հունիսի 22-ին
դաշնակցական ընդհատակյա կազմակերպություն
կենտրոնի անդամ լինելու, խորհրդային
իշխանություն դեմ ակտիվ աշխատանք տանելու
մեղադրանքով: 1941 թ. դատապարտվել է

5 տարվա ազատազրկման և աքսորի: 1944 թ. վերջերին ՀԽՍՀ ԳԱ նախագահ Հովսեփ Օրբելու միջնորդությամբ բնակություն է հաստատել Երևանում, սակայն 1946-ին դարձյալ արտաքսվել է Երևանից, և միայն Արտեմ Միկոյանին հղած դիմումից հետո և վերջինիս պաշտոնական կարգադրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանին իրավունք է տրվել վերջնականապես հաստատվելու Երևանում:



Գյուլիքեխյան Հայկ Գաբրիելի
Փիլիսոփա, գրականագետ, պրոֆեսոր,
Հասարակական գործիչ

Ջերբակավել է 1937 թ. սեպտեմբերի 27-ին
Հակահեղափոխական աջ տրոցկիստական
ազգայնական կազմակերպություն անդամ լինելու,
Սովետական Միություն դեմ ակտիվ պայքար մղե-
լու մեղադրանքով: 1939 թ. մայիսի 7-ին դատա-
պարտվել է 5 տարվա ազատազրկման ուղղիչ աշխատանքային
գաղութում՝ 3 տարով զրկվելով քաղաքական իրավունքից:
1939 թ. սեպտեմբերի 29-ին կարճվել է նրա դեմ հարուցված քրեական
գործը՝ ապացույցների բացակայությամբ պատճառով և ազատ է
արձակվել:



Շիրմազան (Շիրմազանյան) Գրիգոր Վասիլի
Ճարտարագետ-Ջրաչինարար,
ՀԽՍՀ վաստակավոր իռիգատոր



Ջերբակավել է 1937 թ. նոյեմբերի 5-ին Հակասովետական կազմակերպության անդամ լինելու մեղադրանքով: 1938 թ. Հուլիսի 20-ին դատապարտվել է 15 տարվա ազատազրկման, աքսորվել Նոբրիսկ և պատիժը կրել ուղղիչ աշխատանքային գաղութում: Արտադրական բարձր ցուցանիշների և զերազանց վարքի համար 1943 թ. սեպտեմբերի 8-ին երկու տարով կրճատվել է պատժի կրման ժամկետը, իսկ 1945 թ. ապրիլի 7-ին վաղաժամկետ ազատվել է պատժի կրումից, 1 տարի որպես ազատ վարձու գործավոր աշխատել տեղի գաղութների մետալուրգիական կոմբինատում:

1946 թ. վերադարձել է Հայաստան:

Արդարացվել է 1955 թ.: Գործը կարճվել է Հանցակազմի
բացակայության պատճառով:

և ինն ամսվա դադար-հեռացումից հետո վերականգնվեց իր սիրած աշխատանքում:

Այստեղ հարկ ենք համարում նշել, թե այդ ինն ամսվա հեռացումը համալսարանից ինչպիսի ծանր ապրումներ, ճիգ ու գերլարվածություն էին պահանջում մեծավաստակ գիտնականից: Միայն այն հանգամանքը, որ երբեմն մթով, հակառակ իր վատ տեսողությանը, թաքուն գնում, պտտվում էր համալսարանի շենքի շուրջ, պատերը շոշափում... Եվ ամեն անգամ ցավով ու դառնությամբ ասում էր. «Թող ինձանից բոլոր տեսակի պաշտոններն ու տիտղոսները խլեն, միայն թե չգրկեն ինձ իմ աշակերտներից (ուսանողներից նա այդպես էր անվանում)»³:

Թեև գլխատվեց մեր մտավորականության սերունդը, բայց հայ ժողովրդի բնածին իմաստնությունը սպանելն անհնարին էր: Շուտով գիտական ասպարեզ իջավ երիտասարդ գիտնականների մի նոր համաստեղություն՝ լեզվաբաններ Արարատ Դարիբյան, Գուրգեն Սևակ, Էդուարդ Աղայան, Գևորգ Ջահուկյան, Էդուարդ Աթալյան, գրականագետներ Մկրտիչ Մկրյան, Էդվարդ Ջրբաշյան, Հրանտ Թամրազյան, մաթեմատիկոսներ՝ Արտաշես Շահինյան, Մխիթար Ջրբաշյան, Սերգեյ Մերգելյան, Ռաֆայել Ալեքսանդրյան, մեխանիկոսներ՝ Նագուշ Հարությունյան, Սերգեյ Համբարձումյան, Վլադիմիր Սարգսյան, ֆիզիկոսներ՝ Նորայր Քոչարյան, Միքայել Տեր-Միքայելյան, Գուրգեն Սահակյան, Վիլի Հարությունյան, կենսաբաններ՝ Միքայել Չալախյան, Գագիկ Դավթյան, Դարյա Տետերևնիկովա-Բաբայան, քիմիկոսներ՝ Հովհաննես Չալքիկյան, Վերգինե Թառայան և ուրիշներ:

3 Նույն տեղում, էջ 109:



Գրծելյան Գևորգ Փարսաղանի
Դյուղատնտես

Ձերբակալվել է 1937 թ. նոյեմբերի 3-ին:
1941 թ. սեպտեմբերի 3-ին դատապարտվել 5
տարվա ազատազրկման ուղղիչ աշխատանքային
գաղութում:
1943 թ. սեպտեմբերի 8-ին ազատվել է պատժի
կրումից:



**Նավակատրիկյան Հովհաննես Ալեքսանդրի
Ծիզրիկոս, պրոֆեսոր**



Զերբակավել է 1938 թ. ապրիլի 2-ին
 Հակառուսական դաշնակցական խմբակ
 դեկավարելու մեղադրանքով: 1939 թ. սեպտեմբերի
 6-ին դատապարտվել է 10 տարվա ազատազրկման
 ուղղիչ աշխատանքային գաղութում: 1940 թ.
 մարտի 17-ին դատավճիռը համարվել է չեղյալ և
 դործն ուղարկվել է վերանայման: 1941 թ. սեպտեմբերի 3-ին որոշվել
 է 5 տարվա ազատազրկում և աքսորվել է Ղազախստան: Աքսորի
 տարիներին առժամանակ զբաղվել է մանկավարժական աշխատանքով,
 իսկ 1944 – 1951 թթ. եղել է Օրջոնիկիձե քաղաքի Հյուսիս-օսեթական
 մանկավարժական ինստիտուտի ամբիոնի վարիչ:
 Վախճանվել է 1952 թ. հոկտեմբերի 29-ին Երևանում:
 Արդարացվել է 1955 թ.: Գործը կարճվել է հանցակազմի բացակայու-
 թյան պատճառով:



*Ջուբարյան Գրիգոր Համբարձումի
Իրավաբան, Հրապարակախոս,
ՀԽՍՀ գիտություն վաստակավոր գործիչ*

Զերբակալվել է 1937 թ. հունիսի 15-ին ՀՅԴ
կուսակցության ղեկավար լինելու մեղադրանքով:
1939 թ. սեպտեմբերի 2-ին դատապարտվել է
գնդակահարության, սակայն 1940 թ. հունվարի
5-ին դատավճիռը համարվել է չեղյալ, գործն

ուղարկվել վերանայման և հոկտեմբերի 19-ին դատապարտվել է 8
տարվա ազատազրկման ուղղիչ աշխատանքային գաղութում: 1947
թ. հունվարի 15-ին ազատվել է պատժի կրումից առանց Երևանում
բնակվելու իրավունքի: Քանի որ ծախյալ բնակվել էր Երևանում,
ուստի 1948 թ. կրկին ձերբակալվել է և 1949 թ. փետրվարի 23-ին
աքսորվել Կրասնոյարսկի երկրամաս:

1956 թ. գործը կարճվել է հանցակազմի բացակայության պատճառով:
Վախճանվել է 1962 թ. սեպտեմբերի 6-ին Երևանում:



*Ստանիկյան Պողոս Հարությունի
Երկարամյա դասախոս Երևանի
Համալսարանում*

1949 թ. հունիսի 14-ին աքսորվել է Ալթայի
երկրամաս և առժամանակ դասախոսել Բառ-
նաուլի բժշկական ինստիտուտում:

1956 թ. հունիսի 2-ին ազատվել է աքսորից:



*Աճառյան Հրաչյա Հակոբի
Հայագետ, լեզվաբան, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտություն վաստակավոր գործիչ*

Զերբակալվել է 1937 թ. սեպտեմբերի 29-ին՝
մեղադրվելով լրտեսության, հակահեղափոխա-
կան գործունեության մեջ: 1939 թ. մայիսի 7-ին
դատապարտվել է 6 տարվա ազատազրկման,
սակայն սեպտեմբերի 29-ին չեղյալ է համարվել

դատավճիռը, և գործն ուղարկվել նոր հետաքննության:

Դեկտեմբերի 19-ին գործը կարճվել է և նա 23-ին ազատվել է
ձերբակալությունից:

1949 – 1950 թթ. հակամառականության մեղադրանքով վտարվել է
Համալսարանից, բայց 9 ամիս անց վերականգնվել է աշխատանքի:



*Հասրաթյան Մորուս (Մարգար) Ստեփանի
Պատմական և բանասիրական
գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ,
ՀԽՍՀ գիտություն վաստակավոր գործիչ*

Զերբակալվել է 1938 թ. մարտի 13-ին
հակահեղափոխական աջ տրոցկիստական
ազգայնական կազմակերպության անդամ

լինելու մեղադրանքով:

1939 թ. հունվարի 25-ին հեռացվել է կուսակցության շարքերից:

1939 թ. սեպտեմբերի 1-ին դատապարտվել է 6 տարվա ազատա-
զրկման ուղղիչ աշխատանքային գաղութում՝ 3 տարով զրկվելով
քաղաքական իրավունքից:

1940 թ. հունվարի 16-ին դատավճիռը կասեցվել է, ապացույցների
բացակայության պատճառով:

Գործը կարճվել է և նա ազատ է արձակվել:

Ե. Չաթենց
ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԿԱՅԻՆ

Ես ներշնչված արեգակով
Տենչում էի այգաբացին,
Սակայն եղավ նա մեզ համար
Միջնադարյան սրած կացին:
Եվ գլուխներ թռան պայծառ –
Կացնի զարկից այդ մահաբեր,
Արյունատենչ ու արնավառ
Դահիճը իր գահին է դեռ:
Նա մորթոտված գլուխների
Ուղեղներն է միայն ծամում,
Եվ մոլեգնում է վիթխարի
Մեր երկրին դառած սամում:
Օ, մորթոտված արեգակներ,
Խավարեցիք հորիզոնում,
Ձեր բախտակից պոետը դեռ
Բանտի մեջ ձեզ երգ է ձոնում:
Դուք ամենքով էլ դարավոր,
Դարի շնչով էիք ապրում,
Դարն եղավ ձեզ հուղարկավոր
Եվ նզովք է ձեզ ուղարկում,
Քանզի դեռ կա դահիճն ազահ
Արյունատենչ ու վիթխարի,
Կառափներով բարձրացած գահ՝
Դառած կացին միջնադարի:
Եվ այդ կացնով միջնադարյան
Արեգակներ գլխատվեցին,
Արևները, ավա՞ղ չկան,
Հորիզոնները մթնեցին ...

1937 թ. քանոն



*Եղիազարյան Արտավազդ (Արտո) Միքայելի
Հասարակական-քաղաքական գործիչ,
պատմական գիտությունների դոկտոր,
ՀԽՍՀ կոլլեկտորայի վաստակավոր գործիչ*

Զերբակավել է 1937 թ. նոյեմբերի 17-ին
Հակահեղափոխական աջ տրոցկիստական ազ-
գայնական կազմակերպության ղեկավարներից
մեկը լինելու, Խորհրդային Միության դեմ

պայքար ծավալելու մեղադրանքով:

1938 թ. դատապարտվել է 15 տարվա ազատազրկման ուղղիչ աշխա-
տանքային գաղութում (Նորիլսկ)՝ 5 տարով զրկվելով քաղաքական
իրավունքից: 1948 թ. հունիսի 9-ին, որպես հատուկ վտանգավոր
հանցագործ, տեղափոխվել է բանտ: 1950 թ. մայիսի 29-ին ազատվել
է, սակայն կրկին աքսորվել է Կրասնոյարսկի երկրամասի Իգարկա
քաղաք: 1954 թ. գործը բեկանվել է հանցակազմի բացակայության
պատճառով կարճվել է:

Արդարացվել է 1955 թ.:

Վախճանվել է 1974 թ. մարտի 16-ին Երևանում:



*Ղամբարյան Ստեփան Պողոսի
Քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ*

Զերբակավել է 1938 թ. հուլիսի 17-ին: 1939 թ.
սեպտեմբերի 6-ին դատապարտվել է 10 տարվա
ազատազրկման ուղղիչ աշխատանքային գաղութ-
թում: 1944 թ. ազատվել է պատժի կրումից:
Արդարացվել է 1955 թ.:



ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Երևանի պետական համալսարանը հանրապետության գիտական, կրթական, հասարակական, քաղաքական ու տնտեսական ոլորտների զարգացման գործում բեղուն գործունեություն ծավալեց մասն Հայրենական մեծ պատերազմի տարիներին: Ֆաշիստական Գերմանիան, նվաճելով գրեթե ողջ Եվրոպան, 1941 թ. հունիսի 21-ի լույս 22-ի գիշերը ուխտադրժորեն զավթողական պատերազմ սկսեց Խորհրդային Միության դեմ: Հունիսի 22-ին Մոսկվայից, ԽՍՀՄ-ի ողջ տարածքով մեկ, հնչեց կառավարության հատուկ ռադիոհաղորդագրությունը, որով կոչ էր արվում ժողովրդին համախմբել բոլոր ուժերը, արժանի հակահարված տալու թշնամուն և պաշտպանելու հայրենիքը: Գույժը ցնցեց ողջ ժողովրդին ու թափանցեց մասն Երևանի պետական համալսարանի պատերից ներս:

Այս արյունահեղ պատերազմն իր ավերիչ մասշտաբներով պատմության մեջ աննախադեպ էր և միայն խորհրդային պետությունից իսկ 20 միլիոն մարդու կյանք:

Հայ ժողովուրդը ԽՍՀՄ մյուս ժողովուրդների հետ միասին մահու և կենաց պայքարի էր դուրս եկել գերմանական ֆաշիզմի դեմ:



Համալսարանականները
գինպատրաստության ժամերին

Մեծ հայրենականի նախօրեին մայր կրթօջախի բանասիրական, պատմության, իրավաբանական, տնտեսագիտական, կենսաբանական, քիմիական, երկրաբանական, աշխարհագրական և ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետներում սովորում էր 1461 ուսանող, 68 ասպիրանտ, դասավանդում՝ 19 պրոֆեսոր, 53 դոցենտ, 94 ավագ դասախոս և 54 ասիստենտ:

Համալսարանում պարբերաբար գումարվում էին նիստեր, ժողովներ, միտինգներ, որտեղ թե՛ դեկլարությունը, թե՛ ուսանողներն ու դասախոսները, իրենց ելույթներում հիշելով հայ ժողովրդի անցած պատմական ուղին, նրա մղած ազգային ազատագրական շարժումների հերոսական էջերը, հայրենասիրական բոցաշունչ կոչերով կամավոր զինվորագրվում էին հայրենիքի պաշտպանության սուրբ գործին:

Համալսարանի ավագագույն դասախոսներ Հրաչյա Աճառյանը, Արսեն Տերտերյանը և Հովհաննես Կարապետյանը 1941 թ. հուլիսի 3-ին «Սովետական Հայաստան» թերթում հանդես են գալիս հողվածով, որտեղ գրում են. «Գիտակցելով բոլորի մեծությունն ու լրջությունը, մենք էլ, չնայած մեր ծերացած հասակին, պատրաստ ենք մեր կառավարության առաջին իսկ կոչին նետվել կովի՝ ի սպաս դնելու մեր ուժերն ու գիտելիքները մեր լայնածավալ հայրենիքի համար»:

Պատերազմական տարիներին համալսարանի առջև ծառացան հրատապ նոր խնդիրներ. վերանայվեցին ուսումնական ծրագրերը, ներդրվեցին ռազմական պատրաստման դասընթացներ, կազմակերպվեցին ռազմա-պաշտպանական միջոցառումներ, ուժեղացվեց ռազմահայրենասիրական, գաղափարական-դաստիարակչական աշ-



Համալսարանականները
զինպատրաստության ժամերին



Հայրենական մեծ պատերազմի
համալսարանական վետերանները



Գեներալ Նվեր Սաֆարյանը
համալսարանականների հետ

խատանքը՝ ուսանողների մեջ արմատավորելու թշնամուն հաղթելու կամք ու վճռականություն: Կազմակերպվեց նաև ուսանողուհիների բուժքույրական դասընթացներ, որտեղ սովորեցնում էին առաջին բուժօգնության ձևերն ու մեթոդները, իսկ գործնական պարապմունքներն անցկացնում էին հոսպիտալներում: Այս դասընթացների առաջին շրջանավարտների մի մասը ծառայության մեկնեց հանրապետության հիվանդանոցներ ու հոսպիտալներ, իսկ մյուսները՝ տարբեր ռազմաճակատներ:

ՀԿԿ Կենտկոմի որոշմամբ հանրապետության բոլոր հիմնարկներում կազմակերպվեցին աշխարհագրեր: ԵՊՀ-ում ստեղծվեցին աշխարհագրային վաշտեր, և հրամանատարներ նշանակվեցին զինվորական գործին քաջատեղյակ սպաները, իսկ քաղաքական գծով տեղակալներ՝ կուսակցական կոմիտեի և ֆակուլտետային բյուրոների քարտուղարները: Համալսարանի աշխարհագրի ընդհանուր հրամանատար նշանակվեց ռազմական ամբիոնի դասախոս, լեյտենանտ Արտիկ Միքայելյանը, կոմիսար՝ առաջին քարտուղար Դավիթ Դավթյանը: Աշխարհագրային միավորումներում ուսանողության ու դասախոսական կազմի ռազմապաշտպանական ուսուցման գործի կազմակերպման ընդհանուր պատասխանատվությունը դրվեց ԵՊՀ ռեկտոր Գարեգին Պետրոսյանի վրա:

1941 թ. հուլիսի 11-ին Երևանի երկաթուղային կայարանից համալսարանականների առաջին կամավորական խումբը մեկնեց բանակ: Նրանց մեջ էին Պարույր Առաքելյանը, Դրաստամատ Ավագյանը, Մխիթար Մկրտչյանը, Վահրամ Պետրոսյանը և էլի շատերը, որոնք իրենց նամակներում ընկերներին հավաստիացնում

էին, որ կկռվեն ու կապաքարեն արիաբար՝ բարձր պահելով համալսարանի պատիվն ու հեղինակությունը:

Հատկապես հուզիչ էր երկրաբանական ֆակուլտետի ուսանող Սասունիկ Գրիգորյանի նամակի վերջաբանը, որտեղ գրված էր. «Ես այլևս ծնողներիս մոտիկից մխիթարելու և ուրախություն պատճառելու հնարավորություն չունեմ: Խնդրում եմ հաճախակի այցելեք նրանց ու մխիթարեք իմ փոխարեն: Ես հավատով եմ լցված մեր հաղթանակի նկատմամբ, բայց կվիճակվի՞ ինձ վերադառնալ և նորից գրկախառնվել նրանց հետ, դժվարանում եմ ասել: Եթե հազարավոր եղբայր ռազմիկների հետ ընկնեմ ռազմադաշտում, իմացեք, որ ծնողներս կընդունեն ձեզ իմ փոխարեն... »

Գարեգին Պետրոսյանը ելույթ ունենալով համալսարանի ընդհանուր ժողովում՝ հայտարարեց, որ ինքնական թողնում է ռեկտորի պաշտոնն ու կամավոր մեկնում ռազմաճակատ՝ պաշտպանելու հայրենիքը: Դա հուզիչ ու ոգեշնչող կոչ էր, որը լայն արձագանք գտավ համալսարանականների շրջանում և նրանցից շատերը հետևեցին իրենց ռեկտորի օրինակին: Պատերազմի միայն առաջին տարում ռազմաճակատ մեկնեց 360 համալսարանական, այդ թվում՝ Անուշավան Արզումանյանը, Գևորգ Ջահուկյանը, Գևորգ Ղարիբջանյանը, Վաչե Նալբանդյանը, Աշոտ Սսլանյանը, Հովհաննես Բարսեղյանը, Սիրաք Գյուլբուդաղյանը, Պետրոս Բեգիրզանյանը, Պերճ Բոշնաղյանը, Սերոբ Պողոսյանը, Գևորգ Բաբաջանյանը, Բենիկ Թումանյանը, Կորյուն Շահբաղյանը, Վաչագան Սաղաթելյանը և շատ ուրիշներ:

Համալսարանի աշխարհագրայիններն իրենց ուժերով խրա-



Համալսարանականները
նշում են հաղթանակի օրը՝ մայիսի 9-ը



Ղազարյան Անդրանիկ Աբրահամի

1904 – 1992

ԵՊՀ ռազմական ամբիոնի պետ՝ 1938 – 1939 թթ.

1943 թ. հոկտեմբերի 16-ին հրաձգային դիվիզիայի հրամանատար գեներալ մայոր Անդրանիկ Աբրահամի Ղազարյանին շնորհվել է Խորհրդային Միության հերոսի կոչում: Պարգևատրվել է Լենինի, Սուվորովի 2-րդ աստիճանի, Կարմիր դրոշի, Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշաններով ու մեդալներով:



Սարգսյան Սուրեն Արտաշեսի

1924 – 2009

Սովորել է ԵՊՀ

ֆիզիկամաթեմատիկական

ֆակուլտետում:

1945 թ. մարտի 24-ին Սուրեն Արտաշեսի Սարգսյանին շնորհվել է Խորհրդային Միության հերոսի կոչում:

Պարգևատրվել է Լենինի, Կարմիր դրոշի, Կարմիր աստղի, «Պատվո նշան», Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշաններով ու մեդալներով:

մատներ ու հակատանկային արգելակներ կառուցեցին Նորքում, Քանաքեռի շրջակայքում, մասնակցեցին Երևանի կարևոր ձեռնարկություններին հարող տարածքներում ռազմապաշտպանական նշանակություն ունեցող կառույցների շինարարությանը:

1941 թ. աշնանը երկրում ստեղծվեց ծանր իրավիճակ. թշնամու գերակշիռ ուժերը արագորեն մոտենում էին Մոսկվային. Ղրիմում, ճեղքելով Պերեկուպի պարանոցը, պաշարեցին Սևաստոպոլը, Լենինգրադը բլոկադայի ենթարկելու նպատակով մտան Տիֆլիսի շրջանը: Հարձակման նախաձեռնությունը թշնամու ձեռքում էր, և երկիրն ահեղ օրեր էր ապրում:

Հենց այդ ժամանակ էր, որ հայրենիքը պաշտպանելու շարժման ալիքը նոր թափ ստացավ: ԵՊՀ ուսանողական ընդհանուր ժողովում հնչած ելույթներն այնքան ոգևորիչ էին, որ հենց դահլիճում, դեսանտային զորամասերում ծառայության մեկնելու համար բազմաթիվ դիմումներ ներկայացվեցին, և կամավոր հիմունքներով ցուցակագրվեց շուրջ 150 ուսանող: Համալսարանականները կոչով դիմեցին մյուս բուհերի ուսանողությանը՝ զինվորագրվելու կամավորական շարժմանը: Կոչն իր արձագանքը գտավ, և հանրապետության ինստիտուտների հարյուրավոր ուսանողներ կամավոր զինվորագրվեցին դեսանտային զորամասերում ծառայության մեկնելու համար:

1942 թ. Պաշտպանության պետական կոմիտեի առաջադրանքով Հայաստանը պետք է թողարկեր ռազմական արտադրանքի նոր տեսակներ, որի համար անհրաժեշտ էր վերակառուցել արտադրության աշխատատար պրոցեսները, մշակել նոր տեխնոլոգիա: Այդ գործում արտադրական կոլեկտիվներին մեծ օգնություն ցույց տվե-

ցին հանրապետության գիտահետազոտական ինստիտուտները, բուհերը, իհարկե, նաև Երևանի պետական համալսարանը:

Համալսարանի ամբիոններն ու լաբորատորիաները մշակեցին և արտադրության մեջ ներդրեցին մի շարք նորարարություններ. ԵՊՀ քիմիկոսները գազապաստարանների համար մշակեցին ածուխի ստացման մեթոդիկա, ֆիզիոլոգիական աղի ստացման տեխնոլոգիա, ուսումնասիրեցին Երևանի տրամվայի ընդգետնյա էլեկտրական և հեռախոսային ցանցի կաբելների կոռոզիայի պատճառները և միջոցառումներ ձեռնարկեցին դրանց դեմ պայքարելու համար, նիկելապատեցին կաուչուկի կոմբինատի ԱՊՍ կայանի համար անհրաժեշտ 700 մանր դետալներ, ուսումնասիրեցին Ագարակի ու Փիրդուռյանի հանքերը և 909 մմուշի մեջ ճշտեցին պղնձի քանակը և այլն: ԵՊՀ երկրաբանները հետազոտեցին և ճշգրտեցին հանրապետության հանքային հարստությունների պաշարները, տնտեսագետները օգնեցին հանրապետության պլանավորող օրգաններին՝ ճիշտ հաշվառման ենթարկելու հումքային ու աշխատանքային հնարավորությունները: Արտադրության մեջ նոր մեխանիզմների ներդրման գործում արդյունաբերական ձեռնարկություններին օգնեցին ԵՊՀ ֆիզիկոսները, մաթեմատիկոսներն ու մեխանիկոսները:

Գրեթե ամեն օր համալսարանից աշխատանքային խմբեր էին ուղարկվում հանրապետության տարբեր շրջաններ՝ դաշտային աշխատանքներում կոլտնտեսականներին օգնություն ցույց տալու համար: Հարյուրավոր ուսանողներ ու դասախոսներ դասերից հետո Երևանի երկաթուղային կայարանում ու ավտոկայանում օգնում էին բարձման ու բեռնաթափման աշխատանքներին: Համալսարա-



Վետերանների հերթական հանդիպումը



Ժողովուրդը տոնում է իր փառահեղ հաղթանակը

նակները մեծ եռանդով կազմակերպեցին մետաղի ջարդոնի և բանակի համար տաք հագուստների հավաքման աշխատանքները, մասնակցեցին Երևանում հակաօդային պաշտպանության կազմակերպման ու ղեկավարման գործին և այլն:

Պատերազմի տարիներին համալսարանի ղեկավարությունը, կուսակցական և հասարակական կազմակերպությունները հատուկ ուշադրության էին արժանացնում ռազմաճակատներում գոհված կամ գործող բանակում գտնվող զինվորականների զավակներին. զիջում էին ուսման վարձը, պարբերաբար տալիս դրամական օգնություն, ապահովում հագուստով և այլն: Դասախոսներից շատերը հաճախ այցելում էին հանրակացարաններ, պատասխանում իրենց սաներին հուզող հարցերին, որն էլ ավելի էր պարտավորեցնում ու ոգևորում ուսանողներին: Եվ, եթե չլիներ այդ հոգատարությունը, շատ կարիքավորներ այդ ծանր տարիներին դժվար թե կարողանային ավարտել համալսարանը:

Համալսարանականների հայրենասիրական ոգին բարձր պահելու նպատակով կազմակերպվում էին նաև պատերազմի պահանջներից բխող թեմաներով ուսանողական գիտաժողովներ, հանդիպումներ ռազմաճակատից վերադարձած զինվորականների, զրականության ու մշակույթի գործիչների հետ:

Մեծ հայրենականի տարիներին հայրենիքի պաշտպանության գործին զինվորագրված 850 համալսարանականների՝ դասախոսների, ասպիրանտների, ուսանողների ու վարչատնտեսական ոլորտի աշխատողների գրեթե 90 տոկոսը եղավ պատերազմի ռազմաճակատներում: Նրանցից 300-ը գոհվեցին մարտերում: Շատերը պար-

գևատրվեցին Խորհրդային Միության շքանշաններով ու մեդալներով: Մեծ թվով համալսարանականներ ընկան հերոսի մահով՝ իրենց կյանքը նվիրաբերելով եկող սերունդներին, իսկ շատերն էլ վերադարձան վիրավոր ու հաշմանդամ: Դասախոսներից գեներալ-մայոր Անդրանիկ Ղազարյանը, իսկ ուսանողներից՝ Սուրեն Սարգսյանը արժանացան Խորհրդային Միության հերոսի բարձր կոչման:

1979 թ. մայիսի 8-ին, Մեծ հայրենականում սովետական ժողովրդի տարած փառապանծ հաղթանակի 34-րդ տարեդարձի նախօրեին, Երևանի պետական համալսարանի բակում հանդիսավորությամբ բացվեց Հայրենական մեծ պատերազմում զոհված համալսարանականների հիշատակը հավերժացնող աղբյուր-հուշարձանը, որի վրա գրված է «Հավերժ փառք 1941 – 1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում զոհված համալսարանականներին»: 5 մ. բարձրություն ունեցող գրանիտե հուշարձանին ամրացված պղնձե թռչնող կանաչ տերևը խորհրդանշում է երիտասարդ զոհվածներին, իսկ աղբյուրից ավազանի մեջ հոսող ջուրը՝ կյանքն ու հավերժությունը:

Ոչինչ չի մոռացվել, ոչ ոք չի մոռացվել ...

Հուշարձանը դրա վառ ապացույցն է և սիրո ու երախտագիտության խոսք՝ զոհված համալսարանականների հիշատակին, ովքեր առանց երկմտանքի մեկնեցին ռազմաճակատ՝ պաշտպանելու սուրբ հողն հայրենի և զոհվելով անմահացան:



Հայրենական պատերազմում զոհված
համալսարանականների հիշատակը հավերժացնող
աղբյուր-հուշարձանը ԵՊՀ բակում



ԵՊՀ համալիրի ճարտարապետ
Էդմոն Տիգրանյան



Համալսարանի համալիրի նոր նախագծի քննարկումը, 1954 թ.
ձախից աջ՝ Ալեքսանդր Մելիքյան, Գարեգին Պետրոսյան,
Հայկազ Ադամյան

Հետպատերազմյան տարիները համալսարանի համար բուռն զարգացման շրջան էր: Նոր թափ ստացան ուսումնագիտական աշխատանքներն ու մշակութային կյանքը: Ստեղծվեցին նոր ֆակուլտետներ ու ամբիոններ, բացվեցին նոր մասնագիտություններ ու մասնագիտացումներ: Աճում էր ուսանողների թիվը: Եթե 1946 թ. բուհն ուներ 1244 ուսանող, ապա 1951-ին ուսանողների թիվը հասնում է 2548-ի:

1951 թ. համալսարանում կյանքի է կոչվել հեռակա, իսկ 1954-ին՝ երեկոյան ուսուցումը: 1954 թ. Համամիութենական հեռակա իրավաբանական ինստիտուտի (Մոսկվա) երևանյան մասնաճյուղը միացվել է Երևանի պետական համալսարանին, որի հիման վրա իրավաբանական ֆակուլտետում ստեղծվել են երկու նոր բաժիններ՝ երեկոյան և հեռակա՝ հայկական և ռուսական մասնաճյուղերով:

1957 թ. համալսարանին է միացվել Երևանի պետական ռուսական մանկավարժական ինստիտուտը, որի հիման վրա ձևավորվել են ռուսաց լեզվի և գրականության, ինչպես նաև արևմտաեվրոպական լեզուների և գրականության ֆակուլտետները: Դրանց են միացվել նաև ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի կազմում մինչ այդ գործող համանուն բաժինները: Սակայն 1962 թ. այդ ֆակուլտետները համալսարանից անջատվել և դրանց հիմքի վրա բացվել է Երևանի Վ. Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների պետական մանկավարժական ինստիտուտը (այժմ՝ Վ. Բրյուսովի անվան պետական լեզվա հասարակագիտական համալսարան), այնուհետև համալսարանի բանասիրական ֆակուլտետի կազմում վերականգնվել են ռուսաց լեզվի ու գրականության և ռոմանագերմանական լեզու-

ների ու արտասահմանյան գրականության բաժինները:

1955 թ. հիմնվել է տիեզերական ճառագայթների և միջուկային ֆիզիկայի պրոբլեմային լաբորատորիան (1963-ից՝ ռադիացիոն ֆիզիկայի պրոբլեմային լաբորատորիա): 1957 թ. ԵՊՀ աստղադիտարանին կից կազմակերպվել է Երկրի արհեստական, ինչպես նաև տիեզերական արբանյակների դիտումների ու լուսանկարահանումների կայան, որտեղ կատարվել են միութենական ու միջազգային համատեղ հատուկ դիտարկումներ: Դրանց արդյունքները բարձր են գնահատվել ԽՍՀՄ ԳԱ աստղագիտական խորհրդի կողմից: 1959 թ. հիմնադրվել են պոլիմերման պրոցեսների կինետիկայի և պոլիմերների ֆիզիկաքիմիական հատկությունների ուսումնասիրության և էլեկտրոնային հաշվիչ մեքենաների պրոբլեմային գիտահետազոտական լաբորատորիաները: Վերջինս 1963 թ. միավորվել է ՀԽՍՀ ԳԱ հաշվողական կենտրոնի հետ և կազմավորվել է ՀԽՍՀ ԳԱ և ԵՊՀ միացյալ հաշվողական կենտրոնը: 1959 թ. է կազմակերպվել նաև կիսահաղորդիչ և էլեկտրատեխնիկական նյութերի ֆիզիկայի գիտահետազոտական պրոբլեմային լաբորատորիան: 1960 թ. ԵՊՀ-ում հիմնադրվել է հանրապետությունում իր տեսակի մեջ եզակի՝ առաջին բուհական թանգարանը:

1960 թ. համալսարանն ուներ 12 ֆակուլտետ, 58 ամբիոն, 400 դասախոս, 6000 ուսանող: Անհրաժեշտ էր էլ ավելի ընդլայնել նրա ուսումնանյութական և լաբորատոր բազան:

1953 թ. մարտին ԽՍՀՄ կառավարության որոշմամբ Երևանի Ե. Չարենց և Ա. Մռավյան (այժմ՝ Ալեք Մանուկյան) փողոցների միջև ընկած 8 հա տարածքում սկսվել է ԵՊՀ նոր համալիրի կառու-



Կենտրոնական մասնաշենքի
շինարարությունը



Համալսարանի ղեկավարությունը
շինհրապարակում



Ուսումնական մասնաշենքերի շինարարությունը

ցումը (ճարտարապետ՝ Էդմոն Տիգրանյան), որը համալսարանի կարևորագույն ձեռքբերումներից էր: 1954 թ. դրվել են երկու՝ հասարակագիտական ֆակուլտետների ուսումնական մասնաշենքերի հիմքերը, իսկ 1960 – 1965 թթ. կառուցվել են կենտրոնական, ինչպես նաև քիմիական և մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետների մասնաշենքերը: Համալիրի կառուցումը տևել է ավելի քան 17 տարի:

1960-70-ական թվականները Երևանի պետական համալսարանի համար աննախադեպ վերելքի ժամանակաշրջան էր: Գիտակրթական աշխատանքները նոր առաջընթաց էին ապրում: Ստեղծվում էին նոր ամբիոններ ու լաբորատորիաներ: Հաշվի առնելով օտարերկրյա ուսանողների թվաքանակի աճը՝ 1961 թ. կազմավորվում է արտասահմանյան քաղաքացիների նախապատրաստական ֆակուլտետը, 1966 թ.՝ բուհերի դասախոսական կազմի որակավորման, իսկ 1968-ին՝ ղեկավար աշխատողների ու մասնագետների տնտեսագիտական գիտելիքների բարձրացման ֆակուլտետները: Կենսաբանական ֆակուլտետում 1963 թ. բացվում է ցիտոլոգիայի գիտահետազոտական պրոբլեմային լաբորատորիան: Նույն թվականին ակադեմիկոս Մկրտիչ Տեր-Կարապետյանի նախաձեռնությամբ կազմակերպվում է տեխնիկական կենսաքիմիայի գիտահետազոտական լաբորատորիան, իսկ 1964-ին ֆիզիկայի ֆակուլտետում գործող առանձին գիտական խմբերի հիման վրա ձևավորվում է պինդ մարմնի ֆիզիկայի գիտահետազոտական պրոբլեմային լաբորատորիան, որը 1978 թ. ստեղծված ռենտգենյան հետազոտությունների ճյուղային լաբորատորիայի հետ մեկտեղ, պրոֆ. Պետրոս Բեգիրզանյանի ղեկավարությամբ, դառնում է ռենտգենյան հետա-

գոտությունների առաջատար գիտական կենտրոնը Հայաստանում: Կարևոր ձեռքբերում էր նաև 1969 թ. հայագիտական հետազոտությունների լաբորատորիայի (հետագայում՝ ԵՊՀ հայագիտական հետազոտությունների կենտրոն, այժմ՝ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ) հիմնումը: Այս տարիներին ԵՊՀ-ում մեծ վերելք է ապրում նաև հրատարակչական գործը, լույս են տեսնում նոր պարբերականներ և մեծարժեք աշխատություններ:

Ուսումնագիտական աշխատանքներում, հասարակական-քաղաքական և մշակութային կյանքում ձեռք բերված նվաճումների համար 1967 թ. համալսարանն արժանացել է ՀԿԿ Կենտկոմի, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության, ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի և ՀԱՄԽ-ի Հոբելյանական հուշադրոշի, իսկ 1970-ին՝ Լենինյան պատվոգրի:



Համալիրի շինարարական աշխատանքները



Կենսաբանական ֆակուլտետի մասնաշենքի հիմնարկեքը, 1953 թ.



Ուսումնական մասնաշենքերի շինարարությունը

**ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՐՈՒԹՅԱՆ
ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ**

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՐՄԻՐ ԴՐՈՇԻ ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Բարձրորակ մասնագետների պատրաստման ասպարեզում ունեցած վաստակի և գիտական հետազոտությունների զարգացման գործում ձեռք բերած նվաճումների համար Երևանի պետական համալսարանը պարգևատրել Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով:



ՍՍՀՄ Գերագույն Սովետի
նախագահության նախագահ՝
Ն. ՊՈՂԳՈՐՆԻ

ՍՍՀՄ Գերագույն Սովետի
նախագահության քարտուղար՝
Ս. ԳԵՈՐԳԱՉԵ

Մոսկվա, Կրեմլ,
21 դեկտեմբերի, 1970 թ.

1970 թ. լրանում էր ԵՊՀ հիմնադրման 50-ամյակը⁴: Այդ շրջանում համալսարանն ուներ 12 ֆակուլտետ, 80 ամբիոն, 900 դասախոս, այդ թվում՝ ԽՍՀՄ և ՀԽՍՀ ԳԱ 30 իսկական և թղթակից անդամ, գիտությունների 88 դոկտոր ու պրոֆեսոր, 320 թեկնածու ու դոցենտ, 180-ից ավելի գիտաշխատող, ավելի քան 1300 ուսումնաօժանդակ աշխատող: 12 հազար ուսանող գիտելիքներ էր ստանում 50 մասնագիտությամբ և շուրջ 100 մասնագիտացմամբ:

Մայր բուհի 50-ամյակի նախաշեմին կենտրոնական մասնաշենքի նախասրահում, ի նշան երախտագիտության, տեղադրվեցին համալսարանի երախտավորներ Հակոբ Մանանդյանի, Մանուկ Աբեղյանի, Հրաչյա Աճառյանի, Լեոյի, Վահան Արծրունու և Ստեփան Ղամբարյանի բրոնզաձույլ կիսանդրիները: Հետագայում այս շարքը լրացրին Նիկոլ Աղբալյանի, Յուրի Ղամբարյանի, Գարեգին Հովսեփյանի, Աշխարհբեկ Քալանթարի, Աշոտ Հովհաննիսյանի, Գրիգոր Չուբարյանի, Գրիգոր Ղափանցյանի, Վիկտոր Համբարձումյանի, Գևորգ Ջահուկյանի, Էդուարդ Աղայանի, Արտաշես Շահինյանի, Գուրգեն Սահակյանի, Նորայր Միսակյանի կիսանդրիները, որոնք խորհրդանշում են ականավոր գիտ-

⁴ Երևանի պետական համալսարանի պատմության համար շրջադարձային նշանակություն է ունեցել 1989 թ. մայիսի 15-ին տեղի ունեցած հոբելյանական գիտական նստաշրջանը՝ նվիրված նրա հիմնադրման թվականի ճշգրտմանը: Մինչ այդ ընդունված էր այն տեսակետը, որ Երևանի համալսարանը խորհրդային կարգերի ծնունդ է, և նրա հիմնադրման որոշումը կայացվել է ոչ թե 1919 թ. մայիսի 16-ին, այլ խորհրդային կարգերի օրոք՝ 1920 թ. դեկտեմբերի 17-ին: Հիշյալ հոբելյանական նստաշրջանում կարդացված զեկուցումների դրույթների, արխիվային փաստաթղթերի, մամուլի հրապարակումների ու ժամանակակիցների հիշողությունների հիման վրա վերջնականապես հաստատվել և վերականգնվել է այն պատմական ճշմարտությունը, որ Երևանի պետական համալսարանը հիմնադրվել է 1919 թ. մայիսի 16-ին: Տե՛ս Վ. Ս. Մաղալյան «Երևանի համալսարանի հոբելյանները» (Եր., 2011), էջ 110, 114:

նականների ու մանկավարժների դերը համալսարանի հիմնադրման, կայացման և համալսարանական գիտության զարգացման գործում: 1970 թ. դեկտեմբերի 21-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով բարձրորակ մասնագետների պատրաստման ասպարեզում ունեցած վաստակի և գիտահետազոտական նվաճումների համար Երևանի պետական համալսարանը պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով:

Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի վեհաշուք դահլիճում 1970 թ. դեկտեմբերի 23-ին Երևանի պետական համալսարանի հիմնադրման 50-ամյակին նվիրված հանդիսավոր նիստում Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Անտոն Քոչինյանը հրապարակում է հրամանագիրը և շքանշանն ամրացնում ԵՊՀ դրոշին:

ԽՍՀՄ Բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստր Վ. Ելյուտինի 1970 թ. դեկտեմբերի 28-ի հրամանագրով Երևանի պետական համալսարանը վերանվանվում է Երևանի Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիր պետական համալսարան:

Տարբեր տարիների համալսարանն ունեցել է տարբեր անվանումներ. 1919 – 1920 թթ.՝ Հայաստանի համալսարան, 1920 – 1923 թթ.՝ Երևանի ժողովրդական համալսարան, 1923 – 1930 թթ.՝ ՀՄԽՀ պետական համալսարան, 1930 – 1933 թթ.՝ Մանկավարժական ինստիտուտ, 1933 – 1941 թթ.՝ Երևանի պետական համալսարան, 1941 – 1958 թթ.՝ Երևանի Վ. Մոլոտովի անվան պետական համալսարան, 1958 – 1970 թթ.՝ Երևանի պետական համալսարան, 1970 – 1990 թթ.՝ Երևանի Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիր պետական



Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Անտոն Քոչինյանը շքանշանն ամրացնում է ԵՊՀ դրոշին

«Մեծ է համալսարանի դերը Խորհրդային Հայաստանի գիտության զարգացման գործում: Համալսարանը հանդիսացավ հետազոտությունների առաջին օջախը և այժմ էլ հանրապետության գիտական խոշորագույն կենտրոններից է, որտեղ լուրջ ուսումնասիրություններ են կատարվում բնական և հասարակական գիտությունների բազմաթիվ բնագավառներում»:

Հայաստանի կոմկուսի Կենտկոմի
առաջին քարտուղար՝ Անտոն Քոչինյան

համալսարան, 1990 – 2001 թթ՝ Երևանի պետական համալսարան, 2001 – 2014 թթ.՝ «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 2014-ից՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ:

Համալսարանը կրթության ու գիտության ասպարեզում շարունակում էր իր հաղթարշավը: Տարեցտարի ավելանում էր ուսանողների թիվը, ստեղծվում էին նոր ամբիոններ ու գիտահետազոտական լաբորատորիաներ, հրատարակվում արժեքավոր գիտական ուսումնասիրություններ ու դասագրքեր:

1976-ին բանասիրական ֆակուլտետում գործող մանկավարժության և հոգեբանության համահամալսարանական ամբիոնի հիման վրա ստեղծվում են մանկավարժության և հոգեբանության ամբիոնները: Վերջինիս վարիչ է նշանակվում հոգեբան, պրոֆ. Հովսեփ Թութունջյանը, որի ջանքերով 1979 թ. հիմնադրվում է ինժեներական հոգեբանության պրոբլեմային լաբորատորիան: 1978 թ. ֆիզիկայի ֆակուլտետում գործող ճառագայթային ֆիզիկայի պրոբլեմային լաբորատորիայի հիմքի վրա ստեղծվում է կոնդենսացված միջավայրերի ֆիզիկայի ինստիտուտը (հետագայում՝ խիտ միջավայրերի ֆիզիկայի ինստիտուտ), որը հանրապետության բուհական առաջին գիտահետազոտական կենտրոնն էր: Այն մեծ հաջողությամբ հետազոտություններ էր կատարում բյուրեղագիտության և քվանտային էլեկտրոնիկայի բնագավառներում: ԵՊՀ գիտահետազոտական մասին կից գործում էին գիտատեխնիկական ինֆորմացիայի և պատենտալիցենզային բաժինները, տարբեր ֆակուլտետներում ձևավորվել էին շուրջ մեկուկես

տասնյակ պրոբլեմային և ճյուղային լաբորատորիաներ, գործում էին գիտահետազոտական մի շարք խմբեր:

Երևանի պետական համալսարանը ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի և բարձրագույն կրթության մինիստրության 1978 թ. ապրիլի 6-ի որոշմամբ դասվել է Խորհրդային Միության 70 առաջատար բուհերի շարքը:

Համալսարանն իր գոյության 60 տարում երկրին տվել էր 40 հազար շրջանավարտ, որոնցից 50-ը դարձան ԽՍՀՄ և ՀԽՍՀ գիտությունների ակադեմիաների իսկական և թղթակից անդամներ, իսկ ավելի քան 2000-ը արժանացան գիտությունների դոկտորի կամ թեկնածուի գիտական աստիճանի:

Պետությունն ըստ արժանվույն գնահատելով ԵՊՀ մանկավարժների ու գիտնականների աշխատանքը՝ նրանցից շատերին արժանացրել է պետական ու կառավարական բարձր պարգևների՝ մեդալների ու շքանշանների: 1960-90-ականներին համալսարանական շուրջ 100 գիտնականի շնորհվել է Գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում, այդ թվում՝ Հովհաննես Մաղաքյանին (1961), Աշոտ Ասլանյանին (1961), Մկրտիչ Մկրյանին (1961), Գուրգեն Սևակին (1961), Արտաշես Շահինյանին (1961), Արմենակ Մնջոյանին (1961), Հովհաննես Չալթիկյանին (1961), Արաքսի Բաբայանին (1961), Վերգինե Թառայանին (1961), Մկրտիչ Ներսիսյանին (1961), Կարապետ Մելիք-Օհանջանյանին (1962), Մխիթար Ջրբաշյանին (1964), Գևորգ Ջահուկյանին (1965), Բաբկեն Առաքելյանին (1965), Արմեն Թախտաջյանին (1967), Միքայել Չալախյանին (1967), Էդուարդ Աղայանին (1970), Էդվարդ Ջրբաշյանին (1970), Հրանտ

Թամրազյանին (1970), Հովհաննես Բարսեղյանին (1970), Գուրգեն Սահակյանին (1970), Հայկազ Ժամկոչյանին (1970), Ալեքսեյ Սուքիասյանին (1971), Վռամշապուհ Թադևոսյանին (1974), Բենիկ Թումանյանին (1979), Վիլիկ Հարությունյանին (1981), Մեհենդակ Մելիքյանին (1981), Գերասիմ Փանոսյանին (1981) և ուրիշների: Շատերն էլ դարձան ԽՍՀՄ և ՀԽՍՀ Պետական մրցանակների դափնեկիրներ:

Ցավոք, Երևանի պետական համալսարանի այս վերընթացի ճանապարհին 1988 թ. դեկտեմբերի 7-ի Սպիտակի աղետալի երկրաշարժը ծանր հետևանքներ ունեցավ նաև համալսարանի կյանքում: ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողությունը լծվեց երկրաշարժի գոտում փրկարարական աշխատանքներին մասնակցելու և տուժածներին օգնություն կազմակերպելու գործին:



Համալսարանականները օգնություն են կազմակերպում երկրաշարժից տուժածներին

ԵՊՀ-Ն ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԿՐՈՂ ՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԱՌԱՋԱՄԱՐՏԻԿ

1956 թ. փետրվարին տեղի ունեցած ԽՄԿԿ 20-րդ համագումարը, որ դատապարտեց անհատի պաշտամունքը, ԽՍՀՄ պատմության մեջ մտցրեց աննախադեպ բեկում. սկսվեց մի ժամանակաշրջան, երբ փոխվեց մարդկանց մտածելակերպը, աստիճանաբար ձևավորվեց այլախոհական մթնոլորտ: Հայաստանում գիտության ու մշակույթի մի շարք գործիչների նախաձեռնությամբ ստեղծվեցին ընդհատակյա խմբավորումներ, իսկ հետագայում՝ նաև կուսակցություններ (Ազգային միաբանություն, Հայաստանի սահմանադրական իրավունքի միություն և այլն), որոնք պարբերաբար տպագրում, կամ ձեռագիր տարածում էին անլեգալ թերթեր ու բրոշյուրներ:

Կոտրվեց սառույցը...

Մոտենում էր Հայոց Մեծ եղեռնի 50-ամյակը:

Եվ 1915-ին Օսմանյան կայսրության պետականորեն կազմակերպած ու իրագործած Հայոց ցեղասպանությունից մազապուրծ մեր տատիկներն ու պապիկները գավակներին ու թոռներին սկսեցին շշուկով պատմել եղեռնի դժնդակ տարիներին իրենց աչքի առջև թուրքերի կատարած սահմոկեցուցիչ սպանությունների ու լլկումների,

իրենց կրած կորուստների ու անլուր տառապանքների մասին.....

Սկսված գործընթացին մեծապես նպաստեց մշակութային մի շատ կարևոր իրողություն, որը երբեք չպետք է մոռանալ. 1964 թ. աշնանը առաջին անգամ Հայաստանում հրատարակվեց Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» վեպը, որը դարձավ հրապարակային լայն քննարկումների առարկա: Այդ տեսակետից հատկապես հիշարժան է 1965 թ. փետրվարի 27-ին Աբովյան փողոցում գտնվող ԵՊՀ մասնաշենքի (պատմական սև շենքի) մեծ դահլիճում պատմության ֆակուլտետի ասպիրանտների (Հրաչիկ Միրզոյան՝ այսօր՝ փիլ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Շմավոն Թորոսյան) և ուսանողների (Ռոբերտ Հակոբյան, Նորայր Դավթյան, Շալիկո Հովհաննիսյան) համատեղ ջանքերով կազմակերպված Մուսա լեռան հերոսամարտի մասնակիցների (11 տղամարդ և 1 կին) հետ հանդիպման երեկոն, որտեղ զեկուցումով հանդես եկավ մուսալեռցի Ալեքսանդր Փաշա-յանը: Այն առիթ տվեց Երևանից սփյուռքի համար հեռարձակվող ռադիոհաղորդման մեջ առաջին անգամ մայր հայրենիքից բարձրաձայնելու Մուսա լեռան հերոսամարտի իրողությունը (բարեբախտաբար «Երևանի համալսարան» բազմատիրաժ թերթը մարտի 10-ի հերթական համարում անդրադարձել է այդ իրադարձությանը՝ «Մուսալեռցիները համալսարանում» վերտառությամբ՝ տպագրելով մուսալեռցի հերոսների խմբանկարը): Այդ հանդիպումից ոգևորված նախաձեռնող խումբը ապրիլի սկզբին ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նորաբաց մեծ դահլիճում կազմակերպեց նաև Վանի և Շատախի հերոսամարտերին նվիրված հուշերեկո, որտեղ զեկուցումով հանդես եկավ հայկական ազգագրական

երգերի անգուգական կատարող Հայրիկ Մուրադյանը: Հարկավ, այն նույնպես կարևոր դեր խաղաց մարդկանց գիտակցության ու ազգային արժանապատվության բարձրացման գործում:

Հայոց ցեղասպանության, կորցրած հայրենիքի թեմաներով քննարկումներ էին գնում ոչ միայն ընտանիքներում, ուսանողության և մտավորականության շրջանում, այլև վերին օղակներում: ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Յակոբ Զարուբյանին մեծ դժվարությամբ հաջողվել էր ԽՄԿԿ Կենտկոմի ղեկավարությունից քույրություն կորզել Երևանի օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի շենքում 1965 թ. ապրիլի 24-ին հանդիսավորությամբ առաջին անգամ պաշտոնապես նշելու Հայոց եղեռնի 50-ամյակը, մասնաճյուղ թեմայով անցկացնելու գիտական նստաշրջան:

Այս դեպքում էլ Երևանի պետական համալսարանը նախաձեռնողի դերում էր և 1965 թ. ապրիլի 20-ին ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայի հետ համատեղ կազմակերպեց Հայոց ցեղասպանության 50-ամյակին նվիրված նստաշրջան, որտեղ զեկուցումներով հանդես եկան ակադեմիայի պրեզիդենտ Վիկտոր Համբարձումյանը, Աղասի Եսայանը, Մկրտիչ Մկրյանը, Գառնիկ Ստեփանյանը, Կամո Ուդումյանը, Գալուստ Գալոյանը և շատ այլ անվանի գիտնականներ՝ պատմաբաններ, իրավաբաններ, գրականագետներ: Իսկ ԽՄԿԿ Կենտկոմի օրգան “Правда”- թերթում հոդվածով հանդես եկավ պատմաբան, ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանը:

Այս միջոցառումներն, անշուշտ, ավելի ոգևորեցին անվտանգության մարմինների բռնություններից ու հալածանքներից չընկրկող համալսարանական երիտասարդներին, որոնց սատարում էին

ԵՊՀ ղեկավարությունը և շատ դասախոսներ: Երկրաբանության ֆակուլտետի ուսանողներ Մարատ Գրիգորյանը (այժմ՝ երկրաբ. հանքաբ. գիտ. թեկնածու, դոցենտ), Վահրամ Մելքոնյանը, Լիոն Հախվերդյանը, Արամ Գևորգյանը, Գագիկ Կարապետյանը, Լևոն Դավթյանը և ուրիշներ ապրիլի 24-ի վաղ առավոտյան հավաքվեցին համալսարանի բակում: Շատ չանցած նրանց միացան մյուս ֆակուլտետների բազմաթիվ ուսանողներ, մասնաճյուղներ: Նրանք քայլում էին Երևանի փողոցներով ու վանկարկում «Մենք պահանջում ենք վերադարձնել մեր հողերը»: Երիտասարդների շարքերը գնալով ավելի էին խտանում. նրանց միացան մասնաճյուղի բուհերի ուսանողներ: Շուտով ուսանողական խմբերը վերածվեցին ժողովրդական հոծ զանգվածի, որը տոգորված էր իր բռնազավթված հայրենիքը՝ Արևմտյան Հայաստանը, Նախիջևանը, Արցախը վերադարձնելու վճռական պահանջով: Ցուցարարներն ուղղվեցին դեպի Լենինի (այժմ՝ Հանրապետության) հրապարակ, այնտեղից Կոմիտասի անվան պանթեոն, որտեղ տեղի ունեցավ միտինգ. ելույթ ունեցան շատ մտավորականներ, այդ թվում՝ համալսարանական Լևոն Ներսիսյանը, բանաստեղծներ Սիլվա Կապուտիկյանը, Պարույր Սևակը և ուրիշներ: Հնչում էին մասնաճյուղի հանդես Ծիրագի, Պարույր Սևակի բանաստեղծությունները, որոնք պաթոսով ներկայացնում էր ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի ուսանող (այժմ՝ բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր) Սամվել Մուրադյանը: Իրենց հարգանքի տուրքը մատուցելով Հայոց եղեռնի 1,5 միլիոն զոհերի հիշատակին՝ միտինգի մասնակիցները դուրս եկան պանթեոնից և հայրենասիրական երգեր հնչեցնելով ուղղվեցին դեպի օպերայի և բալետի ակադեմիական



քատրոն՝ հանդիսավոր նիստին մասնակցելու բուռն ցանկությամբ: Շենք մտնելու ոմանց փորձը մատնվեց անհաջողության, և ցուցադարների ու իրավապահների միջև տեղի ունեցան բախումներ:

Նույն օրը համալսարանականներ Վազգեն Մանուկյանի և նրա մի խումբ ընկերների ղեկավարությամբ բողոքի ցույց կայացավ նաև Մոսկվայում Թուրքական դեսպանատան առջև, որին մասնակցում էին նաև մոսկվացի բազմաթիվ մտավորականներ:

Այդ օրը ժայթքեց հիսուն տարիների լռության պայմաններում հայ ժողովրդի կուտակված ցասումը՝ ուղղված խորհրդային իշխանություններին և համայն մարդկությանը:

Այս ցույցերը խորհրդային երկրի պատմության մեջ ժողովրդի կամքի ու վճռականության արտահայտման անմախաղեպ իրադարձություն էին: Ու թեև ցուցարարներից շատերը ձերբակալվեցին, այնուամենայնիվ 1965 թ. ապրիլի 24-ին սկիզբ առած հոգևոր զարթոնքը հետագայում իր զարգացումն ապրեց սփյուռքի տարբեր գաղթօջախներում կազմակերպված բողոքի բազմաթիվ ցույցերով և 1988-ին՝ Արցախյան ազգային ազատագրական շարժումով:

Ապրիլի 24-ը դարձավ հայ ժողովրդի պահանջատիրությունը խորհրդանշող օր՝ նոր էջ բացելով հայ ազատագրական մտքի պատմության մեջ: Այդտեղից էլ նորովի դրսևորվեց հայ ժողովրդի համախմբումը իր ազգային խնդիրների բարձրացման և լուծման շուրջ:

Հայոց ցեղասպանության միջազգայնացման և պահանջատիրության խնդիրների բարձրաձայնման շնորհիվ աշխարհի շատ պետություններ ընդունեցին Հայոց ցեղասպանության փաստը:

Եվ պատահական չէր, որ 2015 թ. ապրիլին, երբ լրացավ XX դարի մեծագույն ողբերգություններից մեկի՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը, Հայաստանի Հանրապետությունը, Հայկական սփյուռքը, բազմաթիվ պետություններ և համայն աշխարհի առաջադեմ մարդկությունը՝ դատապարտելով անպատմելի ոճրագործությունը, տարբեր դրսևորումներով իրենց հարգանքի տուրքը մատուցեցին 1,5 միլիոն անմեղ զոհերի հիշատակին:

2011 թ. ապրիլի 23-ի ՀՀ նախագահի հրամանագրով ստեղծված Հայոց ցեղասպանության 100-ամյակի միջոցառումները համակարգող հանձնաժողովի վերջին նիստում (29.01.2015 թ.) հրապարակվեց Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագիրը, որը ուղարկվեց ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին: Հանձնաժողովի կազմում էր նաև ԵՊՀ ռեկտոր Արամ Միմոնյանը:

Բնականաբար Մայր բուհում կազմակերպվեցին տարաբնույթ բազմաթիվ միջոցառումներ՝ նվիրված այդ ահավոր ոճրի դատապարտմանը, մեր անմեղ նահատակների հիշատակի ոգեկոչմանը:

ԵՊՀ պորտալի «ԵՊՆ-ն հիշում է և պահանջում» խորագրով genocide100.ysu.am կայքում հայերեն և անգլերեն տեղեկատվությունը ներկայացնում էր համալսարանի ծրագրած՝ Մեծ Եղեռնի 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների մասին, որոնց մեկնարկը եղավ 2015 թ. ապրիլի 21-ին ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի մեծ դահլիճում տեղի ունեցած գիտխորհրդի ընդլայնված հանդիսավոր նիստը, որին համալսարանի ղեկավարությունից, պրոֆեսորադասախոսական կազմից, ուսանողությունից ու աշխատակիցներից





Հայոց ցեղասպանության նահատակների հիշատակը հավերժացնող հուշակոթողը ԵՊՀ հ.6 մասնաշենքին հարող տարածքում



Համալսարանականները հարգանքի տուրք են մատուցում Հայոց մեծ եղեռնի նահատակներին

զատ ներկա էին նաև ՀՀ տարբեր կառույցների և Սփյուռքի ներկայացուցիչներ: Հանդիսավոր նիստն սկսվեց ռեկտոր Արամ Միմոնյանի «Ցեղասպանությունից վերածնունդ» ծավալուն զեկուցմամբ, որտեղ ներկայացված էին Օսմանյան կայսրության ծրագրած Հայոց ցեղասպանության իրականացման փուլերը, այդ ժամանակաշրջանում և այսօր Թուրքիայի վարած քաղաքականությունը, հայ ժողովրդի մազապուրծ բեկորների միավորման ու վերածննդի գործընթացները, ինչպես նաև պատմությունից դասեր քաղելու անհրաժեշտությունը:

Այո՛, մեզ գազանաբար սպանեցին, արմատախիլ անելով զրկեցին մեր հայրենի բազմադարյա բնօրրանից, ինչպես մեծն Սևակն է ասել «... Ուզեցին մեկ հայ թողնել, և այն էլ թանգարանում...», սակայն հաշվի չառան, որ հայն ի գորու է փյունիկի պես հառնել մոխիրներից ու վերածնվել: Եվ այսօր աշխարհի տարբեր ծագերում ապրող յուրաքանչյուր հայ, թեկուզ ազգային ինքնությունից հեռացած ու ոչ հայախոս, կրում է Մեծ եղեռնի հիշողության գեներ, որը միահյուսելով Մայր հայրենիքն ու Սփյուռքը, հայ ժողովրդին մղում է պայքարի՝ հանուն սրբադասված մեր նահատակների հոգու խաղաղության, հանուն պատմական արդարության վերականգնման ու հատուցման:

Այդ օրերին համալսարանում կազմակերպվեցին մի շարք ներհամալսարանական և միջազգային գիտաժողովներ, դասախոսություններ, երիտասարդ ստեղծագործողների մրցույթներ, ցեղասպանությանը զոհ դարձած հայ մտավորականներին նվիրված հուշ ցերեկույթներ, Հայոց մեծ եղեռնի թեմայով հայկական և արտա-

սահմանյան ֆիլմերի դիտումներ, հայ ժամանակակից նկարիչների և լուսանկարիչների գործերի մի շարք ցուցադրություններ, գրքերի ցուցահանդեսներ, պլեյնների բեմադրություններ: Իրականացվեցին ուսանողական արշավներ և այցելություններ հանրապետության տարբեր թանգարաններ:

ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի նախաձեռնությամբ ստեղծվեց Հայոց ցեղասպանության շուրջ փաստահավաք համացանցային բազմագործառութային համակարգ-պորտալ (www.armenians_genocide.am), 2013 թ. ներդրված «Ցեղասպանագիտություն» մագիստրոսական ծրագիրը զարգացում ապրեց և տվեց առաջին շրջանավարտները, հրատարակվեցին Հայոց ցեղասպանությանը վերաբերող գիտական մի շարք հետազոտություններ, դասագրքեր, ատլասներ, օտարալեզու փաստաթղթերի ժողովածուներ և այլն, իրականացվեցին պատվիրակությունների այցեր Լիբանան, ՌԴ և Իրան, որտեղ մեր գիտնականները հանդես եկան դասախոսություններով, զեկուցումներով, թեմատիկ հրատարակությունների, ինչպես նաև «Համշենը անցյալի և ներկայի խաչերուկներում» պատմավավերագրական ֆիլմի ցուցադրությամբ:

Ապրիլի 21-ին ԵՊՀ 6-րդ մասնաշենքին հարող տարածքում տեղի ունեցավ Հայոց ցեղասպանության նահատակների հիշատակը հավերժացնող հուշակոթողի՝ 7մ. բարձրությամբ հուշապան (քանդակագործ՝ Կամսար Վարդանյան) բացման արարողությունը: Այն միաժամանակ խորհրդանշում է մեր ժողովրդի վերածնունդը:

Նույն օրը Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գիտական գրադարանի մասնաշենքում բացվեց «Ցեղասպանագիտական



Հայոց մեծ եղեռնի 100-րդ տարելիցին նվիրված Երախտիքի ծառուղին ԵՊՀ բակում



Ծառատունկ Եռաբլուր պանթեոնին կից համալսարանական պուրակում



Համալսարանականները ծաղկեպսակներ
են իջեցնում Արաքս գետը

սրահ», որտեղ մեկտեղված են ոչ միայն Հայոց եղեռնին, այլև Հոլոքոստին, Ռուսնոյայի, չերքեզների ցեղասպանությանը, ինչպես նաև իրավունքի և քաղաքականությանը վերաբերող հայերեն 700, անգլերեն ու գերմաներեն 300 և ռուսերեն 80 հրատարակություններ:

Եռաբլուր պանթեոնին կից համալսարանական պուրակը նվիրվեց Հայոց եղեռնի 100-րդ տարելիցին և ապրիլի 19-ին իրականացվեց խորհրդանշական ծառատունկ, որին մասնակցում էին բուհի ղեկավարությունն ու բազմաթիվ ուսանողներ: Ծառատունկ կազմակերպվեց նաև Արցախում (Բերձորի պուրակում տնկվեց 100 եղևնի ու կիպարիս), ինչպես նաև Ծիծեռնակաբերդի բարձունքում:

Համալսարանի բակում ապրիլի 29-ին հանդիսավորությամբ բացվեց Հայոց մեծ եղեռնի 100-րդ տարելիցին նվիրված Երախտիքի ծառուղի, որի աջ և ձախ կողմերում տեղադրված են Ֆրիտյոֆ Նանսենի (Նորվեգիա), Յոհաննես Լեփսիուսի (Գերմանիա), Կարեն Յեպպեի (Դանիա), Հենրի Մորգենթաուի (ԱՄՆ), Ֆրանց Վերֆելի (Ավստրիա), Անատոլ Ֆրանսի (Ֆրանսիա), Արմին Վեգների (Գերմանիա), Ալմա Յոհանսոնի (Շվեդիա), Ռաֆայել Լեմկինի (Լեհաստան), Ջեյմս Բրայսի (Մեծ Բրիտանիա), Պիեռ Քիյարի (Ֆրանսիա), Յակոբ Բյունցլերի (Շվեյցարիա) կիսանդրիները (քանդակագործ՝ Վլադիմիր Անտաշյան): Հանդիսությանը ներկա էին պետական բարձրաստիճան այրեր, ղեկավարներ, հյուրեր, Մայր բուհի ղեկավարությունն ու ուսանողությունը:

Ծառուղու հիմնումը համալսարանականների երախտագիտության համեստ դրսևորումն է օտարազգի բոլոր այն անձանց ու կառույցներին, որոնք անշահախնդիր ներդրում են ունեցել XX

դարասկզբի մեծագույն ողբերգությունը աշխարհին իրագեկելու, հասարակական լայն շրջանակներում քննադատելու և բողոքի ձայն բարձրացնելու, հայության մի ստվար հատվածին օգնության ձեռք մեկնելու և մահվան ճիրաններից փրկելու, նրանց համար կենսապայմաններ ապահովելու, ինչպես նաև Հայ դատին հետամուտ լինելու գործում:

Միջոցառումների շարքում առանձնահատուկ էր ապրիլի 18-ին համալսարանի ղեկավարության, դասախոսների և 100 ուսանողների՝ Ախուրյան և Արաքս գետերի խառնարանի մոտ կատարած ոգեկոչման արարողությունը: Նրանք իրենց հարգանքի տուրքը մատուցելով Հայոց եղեռնի անմեղ զոհերի հիշատակին՝ մոմավառությամբ ու երգով ծաղկեպսակներ իջեցրին և ծաղիկներ նետեցին Արաքս գետը՝ Մայր գետի ջրերին խառնելով իրենց հոգու ցավն ու կսկիծը:

Պատմական արդարությանը հասնելու ձգտումով էր, որ 1988 թ. փետրվարի 20-ին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի (ԼՂԻՄ) մարզխորհրդի 20-րդ գումարման արտահերթ նստաշրջանը, ԽՍՀՄ սահմանադրությանը համապատասխան, որոշում ընդունեց դիմել Ադր. ԽՍՀ, Հայկ. ԽՍՀ և ԽՍՀՄ Գերագույն խորհուրդներին՝ ԼՂԻՄ-ը Ադրբեջանի կազմից դուրս բերելու և Հայաստանի կազմի մեջ ընդգրկելու համար:

Դեռևս 1960-70-ականներին ԵՊՀ կուսակցական, նաև ֆակուլտետային ժողովներում բազմիցս արծարծվել էր (հատկապես ԽՍՀՄ նոր սահմանադրության նախագծի քննարկման ընթացքում) Լեռնային Ղարաբաղի հարցը: Իսկ 1987 թ. հունիսի 22-ին ԵՊՀ պատմության ֆակուլտետի կուսակցական կազմակերպության (քար-

տուղար՝ Արտավազդ Դարբինյան) ժողովը քննարկել էր ԼՂԻՄ-ը Հայաստանին վերամիավորելու հարցը և ընդունած որոշումը հասցեագրել ԽՄԿԿ Կենտկոմ՝ Մ. Գորբաչովին:

Երբ սկսվեց Արցախյան շարժումը, որի ղեկավարներից շատերը համալսարանականներ էին, Երևանի պետական համալսարանը միահամուռ վճռականությամբ կանգնեց շարժման պաշտպանության դիրքերում և դարձավ կազմակերպիչն ու կենտրոնը բազում միջոցառումների: Բոլոր ֆակուլտետներում կազմակերպվում էին հանդիպումներ, միտինգներ, ամենօրյա ժողովներ, նիստեր, կայացվում էին որոշումներ և ուղարկվում ամենատարբեր հասցեներով, հիմնականում կենտրոնական թերթերին, կազմվում էին նամակ-դիմումներ՝ ուղղված ԽՄԿԿ Կենտկոմի ղեկավարությանը՝ Արցախի հարցը արդարացի լուծելու պահանջով: Թե՛ ուսանողների, թե՛ դասախոսների շուրթերին «Արցախ» բառն էր, բոլորն էին ոգևորված ու հավատում էին, որ խնդիրը սահմանադրական ճանապարհով կստանա իր լուծումը:

Ի պատասխան հայ ժողովրդի արդար պահանջի՝ 1988 թ. փետրվարի 27 - 29-ը Ադրբեջանի ղեկավարությունը Սումգայիթ քաղաքում կազմակերպեց հայ բնակչության ջարդ: Նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին գազանաբարո ջարդեր իրականացվեցին նաև Գանձակում, Խանլարում, Դաշքեսանում, Շամխորում, Մինգեչաուրում, իսկ 1990 թ. հունվարին՝ Բաքվում և Ադրբեջանի մյուս հայաբնակ քաղաքներում: Այս ոճիրը պետական մակարդակով կազմակերպված և իրականացված ցեղասպանություն էր:

Եվ հայ ժողովրդի հավատը փոխվեց հիասթափության:

Բայց անպատմելի վշտի մեջ անգամ (1988-ի երկրաշարժը) չընկրկեց հայը, չկոտորվեցին պայքարը շարունակելու նրա կամքն ու վճռականությունը, ու նա հասկացավ, որ արդարության հասնելու միակ ճանապարհը միասնությունն է, որ հույսը պետք է դնել միայն սեփական ուժեղ բազկի վրա:

Ու բռնացավեց ժողովուրդը ...

Երևանի փողոցներով հոսում էին մարդկային գետեր, հավաքվում օպերայի շենքի բակում՝ Ազատության հրապարակում, վերածվում փոթորկուն ծովի: Այստեղ հավաքված ժողովուրդը զօր ու գիշեր միաբերան վանկարկում էր «Միացում, միացում», «Պայքար պայքար մինչև վերջ» կոչերը: Ժողովրդի գլխավերևում ասես թևածում էին Սասունցի Դավթի, գորավար Անդրանիկի, Մեծն Նժդեհի ոգիները:

Համալսարանականներն իրենց ամենագործուն մասնակցությունը բերեցին Ազատության հրապարակում սկսված նստացույցերին:

Այդ ընթացքում Մոսկվայում ԵՊՀ ռեկտոր Սերգեյ Համբարձումյանն իր պատգամավոր գործընկերների հետ միասին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նիստերում անմահանջ պայքար էր մղում Արցախի հարցի արդարացի լուծման համար, իսկ համալսարանում տարվող աշխատանքները ղեկավարում էին պրոռեկտոր, պրոֆեսոր Գրիգոր Դարիբյանը և կուսկոմիտեի քարտուղար, դոցենտ Յուրի Մկրտումյանը:

1988 թ. նոյեմբերի 24-ին խորհրդային իշխանությունները գորք մտցրին Երևան, և քաղաքում հայտարարվեց պարետային

ժամ: Երևանի կապույտ երկնքում պտտվում էին ռազմական ինքնաթիռներ և ուղղաթիռներ: Արգելվեցին հավաքներն ու միտինգները, ձերբակալվեցին «Դարաբաղ» կոմիտեի անդամները, խզվեց կապը Արցախի հետ, կենտրոնական թերթերը լցվեցին ապատեղեկատվությամբ: Կենտրոնն այս կերպ փորձեց գլխատել շարժումը:

Նոյեմբերի 25-ի առավոտյան Ազատության հրապարակում միտինգ էր նշանակված, սակայն օպերայի շենքի բակը շրջապատված էր Խորհրդային բանակի զինվորներով, և մարդկային հեղեղը, Ազատության հրապարակում հավաքվելու իրավունքից զրկված, հոսեց դեպի համալսարանի բակ՝ ճշգրիտ տեղեկատվություն ստանալու: ԵՊՀ բակն ու դահլիճը լեփ-լեցուն էին մարդկանցով: Ձինվորներն իրենց գնդապետի գլխավորությամբ նետվեցին ցրելու ժողովրդին: ԵՊՀ կուսկոմիտեի քարտուղար Յուրի Մկրտումյանի համարձակության և ջանքերի շնորհիվ, երկարատև բանակցությունների միջոցով կանխվեցին բռնություններն ու ակտիվիստների ձերբակալությունը, և հաջողվեց պահպանել համալսարանի հարաբերական ազատությունը:

1989 թ. հայերի ու ադրբեջանցիների միջև սկսվեցին զինված բախումներ, որոնք շուտով վերածվեցին պատերազմական գործողությունների:

Այս պայմաններում ԵՊՀ-ն դարձավ Արցախյան շարժման ոգին պահպանող կարևորագույն կենտրոններից: Մարդիկ գալիս էին համալսարան՝ տեղեկանալու Արցախում կատարվող իրադարձություններին: Նրանք հավատում էին համալսարանին, որի ղեկավարությունն ու ուսանողությունը ջանքեր չէին խնայում Ադրբեջանի

հայաբնակ վայրերի փախստականներին օգնություն կազմակերպելու, անգամ՝ զենք հայթայթելու գործում:

Բազմաթիվ համալսարանականներ, դույզն-ինչ չվարանելով, զինված՝ սուրբ հողը պաշտպանելու կամքով ու վճռականությամբ, հայ ֆիդայիների արյան եռքն իրենց երակներում, զինվորագրվեցին Արցախի պաշտպանությանը:

1989 թ. կեսերին համալսարանում ստեղծված հատուկ հանձնաժողովը, որի կազմում ընդգրկված էին ակադեմիկոս Սերգեյ Համբարձումյանը (ԵՊՀ ռեկտոր), պրոֆեսոր Լենդրուշ Խուրշուդյանը (հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ), դոցենտ Յուրի Մկրտումյանը (ԵՊՀ կուսկոմիտեի քարտուղար), դոցենտ Նորիկ Գալստյանը (հանձնաժողովի նախագահ), պրոֆեսոր Գարեգին Փանոսյանը (զենետիկայի ամբիոնի վարիչ), դոցենտ Ռաֆիկ Տոնոյանը (կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի դեկան), Ֆրիկ Մելիք-Աղամյանը (դիֆերենցիալ հավասարումների ամբիոնի դոցենտ), հիմնականում զբաղվում էր մարտական ջոկատներին և սահմանամերձ շրջաններին օգնություն կազմակերպելու հարցերով:



Միտինգներ ԵՊՀ բակում

The background of the image is the flag of Armenia, which consists of three horizontal stripes of red, blue, and orange. The flag is shown with a slight wavy texture, suggesting it is a fabric. The text is centered on the blue stripe.

«Ապրել և գործել միայն այն բանի համար, որի համար արժե մեռնել,
և մեռնել միայն այն բանի համար, որի համար արժե ապրել»:

Գարեգին Նժդեհ

1988 – 1994 թթ. ԵՊՀ-ում աշխատած և ուսանած համալսարանականներ,
որոնք մասնակցել են Արցախյան ազատամարտին

Ազգալոյսան Լեոնիդ Ռուբենի
Ալեքսանյան Աշոտ Սեյրանի
Ալեքսանյան Արտեմ Սարգսի
Ալոյսան Թեմուր Ջնդիի
Աղաբաբյան Գրիգոր Սպարտակի
Աղաջանյան Կարեն Զավենի
Ամիրաղյան Սոս Սերյոժայի
Անտոնյան Արմեն Նորայրի
Աշիքբյոյոյան Սիմոն Հովհաննեսի
Աշիքբյոյոյան Օհան Սիմոնի
Առստամյան Միքեր Բենիկի
Ասատրյան Ալեքսան Ֆելիքսի
Ավագիմյան Վաչագան Ռաֆայելի
Ավագյան Արայիկ Վարուժանի
Ավագյան Էդուարդ Լվովի
Ավակիմյան Լևոն Վալենտինի
Ավանեսյան Արա Համբարձումի
Ավանեսյան Արսեն Ռոդիկի
Ավանեսյան Զաքար Սլավիկի
Ավանեսյան Միքեր Շուրայի
Ավետիսյան Արտակ Սուրենի
Արշակյան Հապետ Կորյունի
Ափանյան Նազարեթ Համբարձումի
Բախշյան Վարդան Ազատի

Ֆիզիկայի ֆակուլտետի գիտաշխատող (զոհված)
փիլիսոփայության և սոցիոլոգիայի ֆակուլտետի ուսանող
իրավագիտության ֆակուլտետի ուսանող
իրավագիտության ֆակուլտետի ուսանող
ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ուսանող
աշխարհագրության ֆակուլտետի ուսանող
իրավագիտության ֆակուլտետի ուսանող
երկրաբանության ֆակուլտետի ուսանող
երկրաբանության ֆակուլտետի դասախոս (զոհված)
երկրաբանության ֆակուլտետի ուսանող
քիմիայի ֆակուլտետի ուսանող
ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ուսանող (անհայտ կորած)
տնտեսագիտության ֆակուլտետի ուսանող (զոհված)
աշխարհագրության ֆակուլտետի ուսանող
իրավագիտության ֆակուլտետի ուսանող (զոհված)
արևելագիտության ֆակուլտետի ուսանող
իրավագիտության ֆակուլտետի ուսանող (զոհված)
իրավագիտության ֆակուլտետի ուսանող
պատմության ֆակուլտետի ուսանող (զոհված)
տնտեսագիտության ֆակուլտետի ուսանող
արևելագիտության ֆակուլտետի ուսանող
իրավագիտության ֆակուլտետի ուսանող (զոհված)
պատմության ֆակուլտետի ուսանող
պատմության ֆակուլտետի ասպիրանտ (զոհված)



Լեոնիդ Ազգալոյսանն իր ջոկատով,
Շահումյանի շրջան, 1990 թ.



Սիմոն Աշիքբյոյոյան,
Մարտունաշեն, 1990 թ.



Վարդան Դավաթյան,
Արցախ



Վարդան Ստեփանյան,
Շուշի, 1992 թ., 9 մայիսի

Բաղդասարյան Ալբերտ Անդրանիկի
Բաղդասարյան Լևոն Միքայելի
Բաղդեցյան Արա Վազգենի
Բարբարյան Ներսես Գրիգորի
Բարսեղյան Արսեն Գեորգիի
Բեկթաշյան Արմեն Ժորայի
Գյորգյան Ֆուրման Արկադայի
Գրիգորյան Ռուբեն Սարգսի

Գևորգյան Արսեն Ալֆրեդի
Գևորգյան Գարեգին Վոլոդյայի
Գևորգյան Գարիկ Սուրենի
Գևորգյան Սամվել Գառնիկի
Դաբադյան Արտակ Արտաշեսի
Դավաթյան Կամո Սարիբեկի
Դավաթյան Վարդան Տիգրանի
Եղիազարյան Արթուր Ալբերտի
Եսայան Արտակ Նորիկի
Թադևոսյան Ռուբեն Վովայի
Իշխանյան Վազգեն Ալեքսանդրի
Իսկանդարյան Գագիկ Ադասի
Լալայան Գեղամ Ռաֆիկի
Խաչատրյան Աշոտ Ռաֆիկի
Խաչատրյան Արտակ Մելսակի
Խաչատրյան Տիրան Վազգենի
Խոջյան Սարգիս Վրեժի
Ծերունյան Վարդան Ալեքսանի
Կարապետյան Կարեն Ֆրիկի
Կետիկյան Արա Ժիրայրի

աշխարհագրության ֆակուլտետի ուսանող
ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ուսանող
մաթեմատիկայի ֆակուլտետի դասախոս, դոցենտ
ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ուսանող (զոհված)
իրավագիտության ֆակուլտետի ուսանող
իրավագիտության ֆակուլտետի ուսանող
տնտեսագիտության ֆակուլտետի ուսանող (զոհված)
օտարերկրյա քաղաքացիների
նախապատրաստական ֆակուլտետի դասախոս
իրավագիտության ֆակուլտետի ուսանող
մաթեմատիկայի ֆակուլտետի ուսանող
ռադիոֆիզիկայի ֆակուլտետի գիտաշխատող
իրավագիտության ֆակուլտետի ուսանող
պատմության ֆակուլտետի ուսանող
ֆիզիկայի ֆակուլտետի ուսանող
պատմության ֆակուլտետի ուսանող (զոհված)
պատմության ֆակուլտետի ուսանող
արևելագիտության ֆակուլտետի ուսանող
տնտեսագիտության ֆակուլտետի ուսանող (զոհված)
իրավագիտության ֆակուլտետի ուսանող
արևելագիտության ֆակուլտետի ուսանող
ֆիզդաստիարակության և սպորտի մեթոդի դասախոս
իրավագիտության ֆակուլտետի ուսանող
ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ուսանող
ֆիզիկայի ֆակուլտետի ուսանող
իրավագիտության ֆակուլտետի ուսանող (զոհված)
ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ուսանող
իրավագիտության ֆակուլտետի ուսանող
պատմության ֆակուլտետի ուսանող

Կնյազյան Ակսել Պարզևի
Կոթոյան Արմեն Վանիկի
Կրպեյան Թաթուլ Ժորժիկի
Հակոբյան Արամ Աշոտի
Հակոբյան Վաչագան Սերգեյի
Հայրումյան Հրաչիկ Իշխանի
Հարությունյան Թաթուլ Արկադիի
Հովակիմյան Վահագն Միսակի
Հովհաննիսյան Արմեն Սերյոժայի
Հովհաննիսյան Լեոնիկ Լենդրուշի
Հովհաննիսյան Հովսեփ
Հովհաննիսյան Վարդան Նասլետի
Հովսեփյան Արմեն Աշոտի
Ղազարյան Արսեն Վարդգեսի
Ղուկասյան Սևակ Արագի
Ղևոնդյան Պետրոս Արշալույսի
Մակարյան Արմեն Հովհաննեսի
Մանգասարյան Միք Գենադիի
Մարության Նորայր Յուրիի
Մեժլումյան Համլետ Վանյայի
Միքայելյան Սուրեն Վարուժանի
Մկրտչյան Ղևոնդ Մնացականի
Մկրտչյան Մկրտիչ Վազգենի
Մնացականյան Կարեն Ռազմիկի
Մնացականյան Սանասար Լավրենտիի
Մովսիսյան Արմեն Արշակունու
Նազարյան Արկադի Խաչիկի
Նազարյան Բաբկեն Նորիկի

մեխանիկայի ֆակուլտետի ուսանող
ֆիզիկայի ֆակուլտետի ուսանող (զոհված)
պատմության ֆակուլտետի ուսանող (զոհված)
պատմության ֆակուլտետի ուսանող
բանասիրության ֆակուլտետի ուսանող
տնտեսագիտության ֆակուլտետի ուսանող
պատմության ֆակուլտետի ուսանող
փիլիսոփայության և սոցիոլոգիայի ֆակուլտետի ուսանող
իրավագիտության ֆակուլտետի ուսանող
պատմության ֆակուլտետի ուսանող
ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ուսանող
տնտեսագիտության ֆակուլտետի ուսանող (զոհված)
աշխարհագրության ֆակուլտետի ուսանող
մաթեմատիկայի ֆակուլտետի ուսանող (զոհված)
բանասիրության ֆակուլտետի ուսանող (զոհված)
ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ուսանող (զոհված)
ռադիոֆիզիկայի ֆակուլտետի դասախոս, դոցենտ
իրավագիտության ֆակուլտետի ուսանող
բանասիրության ֆակուլտետի ասպիրանտ (զոհված)
իրավագիտության ֆակուլտետի ուսանող
իրավագիտության ֆակուլտետի ուսանող
ֆիզիկայի ֆակուլտետի ուսանող
երկրաբանության ֆակուլտետի ուսանող
արևելագիտության ֆակուլտետի ուսանող
մեխանիկայի ֆակուլտետի ուսանող (զոհված)
ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ուսանող
աշխարհագրության ֆակուլտետի ուսանող
իրավագիտության ֆակուլտետի ուսանող



Տիգրան Քոչարյան, Թաթուլ Կրպեյան,
Գետաշեն, 1991 թ. գարուն



Արա Կետիկյան, Համլետ Քամալյան,
Ասկերանի շրջան, 1992 թ.



Հարմիկ Հովսեփյան,
Մհեր Զուլհաճյան,
Բյուրական, 1993 թ.



Չախից 1-ինը՝ Վարդան Բախշյան,
գ. Տող, 1991 թ.

Շահբազյան Ստեփան
Չախոյան Նվեր Խաչիկի
Պախալով Վալերի Բորիսի
Պետրոսյան Էմիլ Լեոնարդի
Պետրոսյան Տիգրան Հրանտի
Պետրոսյան Տիգրան Ֆերդինանտի
Պողոսյան Արթուր Արմենի
Զուլհաճյան Մհեր Արամի
Սայադյան Համիկ Յախշիբեկի
Սարգսյան Արա Նվերի
Սարգսյան Գարուշ Լևոնի
Սարգսյան Դավիթ Էդիկի
Սարգսյան Էդուարդ Սուրենի
Սարգսյան Իգոր Թադևոսի
Սարգսյան Տիգրան Սարգսի
Սարդարյան Ռոման Դավիթի
Ստեփանյան Վարդան Ռոբերտի
Վարդանյան Ավետիս Վարդանի
Վարդանյան Գևորգ Մերյոժայի
Վարդանով Վլադիմիր Թևանի
Փարսադանյան Արթուր Վոլոդյայի
Քամալյան Օլեգ Արմանի
Քոսյան Վաչագան Ավետիսի
Ֆրանկյան Արամ Հայկի⁵

ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ուսանող
արևելագիտության ֆակուլտետի ուսանող
ֆիզիկայի ֆակուլտետի դասախոս
իրավագիտության ֆակուլտետի ուսանող
իրավագիտության ֆակուլտետի ուսանող (զոհված)
բանասիրության ֆակուլտետի ուսանող
ֆիզիկայի ֆակուլտետի ուսանող
երկրաբանության ֆակուլտետի ասպիրանտ (զոհված)
աշխարհագրության ֆակուլտետի ուսանող
իրավագիտության ֆակուլտետի ուսանող
պատմության ֆակուլտետի ուսանող
ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ուսանող (զոհված)
ռադիոֆիզիկայի ֆակուլտետի դասախոս
երկրաբանության ֆակուլտետի ուսանող
իրավագիտության ֆակուլտետի ուսանող (զոհված)
իրավագիտության ֆակուլտետի ուսանող
իրավագիտության ֆակուլտետի ուսանող (զոհված)
իրավագիտության ֆակուլտետի ուսանող
իրավագիտության ֆակուլտետի ուսանող
երկրաբանության ֆակուլտետի ուսանող (զոհված)
քիմիայի ֆակուլտետի դասախոս, դոցենտ
իրավագիտության ֆակուլտետի ուսանող
արևելագիտության ֆակուլտետի ուսանող

⁵ Հայցում ենք այն համալսարանականների ներողամտությունը, որոնց
անունները հնարավոր չի եղել հայտնաբերել և ներառել սույն անվանացանկում:

1990 թ. աշնանից համալսարանի կոլեկտիվը ստանձնել էր ԵՊՀ լազերային տեխնիկա գիտաարտադրական միավորման հաշվողական տեխնիկայի բաժնի վարիչ Լեոնիդ Ազգալդյանի ջոկատին պարենով ապահովելու գործը: Ջոկատը, որը 1990 թ. հայատյաց ադրբեջանցիների դեմ կռվում էր Շահումյանում, այնուհետև Մարտակերտում, 1991 թ. վերակազմավորվեց Ազատագրական բանակի (գլխավոր հրամանատար՝ Լեոնիդ Ազգալդյան):

ԵՊՀ ողջ կազմը նվիրվել էր Արցախին օգնելու գործին:

Ֆիզիկայի ֆակուլտետում Միսակ Մարտիրոսյանի, Արմանդ Ռոստոմյանի, Սամվել Մխիթարյանի, Արթուր Չոբանյանի և մյուս աշխատակիցների ջանքերով պատրաստվեցին հատուկ կադապարներ, ձուլվեցին մեծ քանակությամբ գնդակներ, Յուրի Մկրտումյանի նախաձեռնությամբ Եղեգնաձորից բերվեցին յափնջիներ, որոնցից որսորդական հրացանների համար պատրաստվեցին խիցեր: Այս ամենը, սննդի և հագուստեղենի հետ միասին, կապավորների միջոցով ուղարկվում էր Արցախ: Քիմիական ֆակուլտետում դասախոսներ Հելբիկ Հակոբյանը և Կարապետ Դավթյանը Հայաստանում առաջինը սինթեզեցին հրթիռային վառելանյութ:

Շարժման սկզբին ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դեկան Գուրգեն Մելիքյանի նախաձեռնությամբ ու անմիջական մասնակցությամբ Արցախից բերվում էր չոր թուփ, մասուր, ուրց, թթի օղի և այլն ու աճուրդի հանվում: Մարդիկ պատրաստակամ մասնակցում էին աճուրդին, քանի որ գոյացած գումարը տրամադրվում էր հայրենիքի պաշտպանության սուրբ գործին:

Գ. Մելիքյանը համալսարանում առաջիններից էր, որ 1989 թ.



Յուրա Հովհաննիսյան
(26-ի Յուրա)



Կենտրոնում՝ Յուրա Հովհաննիսյան
(26-ի Յուրա)



Թաթուլ Կրպեյան,
Գետաշեն, 1991 թ.



1996 թ. մայիսի 27-ին ԵՊՀ 7-րդ մասնաշենքի դիմաց մեծ շուքով տեղի ունեցավ Արցախյան ազատամարտում զոհված համալսարանականների հիշատակը հավերժացնող հուշարձան-խաչքարի բացումը:

հունիսից Արցախի հիվանդանոցների ու մանկապարտեզների համար կազմակերպում էր սննդամթերքի օգնություն և ինքնաթիռով անձամբ տեղ հասցնում (երբեմն մեկ օրվա ընթացքում 3-4 անգամ): Նա, Խորեն Պալյանի հետ միասին ԵՊՀ ուսանողների ուժերով Արցախի գյուղերում կազմակերպում էր համերգներ՝ ժողովրդի հայրենասիրական ոգին բարձրացնելու նպատակով: Հետագայում Մելիքյանը, հաղթահարելով բազում դժվարություններ, զենք ու զինամթերք, կապի միջոցներ էր հասցնում Արցախ: Իսկ կռվող տղաների համար արևելագիտության ֆակուլտետի ուսանողները գործում էին հարյուրավոր գլխարկներ ու գուլպաներ:

Նյութական օգնությունից զատ՝ համալսարանը առաջինն էր, որ հրապարակեց Արցախյան հարցը լուսաբանող ամենատարբեր աշխատություններ. “Нагорный Карабах и вокруг него... глазами независимых наблюдателей” (сборник документов) составители: С. Т. Золян, Г. К. Мирзоян (Ер., 1991), “К освещению проблем истории и культуры Кавказской Албании и восточных провинций Армении” составил П. М. Мурадян (т. 1, Ер., 1991), Ս. Ավագյան «Արցախ. ինչո՞ւ չի ասվում ճշմարտությունը» (Եր., 1991), «Արցախը հայ մշակույթի կարևորագույն օջախ» (Եր., 1991) և այլն:

Զոհված համալսարանականների անուններով ԵՊՀ-ում բացվել են լսարաններ, որտեղ սովորող հայ պատանիների ու աղջիկների սրտերում ոգեկոչվում է հայ քաջաց սխրանքը, բոցավառվում է հայրենասիրության անմար կրակը:

**«Նրանք ընկան կռիվներում,
բայց ապրում է հոգին նրանց
ապրողների հոգիներում...»
Պարույր Սևակ**



Ազգալոյան Լեոնիդ Ռուբենի

22.11.1942 – 21.06.1992

Հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական
խաչ» 1-ին աստիճանի (1994), ՀՀ «Մարտական
խաչ» 1-ին աստիճանի (1996) շքանշաններով:

2007 թվականից ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտե-
տի լսարաններից մեկը, 2016-ից՝ ԵՊՀ մար-

տական պատրաստության ակումբը կոչվում են Լ. Ազգալոյանի
անունով, նրա անունն են կրում նաև ԼՂՀ Բերդաձորի ենթա-
շրջանի Արտաշավան և ՀՀ Արարատի մարզի Վերին Դվին գյու-
ղերի միջնակարգ դպրոցները: 2017 թ. նրա ծննդյան 75-ամյակի
առթիվ Բերդորում ԵՊՀ ղեկավարության և ուսանողության նա-
խաձեռնությամբ հիմնվել է Լեոնիդ Ազգալոյանի անվան պուրակ:



Կենտրոնում՝ Լեոնիդ Ազգալոյան,
Մարտակերտի շրջան, 1991 թ.



«Մեծն Տիգրան» աշխարհագրային ջոկատը,
ձախից 2-րդը՝ Տիգրան Սարգսյան,
Սիսիան, 1989 թ.



Պետրոս Ղևոնդյան, Ներսես Բարբաբյան,
Շահումյանի շրջան, 1991 թ. մայիս



Պետրոս Ղևոնդյան (Պետո)



Աշիքգյոզյան Սիմոն Հովհաննեսի (Դեդ)

06.02.1939 – 30.04.1991

Հետմահու պարգևատրվել է ՀՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանով (1996) և «Զորավար Անդրանիկ» մեդալով:

2011 թվականից ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի միներալոգիայի և պետրոգրաֆիայի կաբինետը կոչվում է

Սիմոն Աշիքգյոզյանի անունով:



Ասատրյան Ալեքսան Ֆելիքսի

02.09.1964 – 1992, անհայտ կորած

Հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Արիության համար» մեդալով (2007):



Ավագիմյան Վաչագան Ռաֆայելի

27.08.1969 – 22.11.1992

Հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Շուշիի ազատագրման համար» մեդալով (1994), «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով (1994):

2007 թվականից ԵՊՀ տնտեսագիտության (այժմ՝ տնտեսագիտության և կառավարման)

ֆակուլտետի լսարաններից մեկը կոչվում է Վաչագան Ավագիմյանի անունով:



Արսեն Դազարյան,
Մարտակերտ, 1993 թ.



Ավագյան Էդուարդ Լվովի

26.07.1969 – 06.04.1991

Պարգևատրվել է “За отвагу” (1989), “За боевые заслуги” (1989), “Воину-интернационалисту от благодарного афганского народа” (1988) մեդալներով, հետմահու պարգևատրվել է ՀՀ Արիության (2002) և “Ветеран боевых действий” (2005) մեդալներով:

2011 թվականից ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի լսարաններից մեկը կոչվում է Էդուարդ Ավագյանի անունով:



Ջախից 1-ինը՝ Վալերի Պախալով,
Սարսանգի ջրամբար, 1993 թ.



«Արաբո» ջոկատի տղաները,
կենտրոնում կանգնած՝ Սիմոն Աշիքյոզյան,
Իջևան, 1989 թ.



1-ին շարքում ձախից՝ Զաքար Ավանեսյան,
Դավիթ Սարգսյան,
Գյուլափիլուի մերձակա պահակակետ, 1993 թ.



Ավանեսյան Արա Համբարձումի

26.12.1968 – 07.01.1992

1992 թվականից ԼՂՀ Մարտունու շրջանի
ճարտար գյուղի միջնակարգ դպրոցը, իսկ
2011-ից՝ ԵՊՀ իրավագիտության ֆակուլ-
տետի լսարաններից մեկը կոչվում են Արա
Ավանեսյանի անունով:



Ավանեսյան Զաքար Սլավիկի

13.05.1970 – 29.06.1992

Հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Արիության
համար» մեդալով (2000):

2010 թվականից ԵՊՀ պատմության ֆակուլ-
տետի լսարաններից մեկը կոչվում է Զաքար
Ավանեսյանի անունով:



Արշակյան Հապետ Կորյունի

12.02.1970 – 09.01.1994

1994 թ. ավագ լեյտենանտ Հ. Արշակյանին հետմահու շնորհվել է կապիտանի կոչում և պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանով, ԵՊՀ արծաթե հուշամեդալով (1998), ՀՀ Արիության (2002), ԼՂՀ

«Մարտական ծառայություն» (2003) մեդալներով:

1997 թ. Արցախի Քյուրդլար գյուղը վերանվանվել է Հապետավան: Նրա հիշատակը հավերժացվել է նաև Մատաղիսում կանգնեցված հուշակոթողով:

2012-ից ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի լսարաններից մեկը կոչվում է Հապետ Արշակյանի անունով:



Բարբարյան Ներսես Գրիգորի

15.07.1964 – 24.05.1991

Հետմահու պարգևատրվել է ՀՀ Արիության մեդալով (1996, 2002):



Բախյան Վարդան Ագասի

01.06.1965 – 16.12.1991

Հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով (1995), ԵՊՀ արծաթե հուշամեդալով (1998):

1993 թվականից Արմավիր քաղաքի թիվ 2 միջնակարգ դպրոցը կոչվում է Վարդան Բախյանի անունով:

2008-ից նրա անունով է կոչվում նաև ԵՊՀ պատմության ֆակուլտետի լսարաններից մեկը:



Գյորգյան Ֆուրման Արկաղայի

28.08.1973 – 29.09.1992

Հետմահու պարգևատրվել է ՀՀ Արիության (2002) և ԼՂՀ «Արիության համար» (2002) մեդալներով:

2007 թվականից ԵՊՀ տնտեսագիտության (այժմ՝ տնտեսագիտության և կառավարման)

ֆակուլտետի լսարաններից մեկը կոչվում է Ֆուրման Գյորգյանի անունով:



Դավաթյան Վարդան Տիգրանի

25.03.1969 – 31.01.1994

Պարգևատրվել է «Воину-интернационалисту от благодарного афганского народа» մեդալով (1988), հետմահու պարգևատրվել է ՀՀ ՊՆ «1992 – 1994 թթ. մարտական գործողությունների մասնակից» կրծքանշանով (1996), ՀՀ

Արիության մեդալով (1999):

2009 թվականից ԵՊՀ պատմության ֆակուլտետի լսարաններից մեկը կոչվում է Վարդան Դավաթյանի անունով:



Խոջյան Սարգիս Վրեժի

15.12.1975 – 03.05.1994

Հետմահու պարգևատրվել է ՀՀ ՊՆ «1992 – 1994 թթ. մարտական գործողությունների մասնակից» կրծքանշանով (1996) և ՀՀ Արիության մեդալով (2003):

2011 թվականից ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի լսարաններից մեկը կոչվում է Սարգիս Խոջյանի անունով:



Թադևոսյան Ռուբեն Վովայի

12.11.1975 – 10.04.1993

Հետմահու պարգևատրվել է ՀՀ Արիության մեդալով (2002):



Կոթոլյան Արմեն Վանիկի

12.05.1971 – 19.10.1992

Հետմահու պարգևատրվել է ՀՀ Արիության մեդալով (2002):

2013 թվականից ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի հեռաուսուցման կաբինետը կոչվում է Արմեն Կոթոլյանի անունով:



Կրայեյան Թաթուլ Ժորժիկի

21.04.1965 – 30.04.1991

Հետմահու արժանացել է «Հայաստանի ազգային հերոս» ՀՀ բարձրագույն կոչման և պարգևատրվել «Հայրենիք» շքանշանով (1996):

1992 թվականից ԵՊՀ պատմության ֆակուլտետի լսարաններից մեկը կոչվում է նրա անունով:

ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ 2000 թվականից համալսարանում սահմանվել է նրա անվան ուսանողական կրթաթոշակ:

2009 թ. Արեգ գյուղը վերանվանվել է Թաթուլ: Հերոսի անունով են կոչվում նաև Երևանի Նոր Նորքի 1-ին զանգվածի այգիներից մեկը, Թալին քաղաքի փողոցներից մեկը, Թաթուլ գյուղի դպրոցը, ինչպես նաև Արցախի Հանրապետության Կովսական քաղաքի դպրոցներից մեկը: Նրա հայրական տանը բացվել է տուն-թանգարան:



Հովհաննիսյան Վարդան Նասլետի

13.01.1972 – 11.09.1992

Հետմահու պարգևատրվել է ԵՊՀ արժաթե հուշամեդալով (1998), ՀՀ Արիության մեդալով (1999):

2007 թվականից ԵՊՀ տնտեսագիտության (այժմ՝ տնտեսագիտության և կառավարման)

ֆակուլտետի լսարաններից մեկը կոչվում է Վարդան Հովհաննիսյանի անունով:



Ղազարյան Արսեն Վարդգեսի

30.03.1972 – 10.05.1994

1994 թ. նրան շնորհվել է կապիտանի կոչում, միաժամանակ պարգևատրվել է Փառքի 2-րդ աստիճանի շքանշանով, հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով (1994), ՀՀ Արիության

մեդալով (2002):

2008 թվականից ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի լսարաններից մեկը կոչվում է Արսեն Ղազարյանի անունով:



Ղևոնդյան Պետրոս Արշալույսի (Պետո)

04.02.1964 – 14.02.1994

Հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանով (1994), ՀՀ Արիության մեդալով (1996), ԵՊՀ արժաթե հուշամեդալով (1998): Նրան շնորհվել է ԼՂՀ «Արցախի հերոս» բարձրագույն կոչում և «Ոսկե

արծիվ» շքանշան (2001):

2007 թվականից ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետի լսարաններից մեկը կոչվում է Պետրոս Ղևոնդյանի անունով: Նրա անունով են կոչվում նաև ՀՀ Կոտայքի մարզի Պոռչյան ավանի, ԼՂՀ Շահումյանի շրջանի Եղեգնուտ և Քաշաթաղի շրջանի Տիգրանավան գյուղերի միջնակարգ դպրոցները:



Մարտության Նորայր Յուրիի

01.02.1966 – 19.01.1993

Հետմահու պարգևատրվել է ՀՀ Արիության (2002), ԼՂՀ «Մարտական ծառայություն» (2003) մեդալներով:

2006 թվականից ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի լսարաններից մեկը կոչվում է

Նորայր Մարությանի անունով: Ծննդյան 50-ամյակի կապակցությամբ 2016 թ. նրա անունով է կոչվել նաև Արցախի Ներքին Հոռաթաղ գյուղի դպրոցի դասասենյակներից մեկը: Համալսարանականների նախաձեռնությամբ դպրոցի հարևանությամբ հիմնվել է նրա անվան պուրակ:



Մնացականյան Սանասար Լավրենտիի

17.07.1971 – 21.07.1992

Հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Արիության համար» մեդալով (2007):



Պետրոսյան Տիգրան Հրանտի

29.03.1965 – 01.09.1992

Պարգևատրվել է “70 лет вооруженных сил СССР” (1988), “Воину-интернационалисту от благодарного афганского народа” (1988), “Воину-интернационалисту” (1988) մեդալներով, հետմահու պարգևատրվել է ՀՀ

ՊՆ «1992 – 1994 թթ. մարտական գործողությունների մասնակից» կրծքանշանով (1996), ՀՀ Արիության մեդալով (2002):

2011 թվականից ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի լսարաններից մեկը կոչվում է Տիգրան Պետրոսյանի անունով:



Ջուլիաճյան Մհեր Արամի

28.11.1967 – 23.08.1993

Հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Արիության համար» մեդալով (2003):

2007 թվականից ԵՊՀ երկրաբանության (այժմ՝ աշխարհագրության և երկրաբանության) ֆակուլտետի օգտակար հանածոների և հանքավայրերի կաբինետը կոչվում է Մհեր Ջուլիաճյանի անունով:



Սարգսյան Դավիթ Էդիկի

04.06.1973 – 24.05.1994

Հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Արիության համար» մեդալով (2003):



Կարոտի ջոկատը, 1-ին շարքում ձախից՝ Ալեքսան Ասատրյան, Պետրոս Ղևանդյան, Բուզլուխ, 1992 թ.



Սարգսյան Տիգրան Սարգիս

27.04.1965 – 09.12.1991

Հետմահու պարգևատրվել է ՀՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանով (1996), ԵՊՀ արծաթե հուշամեդալով և պատվոգրով (1998):

1994 թվականից ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի լսարաններից մեկը կոչվում է Տիգրան Սարգսյանի անունով:



2-րդ շարքում ձախից 3-րդը՝ Համիկ Սայադյան, Քարվաճառ, 1993 թ.



Ստեփանյան Վարդան Ռոբերտի (Դուշման)

09.03.1966 – 03.07.1992

Պարգևատրվել է “За отвагу” (1986), “70 лет вооруженных сил СССР” (1988), “Воину-интернационалисту от благодарного афганского народа” (1988), “Ветерану-интернационалисту” (1988) մեդալներով:

1993 թ. հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանով, 1994 թ.՝ «Շուշիի ազատագրման համար» մեդալով:

1995 թ. նրան հետմահու շնորհվել է կապիտանի կոչում: 1996 թ. պարգևատրվել է ՀՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով, «1992 – 1994 թթ. մարտական գործողությունների մասնակից» կրծքանշանով, 1998 թ. ԵՊՀ արծաթե հուշամեդալով:

ԱՊՀ մասնակից պետությունների կառավարությունների ղեկավարների խորհրդին առընթեր ինտերնացիոնալիստ մարտիկների գործերով կոմիտեի որոշմամբ երկու անգամ (2005 և 2007 թթ.) պարգևատրվել է “Ветеран боевых действий” մեդալով:

1994-ից ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի լսարաններից մեկը կոչվում է նրա անունով: ԼՂՀ Շուշի քաղաքի փողոցներից մեկը կրում է «Դուշման-Վարդան Ստեփանյան» անունը: Երևանի Գ. Նժդեհի 56 հասցեում գործում է «Դուշման-Վարդան Ստեփանյան» տուն-թանգարան-գրադարանը: Նրա անունն են կրում նաև 2016 թ. Բերձորում հիմնված ընկուզենիների պուրակը և Շուշիի Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցի հայոց պատմության կաբինետը:

Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի Մյուրիշեն գյուղի մոտակայքում նրա հիշատակին կանգնեցված է հուշակոթող:



Փարսադանյան Արթուր Վոլոդյայի

20.05.1966 – 05.07.1990

Հետմահու պարգևատրվել է ՀՀ Արիության մեդալով (2002):

2007 թվականից ԵՊՀ երկրաբանության (այժմ՝ աշխարհագրության և երկրաբանության) ֆակուլտետի կառուցվածքային երկրաբանության և քարտեզագրության կաբինետը կոչվում է

Արթուր Փարսադանյանի անունով:



Ասոյան Ազատ Արթուրի

26.07. 1994 – 31.07.2014

2014 թ. հետմահու պարգևատրվել է ՀՀ Մարտական ծառայության և ԼՂՀ «Մայրական երախտագիտություն Արցախի քաջորդիներին» մեդալներով:

2015 թվականից ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի լսարաններից մեկը կոչվում է Ազատ Ասոյանի անունով:

ԵՊՀ-ում լսարաններ են անվանակոչվել նաև ավելի վաղ տարիներին համալսարանն ավարտած և Արցախյան ազատամարտում զոհված Յուրա Գառնիկի Հովհաննիսյանի (26-ի Յուրա) (ռադիոֆիզիկայի ֆակուլտետ) Սամվել Վահրամի Գևորգյանի (հայ բանասիրության ֆակուլտետ), Ռոմա Հրանտի Մկրտչյանի (պատմության ֆակուլտետ), Արթուր Ասլանի Մկրտչյանի (պատմության ֆակուլտետ) անուններով:

Արցախյան ազատամարտում, որ մահու և կենաց կռիվ էր հայ ժողովրդի համար, հաղթեց հայի կամքն ու ոգին, միասնությունն ու ժողովրդի հավաքական ուժը, որոնց կրողներն էին նաև համալսարանականները: Նրանցից շատերը հեզմանքով նայելով մահվան աչքերին ու կրծքով ընդունելով թշնամու մահաբեր գնդակը, իրենց արյամբ գծեցին Արցախի սահմանները: Արցախի ազատության զոհասեղանին դրեցին իրենց մատաղ կյանքն ու անմահացան, քանզի անմահություն է մահն իմացյալ...

Շատերն էլ՝ ապրելով պատերազմում հաղթողի բերկրանքը, վերադարձան խաղաղ ու ստեղծագործ աշխատանքի: Յուրաքանչյուրն իր մասնագիտական ոլորտում անմնացորդ նվիրվեց այս անգամ արդեն մեր երկրի տնտեսության, կրթության ու գիտության, մշակույթի զարգացման գործին՝ միշտ պատրաստ հարկ եղած դեպքում կրկին կանգնելու հայրենիքի պաշտպանության դիրքերում:

Արցախյան ազատամարտից 22 տարի անց, Ադրբեջանը 2016 թ. ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը փորձեց կրկին շրջել պատմության անիվը, սակայն հաշվի չառավ, որ հայ զինվորը հանուն հայրենիքի միշտ էլ ընտրում է մահ իմացյալը...



Ասոյան Ազատ,
«Ազատությունը դրախտ է»:



Աջից 1-ինը՝ Ասոյան Ազատ

Ապրիլյան մարտական գործողությունների ընթացքում հայ զինվորն իր քաջությամբ ու անկոտրում ոգով, դիմակայելով ադրբեջանական հատուկ ստորաբաժանումների հարձակմանը, հոդս ցնդեցրեց թշնամու ծրագրերը: Ավա՛ղ, անհավասար մարտերում նորից ունեցանք կորուստներ, նորից հերոսացան տղաներ ...

Փա՛ռք ու պատիվ նրանց, հավերժ խաղաղություն նրանց հոգիներին:

Ապրիլյան առաջին իսկ օրերին սկիզբ առավ համաժողովրդական շարժում, որը հանդուրժողականության ու հայրենասիրության բացառիկ դրսևորում էր: Բոլորը համախմբվեցին մի ընդհանուր գաղափարի շուրջ, յուրաքանչյուրը յուրովի վերագնահատեց ու վերաարժևորեց հայրենիքն ու պետականությունը և հաստատական կանգնեց հայ զինվորի կողքին, կանխելու մեր երկրի անվտանգությանն սպառնացող ոտնձգությունը:

Հայրենասիրության, միասնականության ու համախմբվածության նորօրյա դրսևորումներով համակված՝ Երևանի պետական համալսարանը ևս անմասն չմնաց հայրենիքի պաշտպանության գործից, շատ ծրագրեր իրագործեց: Հայրենաշունչ այդ ոգին Մայր բուհի գոյության մշտական ուղեկիցն է եղել. Հայրենական մեծ պատերազմ, 1965 և 1988 թվականների Ազգային զարթոնք, Արցախյան գոյապայքար:

ԵՊՀ ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի նախաձեռնությամբ ձևավորված Մարտական պատրաստության ակումբում գրանցվեց ավելի քան 200 ուսանող կամավորական: Ակումբի անդամները և նրանց շարքերը համալրած համալսարա-

նականները ձևավորեցին ջոկատ և մեկնեցին Արցախ՝ հայրենիքի մերօրյա պաշտպաններին զորավիգ լինելու և մեր իսկ արյամբ սրբագործված հողը հակառակորդի պիղծ ոտքի կոխանից զերծ պահելու համար: Ջոկատի անդամները աչքի ընկան իրենց կազմակերպվածությամբ, կարգապահությամբ և զինվորական պարտականությունների ճշգրիտ կատարմամբ, որն ըստ արժանվույն գնահատվեց զորամասի հրամանատարության և աշխարհագորայինների կողմից:

Արցախի առաջնագծում գտնվող զինվորներին և ռազմական բախումներից տուժած ազգաբնակչությանը համալսարանի ուսանողները կազմակերպեցին օգնություն. առաջին անհրաժեշտության իրեր, դեղորայք, սննդամթերք, տնտեսական ապրանքներ:

Ռեկտորատի արտահերթ նիստում կայացվեց որոշում. բացել առանձին հաշվեհամար, որպեսզի աշխատակիցները և ուսանողները կամավոր հիմունքներով դրամական օգնություն ցուցաբերեն Արցախի առաջնագծում գտնվող զինվորներին և սահմանամերձ գոտիներում ապրող մեր ազգաբնակչությանը: Հավաքվեց 8 մլն. դրամ, որով գնվեցին առաջին անհրաժեշտության իրեր, իսկ գումարի մյուս մասը ԵՊՀ-ի տրամադրած 20 մլն. դրամ գումարի հետ փոխանցվեց ԼՂՀ կառավարության կողմից բացված հատուկ հաշվեհամարին:

ԵՊՀ ուսանողական բոլոր կառույցները կազմակերպեցին տարաբնույթ միջոցառումներ:

ԵՊՀ մշակույթի կենտրոնը ապրիլի 29-ին իր երգի-պարի և «Համալսարանական» թատրոն ստուդիայի սաների ուժերով ՀՀ ՊՆ

կենտրոնական կլինիկական հոսպիտալում կազմակերպեց համերգ՝ ի գորակցություն Արցախում վիրավորված զինվորների:

Մարտական պատրաստության ակումբի նախաձեռնությամբ ԵՊՀ-ում բացվեց «Ճանաչենք մեր հերոսներին» խորագրով լուսանկարների ցուցահանդես, որի հերոսները քաջարի հայ մարտիկներն էին, ովքեր իրենց վեհ կեցվածքով, հպարտությամբ ու խոհուն ժպիտով ոչ միայն ոգևորում էին այցելուներին, հատկապես ուսանողներին, այլև ցույց տալիս, որ հայ զինվորն անպարտելի է: Լուսանկարների հեղինակները համալսարանականներն էին, ովքեր դրանք արել էին հունիսի սկզբին Մարտակերտում «Մարտական խաչ» շքանշանի արժանացած ասպետների հետ ունեցած հանդիպման ընթացքում:

ԵՊՀ «Վարդանանք» ռազմահայրենասիրական ակումբի անդամները պարբերաբար այցելելով ՀՀ ՊՆ զինվորական հոսպիտալում բուժվող զինծառայողներին՝ նրանց տեսնում էին ոչ միայն չընկճված, այլև մարտականորեն տրամադրված, որոնք անհամբերությամբ էին սպասում օր առաջ դիրքեր վերադառնալուն, իսկ ակումբի «Վարդանանք» թերթի էջերում մշտապես լուսաբանվում են թե՛ համալսարանական և թե՛ ՀՀ նորօրյա հերոսների կյանքն ու գործած սխրանքները, որոնք հայրենասիրության յուրօրինակ դասեր են:

Այս միջոցառումները ոչ միայն ոգևորում են հայ զինվորին, այլև ամրապնդում, սերտացնում և առավել արդյունավետ են դարձնում համալսարան-բանակ կապը, որ արդեն երկար տարիների պատմություն ունի: Այդ են վկայում ռազմահայրենասիրական բնույթի բազմաթիվ ծրագրերը, գիտաճանաչողական այցերը և ամենամյա



«Արծիվ» մահապարտների գումարտակի գնդացրորդ Վարդան Հովհաննիսյանը ռազմաճակատ մեկնելուց առաջ, Երևան, 1992 թ.



Ճախից 3-րդը՝
Թաթուլ Կրպեյան



Թաթուլի ջոկատի տղաները, Ճախից
1-ինը՝ Թաթուլ Կրպեյան

այլ միջոցառումները, որոնք անցկացվում են թե՛ Մայր բուհում և թե՛ ՊԲ գործասերում:

Հպարտանանք համալսարանական նորոյա հերոսներով.



Իրավագիտության ֆակուլտետի 1-ին կուրսի ուսանող Գոռ Դարմանյանը, որ արժանացել է ՀՀ Արիության և ԼՂՀ «Արիության համար» մեդալների, 2015 թ. մարտի 19-ին իր ջոկի հետ կասեցրել է թիկունք ներթափանցած հակառակորդի դիվերսիոն հետախուզական խումբը:



Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանող, ՀՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի ասպետ Շուլի Հակոբյանը 2016 թ. ապրիլի 4-ին 30 բուսի ընթացքում խոցել է հակառակորդի «T-80» տեսակի 3 տանկ:



Իրավագիտության ֆակուլտետի 1-ին կուրսի ուսանող Գևորգ Մանուկյանը, որն արժանացել է ԼՂՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի և ՀՀ Արիության մեդալի, 2016 թ. ապրիլի 2-ին խոցել է հայոց բանակի մարտական դիրքերի ուղղությամբ հրթիռներ արձակող հակառակորդի «ՄԻ-8» տեսակի ուղղաթիռը:

Հայ զինվորի նորոյա սխրանքը փաստում է, որ հայկական բանակը պատրաստ է դիմագրավելու հակառակորդի ցանկացած հարձակում: Տա՛ Աստված, որ դրա առիթը չլինի, որ խաղաղ լինեն մեր սահմանները, որ Եռաբլուր զինվորական պանթեոնը չհամալրվի նոր հերոսներով... Հավերժ փառք մեր հերոս տղերքին:

Ապրիլյան քառօրյա պատերազմը հերոսական մի նոր էջ դարձավ հայ ժողովրդի պատմության մեջ՝ ցույց տալով, որ հայը իր անկոտրում ոգով ու կամքով միշտ պատրաստ է մինչև արյան վերջին կաթիլը պայքարելու հանուն հայրենիքի, հանուն խաղաղության, հանուն իր ազգային արժանապատվության: Հայոց բանակը մեկ անգամ ևս արձանագրեց, որ ինքն է գալիքի խորհրդանիշն ու անկախության երաշխիքը, ապացուցեց, որ հայ ժողովրդի ոգին, մտքի ու բազկի ուժը ի գործ են հրաշքներ գործելու, որ ապրիլը ոչ միայն ապրելու, այլև հաղթանակի ամիս է:



«Երևանի պետական համալսարանն իր հիմնադրումից ի վեր եղել և մնում է ոչ միայն գիտության ու մշակույթի կարևորագույն ու գլխավոր օջախ, այլև հայ ազգային մտքի դաստիարակության և հայ ոգու ձևավորման օրրան: Ի սկզբանե Մայր բուհն իր ուսումնադաստիարակչական և հանրային մշակութային գործունեությամբ սերունդներին ներարկել է

ազգային գիտակցության և ազգային արժանապատվության, քաղաքացիական առաքիլության, հայրենիքին նվիրվելու զգացում:

Եվ պատահական չէ, որ անցյալ դարի 50-ական թվականներին սկսած հենց համալսարանականներն էին, որ արժարժեցին և պատշաճ վերաբերմունքի արժանացրին մեր ժողովրդի համար այնքան կարևոր և, ես կասեի, նույնիսկ ճակատագրական, Արցախի հիմնախնդիրը: Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը և բազմազան ուսանողությունը մեր ազգային գիտակցության վերելքի տարիներին՝ 1965-ին ազգային շարժման դրոշակակիրներն էին:

1988 թ. արցախյան շարժման առաջին իսկ օրերին համալսարանականներն առաջին շարքերում էին և համոզված էին, որ այդ արդար պայքարում մեզ հաղթանակ է վիճակված:

Ես հոգու թրթիռով եմ սպասում այսօր բանակ մեկնող մեր դիրքապահ ուսանողների վերադարձին և ակնածանքով դիմավորում նրանց, քանզի նրանք են մեր ժամանակի իրական և գործող հերոսները:

Հոգիս փառավորվում է, երբ տեսնում եմ հերոսական սերնդի արժանավոր հետնորդներին՝ տաղանդավոր, աշխատասեր, հայրենապաշտ մեր ուսանողներին, որոնք պատրաստ են հայրենիքի առաջին իսկ կանչով գնալու իրենց ավագ եղբայրների, հայրերի ու պապերի արժանավայել ճանապարհով՝ պատրաստ օրհասական պահին սեփական արյամբ ջրելու Ծառը Հայրենյաց...»

Բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր,
Արցախյան բանակի գնդապետ
Գուրգեն Մելիքյան

**«Բավական չէ իր ազգի զավակը լինել,
պետք է նաև նրա
հրաշունչ զինվորը լինել»:**

Գարեգին Նժդեհ

ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ԵՊՀ-ՈՒՄ

Հայաստանի անկախացումից հետո հանրապետության կրթական ողջ համակարգի բարեփոխումը ժամանակի հրամայականն էր և առաջնահերթ նշանակություն պետք է ունենար երկրի հետագա զարգացման համար: Այս համատեքստում անհրաժեշտ էր ԵՊՀ-ի ընդհանուր գործունեությունը աստիճանաբար արմատապես վերափոխել, որն էլ սկիզբ առավ ՀՀ նախագահի 1992 թ. հրամանագրով: Համալսարանին շնորհվեց կրթական, գիտական և մշակութային ինքնավար հաստատության կարգավիճակ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ Հ Ր Ա Մ Ա Ն Ա Գ Ի Ր Ը ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության առջև ծառացած կենսական կարևորություն ունեցող խնդիրների լուծման և նրա հետագա կայուն առաջընթացի ապահովման համար օրակարգի հարց է դարձել հանրապետության կրթական, գիտական և մշակութային համակարգերի և հաստատությունների արմատական բարեփոխումը, ժո-

ղովրդի մտավոր, գործնական և բարոյական կարողությունների ու հմտությունների օգտագործման անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը:

Հաշվի առնելով այդ խնդիրների իրականացման գործում Երևանի պետական համալսարանի, որպես հայ բարձրագույն կրթության, գիտության և մշակույթի եզակի կենտրոնի բացառիկ դերը, ցանկանալով պայմաններ ստեղծել նրա ներուժի հնարավորություններն արդյունավետ օգտագործելու համար, նպատակ ունենալով որոշակի դարձնել համալսարանի կարգավիճակը և պետության կողմից նրա նյութական ու բարոյական ապահովվածությունը, ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Սահմանել, որ Երևանի պետական համալսարանը ինքնավար պետական բարձրագույն ուսումնական, գիտական և մշակութային հաստատություն է Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգում՝ օժտված իրավաբանական անձի իրավունքներով, որը գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ համապատասխան ընդունված օրենսդրությամբ:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝

ա) հստակեցնել Երևանի պետական համալսարանի և հանրապետության բարձրագույն կրթության և գիտության նախարարության փոխհարաբերությունները՝ Երևանի պետական համալսարանի ինքնուրույնությունն ու պետական կառավարման ֆունկցիաների իրականացման լիարժեքությունն ապահովելու նպատակով,

բ) լուծել Երևանի պետական համալսարանին պատկանող Երևան քաղաքի Աբովյան փողոցի թիվ 52 մասնաշենքի համալիրը նրան

սահմանված կարգով վերադարձնելու հարցը,

գ) Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի 1992 թ. հունիսի 3-ի «Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության և գիտության համակարգի հաստատությունների օրինադրությունների մասին» որոշման համաձայն, երկամսյա ժամկետում քննության առնել և հաստատել Երևանի պետական համալսարանի օրինադրությունը,

դ) օրենքով սահմանված կարգով լուծել Երևանի պետական համալսարանի արդյունավետ գործունեությունն ապահովելու, բարձրագույն կրթության և գիտության ներդաշնակ զարգացման համար անհրաժեշտ տնտեսական նախադրյալների ստեղծման հարցերը:

Հայաստանի Հանրապետության նախագահ՝

L. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

31 օգոստոսի 1992 թ., քաղ. Երևան

1999 թ. ապրիլին ընդունված ՀՀ «Կրթության մասին» օրենքը, որի նախագծի մշակմանը և քննարկմանը գործուն մասնակցություն ունեցավ նաև համալսարանը, օրենսդրորեն հաստատեց ԵՊՀ-ի կարգավիճակը՝ հռչակելով նաև համալսարանական կրթության ազատականությունը:

ԵՊՀ զարգացման իրավական նորմերի ապահովմանը և ինքնավարության ընդլայնմանը զուգընթաց սկիզբ դրվեց վերափոխումների համապարփակ ու տևական ծրագրային գործընթացի: Այն ներառում էր ԵՊՀ գործառնության բոլոր ուղղությունները: Դեռևս 1994 թ.

մշակվել էր համալսարանի զարգացման առաջին ծրագիրը, որի իրականացմամբ 1995 – 1996 ուստարվանից անցում էր կատարվել բազմաստիճան կրթական համակարգի. բակալավրական (քառամսյա) և մագիստրոսական (երկամյա): Մեծ աշխատանք էր տարվել բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնական պլանների կատարելագործման ուղղությամբ: 2007 թ. մագիստրոսի, իսկ մեկ տարի անց՝ բակալավրի ծրագրերում ներդրվեց կրեդիտային համակարգ: Բուհն ունի նաև հետազոտողի եռամյա ասպիրանտական ծրագիր:

Վերափոխման գործընթացի հետ կապված՝ համալսարանի առաջ ծառացան նոր խնդիրներ. ուսումնական ծրագրերի ու պլանների վերամշակում, մայրենի լեզվով դասագրքերի և ուսումնամեթոդական ձեռնարկների կազմում ու հրատարակում, ուսուցման գործընթացի բարելավում ու համալրում ժամանակակից տեխնիկական միջոցներով, գիտահետազոտական աշխատանքների իրականացման ռազմավարական ուղղությունների ճշգրտում և դրանց կազմակերպման նոր ձևերի ու մեթոդների կիրառում, մասնագետների պատրաստում՝ հասարակության տնտեսական զարգացման նոր փուլին համապատասխան, օտար լեզուների ուսուցման խթանում և որակավորման բարձրացում և այլն:

Վերափոխման առաջին փուլում ուսումնական բնականոն գործընթացի ապահովման, միջազգային հաղորդակցության ընդլայնման, դասախոսների սոցիալական հիմնահարցերի լուծման ոլորտներում համալսարանն ունեցավ որոշակի ձեռքբերումներ:

Վերջին երկու տասնամյակում ԵՊՀ կրթական համակարգում կատարված բարեփոխումները զգալի արդյունք են տվել: Բացվել են

նոր ֆակուլտետներ, մի շարք ամբիոններ, նոր մասնագիտություններ ու մասնագիտացումներ: Ակնհայտ են նյութատեխնիկական բազայի բարելավումը, նոր տեխնոլոգիաների ներդրումը ուսումնական գործընթացում, կրթության որակի ներքին ապահովման համակարգի կատարելագործումը ըստ եվրոպական չափանիշների, կրթական ծրագրերի համապատասխանեցումը աշխատաշուկայի և հասարակության կարիքներին ու պահանջներին, ուսանողների և շրջանավարտների հետադարձ կապի արդյունավետ մեխանիզմների (այդ թվում՝ առցանց) գործադրումը, ինչպես նաև ուսանողական կառույցների ակտիվ գործունեությունը:

Դասախոսական կազմի որակավորման շարունակական բարձրացումը նույնպես համալսարանի առաջնահերթություններից է, ինչն էլ բարձրորակ կրթությամբ մասնագետներ պատրաստելու կարևորագույն նախապայմանն է: Վերջերս ներդրված դասախոսական կազմի որակավորման բարձրացման նոր՝ կրեդիտային հենքով կառուցված կրթագիտական ծրագիրը ներառում է վերապատրաստման հատուկ դասընթացներ, որոնք միտված են զարգացնելու դասախոսների հմտությունները դասավանդման, ուսանողների ուսումնառության և գնահատման նոր մեթոդների կիրառման ասպարեզում: Կրթական լրացուցիչ ծրագրերի և դասընթացների ներդրմամբ շարունակական կրթության դասընթացներ ու մասնագիտական ուսուցում է կազմակերպվում նաև հասարակության տարբեր խմբերի համար, և ստեղծվում են ուսումնառության այլ հնարավորություններ (այդ թվում՝ հեռավար):

Ուսման որակի բարձրացման կարևոր ուղիներից է նաև

կրկնակի դիպլոմով ծրագրերի իրականացումը ԵՊՀ-ում: Ռոստոկի համալսարանի հետ համատեղ 2010 թվականին մշակվեց «Վիզուալ հաշվարկ» մագիստրոսական ծրագիրը: ԵՊՀ-ն 2010 թվականից ներգրավված է նաև ԱՊՀ «Ցանցային համալսարան» ծրագրում, որի շրջանակներում Ժողովուրդների բարեկամության ռուսական և Ուրալի դաշնային համալսարանների, նաև Մոսկվայի պետական միջազգային հարաբերությունների ինստիտուտի հետ համատեղ 6 մասնագիտությունների գծով իրականացվում են կրկնակի դիպլոմով ծրագրեր:

ԵՊՀ զարգացման ծրագրի համալիր կիրառումը համալսարանին հնարավորություն է ընձեռում դառնալու համալսարանական աշխարհի օրգանական մասնիկը, արդի զարգացման պահանջներին համապատասխան լուծելու իր առջև դրված կարևորագույն խնդիրները և դուրս գալու միջազգային ճանաչման ու համագործակցության լայն ասպարեզ:

Այսօր համալսարանն ունի 19 ֆակուլտետ, 100-ից ավելի ամբիոն և մեկ մասնաճյուղ Իջևան քաղաքում՝ 4 ֆակուլտետներով: Իջևանի մասնաճյուղը հիմնադրվել է ՀՀ Կառավարության 1994 թ. սեպտեմբերի 19-ի որոշմամբ՝ Իջևանի տարածաշրջանային բուլեջի հիմքի վրա:

ԵՊՀ-ն ունի շուրջ 2800 աշխատակից, որից 1200-հիմնական դասախոսական կազմն է (150 պրոֆեսոր, 455 դոցենտ, շուրջ 600 ասիստենտ և դասախոս): Այստեղ գիտակրթական գործունեություն են իրականացնում նաև Գիտությունների ազգային ակադեմիայի 15 ակադեմիկոս և 19 թղթակից անդամ:

Ներկայումս ԵՊՀ-ն իրականացնում է 56 բակալավրական,

140 մագիստրոսական և 90 ասպիրանտական ծրագրեր, որտեղ ընդգրկված է ավելի քան 16500 ուսանող (10900-ը՝ բակալավրիատում, 2100-ը՝ մագիստրատուրայում և 370-ը՝ ասպիրանտուրայում), որից 3200-ը հեռակա ուսուցման համակարգում: Եթե 1925 – 1930 թթ. համալսարանի շրջանավարտների թիվը ընդամենը 931 էր, ապա 2014 – 2018 թթ. այն կազմում է 22431 (տե՛ս աղյուսակներ 1 և 2):

2014 – 2015 ուստարում ՀՀ Կառավարության որոշմամբ «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ը վերակազմակերպվեց հիմնադրամի: Ըստ այդմ ԵՊՀ կառավարման համակարգում կատարվեցին համապատասխան փոփոխություններ: ԵՊՀ կառավարման խորհուրդը փոխարինվեց ԵՊՀ հոգաբարձուների խորհրդով՝ որպես համալսարանի կառավարման բարձրագույն մարմին:

Աղյուսակ 1

1925 – 1930 թթ. համալսարանի շրջանավարտների թիվն ըստ մասնագիտությունների

Մասնագիտություն	Ուսումնական տարի						
	1924-1925	1925-1926	1926-1927	1927-1928	1928-1929	1929-1930	Ընդամենը
Ֆիզիկամաթեմատիկոսներ	-	-	-	-	13	9	22
Կենսաբաններ	-	-	-	19	15	21	55
Պատմաբան-բանասերներ	29	12	10	23	27	30	131
Տնտեսագետներ, իրավաբաններ	-	108	11	39	54	48	260
Գյուղատնտեսներ	29	30	34	38	89	59	279
Բժիշկներ	-	-	35	35	29	38	137
Ճարտարապետ-ինժեներներ	-	-	-	7	13	27	47
Ընդամենը	58	150	90	161	240	232	931

2014 – 2018 թթ. համալսարանի շրջանավարտների թիվը

Ֆակուլտետ, կենտրոն	Առկա ուսուցում					Հեռակա ուսուցում					Ընդ.
	2014	2015	2016	2017	2018	2014	2015	2016	2017	2018	
Մաթեմատիկայի և մեխանիկայի	179	84	206	132	210	21	5	-	13	-	850
Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի	137	77	216	155	220	19	17	14	29	16	900
Ֆիզիկայի	127	49	132	64	110	7	9	2			500
Ռադիոֆիզիկայի	87	54	128	69	141	4	6	6	20	-	515
Քիմիայի	156	89	186	12	42	30	41	48	5	-	609
Կենսաբանության	191	65	181	121	109	22	36	22	27	7	781
Աշխարհագրության և երկրաբանության	210	132	245	188	274	48	82	70	96	63	1408
Պատմության	279	183	319	274	305	82	115	81	103	38	1779
Միջազգային հարաբերությունների	362	275	398	317	412	222	217	181	205	131	2720
Տնտեսագիտության և կառավարման	319	175	337	246	309	209	213	187	173	106	2274
Փիլիսոփայության և հոգեբանության	169	105	160	118	148	51	55	61	58	29	954
Սոցիոլոգիայի	127	51	132	118	134	12	13	27	36	26	676
Հայ բանասիրության	223	134	243	189	150	107	122	55	67	40	1330
Ժողովրդագրության	90	68	101	82	92	37	31	23	61	33	618
Ռուս բանասիրության	116	59	121	82	51	24	20	9	17	10	509
Ռուսականագիտության բանասիրության	505	194	613	470	486	90	107	75	152	47	2739
Արևելագիտության	187	77	156	165	152						737
Իրավագիտության	153	122	200	177	203	112	116	95	132	79	1389
Աստվածաբանության	56	19	77	70	51	14	13	10	14	10	334
ՏՏԿՀ կենտրոն	33	18	20	15	19						105
ԵՌԻ կենտրոն	57	39	26	33	34						189
Մասս մեդիայի կրթական կենտրոն	-	22	24	9	11						66
Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ	-	6	6	9	5	-	-	-	-		26
Ֆարմացիայի ինստիտուտ	-	-	-	163	128	-	-	-	38	30	359
Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոն	-	-	-	-	48	-	-	-	-	16	64
Ընդամենը	3763	2097	4227	3278	3844	1111	1218	966	1246	681	22431

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասը և «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածը, 10-րդ հոդվածի 4-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 273.210.03130) վերակազմավորել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ):

2. Հաստատել ԵՊՀ-ի կանոնադրությունը՝ համաձայն N 1 հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության անունից հանդես եկող պետական կառավարման լիազոր մարմին սահմանել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը:

4. ԵՊՀ-ի կառավարիչ-ռեկտորի ժամանակավոր պաշտոնակա-

տար (այսուհետ՝ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար) նշանակել Արամ Հրաչիկի Սիմոնյանին:

5. Առաջարկել ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարին սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ԵՊՀ-ի պետական գրանցումը:

6. «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված՝ Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող սույն որոշման N 2 հավելվածում նշված անշարժ գույքը հետ վերցնել և հանձնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության տնօրինմանը:

7. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության տնօրինմանը հանձնված, պետական սեփականություն հանդիսացող, սույն որոշման N 3 հավելվածում նշված գույքն անորոշ ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել ԵՊՀ-ին:

8. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետին՝ սույն որոշման 6-րդ կետում նշված գործընթացի ավարտից հետո վեցամսյա ժամկետում ԵՊՀ-ի հետ կնքել սույն որոշման N 3 հավելվածում նշված գույքի անհատույց օգտագործման մասին պայմանագիր՝ դրանում նախատեսելով դրույթ այն մասին, որ պայմանագիրը կարող է լուծվել հիմնադրի կողմից՝ դրա մասին գրավոր ծանուցելով ԵՊՀ-ին, պայմանագրի նոտարական վավերացման, պայմանագրից ծագող

գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերն իրականացնելով ԵՊՀ-ի միջոցների հաշվին:

9. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում.

ա. ապահովել «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը սեփականության իրավունքով և անհատույց օգտագործման իրավունքով պատկանող գույքի, ինչպես նաև պարտավորությունների կազմի ճշտման գործընթացը,

բ. հաստատել «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գույքի, այլ գույքային իրավունքների, ինչպես նաև պարտատերերին և պարտապաններին վերաբերող բոլոր (ներառյալ՝ վիճարկվող) պարտավորությունների՝ ԵՊՀ-ին փոխանցման ակտը.

2) ԵՊՀ-ի պետական գրանցումից հետո եռամսյա ժամկետում.

ա. Հայաստանի Հանրապետության վարչապետի հաստատմանը ներկայացնել ԵՊՀ-ի հոգաբարձուների խորհրդի կազմը,

բ. ապահովել «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքը սեփականության իրավունքով ԵՊՀ-ին փոխանցելու գործընթացը:

10. Սահմանել, որ ԵՊՀ-ն «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդն է, և նրան են անցնում վերակազմակերպված իրավաբանական անձի իրավունքներն ու պարտականությունները՝ փոխանցման ակտին հա-

մապատասխան:

11. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության վարչապետ՝
Հովհիկ Աբրահամյան

Երևանի պետական համալսարանի գործունեությունը բոլոր բնագավառներում կազմակերպվում և իրականացվում է ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրով նախատեսված խնդիրներին ու նպատակներին համապատասխան, և իրականացված բազմաթիվ միջոցառումներն ու ծրագրերը կոչված են խթանելու համալսարանի առաջընթացը, ապահովելու նրա մրցունակությունը միջազգային գիտակրթական ասպարեզում:

Ծրագրային նորոգման, ուսումնական գործընթացի կազմակերպման բարելավման, որակի ներքին ապահովման համակարգի զարգացման, դասավանդման որակի բարձրացման աշխատանքները ԵՊՀ-ում կրում են շարունակական բնույթ:

«ՀՀ միջին և բարձրագույն մասնագիտական հիմնական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների պետական հավատարմագրման կարգի» դրույթների համաձայն՝ 2012 թ. մարտին ԵՊՀ-ում մեկնարկեց և հետագա տարիներին Նիդերլանդների հավատարմագրման կառույցի անմիջական մասնակցությամբ իրականացվեց ինստիտուցիոնալ և փորձնական ծրագրային հավատարմագրում: Այդ նպատակով համալսարանը նա-

խաձեռնեց ինքնագնահատման գործընթաց՝ գնահատելու համար իր գործունեության արդյունավետությունը բոլոր հիմնական ոլորտներում, վեր հանելու ձեռքբերումները, առկա թերություններն ու բացթողումները, ինչպես նաև նախանշելու վերջիններիս վերացման ուղիները: Կազմվեց ԵՊՀ ինքնագնահատման զեկույց, որը հրապարակվեց և տարածվեց ԵՊՀ ներքին և արտաքին շահակիցների շրջանում և ներկայացվեց միջազգային փորձագիտական խմբին: Վերջինս փորձագիտական այց կատարեց համալսարան և տվեց իր վերջնական գնահատականը: Փորձագիտական խմբի ղեկավար, Բրյուսելի համալսարանի նախկին ռեկտոր Բեն Վան Կամպը և խմբի անդամները փաստեցին ողջ գործընթացի բարձր կազմակերպվածությունը, անմիջական և անկաշկանդ շփումները ուսանողների և դասախոսների հետ, ինչպես նաև նրանց պատրաստվածությունն ու իրազեկվածությունը: Այցից հետո փորձագիտական խումբը ներկայացրեց իր զեկույցը՝ ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման վերաբերյալ: 2015 թ. մարտի 7-ին Երևանի պետական համալսարանին տրվեց պետական հավատարմագրման թիվ 1 վկայականը, որով հավաստվում է, որ ՀՀ կրթության և գիտության նախարարության «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովի 2015 թ. փետրվարի 21-ի թիվ 1 որոշմամբ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամին շնորհվել է ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ 6 տարի ժամկետով: Փաստենք, որ հավատարմագրման գործընթաց իրականացրած բուհերից ԵՊՀ-ն միակն էր, որին հավատարմագրում շնորհվեց

6 տարի ժամկետով:

Ուսուցման որակի բարձրացման կարևորության գործոններից են ուսանողական կիսամյակային հարցումները, որոնց արդյունքները օգտագործվում են դասախոսների պաշտոնավարման և առաջխաղացման մրցույթներում, ինչպես նաև շրջանավարտների՝ համալսարանում ստացած կրթությունից բավարարվածության ամենամյա հարցումները:

Երևանի պետական համալսարանը զգալի արդյունքներ է գրանցել տեղեկատվական արդի տեխնոլոգիաների մշակման, ներդրման և գործարկման ուղղությամբ: Այս առումով Տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոնը (ՏՏԿՀ), որը ստեղծվել է 2007 թ., լայնածավալ գործունեություն է իրականացնում նոր կրթական տեխնոլոգիաների օգտագործման և մշակման, ՏՏ բնագավառում մագիստրոսական կրթական ծրագրերի և առանձին դասընթացների իրականացման, գիտահետազոտական աշխատանքների կատարման, համալսարանական կրթության կառավարման և որակի ապահովման, տեղեկատվական համակարգերի մշակման և ներդրման ուղղությամբ:

Համալսարանի ուսումնական գործընթացի ապահովման և բարելավման գործին նպաստում է նաև էլեկտրոնային տեղեկատվական “Super Vision YSU” ծրագրի ավտոմատացված համակարգի ներդրումը, որը ավտոմատացված եղանակով կազմակերպում է կրեդիտ պարտք ունեցող ուսանողների դիմումների ընդունման, քննությունների վերահանձնման գործընթացը, Ազգային բանակ մեկնող և վերադարձող ուսանողների դիմումների ձևակերպումները:

Կարևոր է նաև համալսարանի՝ ՀՀ պաշտպանության նախարարության հետ ձեռք բերված պայմանավորվածությունը՝ ամեն տարի ռազմական համակարգի կապի ոլորտը ռադիոֆիզիկայի ֆակուլտետի բակալավրիատն ավարտած շուրջ տաս տեխնիկական կրթությամբ սպաներով համալրելու վերաբերյալ:

ԵՊՀ մինչհամալսարանական կրթության վարչությունը ակտիվ գովազդարշավ է ծավալում ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում: Դիմորդների մասնագիտական կողմնորոշմանը նպաստելու և իրազեկության մակարդակը բարձրացնելու նպատակով կազմակերպում է հանդիպում-գրույցներ, քննարկումներ աշակերտների, ծնողների և ուսուցիչների հետ, ակնարկային, բովանդակային դասախոսություններ, նպատակային ճանաչողական այցեր: Հանդիպումների ընթացքում ներկայացվում են ԵՊՀ մասնագիտությունները, պարզաբանվում բուհ ընդունվելու կարգը: Բուհը հրատարակում է «Դիմորդի ուղեցույց» ձեռնարկը, որտեղ հանգամանորեն ներկայացվում է ԵՊՀ ֆակուլտետների, մասնագիտությունների, հեռակա ուսուցման համակարգի, նախապատրաստական դասընթացների և ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի մասին բազմաբնույթ տեղեկատվություն:

Օգտագործելով պրոֆեսորադասախոսական և նյութատեխնիկական սեփական ներուժը՝ համալսարանը մեծ ուշադրություն է դարձնում ավագ դպրոցի ինստիտուցիոնալ համակարգի կատարելագործմանը, հանրակրթության արդյունավետության բարձրացմանը՝ դրանով իսկ նպաստելով ավագ դպրոցի կայացման գործին: ԵՊՀ-ն համագործակցության շուրջ 40 պայմանագիր է կնքել ՀՀ

ավագ դպրոցների հետ, որտեղ փորձառու դասախոսները լրացուցիչ կրթական ծրագրերով հատուկ դասընթացներ են վարում:

ԵՊՀ-ում և ՀՀ մարզերում դպրոցների ավարտական դասարանների աշակերտների համար հանրակրթական տարբեր առարկաների գծով կազմակերպվում և անցկացվում են օլիմպիադաներ: Հաղթողներն արժանանում են I, II, III կարգի դիպլոմների, ինչպես նաև գովասանագրերի: Օլիմպիադաների կազմակերպումը մինչև ընդունելության միասնական քննություններ հանձնելը յուրատեսակ ստուգատես է աշակերտների համար, որը նպաստում է նրանց մասնագիտական կողմնորոշմանը և խթանում կապը համալսարանի և դպրոցի միջև:

Իսկ համալսարանի ուսանողները գործուն մասնակցություն ունեն միջազգային տարբեր օլիմպիադաներում և միշտ էլ հաղթանակով են վերադառնում Մայր բուհ:

23-րդ մաթեմատիկական միջազգային ուսանողական օլիմպիադայի (IMC-2016) մեդալակիրներ



Ավետիք Կարագուլյան
բրոնզե մեդալակիր,
Մաթեմատիկայի և մեխանիկայի
ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող



Ալբերտ Գևորգյան
ոսկե մեդալակիր,
Մաթեմատիկայի և մեխանիկայի
ֆակուլտետի 1-ին կուրսի ուսանող



Վազգեն Միքայելյան
արծաթե մեդալակիր,
Մաթեմատիկայի և մեխանիկայի
ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող



Ալբերտ Սահակյան
ոսկե մեդալակիր,
Ինֆորմատիկայի և կիրառական
մաթեմատիկայի ֆակուլտետի 3-րդ
կուրսի ուսանող

**24-րդ մաթեմատիկական միջազգային ուսանողական
օլիմպիադայի (IMC-2017) մեդալակիրներ**



Ձախից աջ, 2-րդ շարքում.

4-րդը՝ Ավետիք Կարապուլյան, արծաթե մեդալակիր, մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող,

5-րդը՝ Կարեն Բեռյան, խմբի ղեկավար,

7-րդը՝ Ալբերտ Գևորգյան, ոսկե մեդալակիր, մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանող,

ձախից աջ, 1-ին շարքում.

1-ինը՝ Վազգեն Միքայելյան, ոսկե մեդալակիր, մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող,

2-րդը՝ Գևորգ Մնացականյան, արծաթե մեդալակիր, մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող

**25-րդ մաթեմատիկական միջազգային ուսանողական
օլիմպիադայի (IMC-2018) մեդալակիրներ**



Ձախից աջ՝

Կարեն Բեռյան, խմբի ղեկավար

Վահագն Ալթունյան, արծաթե մեդալակիր, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանող,

Ալբերտ Գևորգյան, ոսկե մեդալակիր, մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող,

Արսեն Համբարձումյան, ոսկե մեդալակիր, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանող,

Գևորգ Մնացականյան, ոսկե մեդալակիր, մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող

Մայր բուհը պատմական բացառիկ դերակատարություն է իրականացնում ոչ միայն հայրենիքում, այլև սփյուռքահայության շրջանում. հազարավոր սփյուռքահայեր, ԵՊՀ-ում ստանալով մասնագիտական կրթություն կամ գիտական աստիճան, վերադառնում են իրենց բնակավայրերը և ստացած գիտելիքներն ու հայրենասիրական ոգին ի սպաս դնում հայապահպանության ազգանվեր գործին:

Ժամանակի մարտահրավերներին դիմագրավելու և իր կրթական առաքելությունն արդյունավետ իրականացնելու համար համալսարանը մշտապես նորացնում է իր կրթական ծրագրերը, կիրառում դասավանդման և ուսուցման արդիական մեթոդներ, ուսանողներին մատուցում արդյունավետ օժանդակ ծառայություններ:

Մայր կրթօջախը մշտապես ձգտում է կատարելության: Ուսուցման, գիտական հետազոտությունների և հանրությանը մատուցվող ծառայությունների ոլորտներում այն բազմաթիվ նորարարական գաղափարների կրող է: Արդի գլոբալացող հասարակության և աշխատաշուկայի պայմաններում նրա առաջնահերթ խնդիրներից է՝ դառնալ ուսանողակենտրոն ուսումնական միջավայր, տալ հասարակական կյանքի և ղեկավար դերի պատրաստ, մասնագիտական կարիերայի բարձունքներին ձգտող և շարունակական կրթության ունակ գործուն շրջանավարտներ:

ԵՊՀ-ում ձեռնարկված բարեփոխումները՝ պայմանավորված ժողովրդագրական, տեխնոլոգիական, սոցիալական, տնտեսական և մշակութային բազմաթիվ գործոններով կարևորագույն քայլ են հետազոտական հզոր կենտրոն դառնալու ճանապարհին:

Երևանի պետական համալսարանը կրթական ու գիտամշակու-

թային ինքնավար հաստատություն է, որի հիմնական առաքելությունը կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում գիտելիքի ստեղծումը, զարգացումը և փոխանցումն է եկող սերունդներին:

Երևանի պետական համալսարանը եղել և մնում է ազգային կրթության ու գիտության տաճար, որտեղ կրթվել, դաստիարակվել և կյանք են մտել բազմաթիվ սերունդներ: Նրա սաներից շատերը դարձել են հասարակական-քաղաքական ու պետական ականավոր գործիչներ, այդ թվում՝ անկախ Հայաստանի Հանրապետության նախագահներ Լևոն Տեր-Պետրոսյանը, Սերժ Սարգսյանը, Արմեն Սարգսյանը, վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Համալսարանի շրջանավարտներ են եղել նաև շատ գրողներ ու հրապարակախոսներ՝ Հովհաննես Շիրազը, Պարույր Սևակը, Սիլվա Կապուտիկյանը, Վահագն Դավթյանը, Խաչիկ Դաշտենցը և այլք, իսկ մեծատաղանդ բանաստեղծ Եղիշե Չարենցը նորաստեղծ Երևանի համալսարանի առաջին ունկնդիրներից էր:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՆՎԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1919 – 1930 ԹԹ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (1919 Թ. ՍԱՅԻՍ – 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐ)

1920 թ. I – VI (Ալեքսանդրապոլ)

1920 թ. VI – XII (Երևան)

Պատմալեզվաբանական
ֆակուլտետ

ԵՐԵՎԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

1920 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐ

Հասարակագիտական
ֆակուլտետ

Բնագիտական
ֆակուլտետ

1921 թ. ՀՈԿՏԵՄԲԵՐ

Մանկավարժական
ֆակուլտետ

Խորհրդային շինարարության
ֆակուլտետ

Արևելագիտական
ֆակուլտետ

Գյուղատնտեսական
ֆակուլտետ

Տեխնիկական
ֆակուլտետ

1922 թ. ՍԱՐՏ

Մանկավարժական
ֆակուլտետ

Խորհրդ. շինարարության
ֆակուլտետ

Արևելագիտական
ֆակուլտետ

Գյուղատնտեսական
ֆակուլտետ

Տեխնիկական
ֆակուլտետ

Բժշկական
ֆակուլտետ

1922 - 1923 ՈՒՍՏԱՐԻ

Հասարակագիտական
ֆակուլտետ


Պատմագրական
ֆակուլտետ

Գյուղատնտեսական
ֆակուլտետ


Տեխնիկական
ֆակուլտետ

Բժշկական
ֆակուլտետ


ՀՄԽՀ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
1923 - 1924 ՈՒՍՏԱՐԻ




1924 - 1925 ՈՒՍՏԱՐԻ




1926 – 1930 թթ.



«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ 2018 Թ. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ






ԵՊՀ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐ



Աղբալյան Նիկոլ Պողոսի

Գրականագետ, մանկավարժ,
հրապարակախոս,
պետական-քաղաքական գործիչ



Աբեղյան Մանուկ Խաչատուրի

Փիլիսոփայական և բանասիրական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր
գործիչ



Հովսեփյան Գարեգին Կարապետի

Հայագետ, մանկավարժ,
փիլիսոփայության դոկտոր,
Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս՝
1943 – 1952 թթ.



Մալխասյանց Ստեփան Սարգսի

Բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս



Մանանդյան Հակոբ Համագասպի
ԽՍՀՄ ԳԱ և ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր
գործիչ



Ղափանցյան Գրիգոր Այվազի
Բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ



Աճառյան Հրաչյա Հակոբի
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր
գործիչ



Տերտերյան Արսեն Հարությունի
Բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ



Հովհաննիսյան Աշոտ Գարեգինի
Պատմաբան,
պետական-կուսակցական գործիչ,
փիլիսոփայական և պատմական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս



Ավդալբեգյան Թադևոս Հայրապետի
Պատմաբան, բանասեր, տնտեսագետ



Ասատուր (Աստվածատրյան) Գևորգ
Կոնստանտինի
Արևելագետ, մանկավարժ, թարգմանիչ



Բաշինջադյան Չաքար Գևորգի
Տնտեսագետ, պրոֆեսոր,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր
գործիչ



Գյուլիքիսյան Հայկ Գաբրիելի
Փիլիսոփա, գրականագետ, պրոֆեսոր,
հասարակական գործիչ



Թամանյան Ալեքսանդր Հովհաննեսի
ԽՍՀՄ ճարտարապետական
ակադեմիայի ակադեմիկոս,
ՀԽՍՀ ժողովրդական ճարտարապետ



Էդիսյան Գուրգեն Մեսրոպի
Փիլիսոփայական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր



Լեո (Բաբախանյան Առաքել Գրիգորի)
Պատմաբան, հրապարակախոս, պրոֆեսոր



Քալանթար Աշխարհբեկ Աղալոյի
Հնագետ, պրոֆեսոր



Ջորյան Հակոբ Նշանի
Փիլիսոփայության դոկտոր,
պրոֆեսոր



Չուբարյան Գրիգոր Համբարձումի
Իրավաբան, հրապարակախոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր
գործիչ



Համբարյան Ստեփան Պողոսի
Քիմիական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր
գործիչ



Խաչյան Զապել Սյրուչի
Գրող, հրապարակախոս,
գրականագետ



Թախտաջյան Արմեն Լեոնի
Կենսաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր,
ԽՍՀՄ ԳԱ և ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր
գործիչ



Համբարձումյան Վիկտոր Համագասպի
Ֆիզիկամաթեմատիկական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ԽՍՀՄ ԳԱ և ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ,
ՀՀ ազգային հերոս



Հասրաթյան Էդրաս Հասրաթի
Բժշկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր
գործիչ



Չայլախյան Միքայել Բրիտափորի
Կենսաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր,
ԽՍՀՄ ԳԱ և ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ



Շախինյան Արտաշես Լիպարիտի
Ֆիզիկամաթեմատիկական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ



Միսակյան Նորայր Մարտիրոսի
Կենսաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր,
ԽՍՀՄ ԳԱ և ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս



Մերգեյան Մերգեյ Նիկիտի
Ֆիզիկամաթեմատիկական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս



Ջուրաշյան Միխիթար Սկրտչի
Ֆիզիկամաթեմատիկական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ



Աղայան Էդուարդ Բագրատի
Բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր
գործիչ



Սահակյան Գուրգեն Սերոբի
Ֆիզիկամաթեմատիկական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր
գործիչ



Սկրյան Սկրտիչ Մամբրեի
Բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ



Ջահուկյան Գևորգ Ռեզլարի
 Բանասիրական գիտությունների
 դոկտոր, պրոֆեսոր,
 ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
 ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ



Աթայան Էդուարդ Ռաֆայելի
 Փիլիսոփայական գիտությունների
 դոկտոր, պրոֆեսոր,
 ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս



Ջրբաշյան Էդվարդ Մկրտչի
 Բանասիրական գիտությունների
 դոկտոր, պրոֆեսոր,
 ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
 ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ



Ներսիսյան Լևոն Հրաչյայի
 Գրականագետ, դոցենտ



Միմոնյան Հրաչիկ Ռուբենի

Պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս



Խուրշուդյան Լենդրուշ Արշակի

Պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս



ԳԻՏԱԿԱՆ ՁԵՌՔԵՐՈՒՄՆԵՐԸ ԵՊՀ-ՈՒՄ

Հայաստանը գիտության ու մշակույթի հնագույն երկիր է: Հայ ժողովուրդը իր պատմության ընթացքում արարել է համամարդկային մշակութային ու գիտական շատ արժեքներ: Դրա իրեղեն վկայությունն են Քարահունջի ու Մեծամորի քարե աստղադիտարանները, 2008 թ. Վայոց Ձորի մարզի Արենի-1 քարանձավում հայտնաբերված աշխարհի հնագույն կաշվե կոշիկը (Ք. ա. IV հազարամյակի կես) և գինու արտադրական համալիրը (Ք. ա. IV հազարամյակի առաջին քառորդ), ուրարտական սեպագիր արձանագրությունները, հելլենական ու քրիստոնեական շրջանի պատմական հուշարձանները, հիասքանչ մանրանկարներով զարդարված մագաղաթյա ձեռագրերը և այլն:

Հայ ժողովրդի գիտական մտքի՝ հատկապես պատմագրության, փիլիսոփայության, աստղագիտության, մաթեմատիկայի, բժշկագիտության, աշխարհագրության և այլ գիտությունների, նաև մշակույթի զարգացման համար բացառիկ նշանակություն է ունեցել 405 թ. հայ գրերի ստեղծումը Մեսրոպ Մաշտոցի կողմից: Դպրոցների, հետազայում նաև համալսարանների ստեղծումով պատմական Հայաստանում սկիզբ դրվեց գիտության զարգացմանը, որին իրենց

անգնահատելի նպաստը բերեցին հայ քերթողական արվեստի այնպիսի դեմքեր, ինչպիսիք են Մովսես Խորենացին (V դ.), Դավիթ Անհաղթը (V – VI դդ.), Անանիա Շիրակացին (VII դ.), Հովհաննես Օձնեցին (VII – VIII դդ.), Գրիգոր Նարեկացին (X դ.), Գրիգոր Մագիստրոսը (X – XI դդ.), Հովհաննես Սարկավազ Իմաստասերը (XI – XII դդ.), Ներսես Շնորհալին (XII դ.), Մխիթար Հերացին (XII դ.), Մխիթար Գոշը (XII – XIII դդ.), Հովհան Որոտնեցին (XIV դ.), Գրիգոր Տաթևացին (XIV – XV դդ.) և շատ այլ մեծանուն մտածողներ:

XIV – XVIII դարերում թաթար-մոնղոլական և թուրք-պարսկական ավերիչ արշավանքների պատճառով, հայկական պետականության կորստի, իսկ ավելի ուշ՝ XX դարասկզբին Հայոց Մեծ եղեռնի հետևանքով անդառնալի կորուստ կրեցին հայ մշակույթն ու գիտությունը և, բնականաբար, որոշակի նահանջ ապրեցին: Սակայն նորանկախ Հայաստանի առաջին հանրապետության կառավարության 1919 թ. մայիսի 16-ի որոշմամբ հիմնադրված Երևանի համալսարանը կարևոր դերակատարություն ունեցավ գիտական մտքի վերածննդի ու առաջընթացի գործում: Համալսարանական բարձրորակ մասնագետների սերունդները միշտ էլ բեղմնավոր գործունեություն են ծավալել ժամանակակից գիտության տարբեր բնագավառներում ու հասել նշանակալի ձեռքբերումների:

Հայրենական գիտության մեծ երախտավորներ Հակոբ Մանանդյանի, Լեոյի, Մանուկ Աբեղյանի, Հրաչյա Աճառյանի, Ալեքսանդր Թամանյանի, Թորոս Թորամանյանի, Աշոտ Հովհաննիսյանի, Երվանդ Տեր-Մինասյանի, Գրիգոր Դափանցյանի, Նիկողայոս Բունիաթյանի, Աշխարհբեկ Քալանթարի, Արսեն Տերտերյանի,

Խաչիկ Սամուելյանի, Հայկ Ազատյանի, Գևորգ Ասատուրի, Վահան Ռշտունու, Հայկ Գյուլիքեխյանի, Ստեփան Դամբարյանի, Լևոն Ռոտինյանցի և այլոց գիտահետազոտական գործունեությունը Հայաստանում գիտական մտքի զարգացման գործում առանձնակի գնահատանքի է արժանի: Նրանց շատ աշխատություններ հիմնարար դեր են կատարել պատմագրության, փիլիսոփայության, լեզվաբանության, գրականագիտության, ճարտարապետության և այլ ոլորտների հետազոտության առաջընթացում:

1942 թ. Աբրահամ և Արտեմ Ալիխանյանները համալսարանում հիմնեցին տիեզերական ճառագայթների ուսումնասիրման լաբորատորիա, իսկ Արագածում՝ գիտական կայան: Այդ լաբորատորիան 1943 թ. նոյեմբերին համալսարանի կազմում վերածվեց ֆիզիկայի գիտահետազոտական ինստիտուտի, որի առաջին տնօրեն նշանակվեց Աբրահամ Ալիխանյանը, իսկ կարճ ժամանակ անց նրան փոխարինեց և ինստիտուտը երկար տարիներ ղեկավարեց Արտեմ Ալիխանյանը: 1944 թ. այն փոխադրվեց ՀԽՍՀ ԳԱ համակարգ:

1953 թ. հոկտեմբերի 22 - 26-ին ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովում ընտրված 51 նոր ակադեմիկոսների շարքում էր ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայի նախագահ, համալսարանի աստղաֆիզիկայի ամբիոնի վարիչ Վիկտոր Համբարձումյանը: Նրա ներդրումները տեսական աստղաֆիզիկայի, աստղերի և միգամածությունների ֆիզիկայի, աստղային դինամիկայի, արտագալակտիկական աստղագիտության, աստղերի և գալակտիկաների էվոլյուցիայի հետազոտության բնագավառում համաշխարհային գիտության պատմության մեջ նոր էջ բացեցին: Մի շարք



Հովսեփ Օրբելի և
Վիկտոր Համբարձումյան



Ակադեմիկոսներ
Վիկտոր Համբարձումյան և
Լյուդվիգ Միրզոյան

սկզբունքներ, այդ թվում ինվարիանտության հակադարձ խնդիրների լուծման սկզբունքը կոչվեց Վ. Համբարձումյանի անունով: Նա մշակեց աստղային համակարգերի վիճակագրական մեխանիկայի հիմունքները, հայտնագործեց աստղակույտերի աստիճանական քայքայման երևույթը և առաջադրեց աստղակույտերի տարիքի որոշման սկզբունք: Նրա մշակած շատ գաղափարներ դուրս են եկել աստղաֆիզիկայի շրջանակներից՝ ստանալով ընդհանուր մեթոդաբանական նշանակություն և խթանել գիտության այլ բնագավառների զարգացումը:

1947 թ. ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի շրջանավարտ և 1949 թ. ԽՍՀՄ ԳԱ Ստեկլովի անվան մաթեմատիկական ինստիտուտի ասպիրանտ Սերգեյ Մերգելյանի գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ներկայացրած ատենախոսությունը մասնագիտական խորհուրդը գնահատեց որպես դոկտորական և նրան շնորհվեց ֆիզմաթ. գիտությունների դոկտորի գիտական աստիճան, երբ նա ընդամենը 21 տարեկան էր:

Հաշվողական մեքենաների դարաշրջանը, այլ էլեկտրոնային համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը Հայաստանում սկսվել է 1956 թ. ակադեմիկոս Սերգեյ Մերգելյանի ղեկավարությամբ հիմնադրված Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի և ՀԽՍՀ ԳԱ հաշվողական կենտրոնի (հետագայում՝ Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ) ստեղծմամբ:

Հայաստանի՝ հազարամյակների հարուստ գիտական ժառանգությունը XX դարի երկրորդ կեսին հարստացավ տեղեկատվական

տեխնոլոգիաների բնագավառի արժեքավոր ձեռքբերումներով: Այս աշխատանքներում իրենց արժանի ավանդն ունեն Երևանի պետական համալսարանի գիտնականները և, մասնավորապես, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ՀՀ Պետական մրցանակի դափնեկիր Սամվել Շուքուրյանը, որը 2000 – 2013 թվականներին էլեկտրոնային սարքերի և համակարգերի թեստավորման բնագավառում իր աշակերտների և աշխատակիցների հետ համատեղ հրապարակած հոդվածներում և արտոնագրերում ներկայացրել է ենթակառուցվածք բարդ էլեկտրոնային համակարգերի ինտեգրացված թեստավորման, նորոգման և ախտորոշման լուծումներ: Այդ արդյունքները ներդրվել են Սինոփսիս (Synopsys Inc.) ընկերության համապատասխան արտադրանքի օգտագործման բնագավառում և լայնորեն կիրառվում են ինչպես բազմաթիվ այլ հետազոտողների աշխատանքներում, այնպես էլ բյուրեղի վրա համակարգեր նախագծող աշխարհի ամենաառաջատար ընկերությունների կողմից: Արդյունքների արդյունավետ իրականացման շնորհիվ նշված արտադրանքն արագ զարգացող կիսահաղորդչային թեստավորման շուկայում ավելի քան 14 տարի առաջնային է:

Երևանի պետական համալսարանի ստեղծումից ի վեր տարբեր տարիների այստեղ աշխատել են Հայաստանի գիտությունների ակադեմիայի ավելի քան 140 ակադեմիկոս և թղթակից անդամ (որոնցից 9-ը դարձել են նաև ԽՍՀՄ ԳԱ իսկական և թղթակից անդամ), Գիտության ավելի քան 150 վաստակավոր գործիչ, Վաստակավոր իրավաբան, երկրաբան, մանկավարժ և այլ պատվավոր կոչումների արժանացած դասախոսներ:

Միայն 2013 – 2014 ուստարվանից մինչև 2017 – 2018 ուստարին ընկած ժամանակահատվածում ԵՊՀ-ում գործող գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդներում պաշտպանվել է 622 ատենախոսություն (48-ը՝ դոկտորական և 574-ը՝ թեկնածուական):

Պատահական չէ, որ 1943 թ. նոյեմբերի 25-ին, երբ Հովսեփ Օրբելու և Վիկտոր Համբարձումյանի ջանքերով Երևանում հիմնադրվեց Հայաստանի գիտությունների ակադեմիան, նրա հիմնադիր կազմի 23 ակադեմիկոսներից 12-ը Երևանի պետական համալսարանի պրոֆեսորներ էին. Մանուկ Աբեղյան, Հրաչյա Աճառյան, Արսեն Տերտերյան, Գրիգոր Ղափանցյան, Կոնստանտին Պաֆենիոլց, Լևոն Հովհաննիսյան, Վիկտոր Համբարձումյան, Հրաչյա Բունիաթյան և ուրիշներ:

Մայր բուհի սաներից են այնպիսի անվանի գիտնականներ, ինչպիսիք են Արմեն Թախտաջյանը, Նորայր Սիսակյանը, Էդրաս Հասրաթյանը, Միքայել Չայլախյանը, Սերգեյ Մերգելյանը, Արտաշես Շահինյանը, Մխիթար Ջրբաշյանը, Ռաֆայել Ալեքսանդրյանը, Նորայր Առաքելյանը, Գուրգեն Սահակյանը, Մկրտիչ Մկրյանը, Էդուարդ Աղայանը, Գևորգ Ջահուկյանը, Էդվարդ Ջրբաշյանը, Հրանտ Թամրազյանը, Լենդրուշ Խուրշուդյանը, Հրաչիկ Սիմոնյանը, Բաբկեն Հարությունյանը և շատ ու շատ ուրիշներ, որոնք արժանացել են մեծ ճանաչման ոչ միայն մեր երկրում, այլև նրա սահմաններից դուրս:

Երևանի պետական համալսարանում դեռևս 1920-ական թվականներից ուսումնամեթոդական աշխատանքներին զուգընթաց ծավալվել է նաև գիտահետազոտական լայն գործունեություն: Մեծ է համալսարանի գիտնականների դերը գիտության բազմաբնույթ հարցերի մշակման ասպարեզում: Արժեքավոր հետազոտություններ են կատարվել հումանիտար գիտությունների, մասնավորապես պատմագիտության, բանասիրության և հայագիտության ոլորտներում: Այդ գործում անգնահատելի է 1919 թ. ստեղծված համալսարանի հիմնադիր պատմալեզվաբանական ֆակուլտետի դերը: Նրա առաջին ղեկանը պրոֆ. Մեսրոպ արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյանն էր: Ֆակուլտետը 1922 թ. վերանվանվել է պատմագրական, իսկ 1924 թվականից՝ ներառվել հասարակագիտական, ապա՝ մանկավարժական ֆակուլտետների կազմում: Մինչև 1930 թ. հայագիտական առարկաները գլխավորապես դասվանդվում էին այս ֆակուլտետում, միաժամանակ կատարվում էին պատմաբանասիրական հետազոտություններ: 1930 – 1933 թթ. համալսարանի լուծարման հետևանքով աշխատանքների ընթացքը շարունակվել է նորաստեղծ Մանկավարժական ինստիտուտում: 1933 – 1934 ուստարվանից կրկին վերաբացվում է Երևանի համալսարանը, վերականգնվում է պատմագրական ֆակուլտետը և սկսում գործել որպես ինքնուրույն միավոր:

ՀԿ(Բ)Կ Կենտկոմի բյուրոյի 1936 թ. ապրիլի 16-ի՝ «Երևանի պետական համալսարանի մասին» որոշմամբ մայր կրթօջախում կատարվում են կառուցվածքային զգալի փոփոխություններ: Հայաստանի պատմության, հայոց լեզվի և գրականության խոր ու բազմակողմանի ուսումնասիրման գործը ամուր հիմքերի վրա դնելու

և ուսումնագիտական գործընթացը արմատապես բարելավելու անհրաժեշտությունից ելնելով՝ պատմագրական ֆակուլտետը բաժանվում է երկու ինքնուրույն ֆակուլտետների՝ պատմության և լեզվի ու գրականության, որոնք էլ պետք է իրականացնեին հայագիտական և հումանիտար մյուս գիտությունների ավանդումն ու ուսումնասիրությունը:

Պատմության ֆակուլտետի դեկաններ են եղել պրոֆեսորներ Հակոբ Մանանդյանը (ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս՝ 1939 թ.-ից և ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս՝ 1943 թ.-ից), Հակոբ Զորյանը, Մկրտիչ Ներսիսյանը (ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս՝ 1950 թ.-ից), դոց. Հայկազ Ժամկոչյանը, Ներսես Պողոսյանը, դոց. Բենիամին Հարությունյանը, պրոֆեսորներ Սերոբ Պողոսյանը, Գարսևան Շառոյանը, Ռաֆիկ Մովսիսյանը, Հայրապետ Պետրոսյանը, Հայկ Ղազարյանը, դոց. Մառլեն Հովհաննիսյանը, պրոֆեսորներ Բաբկեն Հարությունյանը (ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ՝ 2006 թ.-ից), Հայկ Ավետիսյանը: 2009 թվականից ֆակուլտետը ղեկավարում է պատ. գիտ. դոկտոր, պրոֆ. Էդիկ Մինասյանը:

Սկսած համալսարանի հիմնադրումից մանկավարժական աշխատանքի հետ մեկտեղ գիտահետազոտական գործունեություն են ծավալել համալսարանի երախտավորներ Հակոբ Մանանդյանը, Լեոն, Խաչիկ Սամուելյանը, Հակոբ Զորյանը, Աշխարհբեկ Քալանթարը, Վահան Ռշտունին և շատ ուրիշներ:

Ականավոր պատմաբան Հակոբ Մանանդյանը հեղինակել է հայերեն, ռուսերեն և գերմաներեն ավելի քան 150 աշխատություն՝ նվիրված հայոց հին և միջնադարյան պատմությանն ու բանասիրությանը, պատմական աշխարհագրությանը, չափագիտությանը

ու մշակույթին: Զբաղվել է հունական իմաստասիրական երկերի հայերեն թարգմանությունների, հունաբան դպրոցի, Դավիթ Անհաղթի իմաստասիրական ժառանգության ուսումնասիրությամբ: Հայ պատմագիտական մտքի մնայուն գործերից են «Զննական տեսություն հայ ժողովրդի պատմության» (1944 – 1960) եռահատոր աշխատությունը, որը լույս է տեսել չորս գրքով, հին և միջնադարյան Հայաստանի հասարակական-տնտեսական հարաբերություններին նվիրված «Հայաստանի առևտրի և քաղաքների մասին» (ռուս. 1930, 1954, 1985), «Ֆեոդալիզմը հին Հայաստանում» (1934, 1981), «Կշիռները և չափերը հնագույն հայ աղբյուրներում» (1930, 1985), «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները» (1936, 1985), «Տիգրան Բ և Հռոմը» (1940, 1972, 1977, ռուս.՝ 1943, ֆրանս.՝ 1963) և այլ մենագրություններ:

Մեծ արժեք է վաստակաշատ գիտնական պրոֆ. Լեոյի՝ փաստական հարուստ նյութով ու պատմագիտական ընդհանրացումներով հագեցած «Հայոց պատմություն» (I հ. 1917, II հ. 1947, III հ. 1946) ուսումնասիրությունը, որը նրա բազմամյա աշխատանքի արդյունքն է: Նա առաջին պատմաբաններից էր, որ ձեռնամուխ եղավ հայ ժողովրդի նոր և նորագույն շրջանների պատմության՝ հայ ազատագրական շարժումների, հայկական հարցի, Առաջին համաշխարհային պատերազմի և հայ ժողովրդի մեծ ողբերգության հետ կապված հարցերի ուսումնասիրությանը:

Անուրանալի է Հակոբ Զորյանի ավանդը հայ պատմագիտության մեջ: Նրա ուսումնասիրությունները վերաբերում են հին և միջնադարյան Հայաստանի հասարակական-տնտեսական պատ-

մությանը: Այդ տեսակետից առանձնակի արժեք ունեն «Արաբների հարկային քաղաքականությունը ավատատիրական Հայաստանում» (1927), «Ֆեոդալական Հայաստանի գյուղացիական շարժումները X դարում» (1928), «Ներդասակարգային պայքարը հայ Արշակունիների թագավորության վերջին շրջանում» (1936) և այլ ուսումնասիրություններ:


Պրոֆ. Խաչիկ Սամուելյանի երկարամյա հետազոտությունների արդյունքն են «Հին Հայաստանի կուլտուրան» (1931, 1941) և «Հին հայ իրավունքի պատմություն» (1939) մեծարժեք աշխատությունները:

Առաջին երախտավորների ստեղծած լավագույն ավանդույթները որդեգրեցին և ստեղծագործաբար շարունակեցին նրանց աշակերտներ Մկրտիչ Ներսիսյանը, Վարդան Պարսամյանը, Գրիգոր Միքայելյանը, Սերոբ Պողոսյանը, Հայկազ Ժամկոչյանը, Աբգար Հովհաննիսյանը, Աշոտ Աբրահամյանը, Հենրի Գաբրիելյանը, Սուրեն Երեմյանը, Ծատուր Աղայանը և շատ ուրիշներ, ինչպես նաև վերջիններիս փոխարինելու եկած հաջորդ սերնդի գիտնականներ Լենդրուշ Խուրշուդյանը, Հրաչիկ Սիմոնյանը, Վլադիմիր Բարխուդարյանը, Վալտեր Դիլոյանը և այլք, որոնք մեծարժեք ուսումնասիրություններ են կատարել հայ ժողովրդի պատմության ամենատարբեր բնագավառների վերաբերյալ՝ սկսած հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը:

1940-ականներին լուրջ հետազոտություններ են կատարվել աղբյուրագիտության ոլորտում: Մատենադարանի գրչագրերից քաղված նյութերի հիման վրա հրատարակվել են XIII – XVIII դարերի հայերեն մանր ժամանակագրությունների երկհատորյակը (կազմող՝



ԵՊՀ գիտխորհրդի կազմը, 1960-ականներ



Լեոյի «Անի» աշխատության
ձեռագիր օրինակը

Վազգեն Հակոբյան), Կարո Ղաֆադարյանի «Ալքիմիան պատմական Հայաստանում» (1940), Աշոտ Աբրահամյանի «Ամանիա Շիրակացու մատենագրությունը» (1944), Բաբկեն Առաքելյանի (ՀԽՍՀ Պետական մրցանակի դափնեկիր՝ 1978 թ., 1986 թ.) «Հայկական բարձրաքանդակները IV – VII դարերում» (1949), Սուրեն Երեմյանի (ՀԽՍՀ Պետական մրցանակի դափնեկիր՝ 1985 թ.) «Հայաստանն ըստ Աշխարհացոյցի» (1963) աշխատությունները:

1950 – 1960-ականների սկզբներին պատմաբաններ Աշոտ Հովհաննիսյանը, Վահան Ռշտունին, Մկրտիչ Ներսիսյանը, Աբգար Հովհաննիսյանը, Վարդան Պարսամյանը, Վալտեր Դիլոյանը և ուրիշներ զգալի ներդրում են ունեցել հայ ազատագրական շարժումների, հայ-ռուսական հարաբերությունների, հայկական գաղթավայրերի պատմության ուսումնասիրության ոլորտում: Աշոտ Հովհաննիսյանի «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» (1957, 1959) երկու գրքերը իրավամբ համարվում են XX դարի հայ պատմագիտության մեծագույն նվաճումներից: Հրատարակվել են արժեքավոր աշխատություններ՝ նվիրված Ռուսաստանի, Ուկրաինայի, Եվրոպական երկրների, Մերձավոր Արևելքի, Հնդկաստանի հայկական գաղթօջախների, հայկական սփյուռքի սոցիալ-տնտեսական ու հասարակական կյանքի, սփյուռքահայ քաղաքական կուսակցությունների ու կազմակերպությունների, սփյուռքահայության հայրենադարձության կազմակերպման ու իրագործման պատմությանը (պրոֆեսորներ Աշոտ Աբրահամյան, Ստեփան Մելիք-Բախշյան, Վլադիմիր Բարխուդարյան (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս՝ 1994 թ.-ից), Լենդրուշ Խուրշուդյան (ՀՀ ԳԱԱ ակադե-

միկոս՝ 1996 թ.-ից), Հովիկ Մելիքսեթյան և այլք:

Ստեղծվել են աշխատություններ՝ նվիրված Հայրենական մեծ պատերազմի տարիներին հայ ազգային զորամիավորումների մարտական ուղուն, հայերի մասնակցությանը պարտիզանական պայքարին, հայորդիների կատարած սխրագործություններին:

Հրատարակվել են տարբեր ժամանակաշրջանների հիմնահարցերին վերաբերող փաստաթղթերի և նյութերի բազմաթիվ ժողովածուներ: Հատկապես արժեքավոր են XVII – XVIII դարերի հայ-ռուսական հարաբերություններին նվիրված փաստաթղթերի և նյութերի բազմահատորյակը, Մկրտիչ Ներսիսյանի և Ռուբեն Սահակյանի կազմած «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» (ռուս. 1966, 1982, հայ. 1991), Հայրենական մեծ պատերազմին հայերի մասնակցությանը վերաբերող և այլ թեմաներով ժողովածուները:

Հայ պատմաբանների ձեռքբերումները խորհրդային ժամանակներում ընդհանրացվել են «Հայ ժողովրդի պատմություն» ութհատորյակում (1967 – 1984), որն արժանացել է ՀԽՍՀ Պետական մրցանակի:

Հայոց պատմության մի շարք թեմաներ համակողմանի ուսումնասիրության ենթարկվեցին միայն Հայաստանի անկախացումից հետո: Հայ պատմաբանները հնարավորություն ստացան անաչառ լուսաբանելու պատմական իրողությունները: Կարևոր էր հայոց պետականության վերականգնման, անկախության համար հայ ժողովրդի մղած պայքարի պատմության ուսումնասիրությունը, որն իր մեջ ներառում էր հայ ազգային-ազատագրական շարժումը,

Հայկական հարցը, Հայ դատը: Հրատարակվեցին ֆիդայական շարժման նշանավոր գործիչներին, ազատագրական պայքարի ազատամարտիկներին նվիրված աշխատություններ: Լայն ծավալ ստացավ Հայաստանի նոր և նորագույն շրջանի պատմության, դարաբաղյան ազատագրական պայքարի, Հայոց ցեղասպանության և մի շարք այլ թեմաների ուսումնասիրությունը:

Հայաստանի անկախության վերականգնումից հետո նոր հիմքերի վրա դրվեց հայոց հին և միջին դարերի պատմության հիմնախնդիրների ուսումնասիրությունը: Հետազոտություններ են հրատարակվել հնագույն հայկական պետական կազմավորումների՝ Արատտա, Ուրարտուի (Վանի թագավորության), Երվանդունիների, Արտաշեսյան դարաշրջանի Հայաստանի, Մեծ Հայքի վարչաքաղաքական բաժանումների վերաբերյալ (պրոֆեսորներ Ալբերտ Ստեփանյան, Բաբկեն Հարությունյան, Արտակ Մովսիսյան և ուրիշներ): Ուսումնասիրվել են նաև միջնադարյան Հայաստանի վարչաքաղաքական բաժանումները, եկեղեցի-պետություն հարաբերությունները, հայ-բյուզանդական, հայ-վրացական հարաբերությունները, Բագրատունիների պետությունը և XI – XV դարերի պատմության հարցերը և այլն (պրոֆեսորներ Հայրապետ Մարգարյան, Արման Եղիազարյան և ուրիշներ):

Ուսումնասիրություններ են կատարվել Հայկական հարցի և ցեղասպանության վերաբերյալ: Հրատարակվել են աբդուլհամիդյան, նաև Կիլիկիայի հայության կոտորածների, 1915 թ. հայության ինքնապաշտպանական կռիվների, Հայոց ցեղասպանությունը փաստող գերմանական փաստաթղթերի, Հայոց ցեղասպանությանն առնչվող

գիտական հարցերի, ցեղասպանության իրականացման թուրքական քաղաքականության շարունակության, միջազգային արձագանքների վերաբերյալ աշխատություններ (պրոֆեսոր Աշոտ Հայրունի, Էդիկ Դանիելյան և ուրիշներ):

Հետազոտվել են Հայաստանի առանձին մահանգների՝ XIX – XX դարերի ժողովրդագրությունը (ակադեմիկոս Աշոտ Մելքոնյան և ուրիշներ):

Լուրջ ուշադրություն է դարձվել Հայաստանի առաջին հանրապետության, Զանգեզուրի և Լեռնային Ղարաբաղի պատմության ուսումնասիրությանը (պրոֆ. Արամ Սիմոնյան, դոց. Ալիկ Ղարիբյան և ուրիշներ), հայ-ռուսական հարաբերությունների դիվանագիտական պատմության առանձին հարցերի լուսաբանմանը (պրոֆեսոր Միքայել Մուրադյան), ինչպես նաև Հայաստանի անկախացման և ժողովրդավարացման գործընթացների հետազոտմանը (պրոֆեսորներ Հենրիկ Աբրահամյան, Էդիկ Մինասյան և ուրիշներ):

Հայաստանի անկախացումից հետո հայ պատմաբանները հնարավորություն ստացան ազատորեն ուսումնասիրելու խորհրդային տարիներին կողմնակալ լուսաբանվող բազում հիմնահարցեր:

Չափազանց ընդգրկուն է պրոֆեսոր Հրաչիկ Սիմոնյանի (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս՝ 1996 թ.-ից) գիտական հետաքրքրությունների ոլորտը: Հայկական սփյուռքին, այնտեղ գործող հայ քաղաքական ուժերին, նրանց գործունեությանն ու փոխհարաբերություններին, Խորհրդային Հայաստանի նկատմամբ դրսևորվող վերաբերմունքին առնչվող հարցերին է նվիրված նրա «Սփյուռքահայությունը սոցիալ-քաղաքական պայքարի ուղիներում» գիրքը (Եր., 1968):



Շատ կարևոր են հեղինակի եզրահանգումները թուրք ազգային բուրժուազիայի գաղափարախոսության հիմնական բաղադրիչների (օսմանիզմ, իսլամիզմ, պանիսլամիզմ, թուրքիզմ, պանթուրքիզմ հանգամանակից վերլուծությանը նվիրված «Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը» գրքում (Եր., 1980), իսկ «Անդրանիկի ժամանակը» (Եր., 1996) սովորածավալ մենագրությամբ, շրջանառության մեջ դնելով արխիվային նորահայտ բազմաթիվ նյութեր ու փաստաթղթեր, հեղինակը միանգամայն նոր խոսք է ասել ազգային հերոսի կյանքի ու մարտական ուղու մասին:

«Ազատագրական պայքարի ուղիներում» (Եր., 2003 – 2013) հինգ հատորյա կոթողային աշխատության մեջ գիտնականը վերլուծում ու համակողմանիորեն քննության է առնում XX դարասկզբից մինչև Առաջին համաշխարհային պատերազմ ընկած ժամանակահատվածում Արևելյան և Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած դեպքերն ու իրադարձությունները: Պատմական փաստերի վերլուծության հիման վրա հեղինակի կատարած եզրակացություններն ու առաջարկությունները ոչ միայն խիստ արդիական են, այլև ունեն քաղաքական կարևոր նշանակություն պատմությունից դասեր քաղելու առումով: 2013 թ. այն արժանացել է ՀՀ Պետական մրցանակի:

Կիլիկիայի հայերի ջարդերի 100-ամյակի առիթով գիտնականի հրատարակած «Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ)» մենագրությունը (Եր., 2009, անգլ.՝ Լոնդոն, 2014) մեծ արձագանք գտավ մասնագետների և ընթերցող լայն հասարակայնության շրջանում: Գիտական մեծ արժեք ունեն նաև նրա

«1912 – 1913 թթ. բալկանյան պատերազմները և հայերը» (Եր., 2014), «Անդրանիկի քաղաքական արդարացման պատմությունից» (ռուս., 2015), «Ռուսական կայսրությունը և հայկական հարցը Առաջին աշխարհամարտի նախօրյակին» (Եր., 2016) մենագրությունները:

Ակադեմիկոս Լենդրուշ Խուրշուդյանն առաջիններից էր, որ արխիվային նորահայտ փաստաթղթերի ու նյութերի հիման վրա ստեղծեց «Ստեփան Շահումյան. պետական և կուսակցական գործունեությունը 1917 – 1918 թթ.» (Եր., 1959) արժեքավոր աշխատությունը, որով բացահայտեց նշանավոր կուսակցական ու պետական գործչի մեծությունը, նրա մարդկային ու քաղաքացիական կերպարը: Իսկ «Միջուռքահայ կուսակցությունները ժամանակակից էտապում» (Եր., 1966) գրքում և բազմաթիվ հոդվածներում ձեռնամուխ է եղել հայ քաղաքական կուսակցությունների պատմության հիմնախնդիրների բազմակողմանի քննությանը: Վերջապես հայ պատմագրության համար մնայուն արժեք է նրա «Սովետական Ռուսաստանը և հայկական հարցը» (Եր., 1977) մենագրությունը, որտեղ հայկական հարցի վերաբերյալ կատարված եզրահանգումները կարևոր նորույթ էին խորհրդային պատմագիտության մեջ:

Գիտնականն առաջիններից մեկն էր, որ գիտական անաչառությամբ պրպտումներ կատարեց Լեռնային Դարաբաղի ոչ վաղ անցյալի պատմության վերաբերյալ և հրատարակեց «Լեռնային Դարաբաղ. Պատմական տեղեկանք» (ռուս.՝ 1988) կոլեկտիվ մենագրությունը, «Լեռնային Դարաբաղի պատմության մի քանի հարցեր» (Եր., 1988), «Ճշմարտությունը Լեռնային Դարաբաղի մասին» (Եր., 1988) գրքերը, որոնցում համակողմանի և հստակորեն բացահայտ-

ված են հիմնահարցի պատմության ընթացքն ու ելևեղները:

Հետագայում լույս տեսած «Հայկական հարցը» (Եր., 1995), «Հայ ազգային գաղափարախոսությունը» (Եր., 1999), «Հայաստանի բաժանումը 1920 թվականին» (Եր., 2002) աշխատություններում ներկայացրել է 1920 թ. աշխարհաքաղաքական այն բարդ իրավիճակը, որի պայմաններում տեղի ունեցավ Առաջին Հանրապետության կործանման գործընթացը:

Նրա նախաձեռնությամբ ստեղծվել և հրատարակվել է հայ ժողովրդի պատմությանը նվիրված 25 ուսումնական քարտեզ:

Հայ ժողովրդի հին ու միջնադարյան պատմության ուսումնասիրության բնագավառում լուրջ ներդրում են պրոֆեսոր Բաբկեն Հարությունյանի «Աշխարհացոյցը և չորս Հայքերի խնդիրը» (Եր., 1997), «Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների և Առաջավոր Ասիայի հնագույն պատմության մի քանի խնդիրների շուրջ (Ք. ա. VII – VI դարեր)» (Եր., 1998), «Մեծ Հայքի վարչաքաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի» (մաս Ա, Եր., 2001) մենագրությունները և այլ ուսումնասիրություններ:

Գիտնականը զբաղվել է նաև պատմաաշխարհագրական խրնդիրներով և հրատարակել «Հայաստանի պատմության ատլաս»-ը (մաս Ա, Եր., 2004, մաս Բ, Եր., 2008, մաս Գ, Եր., 2013), որի քարտեզներից մի քանի տասնյակը զետեղված են նրա խմբագրությամբ ու համահեղինակությամբ լույս տեսած դպրոցական դասագրքերում: Նա գործուն մասնակցություն է ունեցել նաև «Հայաստանի ազգային ատլաս»-ի Բ հատորի (Եր., 2008) ստեղծմանը:

Գիտական լուրջ արժեք ունեն նաև գիտնականի «Արծրունյաց

իշխանական ընտանիքը հայոց պատմության մեջ» (Եր., 2016) մենագրությունը և «Հայոց արևելից կողմերի և աղվանքի պատմության ու պատմական աշխարհագրության հարցեր» հոդվածների ժողովածուն (Եր., 2016):

Պրոֆեսոր Արամ Սիմոնյանը (ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ՝ 2006 թ.-ից) իր բազմամյա գիտական գործունեության արդյունքները ամփոփել է բազմաթիվ գիտական հոդվածներում և մի շարք մենագրություններում: Նրա «Արևելյան Հայաստանի պրոլետարիատի պատմություն» (Եր., 1988), “Рабочие Закавказья в общероссийском рынке наемного труда в конце XIX — начале XX вв. (историко-статистический анализ)” (Եր., 1995) մենագրությունները վերաբերում են հայ ժողովրդի XIX դարի երկրորդ կեսի և XX դարի պատմության հիմնահարցերին, մասնավորապես՝ պատմական վիճակագրությանը, արդյունաբերական կապիտալի զարգացման տեսությանն ու պատմությանը:

Ա. Սիմոնյանը Հայաստանում առաջիններից մեկն է սկիզբ դրել պատմագիտության մեջ մաթեմատիկական մեթոդների կիրառմանը՝ համադրելով պատմագիտական և սոցիոլոգիական հետազոտման մեթոդները:

Հայ ժողովրդի նորագույն պատմության ամենաբախտորոշ ժամանակահատվածում տեղի ունեցած իրադարձություններին և, հատկապես, հայ ժողովրդի մղած հերոսական պայքարի պատմության գիտական լուսաբանմանն է նվիրված նրա «Չանգեզուրի գոյամարտը (1920 – 1921 թթ.)» (Եր., 2000) մենագրությունը: Շարունակելով երկրամասի պատմության ավելի ընդգրկուն ու խորքա-

յին ուսումնասիրությունը, «Չանգեզուրի գոյապայքարը 1917 – 1921 թթ.» (Եր., 2017) մենագրության մեջ ներկայացնում է Չանգեզուրցիների անկախության համար մղված գոյապայքարը, նրանց հերոսական խոյանքները, զորավար Անդրանիկի, Արսեն Շահմազյանի և Գարեգին Նժդեհի ղեկավարությամբ երկրամասի դիմադրական շարժումը թուրք-ազերի նվաճողական քաղաքականության դեմ:

Մեծ է գիտնականի վաստակը նաև հայոց պատմության գիտական ուսումնասիրության ու լուսաբանման արդյունքները հանրայնացնելու գործում:

Պրոֆեսոր Պետրոս Հովհաննիսյանը գերազանցապես զբաղվել է հին ու միջնադարյան Հայաստանի մշակութային ու քաղաքական պատմության, աղբյուրագիտության ու պատմագրության, հայկական գաղթավայրերի, Հայկական հարցի և Սփյուռքի պատմության խնդիրների ուսումնասիրությամբ: Ուշագրավ են նրա «Հակոբ Մանանդյան» (Եր., 1983), «Հայ ազատագրական շարժումները. XV դարի կես – XVIII դարավերջ» (Եր., 2010), «Մովսես Խորենացի. մատենագիտություն» (Եր., 2013) աշխատությունները: Նա կազմել և հրատարակել է Նիկողայոս Ադոնցի «Երկեր»-ի յոթհատորյակը (Եր., 2006 – 2015), Հակոբ Մանանդյանի «Երկեր»-ի 7-8-րդ հատորները (Եր., 2010 – 2011), Աշոտ Հովհաննիսյանի (Եր., 2007), Ավ. Պերպերյանի (Եր., 2009), Հակոբ Չորյանի (Եր., 2015) և այլոց պատմագիտական երկասիրությունների ժողովածուներ:

Պրոֆեսոր Էդիկ Մինասյանն իր ուսումնասիրություններում անդրադարձել է հայոց նոր և նորագույն պատմության և, հատկապես, Հայաստանի երրորդ հանրապետության պատմության, հայ

դիվանագիտության պատմության, Հայկական հարցի, Հայոց ցեղասպանության պատմության և այլ հիմնախնդիրների: Ուշագրավ են նրա «Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում. 1990 – 2003 թթ.» (Եր., 2003), «Ռուսաց դիվանագիտությունը միջազգային հարաբերությունների համակարգում (XVIII – XIX դարեր)» (համահեղինակ, Եր., 2005), «Հայոց նորագույն պետականության քառորդ դարը» (Եր., 2018), «Հայրենիք-Սփյուռք առնչությունները 2001 – 2017 թթ.» (Եր., 2018) մենագրությունները: Նրա «Հայաստանի երրորդ հանրապետության պատմություն» (Եր., 2013) հիմնարար աշխատությունը լուրջ ներդրում է հայագիտության քննադատում:

Ուշագրավ են նաև պրոֆեսոր Արտակ Մովսիսյանի գիտական ուսումնասիրությունները՝ «Սրբազան լեռնաշխարհ. Հայաստանը Առաջավոր Ասիայի հնագույն հոգևոր ընկալումներում» (Եր., 2000, 2004, 2006), «Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը» (Եր., 2003, 2006, 2007), «Հայկական մեհենագրություն» (Եր., 2003), «Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում (ըստ գրավոր սկզբնաղբյուրների)» (Եր., 2005), «Հայոց պետականությունը 5000-ամյա... և քսանամյա» (Եր., 2011) և այլն:

Այսօր էլ ֆակուլտետը գործուն մասնակցություն ունի ԵՊՀ գիտակրթական կյանքում և հանրապետության պատմագիտական մտքի կարևոր կենտրոններից է:

Ֆակուլտետում գործում է 7 ամբիոն՝ հայոց պատմության (վարիչ՝ պատ. գիտ. դոկտոր, պրոֆ. Արտակ Մովսիսյան), համաշխարհային պատմության (վարիչ՝ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆ. Ալբերտ

Ստեփանյան), Հայաստանի հարակից երկրների պատմության (վարիչ՝ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆ. Հայրապետ Մարգարյան), հնագիտության և ազգագրության (վարիչ՝ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆ. Հայկ Ավետիսյան), հայ արվեստի պատմության և տեսության (վարիչ՝ արվեստագիտ. դոկտոր, պրոֆ. Լևոն Չուգասյան), մշակութաբանության (վարիչ՝ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆ. Համլետ Պետրոսյան), սփյուռքագիտության (վարիչ՝ պատմ. գիտ. դոկտոր, դոց. Արման Եղիազարյան):

Ֆակուլտետում դասավանդում են 16 պրոֆեսոր, 43 դոցենտ, 26 ասիստենտ և 17 դասախոս:



Պատմագրական բաժնի դասախոսները ուսանողների հետ



Ակադեմիկոս Հրաչյա Աճառյան

Հայագիտական դասընթացների ավանդումը համալսարանում սկսվել է նրա ստեղծման առաջին իսկ օրերից: Ինչպես հայկական մի քանի կրթօջախներում, այնպես էլ արտասահմանյան նշանավոր բարձրագույն գիտակրթական հաստատություններում մասնագիտորեն հմտացած ու գիտամանկավարժական որոշակի ճանապարհ անցած բանասեր-հայերենագետների մասնակցությամբ ու ջանքերով կազմվեցին առարկաների ուսումնական ծրագրերը, որով էլ հայոց լեզվի ու գրականության դասավանդումը դրվեց գիտական ամուր հիմքերի վրա:

1936 թ. պատմագրական ֆակուլտետից առանձնացած և ձևավորված բանասիրական (հետագայում՝ հայ բանասիրության) ֆակուլտետը ղեկավարել են պրոֆեսորներ Մանուկ Աբեղյանը (ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս՝ 1943 թ.-ից), Սիմոն Հակոբյանը, Հովհաննես Մամիկոնյանը, Մկրտիչ Մկրյանը (ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ՝ 1956 թ.-ից), Էդուարդ Աղայանը (ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս՝ 1982 թ.-ից), Սահակ Բազյանը, Հովհաննես Բարսեղյանը, Գառնիկ Անանյանը (ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ՝ 2006 թ.-ից), Վազգեն Գաբրիելյանը: 2000 թվականից ֆակուլտետի ղեկանն է բան. գիտ. դոկտոր, պրոֆ. Արծրուն Ավագյանը:

Ուսումնական գործընթացի կազմակերպմանը զուգընթաց՝ բանասիրական ֆակուլտետում կատարվել են գիտական ուսումնասիրություններ, որոնք մեծ ու կարևոր նպաստ են բերել հայագիտության զարգացմանը:

Պրոֆեսոր Հրաչյա Աճառյանը (ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս՝ 1943 թ.-ից), որը գիտական հանրությանն արդեն հայտնի էր իր

բարբառագիտական, բառաքննական ու լեզվաբանական աշխատություններով և համալսարան էր հրավիրվել որպես հայերենի, արևելյան ու եվրոպական լեզուների և այլ առարկաների դասախոս, հենց համալսարանում ավարտեց իր «Հայերեն արմատական բառարան» (1926 – 1932) վեցհատորյա (7-րդը՝ հավելված, 1935), «Հայոց անձնանունների բառարան» (1942 – 1962) հինգհատորյա, «Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների» (1952 – 2005), «Հայոց լեզվի պատմություն» (Ա մաս, 1940, Բ մաս, 1951) երկհատոր կոթողային աշխատությունները:

Ակադեմիկոս Մանուկ Աբեղյանը հանրահայտ է ժամանակակից հայոց լեզվի հնչյունաբանությանը, բառագիտությանը, ձևաբանությանն ու քերականությանը, տաղաչափությանը, ինչպես և հայոց հին գրականության պատմությանը նվիրված «Հայոց լեզվի տեսություն», (Եր. 1931), երկհատոր «Հայոց հին գրականության պատմություն» (գիրք 1, 1944, գիրք 2, 1946) և այլ հայագիտական մեծարժեք ուսումնասիրություններով:

1930 – 1950-ական թթ. արգասավոր է եղել պրոֆեսոր Գրիգոր Ղափանցյանի (ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս՝ 1943թ.-ից) գիտամանկավարժական գործունեությունը: Սարդարապատի հերոսամարտի մասնակիցն իր եռանդն անմնացորդ նվիրաբերեց հայրենի գիտությանն ու մանկավարժությանը՝ հրատարակելով «Արա Գեղեցիկի պաշտամունքը» (Եր., 1945), «Հայասան հայերի բնօրրան» (ռու., Եր., 1948) և այլ աշխատություններ:

Գարեգին Հովսեփյանը հայագիտական հետազոտությունների քննադատառում սկիզբ դրեց հայ հնագրության ու մանրանկարչական



Չախից՝ Հակոբ Մանադյան,
Մանուկ Աբեղյան, Ավետիք Իսահակյան,
Դերենիկ Դեմիրճյան



Ակադեմիկոս Արսեն Տերտերյանը՝
շրջապատված ուսանողներով

արվեստի ուսումնասիրությանը, ստեղծեց «Սասնա ծռեր» էպոսին, հայ մշակույթին և արվեստի պատմությանը նվիրված բազմասհատոր աշխատություններ: Նա նաև ազգային ու հոգևոր մեծ գործիչ էր (Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս՝ 1943 – 1952 թթ.), Սարգսրապատի հերոսամարտի կազմակերպիչներից: Հայրենական մեծ պատերազմի տարիներին սփյուռքահայության շրջանում հանգանակություն է կազմակերպել «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան համար:

1929-ից մինչև իր կյանքի վերջը պրոֆեսոր Արսեն Տերտերյանը (ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս՝ 1943 թ.-ից) եղել է իր իսկ հիմնադրած հայ գրականության պատմության ամբիոնի վարիչը: Նա անուրանալի ավանդ է ներդրել հայ գրականության և քննադատության դասընթացների մշակման և բարձրորակ գիտամանկավարժական կադրերի պատրաստման ոլորտներում՝ զուգահեռաբար գրելով «Հայ կլասիկներ» (Եր., 1944), «Աբովյանի ստեղծագործությունը» (Եր., 1941, 1947), «Պերճ Պոռչյան» (Եր., 1955), «Շիրվանզադեի գրական տիպերի հանրագիտարան» (Եր., 1959) և այլ հիմնարար աշխատություններ: Համալսարանի հիմնադիր սերնդի վաստակաշատ գիտնական-մանկավարժներից են նաև Գևորգ Ասատուրը, Նիկոլ Աղբալյանը, Սիմոն Հակոբյանը և ուրիշներ:

1930-ական թթ. ստալինյան բռնապետական քաղաքականության հետևանքով ողջ համալսարանի հետ միասին ծանր կորուստներ կրեց նաև բանասիրական ֆակուլտետը: Սակայն, բարեբախտաբար, հիմնադիր սերնդին աստիճանաբար փոխարինելու եկավ և ինքնահաստատվեց արդեն ԵՊՀ-ում մասնագիտական կրթություն ստացած գրականագետների ու լեզվաբանների նոր սերունդը:

Պրոֆեսոր Գուրգեն Սևակը (ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս՝ 1971 թ.-ից) հանդես եկավ իր «Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն» (Եր., 1948) ուսումնասիրությամբ, «Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց» (Եր., 1955) բուհական դասագրքով, իսկ «Հայոց լեզվի շարահյուսություն» դպրոցական դասագիրքն ունեցել է 30 հրատարակություն (Եր., 1937-1980):

Ակադեմիկոս Արսեն Տերտերյանի անմիջական հաջորդը նրա ասպիրանտ Մկրտիչ Մկրյանն էր, որը հետագայում աչքի ընկավ դասախոսելու բացառիկ ձիրքով և ներհուն գիտնականի լավագույն որակներով: Նա ստեղծել է «Հայ գրականություն» հանրակրթական դպրոցի, «Հայ հին գրականության պատմություն (V – X դարեր)» (Եր., 1976) բուհական արժեքավոր դասագրքերը և բազմաթիվ մեծարժեք ուսումնասիրություններ: «Գրիգոր Նարեկացի» (Եր., 1955) մենագրության մեջ գիտնականը նորովի է բացահայտել հանճարեղ մտածողի ստեղծագործության ազգային ու համամարդկային արժեքը: Նրա գրչի արգասիքն են նաև «Մովսես Խորենացի. կյանքն ու ստեղծագործությունը» (Եր., ռուս.՝ 1969, հայ.՝ 1970), «Ավետիք Իսահակյանի հումանիզմը» (Եր., 1975), «Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունը» (Եր., 1981) և այլ աշխատություններ:

Գիտամանկավարժական բազմամյա բեղուն գործունեություն է ծավալել ակադեմիկոս Էդուարդ Աղայանը: Հայ և ընդհանուր լեզվաբանությանը, գրաբարին և արդի հայերենի բառաքնությանն ու ձևաբանությանը, պատմահամեմատական լեզվաբանությանը նվիրված նրա բազմաթիվ ուսումնասիրությունները բարձր են գնահատվել ոչ միայն Հայաստանում, այլև նրա սահմաններից դուրս: Իսկ

նրա «Լեզվաբանության ներածություն» աշխատությունը, որն ունեցել է մի քանի հրատարակություն (1949, 1952, 1963, 1967), 1959 թ. քարգմանվել է նաև ռուսերեն և ԽՍՀՄ բարձրագույն կրթության նախարարության կողմից երաշխավորվել որպես միութենական բուհական դասագիրք: Հետագայում հեղինակն այն հիմնովին վերամշակել և 1987 թ. հրատարակել է «Լեզվաբանության հիմունքներ» վերտառությամբ: Մինչ օրս անփոխարինելի է նրա «Արդի հայերենի բացատրական բառարանը» (Եր., 1976), որն ընդգրկում է 136 հազար բառ և 11 հազար դարձվածային միավոր:

Իր լեզվաբանական բարձրարժեք աշխատություններով աշխարհին հանրահայտ դարձավ գիտության մեծ նվիրյալ պրոֆեսոր Գևորգ Ջահուկյանը (ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս՝ 1974 թ.-ից): Նա տասնամյակներ շարունակ ղեկավարեց ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը, համատեղեց դասախոսական աշխատանքը հայ և համաշխարհային լեզվաբանության բնագավառներում իր հետազոտական գործունեության հետ՝ ծնունդ տալով լեզվաբանական միտքը հարստացնող և նոր սերունդներին ուղղորդող կոթողային բազմաթիվ աշխատությունների՝ «Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը» (Եր., 1969), «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ» (Եր., 1974), «Ժամանակակից հայերենի իմաստաբանություն և բառակազմություն» (Եր., 1989), «Լեզվաբանության պատմություն» (Եր., 1960 – 1962, 2015), “Универсальная теория языка. Прологомены к субстанциональному лингвистике” (М., 1999), «Շարահյուսական ուսումնասիրություններ» (Եր., 2003) և այլն: Ականավոր լեզվաբանի ուսումնասիրության կիզակետում է եղել հայոց լեզուն



1-ին շարքում՝ Էդ. Աղայան, Մ. Մկրյան, 2-րդ շարքում՝ Հր. Թամրազյան, Հ. Բարսեղյան



Էդ. Ջրբաշյան, Մ. Մկրյան, Էդ. Աղայան



Մկրտիչ Մկրյանը ուսանողների հետ



Բանասիրական ֆակուլտետի գերազանցիկ ուսանողները 2-րդ շարքում ձախից 1-ինը՝ Պարույր Սևակ

իր բոլոր դրսևորումներով՝ սկսած նախագրային շրջանից մինչև գրաքարը, միջին և արդի հայերենները, բազմաթիվ հայ բարբառները: Նա՝ որպես Եվրոպայի և ԱՄՆ-ի լեզվաբանական ընկերությունների անդամ, մեծ դերակատարություն է ունեցել հայ լեզվաբանական մտքի նվաճումները համաշխարհայնացնելու գործում:

Իրենց լեզվափիլիսոփայական աշխատություններով հայ գիտական միտքը հարստացրել են պրոֆեսոր Էդուարդ Աթայանը (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս՝ 1996 թ.-ից)՝ «Լեզու և արտալեզվական իրականություն, գոյաբանական համեմատման փորձ» (Եր., 1987), դոցենտ Էդմոնդ Ավետյանը՝ «Նշանագիտություն և լեզվաբանություն» (Եր., 1989):

Գրականագիտական-քննադատական պատկառելի ժառանգություն է թողել պրոֆեսոր Հրանտ Թամրազյանը (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս՝ 1996 թ.-ից)՝ ավելի քան 40 մենագրություն ու դասագիրք, շուրջ 400 հոդված ու դիմանկար: 1968 – 1980 թթ. նա ղեկավարել է հայ նորագույն գրականության ամբիոնը, իսկ 1980 թվականից մինչև իր կյանքի վերջը՝ 2001 թ., հայ գրականության պատմության ամբիոնը՝ հաջորդելով Մ. Մկրյանին: Նրա ողջ գիտակցական կյանքը, դասախոսական աշխատանքին զուգահեռ, եղել է համակ նվիրում հայ գրական արժեքներին, հանիրավի դատապարտված ու մոռացության մատնված գրողների իրավունքների պաշտպանությանը: Հովհ. Թումանյանին, Ավ. Իսահակյանին, Վ. Տերյանին, Սիամանթոյին, Պ. Դուրյանին, Մ. Մեծարենցին, Դ. Վարուժանին, Ե. Չարենցին, Ա. Բակունցին, Հովհ. Շիրազին, Հ. Սահյանին, Վ. Դավթյանին, Հ. Կարապենցին, Հր. Մաթևոսյանին և ուրիշներին նվիրված մենա-

գրությունների և ուսումնասիրություն - հոդվածների կողքին նա ստեղծեց «Հայ քննադատություն» եռահատոր աշխատությունը, որը ներկայացնում է հայ գրական մտքի զարգացման ընթացքը 5-րդ դարի մատենագիրներից մինչև նորագույն ժամանակների գրողները: Համալսարանի և հանրապետության գիտամշակութային կյանքում կարևոր նորություն էին Հրանտ Թամրազյանի կազմակերպած «Չարենցյան ընթերցումներ» գիտական մատաշրջանները: Գիտության ասպարեզում ցուցաբերած ծառայությունների, ինչպես նաև 9-րդ դասարանի «Հայ գրականություն» դասագրքի վերամշակված հրատարակության համար 1974 թ. նա արժանացել է ՀԽՍՀ Պետական մրցանակի: Նրա անունով է կոչվում ԵՊՀ հայ գրականության պատմության ամբիոնը:

Բանասիրական ֆակուլտետի կայացման ու գիտական հեղինակության բարձրացման մեջ անուրանալի է պրոֆեսոր Էդվարդ Ջրբաշյանի (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս՝ 1982 թ.-ից) ներդրումը: Նրա գիտական վաստակն ունի երկու ուղղվածություն՝ հայ գրականության պատմություն և գրականության տեսություն: Սրանց հետ զուգահեռ նա դասավանդել է նաև գեղագիտության պատմություն, կարդացել արևմտահայ բանաստեղծներին նվիրված մասնագիտական հատուկ դասընթաց: Վերլուծական հզոր մտքի ու համակողմանի խոր գիտելիքների տեր այս գիտնականին վստահեցրին «Բանբեր Երևանի համալսարանի» հայագիտական - հասարակագիտական հանդեսի հիմնադիր գլխավոր խմբագրի, այնուհետև՝ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրենի պատասխանատու պաշտոնները: Նա Թումանյանի, Իսա-

հակյանի, Տերյանի, Չարենցի, Մեծարենցի կյանքին ու ստեղծագործությանը նվիրված մենագրություններ ու բազմաթիվ ուսումնասիրություններ է հրատարակել՝ 1974 և 1980 թվականներին արժանանալով ՀԽՍՀ Պետական մրցանակի:

Հայ գրականագիտության ու լեզվաբանության ոլորտում ուշագրավ են նաև պրոֆեսորներ Վաչե Նալբանդյանի (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս՝ 1994 թ.-ից) «Եղիշե» (Եր., 1962, 1972), «Վարդանանց պատերազմը և Դ. Դեմիրճյանի «Վարդանանքը»» (ռուս., Եր., 1965), «Սայաթ-Նովա» (Եր., 1987), «Գրիգոր Նարեկացի» (Եր., 1990), Սահակ Բազյանի «Միքայել Նալբանդյան» (Եր., 1955), «Աբովյանի գրական ժառանգությունը» (Եր., 1966), «Աբովյանի բանաստեղծական աշխարհը» (Եր., 1977), Սիրաք Գյուլբուդադյանի «Թվական անունը ժամանակակից հայերենում» (Եր., 1964), «Ալ. Շիրվանզադեի լեզվական մշակույթը» (Եր., 1966), Հովհաննես Բարսեղյանի «Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն» (Եր., 1953), «Մանուկ Աբեղյանի հինգ հոլովի տեսությունը և նրա հին ու նոր քննադատությունները» (Եր., 1967), Մամվել Ասատրյանի եռահատոր «Ժամանակակից հայերենի ձևաբանության հարցեր» (Եր., 1970 – 1977), «Բայի սեռերը ժամանակակից հայերենում» (Եր., 1959) մենագրությունները, Հրանտ Պետրոսյանի «Գոյականի առումները հայերենում» (Եր., 1960), «Ակնարկներ հայերենի պատմական ձևաբանության» (Եր., 1976) մենագրությունները և «Հայերենագիտական բառարան»-ը (Եր., 1987), Աշոտ Սուքիասյանի «Հայերենի հոմանիշների բացատրական բառարանը» (Եր., 2003, 2009), Ալեքսանդր Մարգարյանի «Ժամանակակից հայոց լեզու» (Եր.,

1990, 1993, 1997), «Հայոց լեզվի քերականություն. ձևաբանություն» (Եր., 2004), Սերգեյ Գալստյանի «Ածանցները և ածանցումը ժամանակակից հայերենում» (Եր., 1978), «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան» (Եր., 1975), Գրիգոր Գաբեգինյանի «Ժամանակակից հայոց լեզու: Բարդ նախադասություն» (Եր., 1984), դոց. Պողոս Պողոսյանի «Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ», երկու գրքով (Եր., 1990, 1991) ուսումնասիրությունները, Լևոն Եզեկյանի «Գրական աշխարհաբարը և արևելահայ պատմավեպի լեզուն» (Եր., 1990), «Հայոց լեզվի ոճագիտություն» (Եր., 2003), «Հայոց լեզու» (Եր., 2005) բուհական դասագրքերը, Ռուբեն Դազարյանի «Գրաբարի բառարանը» (Եր., 2002) և այլ բառարաններ:

Ներկայումս հայ բանասիրության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը, շարունակելով նախորդների ավանդույթները, ուսումնական արդի գործընթացներին հաջողությամբ զուգակցում է գիտահետազոտական աշխատանքը և հայագիտությունը հարստացնում նոր ծանրակշիռ արժեքներով՝ գրականագիտական ու լեզվաբանական մենագրություններով, դասագրքերով ու ուսումնական ձեռնարկներով: Ուշագրավ են պրոֆեսորներ Արծրուն Ավագյանի «Կոստան Ջարյան» (Եր., 1998) և «Պատկերազարդ պատմություն Շահան Շահնուրի» (Եր., 2004) մենագրությունները, Վազգեն Գաբրիելյանի «Դանիել Վարուժան» (Եր., 1978), «Սփյուռքահայ գրականություն», (Եր., 2016), «Պատմության խորհուրդը և ներկան» (Եր., 2012), Ժենյա Քալանթարյանի «Հայ գրականագիտության պատմություն» (Եր., 1986), «Եղիշե Չարենց» (Եր., 2012) ուսումնասիրությունների ժողովածուն, Սամվել Մուրադյանի «Գրա-

կան հանգրվաններ»-ի (Եր., 2004, 2007, 2010) երեք գրքերը, «Երվանդ Օտյան. կյանքը և գործը» (Եր., 1996, 2012), «Հովհաննես Շիրազ» (Եր., գիրք Ա՝ 2012, գիրք Բ՝ 2016) մենագրությունները, Վազգեն Սաֆարյանի «Կիլիկյան Հայաստանի գրականությունը» (Եր., 1990), «Գրողի և կերպարի անհատականությունը» (Եր., 2001), Յուրի Ավետիսյանի «Արևմտահայ բանաստեղծության լեզուն» (Եր., 2002), «Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական քերականություն» (Եր., 2007), Աննա Աբաջյանի «Հայերենի հոլովման համակարգի ըմբռնումը և պատմական զարգացումը հայ քերականագիտության մեջ» (Եր., 2006), Փառանձեմ Մեյքիխանյանի «Աստվածաշնչի հատկանվանաբանություն» (Եր., 2017), Ալբերտ Մակարյանի «Հարություն Ալամդարյան» (Եր., 2005), Նազիկ Հարությունյանի «Լիբանանի և Սիրիայի հայկական դպրոցները» (Եր., 2002), «Հայ մանկավարժ կաթողիկոսները» (Եր., 2011), Ռուբեն Սաքապետոյանի «Արևմտահայերենի դասագիրքը» (Եր., 2006), «Արևմտահայերեն-արևելահայերեն բառարանը» (Եր., 2011), Վարդան Պետրոսյանի «Ընդհանուր և հայ լեզվաբանություն» (Եր., 2015) աշխատությունը և այլն:

Այսօր ֆակուլտետում գործում է 6 ամբիոն՝ հայոց լեզվի (վարի՝ բան. գիտ. դոկտոր, պրոֆ. Յուրի Ավետիսյան), հայոց լեզվի պատմության (վարի՝ բան. գիտ. դոկտոր, պրոֆ. Աննա Աբաջյան), ընդհանուր լեզվաբանության (վարի՝ բան. գիտ. թեկն., դոց. Վարդան Պետրոսյան), ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության (վարի՝ բան. գիտ. դոկտոր, պրոֆ. Սամվել Մուրադյան), հայ նորագույն գրականության (վարի՝ բան. գիտ. թեկն., դոց. Մեյրան

Գրիգորյան), գրականության տեսության և գրաքննադատության (վարի՝ բան. գիտ. թեկն., դոց. Աշխեն Ջրբաշյան):

Ֆակուլտետում դասավանդում են 12 պրոֆեսոր, 40 դոցենտ, 14 ասիստենտ և 2 դասախոս:

Երևանի պետական համալսարանում հայագիտության զարգացումը խթանելու նպատակով 1968 թ. ստեղծվեց հատուկ գիտահետազոտական լաբորատորիա (գիտական ղեկավար՝ Էդուարդ Աղայան, վարի՝ Էմանուել Պիվազյան):

Նորաստեղծ լաբորատորիան համակարգելու էր ոչ միայն կազմակերպական, այլև գիտահետազոտական աշխատանքները հումանիտար այն ֆակուլտետներում, որտեղ մշակվում էին հայագիտական թեմաներ: Հետագայում լաբորատորիան կոչվեց ԵՊՀ հայագիտական հետազոտությունների կենտրոն: Այն իրականացնում էր հայ ժողովրդի պատմությանը, լեզվին ու գրականությանը վերաբերող համակողմանի հետազոտություններ, որոնցում հայագիտության հարցերը քննարկվում էին համաշխարհային քաղաքակրթության, ժողովուրդների տնտեսական, հասարակական-քաղաքական և գրական-մշակութային փոխառնչությունների համակարգում: Այդ առումով հայագիտական կենտրոնը շուրջ չորս տասնամյակների իր գործունեության ընթացքում հսկայական աշխատանք է կատարել, հրատարակել հայագիտական բազմաթիվ մեծարժեք աշխատություններ, այդ թվում՝ պրոֆեսորներ Թադևոս Հակոբյանի, Ստեփան Մելիք-Բախշյանի և Հովհաննես Բարսեղյանի 40-ամյա տքնաջան աշխատանքով ստեղծված «Հայաստանի և հարակից շրջանների տե-

ղանունների բառարան»-ը 5 սովորածավալ հատորով, որը 2003 թ. արժանացել է ՀՀ Նախագահի մրցանակի:

Կենտրոնի նշանակալի ձեռքբերումներից է Մկրտիչ Ներսիսյանի խմբագրությամբ «Հայ ժողովրդի պատմություն» (1972, ռուս.՝ 1981) աշխատությունը, «Հայ մշակույթի նշանավոր գործիչներ (V – XVIII դդ.)» հանրագիտարանային բնույթի ժողովածուն (1976, 1977, ռուս.՝ 1982): Համալսարանի գիտնականների ջանքերով ի մի են բերվել անցյալի հայ անվանի հետազոտողների՝ տարբեր պարբերականներում տպագրված արժեքավոր շատ նյութեր: Այդպես են ծնվել Հրաչյա Աճառյանի, Ստեփան Մալխասյանցի, Գալուստ Տեր-Մկրտչյանի (Միաբան), հայագիտական ու բանասիրական ուսումնասիրությունների ծավալուն հատորները: Հայագիտության հետագա զարգացման համար հատկապես արժեքավոր է եղել Հր. Աճառյանի «Հայերեն արմատական բառարան» կոթողային աշխատության ապակետիպ վեցհատորյակի տպագիր հրատարակումը չորս սովորածավալ հատորներով, որի ընդարձակ առաջաբանը գրել է ակադեմիկոս Էդուարդ Աղայանը:

Մեծարժեք գործեր են պրոֆ. Բաբկեն Հարությունյանի կազմած «Հայաստանի ազգային ատլաս» (2008) երկհատոր և «Հայաստանի պատմության ատլաս» (2004, 2005, 2008) եռահատոր աշխատությունները, որոնցում առաջին անգամ հայոց պատմությունը ներկայացվում է պատմական աշխարհագրության տեսանկյունից: Համալսարանական պատմաբանները հիմնարար աշխատանքներ են կատարել հատկապես հայոց պատմության աղբյուրագիտական բազան հարստացնելու ուղղությամբ՝ հրատարակելով բազմաթիվ



սկզբնաղբյուրներ, ինչպես նաև հնագիտության, ազգագրության, դրամագիտության և այլ բնագավառներում (պրոֆեսորներ Խաչիկ Սամուելյան, Աշոտ Աբրահամյան և ուրիշներ):

Բացառիկ արժեք ունեցող վերահրատարակություն պետք է համարել հայագիտության ոլորտի հետագա ուսումնասիրությունների ընթացքը խթանող Մխիթարյան միաբանության անդամներ Գաբրիել Ավետիքյանի, Խաչատուր Սյուրմելյանի և Մկրտիչ Ավգերյանի կազմած «Նոր բառգիրք հայկագետան լեզուի» (1979 – 1981) երկհատոր բառարանի, Միքայել Չամչյանի եռահատոր «Պատմութիւն հայոց» (1984 – 1985), Ա. Այտընյանի «Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի» (1987), Դուկաս Մեբաստացու «Դավիթ Բէկ կամ պատմութիւն Դափանցոց» (1992) աշխատությունների, Ներսես Շնորհալու «Հանելուկներ»-ի (1984), Առաքել Սյունեցու «Աղամագրքի» (1989), Դևոնդ Ալիշանի «Արցախ»-ի (1993) և այլ գրքերի լույս ընծայումը: Անցյալի երկլեզվյա բառարանագրության անուրանալի արժեքներից է Ալեքսանդր Խուդաբաշյանի «Հայ-ռուսերեն բառարան» երկհատորյակի (1986 – 1987) վերահրատարակությունը: Արժեքավոր են նաև պրոֆ. Էմանուել Պիվագյանի կազմած Կորյունի «Վարք Մաշտոցի» երկի գիտաքննական բնագրի գրաբար հրատարակությունը (թարգմանված՝ արդի հայերեն, ռուսերեն և գերմաներեն), որին որպես առաջաբան կցված է Մանուկ Աբեղյանի «Մեսրոպ Մաշտոց և հայ գրի ու գրչության սկիզբը» ուսումնասիրությունը (թարգմանված՝ ռուսերեն և գերմաներեն): Կարևոր է նաև Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքի» ռուսերեն հրատարակությունը (1971):

Հայագիտական կենտրոնի նախաձեռնությամբ տպագրվել են օտարազգի անվանի հայագետներ Անտուան Մեյեյի և Հայնրիխ Հյուբշմանի «Հայագիտական ուսումնասիրություններ» վերտառությամբ սովորածավալ հատորները (1987, 1990), կազմակերպվել հանրապետական ու համամիութենական համատեղ բազմաբնույթ գիտաժողովներ, որոնց նյութերը հրատարակվել են առանձին ժողովածուներով:

ԵՊՀ գիտական խորհրդի 2008 թ. հուլիսի 10-ի որոշմամբ հայագիտական կենտրոնի հիմքի վրա ստեղծվեց Հայագիտական հետազոտությունների ինստիտուտը (տնօրեն՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆ. Արամ Սիմոնյան), որը ներառեց հնագիտական հետազոտությունների, Հայաստանի պատմական աշխարհագրության ու քարտեզագրության լաբորատորիաները, հայ-վրացական կապերի կենտրոնը, հայ-օսմանական և այլ բաժիններ:

Նորաստեղծ ինստիտուտի առջև խնդիր դրվեց հետազոտությունների հիմնական առանցք դարձնել հայ հնագիտության, Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության, պատմագրության և մատենագիտության, հայ-օսմանական և հայ-քրդական առնչությունների, հայ-վրացական կապերի, հայագիտական, պատմագիտական և աղբյուրագիտական ժառանգության, Հայաստանի պատմական աշխարհագրության, քարտեզագրության, վիրտուալ հայագիտության և այլ ոլորտների հիմնախնդիրները:

Ինստիտուտի Հայոց պետականության պատմության հիմնախնդիրների հետազոտության բաժինը (ղեկավար՝ պրոֆեսոր Արամ Սիմոնյան)՝ օգտվելով ռուսական սկզբնաղբյուրների և պատմագի-

տական ժառանգության փաստական տվյալներից, զբաղվում է Հայոց պետականության և հայ ժողովրդի պատմության հիմնահարցերի, Լեռնային Ղարաբաղի ու Ջանգեզուրի պատմության ուսումնասիրությամբ, ինչպես նաև Հայոց ցեղասպանությանն առնչվող սկզբնաղբյուրներում առկա վկայությունների հավաքագրմամբ:

Ցեղասպանագիտության բաժինը (վարիչ՝ պատմ. գիտ. թեկնածու Սուրեն Մանուկյան) զբաղվում է Հայոց ցեղասպանությանն առնչվող մի շարք հիմնահարցերի ուսումնասիրությամբ. «Հայ դատ» հասկացությունը և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարաբերակցությունը, հայկական ինքնությունը և Հայոց ցեղասպանության առնչությունը, Հայոց ցեղասպանության ընդգրկված տարածքը, ժամանակահատվածը, նրա համար պատասխանատվությունը և այլ հարակից հարցեր: Կազմվում է Հայոց ցեղասպանությանը նվիրված մենագրությունների, ժողովածուների, հոդվածների մատենագիտությունը, թարգմանվում և հրատարակվում են այդ թեմային վերաբերող օտարալեզու հազվագյուտ գրքեր ու ժողովածուներ: Տարբեր երկրներից հավաքագրվում և ինստիտուտի արխիվում կենտրոնացվում են մինչ օրս անհայտ փաստաթղթեր, լուսանկարներ, հուշագրություններ, ֆիլմեր: Բաժինը համագործակցային սերտ կապեր է հաստատել արտերկրի ցեղասպանագիտական կենտրոնների հետ:

Հայ-օսմանական առնչությունների բաժնում (վարիչ՝ բան. գիտ. թեկն., դոցենտ Լուսինե Սահակյան) կատարվում են ուսումնասիրություններ 14-20-րդ դարերի հայոց քաղաքական և մշակութային պատմության, պատմական ժողովրդագրության, տեղանվանա-

գիտության, լեզվական առնչությունների, Հայոց ցեղասպանության հետ կապված հիմնահարցերի ուղղությամբ: Նաև տարվում են աշխատանքներ ԵՊՀ-ում օսմաներենի դասավանդումը զարգացնելու առումով: Բաժինն զբաղվում է Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող հայատառ-դիպաղերեն ձեռագրերի լեզվական քննությամբ:

Հայ-քրդական առնչությունների բաժնի (վարիչ՝ պատմ. գիտ. թեկն., դոցենտ Վահրամ Պետրոսյան) նպատակն է պատմական, քաղաքական, տնտեսական, քաղաքակրթական, կրոնական, մշակութային, ժողովրդագրական ու սոցիալական լայն համատեքստում ներկայացնել հայ-քրդական առնչություններն ու հարաբերությունները, համեմատական հետազոտմամբ վերլուծել հայկական հարցի և քրդական խնդրի միջազգայնացման պատճառներն ու փուլերը, դիտարկել «Հայկական հարց»-«քրդական գործոն» և «քրդական հարց»-«հայկական գործոն» իրողությունները, հետազոտել հայ և քուրդ ժողովուրդների ազատագրական պայքարի հիմնախնդիրները, տարածաշրջանային զարգացումների լույսի ներքո հանգամանորեն քննության առնել ու ներկայացնել հայ-քրդական հարաբերությունների նշանակությունը և դրանցում առկա խնդիրները:

Հայ-վրացական հարաբերությունների բաժնում (վարիչ՝ բան. գիտ. թեկն., դոցենտ Հրաչիկ Բայրամյան) կատարվող գիտահետազոտական աշխատանքները հիմնականում նվիրված են հայ-վրաց լեզվական-բառարանագրական առնչություններին, երկկողմ թարգմանություններին, հայ-վրաց գրական-պատմամշակութային կապերը լուսաբանող խնդիրներին, հայագիտությանը վերաբերող վրացե-

րեն կարևոր աշխատությունների հայերեն թարգմանությանն ու հրատարակմանը:

Սփյուռքագիտական հետազոտությունների բաժինը (վարի՝ պատմ. գիտ. դոկտոր, դոցենտ Արման Եղիազարյան) իրականացնում է պատմաժառանգամասնական և պատմատիպաբանական համեմատական ուսումնասիրություններ՝ զուգադրելով հայկական Սփյուռքը այլ ժողովուրդների (հրեաների, հույների և այլն) գաղթօջախների հետ: Ջբաղվում է սփյուռքագիտական հետազոտությունների հիմնական սկզբունքների, մեթոդների, հատակեցմամբ, Սփյուռքի պատմության հիմնական շրջափուլերի ու զարգացումների, մինչև Հայոց ցեղասպանությունը առանձին գաղթավայրերի պատմության, արդի հայկական համայնքների, Հայրենիք-Սփյուռք համագործակցության հիմնական ոլորտների և այլ հիմնախնդիրների ուսումնասիրությամբ:

Ինստիտուտի հնագիտական հետազոտությունների լաբորատորիայում (վարի՝ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Հայկ Ավետիսյան) կազմակերպվում են հնագիտական պեղումներ Հայաստանի լեռնաշխարհում (Քարե դարից-Միջնադար), ուսումնասիրվում հայտնաբերված նոր հնագիտական հուշարձանները, կատարվում նյութի վերականգնում և կոնսերվացում, ֆիզիկաքիմիական ախտորոշում, օրինաչափությունների բացահայտում և վերլուծություն, ստեղծվում մարդու կողմից բնական ռեսուրսների օգտագործման գործընթացներին առնչվող տվյալների շտեմարան, կազմվում բազմաբնույթ քարտեզներ, ճշգրտվում հնագիտական հուշարձանների պարբերացմանն ու ժամանակագրությանն առնչվող հարցեր: Մշակված նյութե-

րը հրատարակվում են տեղական և արտասահմանյան պարբերականներում: Պեղումներից հայտնաբերված որոշ գտածոներ տրամադրվում են համալսարանի պատմության թանգարանին:

Բաբկեն Հարությունյանի անվան Հայաստանի պատմական աշխարհագրության և քարտեզագրության լաբորատորիան (վարի՝ պատմ. գիտ. թեկն. Վարդան Մխիթարյան), որը եզակի կենտրոն է հանրապետությունում, զբաղվում է Հայաստանի պատմական աշխարհագրության և քարտեզագրության խնդիրների քննությամբ, հայալեզու և օտարալեզու ատլասների, պատմական ու վարչական քարտեզների ստեղծմամբ:

Այսօր հայագիտական ուսումնասիրությունների աղբյուրագիտական և տեղեկատվական շտեմարանների դերը ստանձնում է համացանցը, որի առաջադրած խնդիրները հայագիտության համար նոր մարտահրավերներ են: Ինստիտուտի վիրտուալ հայագիտության և տեղեկատվության բաժինը (վարի՝ պատմ. գիտ. թեկն. Մհեր Հովհաննիսյան) իրականացնում է համացանցում զետեղված հայագիտական և հակահայկական տարաբնույթ նյութերի մշտադիտարկում, համակարգում, հասցեագրում համապատասխան մասնագետներին, հայագիտական անհրաժեշտ գրականության թվայնացում, նոր կայքերի ստեղծում, համացանցում անհրաժեշտ նյութերի տարածման ապահովում, ինստիտուտի պաշտոնական կայքի և մասնագիտական կայքերի սպասարկում և այլն: Ինստիտուտի կայքերում այսօր տեղադրված են ավելի քան 1000 գիրք, 600 գիտական հոդված, ավելի քան 2500 գիտահանրամատչելի հանրագիտարանային հոդված, 190 քարտեզ, 120 արխիվային փաստաթուղթ, բազմաթիվ լուսա-

նկարներ և տեսանյութեր: Սփյուռքում հայագետների պատրաստման և մասնագիտական հմտությունների ապահովման նպատակով գործում է հեռաուսուցման համակարգ:

Այսօր ինստիտուտում գիտահետազոտական աշխատանք են իրականացնում 31 մասնագետ. համապատասխանաբար 2 առաջատար, 13 ավագ, 10 կրտսեր և 6 գիտաշխատող:

Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի աշխատակիցները դասախոսություններով ու զեկուցումներով հանդես են գալիս միջազգային գիտաժողովներում և Սփյուռքում: Ինստիտուտը համագործակցում է արտերկրի հայագիտական տարբեր կենտրոնների հետ:

Վերջին տարիներին ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտում գիտական լուրջ աշխատանքների ծավալման լավագույն վկայություն են 2008 թվականից ի վեր տպագրված ավելի քան 200 գիտական հոդվածները, 90 մենագրությունները, այդ թվում՝ Արամ Սիմոնյանի և Է. Բարայանի “Армянский вопрос, Геноцид армян” (2009), Բ. Հարությունյանի “Atlas of the Nagorno-Karabagh Republic” (2010), Հայկ Ավետիսյանի և Արսեն Բորիսյանի «Ուրարտուի հնագիտություն (ամրոց-բնակավայրեր և դամբարանային համալիրներ)» (2010) աշխատությունները: Ինստիտուտի վրացագիտության հայկական կենտրոնը 2010 թ. հիմնադրել է «Հայ-վրացական հարաբերություններ» մատենաշարը: 2012 թ. լույս է տեսել Վլադիմիր Մադալյանի «Հայ տեղական մամուլը և գրատպությունը Վրաստանում (1885 – 1990 թթ.)» աշխատությունը՝ նվիրված հայ տպագրության սկզբնավորման 500-ամյակին:

Կարևոր են Վարուժան Պողոսյանի «Հայոց ցեղասպանության առաջին փուլը ֆրանսիական պատմագրության և հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ (XIX դարի վերջ – XX դարի սկիզբ)» (2011), «Էջեր Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության (հոդվածների ժողովածու)» (2015), “Армяне-сподвижники Наполеона: история и мифы” второе издание, (2015), Լուսինե Սահակյանի “Turkification of Toponyms in the Otoman Empire and the Republic of Turkey” (Montreal, 2010, 2011), “Les Microtoponymes de Hamchen” (Paris, 2014), Ջեյմս Հարբորդի «Իրավիճակը Մերձավոր Արևելքում. դեպի Հայաստան ամերիկյան առաքելության զեկույցը» (կազմողներ՝ Ա. Սիմոնյան, Ա. Ղարիբյան, 2014), Հ. Վիրաբյանի «Հայաստանի Հանրապետության պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գործունեությունը 1918 – 1920 թթ.» (2015), «Հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունները և Լոռու չեզոք գոտին» (2015) և այլ մենագրություններ:


Ինստիտուտը զբաղվում է նաև անցյալի հայագիտական աշխատանքների վերահրատարակման գործով. 2006 – 2012 թթ. լույս է տեսել ականավոր պատմաբան Նիկողայոս Ադոնցի «Երկեր»-ի վեցհատորյակը, Գևորգ Ջահուկյանի «Ընդհանուր լեզվաբանություն» երկհատորյակը:

2014 թ. հիմնադրվել է ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի «Հայագիտության հարցեր» հանդեսը, որի նպատակն է գիտական շրջանակներին ներկայացնել ոչ միայն Մայր բուհի, այլև Հայաստանի Հանրապետության, Արցախի, Սփյուռքի և արտերկրի հայագետների արժեքավոր ձեռքբերումները: Առաջին

համարն ամբողջությամբ նվիրված է Հայոց ցեղասպանությանը, որտեղ ընթերցողը կարող է ծանոթանալ հայ ժողովրդի պատմության ողբերգական իրադարձություններին վերաբերող շատ նոր նյութերի:

Հանդեսը մեծ հետաքրքրություն է առաջացրել տեղի և արտասահմանի հայագետների շրջանում: Այն լույս է տեսնում տարիներեք անգամ, ունի իր կայքէջը և ներառված է ՀՀ ԲՈՀ-ի պարբերականների ցանկում:

Հանդեսի գլխավոր խմբագիրն է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆ. Արամ Սիմոնյանը, տեղակալը՝ բան. գիտ. թեկնածու Լևոն Ավետիսյանը: Խմբագրական խորհրդում ընդգրկված են համալսարանի և արտերկրի ճանաչված հայագետներ:



Երևանի համալսարանի հիմնադրումով պատմալեզվաբանական ֆակուլտետում սկիզբ է դրվել արևելագիտական առարկաների դասավանդմանը, իսկ 1921 թ. ստեղծվել է արևելագիտության ֆակուլտետ, որը գործել է մինչև 1922 – 1923 ուստարին, այնուհետև միավորվել է վերակազմավորված պատմագրական ֆակուլտետին: Առաջին արևելագետ դասախոսը Գևորգ Ասատուրն էր, որը 1921 թ. հրավիրվել էր համալսարան որպես վրացերենի և Արևելքի գրակա-

նության մասնագետ: 1923 թ. Թավրիզից համալսարան հրավիրված անվանի լեզվաբան Հրաչյա Աճառյանը հայագիտական և տեսական այլ դասընթացներից բացի կարդում էր նաև պարսկերեն, սանսկրիտ, պարսից լեզվի պատմություն և այլն: 1940 թ. նրա նախաձեռնությամբ բանասիրական ֆակուլտետում ստեղծվում է արևելյան բանասիրության ամբիոն: Նույն թվականին բացվում է նաև արևելյան լեզուների և գրականության բաժին՝ իրանական և արաբական ենթաբաժիններով, որոնց հիման վրա 1968 թ. կազմավորվել է արևելագիտության ֆակուլտետը, և դեկան է նշանակվել պրոֆ. Գեորգի Նալբանդյանը: Հետագայում ֆակուլտետը տարբեր տարիների դեկավարել են պրոֆեսորներ Բորիս Բալայանը, Մերի Քոչարը, Գուրգեն Մելիքյանը: 2017 թվականից ֆակուլտետի դեկանն է բան. գիտ. թեկն., պրոֆ. Ռուբեն Մելքոնյանը:

Ֆակուլտետում գիտական հետազոտություններ են կատարվում իրանագիտության, սեմագիտության, թյուրքագիտության և հնդկագիտության տարբեր ոլորտներում: Գիտական հետազոտության առարկա են նաև իսլամի թե՛ ուղղադավան և թե՛ ծայրահեղ ուղղությունները, ինչպես նաև մինչիսլամական Իրանի կրոնները, Մերձավոր Արևելքի երկրների պատմությունն ու մշակույթը: Հայաստանի անկախության տարիներից ի վեր ֆակուլտետի գիտնականների աշխատասիրությամբ հրատարակվել են շուրջ 40 մենագրություն և բազմաթիվ դասագրքեր: Հիշարժան են Գուրգեն Մելիքյանի “Парные словосочетания в новоперсидском языке” (1996), Լուսինե Սահակյանի «Բարձր Հայքի Բաբերդ, Սպեր, Դերջան գավառների տեղանուններն ու ժողովրդագրությունը 16-րդ

դարի օսմանյան աշխարհագիր մատյաններում» (2007), «Համշենի մանրատեղանուններ, Hemsen (Hemsin) miktoyerisimleri, Микро-понимы Амшена» (2012), Ալեքսանդր Սաֆարյանի «Ձիյա Գյոքալփը և «Թյուրքականության հիմունքները»» (2012), Ռուբեն Սաֆրաստյանի և Ռուբեն Մելքոնյանի «Թյուրքիայի հանրապետության պատմություն» (2014) մենագրությունները, Արման Հակոբյանի «Դասական ասորերեն» (2005) դասագիրքը և այլ գործեր:

Դասախոսների կատարած գիտական ուսումնասիրությունների արդյունքները հրատարակվում են ֆակուլտետի «Արևելագիտության հարցեր», «Orientalia» ժողովածուներում:

Ֆակուլտետը սերտորեն համագործակցում է Ռուսաստանի, Իրանի, Եգիպտոսի, Սիրիայի, Արաբական Միացյալ Էմիրությունների, Քուվեյթի, Լիբանանի, Թուրքմենստանի, Ղազախստանի համալսարանների, ինչպես նաև արտերկրի այլ նշանավոր արևելագիտական կենտրոնների հետ:

Այսօր ֆակուլտետում գործում են իրանագիտության (վարիչ՝ Բան. գիտ. թեկն., դոց. Վարդան Ոսկանյան), թյուրքագիտության (վարիչ՝ պատմ. գիտ. թեկն., պրոֆ. Ալեքսանդր Սաֆարյան) և արաբագիտության (վարիչ՝ պատմ. գիտ. թեկն., դոց. Հայկ Քոչարյան) ամբիոնները, որտեղ պարսկերենից, թուրքերենից և արաբերենից զատ ուսումնասիրվում են նաև հնդկերեն, կովկասյան պարսկերեն (թաթերեն), աֆղաներեն, քրդերեն, ասորերեն, եբրայերեն, թալիշերեն, ղազախերեն և ադրբեջաներեն:

Ֆակուլտետում դասավանդում են 7 պրոֆեսոր, 26 դոցենտ, 19 ասիստենտ, 21 դասախոս:

ԵՊՀ բանասիրական ֆակուլտետում 1938 թ. բացված ռուսաց լեզվի և գրականության բաժնի հիմքի վրա 1976 թ. ձևավորվում է ռուսաց լեզվի և գրականության, հետագայում՝ ռուս բանասիրության ֆակուլտետը, որի առաջին ղեկանն էր Մաքս Շենկմանը: Հետագայում ֆակուլտետը ղեկավարել են Նատալյա Սարկիսովան, Լևոն Մկրտչյանը (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս՝ 1996 թ.-ից), Կարեն Մկրտչյանը: 2003 թվականից ֆակուլտետի ղեկանն է մանկ. գիտ. թեկն., դոց. Պավել Բալայանը:

Ֆակուլտետում աշխատել են Հայաստանի առաջատար լեզվաբաններ ու ռուսագետներ՝ ակադեմիկոսներ Էդուարդ Աթայանը, Լևոն Մկրտչյանը, պրոֆեսորներ Հրանուշ Մարգարյանը, Ռայմոնդա Շահբազյանը, դոցենտներ Սեդա Ավետիսյանը, Իզաբելլա Դիմարսկայա-Բաբայանը, Ջոյա Յասինսկայան և շատ ուրիշներ:

Ֆակուլտետում կատարված բեղմնավոր գիտահետազոտական աշխատանքների շնորհիվ հրատարակվել են բազմաթիվ հոդվածներ ու մենագրություններ: Առավել արժեքավոր են ակադեմիկոս Է. Աթայանի «Լեզվական ոլորտի կազմակերպման և գործառնման հայեցակետերը» (ռուս., 1976), «Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը» (ռուս., 1981), «Ազատությունը որպես գաղափար և որպես իրականություն» (ռուս., 1992), պրոֆ. Ռուսեթ Հովհաննիսյանի «Ռուս գրականության ուրվագծեր» (1960), «Լև Տոլստոյը և հայ գրական կյանքը» (1964), դոց. Ղազար Այվազյանի “История Тарона” и Армянская литература IV-VII веков” (1976), “История отношений русской и армянской церквей в средние века” (1989) և շատ այլ մենագրություններ:

Անգնահատելի են Լևոն Մկրտչյանի հեղինակած գիտական աշխատությունները, որոնք նվիրված են ռուս դասական գրականության պատմության հիմնախնդիրներին, հայ-ռուսական գրական և մշակութային փոխառնչություններին, թարգմանության տեսությանը, հայ միջնադարյան քնարերգության թարգմանությանը: Իսկ հայ միջնադարյան գրականության ուսումնասիրությանն ու պրոպագանդանը նվիրված նրա աշխատությունները 1983 թ. արժանացել են ՀԽՍՀ Պետական մրցանակի: Հիշարժան են նաև նրա “Аветик Исаакян и русская литература” (1963), “О стихах и переводах” (1965), “Армянская поэзия и русские поэты XIX – XX веков” (1968), “Черты родства” (1973), “Слепой, но не настолько” (1998), “Не хочу быть иностранцем в России” (2000) և այլ մենագրություններ:

Ուշագրավ են նաև պրոֆեսորներ Դավիթ Ջաղացպանյանի “Лингвистические основы первых грамматических трудов по русскому языку” (1957), Հրանուշ Մարգարյանի “Очерк русской морфологии в сопоставлении с армянской” (2007), Լիլիթ Բրուտյանի “Язык и гендер” (2008), Ռուզաննա Գրծելյանի “Слово в языке и дискурсе: Методы описания” (2009), Լիանա Մաթևոսյանի “Языковое сознание. Стереотипный пласт” (2008), դոցենտներ Ռաֆայել Պապայանի “Сравнительная типология национального стиха” (1980), Ռուրիկա Տեր-Առաքելյանի “Простое предложение в русском и армянском языках” (1982), “Переводная грамматика” (2005), Իվետա Մանուչարյանի “Очерки по типологии русского и чешского языков” (2006) և այլ աշխատություններ:

Ուշադրության են արժանի Դազար Այվազյանի նախածեռնու-

թյամբ ու ակտիվ մասնակցությամբ ֆակուլտետում հրատարակված “Брюсовские чтения” (1963 – 1976), “Литературные связи” (1973 – 1984) (4 հատոր), “Русская классика и литература народов СССР” (1970 – 1991) (10 հատոր), “Армянская и русская средневековые литературы” (1982, 1986) (2 հատոր) և Լևոն Մկրտչյանի նախաձեռնությամբ՝ “Декабрьские литературные чтения” (1989 – 2014) մատենաշարերը:

Մենագրությունների, բազմաթիվ հոդվածների և այլ գիտամեթոդական աշխատանքների ամենամյա հրատարակությունը արտերկրի և հայրենական տարբեր պարբերականներում վկայում է ֆակուլտետի ակտիվ հետազոտական գործունեության մասին:

Ֆակուլտետում այսօր էլ կատարվում են գիտական ուսումնասիրություններ ռուս գրականության պատմության ու տեսության, լեզվաբանության արդի հիմնահարցերի, լեզուների տիպաբանության ու հաղորդակցման տեսության, ինչպես նաև ռուսաց լեզվի դասավանդման մեթոդիկայի բնագավառներում:

Ֆակուլտետը համագործակցում է ինչպես մեր հանրապետության, այնպես էլ Ռուսաստանի Դաշնության և ԱՊՀ մյուս երկրների գիտական ու գիտակրթական հաստատությունների հետ:

Այսօր ֆակուլտետում գործում է 4 ամբիոն. ռուս գրականության (վարիչ՝ բան. գիտ. թեկն., դոց. Լևոն Հակոբյան), ռուսաց լեզվաբանության, տիպաբանության և հաղորդակցման տեսության (վարիչ՝ բան. գիտ. դոկտոր, պրոֆ. Լիլիթ Բրուտյան), ռուսաց լեզվի (հումանիտար ֆակուլտետների համար) (վարիչ՝ բան. գիտ. թեկն., դոց. Սուսաննա Լալայան), ռուսաց լեզվի (բնագիտական ֆակուլտետների

համար) (վարիչ՝ բան. գիտ. թեկն., դոց. Բելլա Խոջումյան) և հունագիտության գիտաուսումնական կենտրոն-գրադարանը: Ֆակուլտետում ռուսերենից զատ ուսումնասիրվում են նաև հունարեն, լեհերեն և բուլղարերեն:

Ֆակուլտետում դասավանդում են 4 պրոֆեսոր, 18 դոցենտ, 10 ասիստենտ և 35 դասախոս:

Օտար լեզուների ուսուցումը ԵՊՀ-ում սկիզբ է առել դեռևս 1935 թ. օտար լեզուների ամբիոնի հիմնադրմամբ: 1957 թ. Երևանի պետական ռուսական մանկավարժական ինստիտուտը համալսարանին միանալուց հետո օտար լեզուների ամբիոնը բաժանվում է երկու՝ ռոմանագերմանական բանասիրության և օտար լեզուների ամբիոնների: Ռոմանագերմանական բանասիրության ամբիոնում իրենց մանկավարժական հմտություններն ու գիտահետազոտական աշխատանքի ավանդույթներն են ներդրել ակադեմիկոսներ Գևորգ Ջահուկյանը և Էդուարդ Աթայանը: Նրանք ընդհանուր և հայ լեզվաբանության, բարբառագիտության և լեզվափոխակերպության բնագավառներում ունեցած իրենց ձեռքբերումներով արդեն հայտնի էին մեր երկրի սահմաններից դուրս:

Այդ տարիներին մի խումբ երիտասարդ համալսարանականներ՝ Մանուշ Հարությունյանը, Հասմիկ Թոքմաջյանը, Նելլի Բարաթյանը, Քնարիկ Աղայեկյանը, ավելի ուշ՝ Սոնա Սեֆերյանը, Ամալյա Մուրադյանը, Ալինա Տոնոյանը, Սվետլանա Վարդանյանը, Սեդա Գասպարյանը և ուրիշներ գործուղվեցին Մոսկվայի և Լենինգրադի համալսարաններ, որտեղ ձեռք բերելով տեսական գիտելիքներ ու

հետազոտական հմտություններ, վերադարձան Երևան և համալսարանում սկիզբ դրեցին օտար լեզուների ոլորտում առաջին հետազոտական աշխատանքներին:

1991 թ. բանասիրական ֆակուլտետի ռոմանագերմանական բանասիրության ամբիոնի հիմքի վրա կազմավորվեց ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետը և դեկան ընտրվեց մանկ. գիտ. թեկն., դոցենտ Կարո Կարապետյանը: 2009 թվականից ֆակուլտետը ղեկավարում է պատմ. գիտ. թեկն., դոցենտ Սամվել Աբրահամյանը:

Ֆակուլտետում որպես հիմնական և երկրորդ մասնագիտական օտար լեզուներ ուսումնասիրվում են անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, իսպաներեն և իտալերեն: Չնայած երիտասարդ տարիքին, ֆակուլտետը կարճ ժամանակում ձեռք է բերել մեծ փորձառություն ինչպես ուսումնական կազմակերպչական, այնպես էլ գիտական ոլորտներում:

Ֆակուլտետում գիտահետազոտական գործունեությունը նոր քափ ստացավ պրոֆեսոր Սեդա Գասպարյանի (ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ՝ 2014 թ.-ից) ակտիվ ջանքերով, որը օտար լեզուների բնագավառում գիտությունների առաջին դոկտորն էր Հայաստանում: Համալսարանում սկիզբ առավ բարձրորակ կադրերի պատրաստման գործընթացը, ընդ որում ոչ միայն համալսարանի, այլև հանրապետության տարբեր բուհերի համար: Այսօր արդեն կայացած է անգլիագիտական հետազոտությունների հայկական դպրոցը, որի շրջանակներում ներդրվում ու իրենց զարգացումն են ապրում համաշխարհային լեզվաբանական և հարակից գիտությունների ամե-

նաժամանակակից մի շարք ուղղություններ. ճանաչողական-գործաբանական լեզվաբանություն, տեքստաբանություն և մեկնողական արվեստ, խոսքի գործառական արժևորում և թարգմանաբանություն, լեզվամշակութաբանություն և հասկացութաբանություն, մշակութային մարդաբանություն, բանագիտության լեզվաբանական իմաստավորում և այլն:

Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետն իր որակյալ մասնագետների ակտիվ գործունեության շնորհիվ այսօր հանրապետությունում զբաղեցնելով առաջատար դիրքեր, բարձր համարում ունի նաև միջազգային ասպարեզում:

Ֆակուլտետի գիտահետազոտական աշխատանքի արդյունքները տպագրվել են բազմաթիվ մենագրություններում ու գիտական հոդվածներում, հրատարակվել գիտական հանդեսներում ու ժողովածուներում: Օտար լեզուների և գրականության մասնագիտական ոլորտներում առանձնակի ուշադրության են արժանի պրոֆեսորներ Սեդա Գասպարյանի “Лингвопоэтика образного сравнения” (1991, 2008), “Фигура сравнения в функциональном освещении” (2000, 2013), Ելենա Երզնկյանի “Дейксис слова: семантика и прагматика” (2013), Յուրի Գաբրիելյանի «Հայերենը և նախահնդեվրոպական լեզուն» (2001), Սոնա Սեֆերյանի «Շեքսպիրը հայ իրականության մեջ» (2002), Հենրիկ Էդոյանի «Եղիշե Չարենցի պոետիկան» (1986, 2011), “A Religious Philosophical Critical Approach to Western Literature (A Way to Equilibrium)” (2013), Շուշանիկ Պարոնյանի «Լեզվաճանաչողություն և դիսկուրս» (2011), Ալվարդ Ջիվանյանի “Rhetorical Transformations in Fairy Tales” (2007), Մարգարիտա

Ապրեսյանի «Մասնագիտական (իրավաբանական) լեզվի և գործառական ոճի հարաբերակցությունը» (2010), Նարինե Հարությունյանի “Лингвокультурологический анализ трансцендентных сверхконцептов” (2010), Կարո Կարապետյանի “Idiomatic English: Similes” (2011), դոցենտներ Արա Առաքելյանի «Հեսսեն և Արևելքը» (2009), Սամվել Արահամյանի “Речь в контексте межкультурной коммуникации” (2013), Զավեն Հարությունյանի «Հոլովական իմաստները լեզու-խոսք փոխհարաբերությունների համատեքստում» (2008), Հասմիկ Բադրասարյանի «Թարգմանաբանության ներածություն» (2007), Ամալյա Մուրադյանի «Ստորոգական կառույցների ապաստորոգացումը ֆրանսերենում և հայերենում» (2003) և այլ աշխատություններ:

Գիտական կարևոր ձեռքբերում է Սեդա Գասպարյանի “The Armenian Genocide: A Linguocognitive Perspective” (2014) աշխատությունը, որը նոր խոսք է ինչպես ցեղասպանագիտության, այնպես էլ հայ լեզվաբանության ոլորտներում: Գրքում Հայոց ցեղասպանության խնդրի քննությունը՝ լեզվաճանաչողական մոտեցմամբ, նոր հեռանկարներ է բացում հակահայկական քարոզչության դեմ պայքարելու համար:

Ֆակուլտետում ակտիվ գիտահետազոտական գործունեություն են ծավալում նաև պրոֆեսորներ Աստղիկ Չուբարյանը, Տիգրան Սիմյանը, դոցենտներ Աննա Կնյազյանը, Գայանե Մուրադյանը, Նաիրա Գասպարյանը, Ռուզաննա Առաքելյանը, Ռոզա Մելիքսեթյանը, Սուսաննա Առաքելյանը, Ռուզան Կարապետյանը, Ռուզան Ղազարյանը և շատ ուրիշներ:

Գիտական աշխատանքի խթանման և միջազգային կապերի ընդլայնման գործում որոշիչ դեր է կատարում 2003 թ. հիմնադրված Անգլերենի ուսումնասիրության հայկական ասոցիացիան (Եվրոպական ֆեդերացիայի անդամ), որի նախագահն է Սեդա Գասպարյանը: Կազմակերպության անդամների գերակշիռ մասը ֆակուլտետի մասնագետներն են: ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի և ասոցիացիայի համատեղ ջանքերով հրատարակվող “Armenian Folia Anglistika” միջազգային գրախոսվող գիտական պարբերականը աշխարհի շուրջ 50 երկրների մասնագետների հաղորդակից է դարձնում հայ լեզվաբանական մտքի անգլիագիտական և հայագիտական ձեռքբերումներին:

Ակտիվ աշխատանքներ են տարվում եվրոպական չափանիշներին համապատասխանող բուհական դասագրքերի, ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկների ստեղծման ուղղությամբ:

Այսօր ֆակուլտետում գործում է 9 ամբիոն. անգլիական բանասիրության (վարիչ՝ բան. գիտ. դոկտոր, պրոֆ. Սեդա Գասպարյան), անգլերենի թիվ 1 (վարիչ՝ բան. գիտ. թեկն., պրոֆ. Մարգարիտա Ապրեայան), անգլերենի թիվ 2 (վարիչ՝ բան. գիտ. դոկտոր, պրոֆ. Ելենա Երզնկյան), միջմշակութային հաղորդակցության անգլերենի (վարիչ՝ բան. գիտ. դոկտոր, պրոֆ. Շուշանիկ Պարոնյան), թարգմանության տեսության և պրակտիկայի (վարիչ՝ բան. գիտ. թեկն., դոց. Ռուզան Ղազարյան), ռոմանական բանասիրության (վարիչ՝ բան. գիտ. թեկն., դոց. Հասմիկ Բադդասարյան), գերմանական բանասիրության (վարիչ՝ բան. գիտ. դոկտոր, պրոֆ. Յուրի Գաբրիելյան), ֆրանսիական բանասիրության (վարիչ՝ մանկ. գիտ. թեկն.,

դոց. Զավեն Հարությունյան), արտասահմանյան գրականության (վարիչ՝ բան. գիտ. դոկտոր, պրոֆ. Արա Առաքելյան):

2015 թվականից ֆակուլտետում գործում է նաև Անգլալեզու հակահայկական քարոզչական դիսկուրսի հետազոտությունների լաբորատորիան (ղեկավար՝ բան. գիտ. դոկտոր, պրոֆ. Սեդա Գասպարյան), որի շրջանակներում հետազոտական խմբի ջանքերով լույս է տեսել “Raphael Lemkin’s Draft Convention on Genocide and the 1948 UN Convention” (A Comparative Discourse Study)» (Yerevan, 2016) աշխատությունը, որը լուրջ ներդրում է ցեղասպանագիտության մեջ:

Ֆակուլտետում դասավանդում են 11 պրոֆեսոր, 61 դոցենտ, 46 ասիստենտ, 134 դասախոս:

Հայ լրագրագիտության սկուլնքները սկսվում են XIX դարի երկրորդ կեսից, երբ Մխիթարյանները (Գ. Զարքիանալյան, Գ. Գալեմքարյան) կազմեցին հայ մամուլի առաջին մատենագիտությունը: Հատկապես XIX դարի վերջին և XX դարի սկզբին, երբ բուռն ծաղկում ապրեց արևելահայ և արևմտահայ մամուլը, ծնվեցին նոր հետազոտություններ՝ մատենագիտական, ժամանակագրական և լրագրագիտական ուղղություններով: Առանձնակի տեղ էին զբաղում հայ մամուլի անվանի խմբագիրների և առաջատար աշխատակիցների՝ Հարություն Շմավոնյանի, Ստեփանոս Նազարյանի, Միքայել Նալբանդյանի, Գրիգոր Արծրունու, Աբգար Հովհաննիսյանի, Հարություն Սըվաճյանի, Հակոբ Պարոնյանի և այլոց մասին գրված ուսումնասիրությունները:

Հայ լրագրագիտության երևելիներ Լեոյի, Գարեգին Լևոնյա-

նի, հետագայում՝ Արտաշես Կարինյանի, Աշոտ Հովհաննիսյանի ուսումնասիրությունները սկզբնավորեցին հայ մամուլի պատմությունը գիտականորեն քննելու և արժևորելու հետազոտական մի ուղղություն, որը հետագայում շարունակեցին պրոֆ. Խիկար Բարսեղյանը, բան. գիտ. թեկն. Մարգո Մխիթարյանը, պրոֆեսորներ Հարություն Ֆելեքյանը, Սմբատ Ավագյանը, բան. գիտ. դոկտոր Լիդա Գևորգյանը, պրոֆեսորներ Գառնիկ Անանյանը (ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ՝ 2006 թ.-ից), Ալբերտ Խառատյանը (ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ՝ 2010 թ.-ից) և ուրիշներ:

Դեռևս 1949 թ. բանասիրական ֆակուլտետում ստեղծված ժուռնալիստիկայի բաժինը գործել է մինչև 1957 թ. և վերաբացվել՝ 1962 թ.: Բաժինը սպասարկող ժուռնալիստիկայի ամբիոնում իրենց ուսումնագիտական կարողություններն ու հմտություններն են ներդրել պրոֆեսորներ Հովհաննես Մամիկոնյանը, Գևորգ Հայրյանը, Հարություն Ֆելեքյանը, Գառնիկ Անանյանը:

Լրագրագիտությունը գիտական նոր հիմքերի վրա դրվեց հատկապես Հայաստանի նորօրյա պետականության օրոք, մասնավորապես, երբ 1999 թ. ստեղծվեց ժուռնալիստիկայի ֆակուլտետը, որի հիմնադիր ղեկանը, մինչև իր կյանքի վերջը Գառնիկ Անանյանն էր: 2008 թվականից ֆակուլտետը ղեկավարում է բան. գիտ. թեկն., դոց. Նադաշ Մարտիրոսյանը:

Ֆակուլտետում կատարվող գիտական հետազոտությունները հրատարակվում են մենագրությունների և ուսումնամեթոդական ձեռնարկների տեսքով: Հիշատակման են արժանի Գառնիկ Անանյանի «Ավետիք Արասխանյան (կյանքը և գրական - հրապարակախոսա-

կան գործունեությունը)» (1987), Սմբատ Ավագյանի «Ղարաբաղի նախասովետական շրջանի մամուլի պատմությունից» (1969, 1989), Ալբերտ Խառատյանի «Արևմտահայ մամուլը և գրաքննությունը օսմանյան Թուրքիայում» (1989), Լենդրուշ Ալոյանի «Մշակը» 1893 – 1913 թթ.» (2013), Դավիթ Պետրոսյանի «Գրական բանավեճերը 20-րդ դարասկզբի հայ մամուլում» (2007), «Պատում, մեղիատեքստ, հակառակ հեռանկար» (2017) և այլ ուսումնասիրություններ:

Ֆակուլտետում կատարվող ուսումնասիրությունները ոչ միայն նորովի են իմաստավորում հայ մամուլի պատմությունը, այլև լրագրագիտական արդի չափանիշներով քննում են ժուռնալիստիկայի զարգացման ժամանակակից միտումները, նոր և այլընտրանքային մեղիայի բերած փոխակերպումները: 1999 թվականից լույս է տեսնում «Ժուռնալիստիկա և հաղորդակցություն (տեսության և պատմության հարցեր)» գիտական հոդվածների ժողովածուն:

Այսօր ֆակուլտետում գործում են նոր մեղիայի և հաղորդակցության (վարիչ՝ բան. գիտ. դոկտոր, պրոֆ. Դավիթ Պետրոսյան), տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների (վարիչ՝ բան. գիտ. դոկտոր, պրոֆ. Մուշեղ Հովսեփյան) ամբիոնները: Ուսանողների գործնական հմտությունները զարգացնելու գործում կարևոր է նաև Գ. Անանյանի անվան մուլտիմեդիա լաբորատորիան, որտեղ գործում են տեսաձայնագրման և մոնտաժման ժամանակակից սարքավորումներով համալրված ռադիո- և հեռուստաստուդիաներ, համակարգչային սրահ՝ ինտերնետ կապի առկայությամբ, հարուստ գրականություն ունեցող մասնագիտական գրադարան, ինչպես նաև «Ժուռնալիստ» ուսումնական թերթի խմբագրությունը:

Ֆակուլտետում դասավանդում են 3 պրոֆեսոր, 14 դոցենտ, 8 ասիստենտ և 4 դասախոս:

ԵՊՀ Ժուռնալիստիկայի ֆակուլտետը հանրապետության լրագրագիտության կարևորագույն կենտրոնն է:

Հազարամյակների խորքից եկող հայ փիլիսոփայական և հոգեբանական մտքի լավագույն ավանդույթներն այսօր իրենց շարունակությունն ունեն ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետում: 1932 թ. համալսարանի պատմության ֆակուլտետում ստեղծված փիլիսոփայության ամբիոնը գործել է մինչև 1970 թ.՝ այդ ընթացքում ղեկավարվելով պրոֆեսորներ Հայկ Գյուլիքսիյանի, Հայկազ Ասլանյանի, ապա՝ Հենրի Գաբրիելյանի կողմից: 1970 թ. այն բաժանվել է 3 ամբիոնների՝ փիլիսոփայության պատմության, դիալեկտիկական մատերիալիզմի և տրամաբանության, պատմական մատերիալիզմի և բարոյագիտության: Պատմության ֆակուլտետում 1964 թ. բացված փիլիսոփայության բաժնի հիմքի վրա 1982 թ. ստեղծվել է փիլիսոփայության և սոցիոլոգիայի ֆակուլտետը, իսկ 1991 թ. հոգեբանություն մասնագիտության գծով կազմակերպված ընդունելությամբ սկզբնավորվել է հոգեբանության բաժինը, ուստի ֆակուլտետը վերանվանվել է փիլիսոփայության, սոցիոլոգիայի և հոգեբանության: 2004 թ. սոցիոլոգիայի ֆակուլտետի ստեղծումից հետո ֆակուլտետը կոչվում է փիլիսոփայության և հոգեբանության:

Ֆակուլտետի աշխատանքները տարբեր տարիների ղեկավարել են պրոֆեսորներ Մեհանդակ Մելիքյանը, Էդուարդ Մարգարովը, Հրաչիկ Միրզոյանը, իսկ 2009 թվականից ղեկավարում է դոցենտ

Ալեքսան Բաղդասարյանը:

Սկզբում փիլիսոփայության բաժնում, իսկ այնուհետև ֆակուլտետում դասախոսել են համալսարանի և հանրապետության փիլիսոփայական տարբեր ոլորտների ճանաչված մասնագետներ պրոֆեսորներ Հենրի Գաբրիելյանը, Գևորգ Բրուտյանը (ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս 1982 թ.-ից), Էդուարդ Աթայանը, Համլետ Գևորգյանը (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս՝ 1996 թ.-ից), Մեհենդակ Մելիքյանը, Գուրգեն Մխիթարյանը, Լև Աբրահամյանը, Սուրեն Ավետիսյանը, Ստեփան Թովմասյանը, Հրաչիկ Շաքարյանը, Արամայիս Հովսեփյանը, Մամիկոն Ասատրյանը, Գևորգ Խրլոպյանը, Էդուարդ Մարգարովը, Լյուդմիլա Հարությունյանը, Հրաչիկ Միրզոյանը, Էդվարդ Հարությունյանը, Սեյրան Ջաքարյանը, Ալեքսանդր Մանասյանը (ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ՝ 2006 թ.-ից) և ուրիշներ: Մեծ է համալսարանի փիլիսոփամասնագետների ավանդը հայ փիլիսոփայության և տրամաբանության պատմության, ընդհանուր փիլիսոփայական, իմացաբանական, տրամաբանական, նշանագիտական, մշակութաբանական, գեղագիտական և մեթոդաբանական հարցերի մշակման ասպարեզում: ԵՊՀ-ի փիլիսոփաները վերջին տարիներին զգալի հաջողության են հասել Հայաստանում սոցիոմշակութային փոխակերպումների, ազգային ինքնության, նույնականության և հոգեկերտվածքի, գիտության փիլիսոփայության մեթոդաբանության արդի հիմնահարցերի ուսումնասիրության բնագավառում: Առանձնապես կարևոր են Համլետ Գևորգյանի «Փիլիսոփայություն. պատմություն. մշակույթ» (2005, ռուս.՝ 2010), Հրաչիկ Միրզոյանի «Հովհաննես Մրքուց Ջուղայեցի» (2001), «Նարեկացիագիտական հետազոտություններ

(հողվածների ժողովածու)» (2010), Էդվարդ Հարությունյանի «Անցումային հասարակությունը որպես տրանսֆորմացիոն գործունեության համակարգ» (2000), «Ազգային ինքնություն և ազգային մշակույթ» (2004), Սեյրան Չաքարյանի «Մարդու հիմնահարցը 13 – 15-րդ դարերի հայ փիլիսոփայության մեջ» (1999), «Հայկական վերածննդի հարցը (մեթոդաբանական վերլուծություն)» (2006), Ալեքսանդր Մանասյանի “Карабахский конфликт: ресурсы правового подхода” (1997), «Դարաբաղյան ազատամարտը հայոց քաղաքական գիտակցության մեջ» (2003) և այլ աշխատություններ:

Համալսարանի գոյության առաջին տարիներին դասախոսական գործունեություն են ծավալել ճանաչված հոգեբաններ Սիրական Տիգրանյանը, հանրապետությունում փորձաբանական հոգեբանության սկզբնավորող պրոֆ. Գուրգեն Էդիլյանը և ուրիշներ: Պատմական հանգամանքների բերումով այդ ավանդույթները հետագա տարիներին, ցավոք, զարգացում չստացան և միայն 1976 թ. ստեղծվեց հոգեբանության ամբիոն, որի վարիչ դարձավ հոգ. գիտ. դոկտոր, պրոֆ. Հովսեփ Թութունջյանը: Համալսարանում հոգեբանության դասավանդման գործում մեծ է պրոֆեսորներ Մկրտիչ Մազմանյանի, Էլլա Գրինի և այլոց ավանդը: 1979 թ. հոգեբանության ամբիոնին կից ստեղծվել է ինժեներական հոգեբանության լաբորատորիա (վարիչ՝ հոգ. գիտ. թեկն., դոց. Ռուբեն Աղուզումցյան), որը սկսեց համագործակցել ԽՍՀՄ գիտահետազոտական մի շարք կենտրոնների հետ:

Այսօր ֆակուլտետում գործում է 6 ամբիոն՝ տեսական փիլիսոփայության, տրամաբանության և հոետորիկայի (վարիչ՝ փիլ. գիտ. դոկտոր, պրոֆ. Ալեքսանդր Մանասյան), սոցիալական փիլի-

սոփայության և բարոյագիտության (վարիչ՝ փիլ. գիտ. դոկտոր, պրոֆ. Էդվարդ Հարությունյան), փիլիսոփայության պատմության (վարիչ՝ փիլ. գիտ. դոկտոր, պրոֆ. Սեյրան Չաքարյան), ընդհանուր հոգեբանության (վարիչ՝ հոգեբ. գիտ. դոկտոր, պրոֆ. Հրանտ Ավանեսյան), սոցիալական և կլինիկական հոգեբանության (վարիչ՝ հոգեբ. գիտ. դոկտոր, պրոֆ. Գայանե Շահվերդյան), անձի հոգեբանության (վարիչ՝ հոգեբ. գիտ. թեկն., դոց. Նարինե Խաչատրյան), 3 գիտահետազոտական լաբորատորիա՝ փորձարարական հոգեբանության (գիտ. ղեկավար՝ պրոֆ. Հրանտ Ավանեսյան), անձի և մասնագիտական գործունեության հոգեբանության (գիտ. ղեկավար՝ պրոֆ. Ռուբեն Աղուզումցյան), անձի և սոցիալական միջավայրի (գիտ. ղեկավար՝ դոց. Նարինե Խաչատրյան) և կիրառական հոգեբանության կենտրոն (տնօրեն՝ Դավիթ Գևորգյան):

Հոգեբանության երեք ամբիոններում և լաբորատորիաներում իրականացվում են ժամանակակից հոգեբանության հիմնախնդիրներին վերաբերող գիտահետազոտական աշխատանքներ: Ուշագրավ են պրոֆ. Գայանե Շահվերդյանի “Подступы к психотехнике свободы” (2012), “Основы психотерапии” (2007) աշխատությունները: Զգալի հաջողության են հասել սոցիալական ներգործության մեխանիզմների, հոգեկանի ախտաբանական դրսևորումների, անձի տարածաժամանակային ընկալման առանձնահատկությունների, արտակարգ իրավիճակներում գործող անձնակազմերի հոգեբանական պատրաստության տեխնոլոգիաների, քաղաքական և տնտեսական վարքի, առողջությանն ուղղված վարքի, սուբյեկտիվ բարե-

կեցության վերաբերյալ համոզմունքների ու դիրքորոշումների ուսումնասիրության ուղղությամբ:

Ֆակուլտետում դասավանդում են 9 պրոֆեսոր, 32 դոցենտ, 11 ասիստենտ և 9 դասախոս:

Երևանի պետական համալսարանում 1980 թվականից իր գործունեությունն է սկսել կիրառական սոցիոլոգիական հետազոտությունների լաբորատորիան, որի հիմնադիրն է փիլ. գիտ. դոկտոր, պրոֆ. Լյուդմիլա Հարությունյանը: 1982 թ. ստեղծված փիլիսոփայության և սոցիոլոգիայի ֆակուլտետի սոցիոլոգիայի բաժինը 2004 թ. սեպտեմբերից գործում է որպես սոցիոլոգիայի ֆակուլտետ: Առաջին դեկան է ընտրվել Լյուդմիլա Հարությունյանը: 2008 թվականից ֆակուլտետը ղեկավարում է փիլ. գիտ. դոկտոր, պրոֆ. Արթուր Մկրտիչյանը:

Ֆակուլտետում գիտական աշխատանքներ են իրականացվում հետևյալ ուղղություններով. ազգային ինքնություն և հայ հասարակության կառուցակցման հիմնախնդիրների հետազոտում, «Ոչ պատերազմ, ոչ խաղաղություն, հասարակություն» հայեցակարգի մշակում, տարածաշրջանային կոնֆլիկտների, քաղաքական գործընթացների ուսումնասիրություններ, կրթության որակի գնահատում, միգրացիայի, հասարակայնության հետ կապերի ուսումնասիրություններ, կիրառական սոցիոլոգիական հետազոտություններ, հայ սոցիոլոգիայի պատմության, սոցիալական համակարգերի տեսության, ինչպես նաև ՀՀ-ում սոցիալական աշխատանքի ինստիտուցիոնալացման գործընթացի ուսումնասիրություններ:

Իրենց գիտական աշխատանքներով հայրենական սոցիոլոգիայի կայացմանը մեծապես նպաստել են պրոֆեսորներ Լյուդմիլա Հարությունյանը, Արթուր Մկրտիչյանը, Արմեն Սահակյանը, Արթուր Աթանեսյանը, Մարիա Զասլավսկայան:

Որպես սոցիոլոգիայի ֆակուլտետի գիտական գործունեության միջազգային ճանաչման վկայություն կարելի է նշել 2009 թ. ֆակուլտետի և Առաջատար ուսումնասիրությունների շվեդական կոլեգիումի համատեղ ուժերով համալսարանում կազմակերպված Սոցիոլոգիայի միջազգային ինստիտուտի 39-րդ համաշխարհային կոնգրեսը «Սոցիոլոգիան խաչմերուկներում» թեմայով, որին իրենց մասնակցությունն էին բերել 24 երկրների 379 ներկայացուցիչներ:

Այսօր ֆակուլտետում գործում է 3 ամբիոն. կիրառական սոցիոլոգիայի (վարիչ՝ քաղ. գիտ. դոկտոր, պրոֆ. Արթուր Աթանեսյան), սոցիոլոգիայի տեսության և պատմության (վարիչ՝ սոց. գիտ. թեկնածու, դոց. Հարություն Վերմիշյան), սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների (վարիչ՝ փիլ. գիտ. թեկն., դոց. Արտակ Խաչատրյան) և 2 լաբորատորիա. կիրառական սոցիոլոգիական հետազոտությունների Գ-Հ լաբորատորիա (գիտ. ղեկավար՝ պրոֆ. Լյուդմիլա Հարությունյան), հեռուստուցման լաբորատորիա (վարիչ՝ սոց. գիտ. թեկն. Արտաշես Խորշուդյան):

Ֆակուլտետում դասավանդում են 6 պրոֆեսոր, 14 դոցենտ, 10 ասիստենտ և 14 դասախոս:

Հայ իրավագիտության ստեղծման պատմական ակունքները սկսվում են վաղնջական ժամանակներից: Իրավագիտական մտքի բարձր մակարդակի վկայությունն են Մխիթար Գոշի «Գիրք դատաստանի» (1184) և Սմբատ Սպարապետի «Դատաստանագիրք» (1265) աշխատությունները:

Հայաստանի Հանրապետությունում իրավագիտության զարգացումը կապվում է ԵՊՀ-ում «իրավագիտություն» մասնագիտության բացման, ապա՝ 1933 – 1934 ուստարում իրավաբանական ֆակուլտետի հիմնադրման հետ, թեև իրավաբանություն առարկան համալսարանում դասավանդվել է 1920 թ.՝ հասարակագիտական, 1921 թ.՝ խորհրդային շինարարության և 1924 թ.՝ իրավատնտեսագիտական ֆակուլտետներում:

Իրավաբանական (հետագայում՝ իրավագիտության) ֆակուլտետի առաջին ղեկանը Կոստանդնուպոլսի համալսարանի իրավաբանական ֆակուլտետի շրջանավարտ, Երևանի համալսարանում արդեն ճանաչում ձեռք բերած դասախոս, տնտեսական իրավունքի ամբիոնի վարիչ, պրոֆ. Հրանտ Գալիկյանն էր: Հետագայում ֆակուլտետը ղեկավարել են Հովհաննես Մեսրոպյանը, Արշակ Թովմասյանը, Աղասի Եսայանը, Արտավազդ Գևորգյանը, Սուրեն Օսիպյանը, Վարդան Մուսախանյանը, Շահեն Պետրոսյանը, Ավագ Լալայանը, Ռաֆիկ Պետրոսյանը: 1996 թվականից ֆակուլտետի ղեկանը պրոֆ. Գագիկ Ղազինյանն է (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս՝ 2014 թ.-ից), որը հանրապետության առաջին ակադեմիկոս իրավագետն է:

Ֆակուլտետի դասախոսներ Զարմայր Աշրաֆյանը, Հրանտ

Գալիկյանը, Արամ Եսայանը, Ժիրայր Միրզախանյանը, Գրիգոր Չուբարյանը, Խաչիկ Սամուելյանը գիտամանկավարժական գործունեությանը զուգահեռ ակտիվորեն մասնակցել են ՀԽՍՀ առաջին օրենքների նախագծերի մշակմանն ու համակարգմանը:

Ֆակուլտետի երկրորդ սերնդի գիտնականները իրականացրել են հայ իրավունքի պատմությանը վերաբերող կարևոր մի շարք հետազոտություններ, որոնց արդյունքները հրատարակվել են հետևյալ աշխատություններում. Արամ Եսայան, «Մուլքադարային իրավունքը Հայաստանում» (ռուս., 1948), Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքի» ռուսերեն թարգմանությունը (Ալեքսեյ Սուքիասյանի աշխատասիրությամբ, 1971), Արշակ Թովմասյան, «Հին և միջնադարյան հայ քրեական իրավունք» (հ. 1-2, 1962 – 1977), Ալեքսեյ Սուքիասյան, «Общественно-политический строй и право Армении в эпоху раннего феодализма (III – IX вв. н.э.)» (1963), «Մխիթար Գոշը և «Հայոց դատաստանագիրքը»» (1965), «Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն» (1978), Սմբատ Հովհաննիսյան, «Ամուսնաընտանեկան իրավունքը վաղ ավատական Հայաստանում. IV – IX դդ.» (1976), Աղասի Եսայան, «Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը» (1965), «Հայաստանի միջազգային-իրավական դրությունը 1920 – 1922 թթ.» (1967) և այլն:

ԵՊՀ մասնագետները իրավագիտության տարբեր բնագավառներում կարևոր հիմնախնդիրների ուսումնասիրության գործում հասել են զգալի հաջողությունների: Նշանակալի են պրոֆեսորներ Վլադիմիր Նազարյանի «Հայաստանի Հանրապետության սահմանադրության կոնցեպցիան» (1992), Գագիկ Հարությունյանի «Սահ-

մանադրական մշակույթ» (2005), Նորիկ Այվազյանի «Ազատ ընտրություններ և հանրաքվե կազմակերպելու հիմնախնդիրները ՀՀ-ում» (2010), Հենրիկ Խաչատրյանի «Հայաստանի Հանրապետության առաջին սահմանադրությունը» (1997), ինչպես նաև Գագիկ Հարությունյանի և Արթուր Վաղարշյանի խմբագրությամբ՝ հայ իրականության մեջ առաջին անգամ ստեղծված «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ» (2010) աշխատությունները: Վերջինիս պատրաստման աշխատանքներին մասնակցել են ֆակուլտետի շուրջ 30 աշխատակիցներ:

Ուշագրավ ձեռքբերումներ են պրոֆեսորներ Արա Գաբուզյանի «Հանցավորության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում՝ անցումային շրջանում» (2007), Հարություն Խաչիկյանի “Лишение свободы: криминологический и уголовно-исполнительный аспект” (2008) աշխատությունները:

Առանձնապես արժեքավոր են ակադեմիկոս Գագիկ Ղազինյանի «Քրեական դատավարության պատմական և արդի հիմնախնդիրները Հայաստանում» (2001), պրոֆեսորներ Սամվել Դիլբանդյանի «Անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովումը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության մինչդատական վարույթում» (2011), Գեղամ Ղարախանյանի «Հայաստանի ընտանեկան իրավունքի զարգացման պատմությունը 20-րդ դարում» (2004), Տարիել Բարսեղյանի «Գույքային պատասխանատվության ինստիտուտի էվոլյուցիան և արդիական հիմնախնդիրները» (2006), Արմեն Հայկյանցի “История развития частного права в Армении” (2006), Վահրամ Ավետիսյանի «Կորպո-

րատիվ իրավահարաբերությունների արդի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում» (2013), Ներոն Ապիյանի «Պետության և իրավունքի տեսության հիմնահարցեր» (2001), Վլադիմիր Հովհաննիսյանի «Քրեական արդարադատության սկզբունքները միջազգային իրավունքում. էվոլյուցիայի և իմպլեմենտացիայի առանձնահատկությունները» (2011), Արթուր Վաղարշյանի՝ Հայաստանի առաջին Հանրապետության պետական համակարգին նվիրված մենագրական երեք հետազոտությունները և այլն:

Հայաստանի երրորդ հանրապետության ստեղծման օրից ի վեր ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը ակտիվ մասնակցություն է ունենում ՀՀ օրենսդրական դաշտի ձևավորման գործում, օրենքների նախագծերի պատրաստման և դրանց վերաբերյալ պաշտոնական եզրակացություններ տալու հարցում՝ որպես ՀՀ Ազգային Ժողովի պաշտոնական փորձագետ կազմակերպություն:

Ֆակուլտետի մասնագետներն իրենց գործունեությունն իրականացնում են 7 ամբիոններում՝ պետության և իրավունքի տեսության ու պատմության (վարիչ՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆ. Արթուր Վաղարշյան), սահմանադրական իրավունքի (վարիչ՝ իրավ. գիտ. թեկնածու, դոց. Վարդան Այվազյան), քաղաքացիական իրավունքի (վարիչ՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆ. Վահրամ Ավետիսյան), քաղաքացիական դատավարության (վարիչ՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆ. Վահե Հովհաննիսյան), քրեական իրավունքի (վարիչ՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆ. Արա Գաբուզյան), քրեական դատավարության և կրիմինալիստիկայի (վարիչ՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆ. Սամվել Դիլբանդյան), եվրոպական և միջազգային իրավունքի

(վարիչ՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆ. Վահե Ստեփանյան)՝ հրատարակելով բազմաթիվ մենագրություններ, բուհական դասագրքեր, ձեռնարկներ ու գիտական հոդվածներ: Ֆակուլտետում 1997-ից հրատարակվում է նաև «Պետություն և իրավունք» գիտական հանդեսը, ինչպես նաև պրոֆեսորադասախոսական կազմի և ասպիրանտների ու հայցորդների՝ արդեն ավանդական դարձած, տարեկան գիտաժողովների նյութերի ժողովածուները:

Ֆակուլտետում գործում է էկոլոգիական իրավունքի գիտատնտնական կենտրոնը (ղեկավար՝ իրավ. գիտ. թեկն., պրոֆ. Աիդա Իսկոյան), որտեղ ԵՊՀ ուսանողները ուսումնասիրում են մարդու էկոլոգիական իրավունքների պաշտպանության հարցեր, ինչպես նաև բնական միջավայրի պահպանության ոլորտում ազգային և միջազգային օրենսդրական ու նորմատիվ իրավական ակտերը: Ֆակուլտետն ունի նաև իրավաբական կլինիկա և համակարգչային կենտրոն-գրադարան:

Ֆակուլտետում դասավանդում են 17 պրոֆեսոր, 38 դոցենտ, 44 ասիստենտ և 36 դասախոս:

Այսօր ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետը Հայաստանի Հանրապետության իրավագիտության հիմնական կենտրոնն է:

Երևանի պետական համալսարանում 1945 թ. բացվել է միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, որի առաջին ղեկանը եղել է Բաբկեն Ամիրխանյանը, ապա՝ Հայկազ Ժամկոչյանը: Այն գործել է մինչև 1953 – 1954 ուստարին: 1990 թ., կարևորելով միջազգայնագետ կադրերի անհրաժեշտությունը նորանկախ Հայաստանի համար, ԵՊՀ ղեկավարությունը արևելագիտության ֆակուլտետում հիմնեց միջազգային հարաբերությունների բաժին, որը 1991 – 1992 ուստարվանից ընդգրկվեց պատմության ֆակուլտետի կազմում: 1993 թ. կազմավորվեց նաև միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնը, որի հիմքի վրա 1998 թ. սեպտեմբերի 16-ին ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ սկիզբ դրվեց միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գործունեությանը: Առաջին ղեկան նշանակվեց պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Էդիկ Ջոհրաբյանը: 2008 թվականից ֆակուլտետը ղեկավարում է պատ. գիտ. դոկտոր, պրոֆ. Գեղամ Պետրոսյանը:

Ֆակուլտետում գործում է 5 ամբիոն՝ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության (վարիչ՝ պատմ. գիտ. թեկն., դոց. Վահրամ Պետրոսյան), դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման (վարիչ՝ պատմ. գիտ. թեկն., դոց. Նուբար Չալոմյան), քաղաքական գիտության պատմության և տեսության (վարիչ՝ քաղ. գիտ. դոկտոր, պրոֆ. Աշոտ Ենգոյան), քաղաքական ինստիտուտների և գործընթացների (վարիչ՝ քաղ. գիտ. դոկտոր, պրոֆ. Գարիկ Բեռյան), հանրային կառավարման (վարիչ՝ պատմ. գիտ. թեկն., դոց. Վահագն Ազլյան), նաև չինարենի և չինական մշակույթի կենտրոն, որտեղ կատարվում են գիտա-

կան հետազոտություններ՝ նվիրված միջազգային հարաբերությունների և ՀՀ արտաքին քաղաքականության կարևոր հիմնախնդիրների ուսումնասիրմանը: Ըստ այդմ հրատարակվել են արժեքավոր մի շարք մենագրություններ ու գիտական հոդվածներ: Ուշագրավ են պրոֆեսորներ Էդիկ Զոհրաբյանի «Նախիջևանյան հիմնահարցը և Հայաստանի «դաշնակիցները» (2002), “Шарур-Нахиджеван в 1918 — 1919 гг. (история геноцида нахиджеванских армян)” (2012), Գեղամ Պետրոսյանի «Հայաստանի Հանրապետության և Ուկրաինայի դիվանագիտական հարաբերությունների պատմությունից» (2002), “Отношения Республики Армения с Россией (1918 — 1920 гг.” (2012), Վահան Բայրուրյանի «Օսմանյան կայսրության պատմություն» (2011), «Հայ-իրանական հարաբերությունները 1991 — 1998 թթ.» (2012) և այլ մենագրություններ:

Ակտիվ ու հետաքրքիր է անցնում ֆակուլտետի առօրյան. հանդիպումներ ՀՀ-ում հավատարմագրված օտարերկրյա դեսպանների, արտերկրից ժամանած միջազգայնագետների հետ, մասնագիտական քննարկումներ ՀՀ արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչների հետ: Իսկ համագործակցային սերտ կապերը Ռուսաստանի Դաշնության, Լեհաստանի և Բելառուսի համալսարանների հետ դրված են ամուր հիմքերի վրա:

Ֆակուլտետում դասավանդում են 11 պրոֆեսոր, 30 դոցենտ, 27 ասիստենտ և 17 դասախոս:

Համալսարանում 1995 թ. հիմնադրված աստվածաբանության ֆակուլտետի (առաջին դեկան՝ պրոֆ. Շահե արքեպիսկոպոս Աճեմյան) երեք ամբիոններում՝ հայ եկեղեցու պատմության և եկեղեցաբանության (վարիչ՝ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆ. Լևոն Սարգսյան), կրոնի պատմության և տեսության (վարիչ՝ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆ. Սամվել Մկրտչյան), աստվածաբանության (վարիչ՝ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆ. Մանյա Շիրինյան) արդի պահանջներին համահունչ, ուսումնական գործընթացից զատ, իրականացվում են նաև ժամանակակից աշխարհի կրոնական համակարգի, միջնադարյան հայ աստվածաբանության, տոնացույցի, տոմարի, հայ եկեղեցու պատմության հիմնախնդիրներին վերաբերող գիտահետազոտական աշխատանքներ: Ֆակուլտետում գործում է նաև միջմշակութային կրոնագիտության հետազոտությունների կենտրոնը:

Ուշագրավ են պրոֆեսորներ Շահե արքեպիսկոպոս Աճեմյանի «Հայերեն Աստվածաշունչ» (2006), Տեր Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանի «Կոմիտաս» (2007), «Աստվածաշունչը և հայ բանավոր ավանդույթը» (2012), Լևոն Սարգսյանի «Հայաստանի նվիրատվական արձանագրություններ (IX — XIV դարեր)» (2007), «Հայոց տոնացույցի ծագումը և զարգացումը» (2010), Արծրուն Սահակյանի «Ժողովրդական քրիստոնեությունը միջնադարյան Հայաստանում» (2014), Գրիգոր Գրիգորյանի «Դիվան հայ վիմագրության ուրվագծերի» (1999), Ռաֆիկ Վարդանյանի ««Պատճեն տոմարի հայոց»-ի խմբագրությունների ժամանակի որոշումը VI — XVIII դարեր» (2007), Սամվել Մկրտչյանի «Տոներ, հայկական ժողովրդական ծեսեր, սովորույթներ, հավատալիքներ» (2010), դոց. Հովհաննես

Հովհաննիսյանի «Հայ առաքելական եկեղեցու բարենորոգության հիմնահարցը» (2008), Գևորգ սարկավազ Դուշյանի «Տաղավար տոները» (2007), Արամ Հովհաննիսյանի «Հայոց եկեղեցին կիլիկյան շրջանում» (2018) և այլ աշխատություններ:

Բացի եկեղեցական և կրոնական բնույթի հետազոտություններից հրատարակվել են նաև հայ ժողովրդի քաղաքական պատմությանը վերաբերող ուսումնասիրություններ, այդ թվում՝ դոցենտներ Աշոտ Մանուչարյանի «Վիմագրերը որպես Հայաստանի քաղաքական պատմության սկզբնաղբյուրներ (IX – XIV դարեր)» (2005), Արամ Հովհաննիսյանի «Կիլիկիայի հայկական թագավորության և Եգիպտոսի սուլթանության հարաբերությունները 1250 – 1375 թթ.» (2008), Արշակ Բալյանի «Սիմոն Վրացյանի հասարակական-քաղաքական և պետական գործունեությունը» (2013) աշխատությունները:

Ֆակուլտետը սերտորեն համագործակցում է Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի, եվրոպական մի շարք բուհերի, այդ թվում՝ Ստրասբուրգի և Հալեի համալսարանների, ինչպես նաև արտերկրում գործող աստվածաբանական առանձին կենտրոնների հետ:

Ֆակուլտետում «Աճենյան մատենաշարով» հրատարակվում են գիտական հոդվածների «Հայ աստվածաբան» և «Տարեգիրք» ժողովածուները:

Ֆակուլտետում դասավանդում են 5 պրոֆեսոր, 8 դոցենտ, 6 ասիստենտ և 3 դասախոս:

2004 թվականից ֆակուլտետի ղեկավարն է պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Տեր Անուշավան Եպիսկոպոս (Անդրանիկ) Ժամկոչյանը:

Համալսարանի հիմնադրումից ի վեր հասարակագիտական (1920 թ.), խորհրդային շինարարության (1921 թ.), իրավատնտեսագիտական (1924 թ.) և սոցիալ-տնտեսագիտական ֆակուլտետներում տնտեսագիտությունը եղել է ուսուցման կարևոր ուղղություններից մեկը: Իսկ տնտեսագիտության ֆակուլտետը, որպես ինքնուրույն ստորաբաժանում, կազմավորվել է 1933 – 1934 ուստարում: Այդ ֆակուլտետներում ղեկավարներ են եղել Ս. Տիգրանյանը, Գ. Ղարաջյանը, Յ. Խանգադյանը, Հ. Պետյանը, Ս. Զուրաբյանը, Կ. Կարազյանը, Ա. Գարամյանը, Պ. Ոսկերչյանը, Ե. Մանուկյանը, Զ. Բաշինջաղյանը, Ս. Հարությունյանը, Ն. Թովմասյանը, Ս. Մելիքյանը:

Անվանի գիտնականներ Անուշավան Արզումանյանը (ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս՝ 1963 թ.-ից), Հայկ Ազատյանը (ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ՝ 1956 թ.-ից), պրոֆեսորներ Ներսիկ Ստեփանյանը, Զաքար Բաշինջաղյանը, Թադևոս Ավդալբեգյանը, Հովհաննես Թումանյանը, Ղևոնդ Շաքարյանը, Մուշեղ Ադոնցը, Սարգիս Զուրաբյանը, Սմբատ Բադալյանը և այլք իրենց գիտելիքներն ու մասնագիտական հմտություններն են ներդրել ֆակուլտետի կայացման գործում:

ԽՍՀՄ կառավարության որոշմամբ 1975 թ. համալսարանի տնտեսագիտության, ապրանքագիտության ու առևտրի էկոնոմիկայի ֆակուլտետների հիմքի վրա ստեղծվել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը: 1984 թ. տնտեսագիտական կիբեռնետիկայի ֆակուլտետը Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտից տեղափոխվել է Երևանի պետական համալսարան, որի հիմքի վրա վերաբացվել է տնտեսագիտության (2014 թվականից՝ տնտեսագիտության և կառավարման) ֆակուլտետը:

Առաջին դեկանն է եղել պրոֆ. Յուրի Մովսիսյանը: Հետագայում ֆակուլտետը ղեկավարել են Գ. Բախշյանը, Գրիշա Ղարիբջյանը (ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ՝ 2000 թ.-ից):

ՀՀ անկախացումից հետո ֆակուլտետի ղեկավարությունը, հրաժարվելով տնտեսագիտական կրթության խորհրդային գաղափարայնացված համակարգից, արմատական վերափոխումների միջոցով շրջադարձ կատարեց և անցավ շուկայական տնտեսության պահանջներին համապատասխանող ժամանակակից տնտեսագիտության դասավանդմանը: Ֆակուլտետի շատ դասախոսներ վերաորակավորվեցին ինչպես ԱՊՀ երկրների, այնպես էլ ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի և եվրոպական այլ համալսարաններում: Սկսվեց նոր պահանջներին համապատասխան դասագրքաստեղծման գործընթացը: Կարճ ժամանակում ֆակուլտետի մասնագետները թարգմանեցին և հրատարակեցին հիմնարար դասընթացների ձեռնարկներ, և անցում կատարվեց դասավանդման հին մոդելից նոր մոդելին:

Այսօր ֆակուլտետի 4 ամբիոններում՝ տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների (վարի՝ տնտ. գիտ. թեկնածու, պրոֆ. Գագիկ Գալստյան), տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման (վարի՝ տեխն. գիտ. դոկտոր, պրոֆ. Արամ Առաքելյան), ֆինանսահաշվային (վարի՝ տնտ. գիտ. դոկտոր, պրոֆ. Հայկ Մնացականյան), կառավարման և գործարարության (վարի՝ տնտ. գիտ. թեկն., դոց. Կառլեն Խաչատրյան) իրականացվում են գիտահետազոտական աշխատանքներ հետևյալ ուղղություններով. կապիտալի կուտակման և հարըստության բևեռացման առանձնահատկությունները և կարգավորման



Զաքար Բաշինջադյանը գործընկերների և ուսանողների հետ

հիմնախնդիրները ՀՀ անցումային տնտեսությունում, ՀՀ աշխատանքի և կապիտալի շուկաների կայացման հիմնախնդիրները զարգացման արդի փուլում, Հայաստանի և Եվրամիության առևտրատնտեսական կապերի մոդելավորումը: Ձևավորվել է հետազոտական խումբ, որի ուսումնասիրության առարկան սահմանադրականության գնահատման, սահմանադրական տնտեսագիտության հիմնահարցերի ուսումնասիրությունն է:

Ֆակուլտետում դասավանդում են 16 պրոֆեսոր, 44 դոցենտ, 37 ասիստենտ և 17 դասախոս:

2000 թվականից ֆակուլտետի ղեկանն է տնտեսագիտության դոկտոր, պրոֆ. Հայկ Սարգսյանը:

Ուսումնագիտական աշխատանքների իրականացման գործին իրենց ակտիվ մասնակցությունն են բերում տնտեսագիտության տեսության ամբիոնի պատվավոր վարիչ Գրիշա Ղարիբյանը, պրոֆեսորներ Հայկ Սարգսյանը, Սարգիս Ղանթարջյանը, Հայկ Մնացականյանը, Թորոս Թորոսյանը, Արամ Առաքելյանը, Վարդան Բոստանջյանը, Աշոտ Մարկոսյանը, Ռուբեն Գևորգյանը և ուրիշներ:

Ֆակուլտետը համագործակցում է Ռուսաստանի Դաշնության, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, ԱՄՆ-ի, Հունաստանի և այլ երկրների գիտակրթական կենտրոնների հետ: Համագործակցության շրջանակում ֆակուլտետին կից ստեղծվել է «Հետազոտությունների և բիզնեսի կենտրոն» հիմնադրամը, որի նպատակներից է ֆակուլտետի գիտահետազոտական աշխատանքների խթանումը:

Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը ակտիվորեն ներգրավված է մշտապես գործող միջամբիոնային գիտական

սեմինարի աշխատանքներում (գիտ. ղեկ. պրոֆ. Հայկ Սարգսյան), որտեղ քննարկումները միտված են վեր հանելու սահմանադրական տնտեսագիտության և ռեսուրսաօգտագործման արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Արդյունքները պարբերաբար ներկայացվում են ՀՀ կառավարությանը, ՀՀ Ազգային Ժողովին և հրատարակվում են ֆակուլտետի ամենամյա «Տարեգիրք» ժողովածուում, զեկուցվում միջազգային գիտաժողովներում:

Երևանի պետական համալսարանում արժեքավոր գիտական հետազոտություններ են կատարվել նաև ճշգրիտ և բնական գիտությունների բնագավառներում: Այստեղ բարձրագույն մաթեմատիկայի դասավանդումը սկսվել է դեռևս 1921 թվականից տեխնիկական ու բնագիտական ֆակուլտետներում, իսկ մաթեմատիկոս մասնագետների պատրաստումը՝ 1924 թվականից՝ մանկավարժական ֆակուլտետի ֆիզիկամաթեմատիկական բաժնի հիմնադրմամբ: 1933 թ. բաժինը դարձել է ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետ, որը 1959 թ. բաժանվել է երկու ինքնուրույն՝ մեխանիկամաթեմատիկական և ֆիզիկայի ֆակուլտետների: 1988 թ. մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետը բաժանվել է երկու առանձին՝ մեխանիկայի և մաթեմատիկայի ֆակուլտետների, որոնք 2007 թ. կրկին վերամիավորվել են՝ կոչվելով մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետ:

Մաթեմատիկայի առաջին դասախոսները (Արշակ Տոնյան, Հովհաննես Նավակատիկյան, Հարություն Անժուր, Աշոտ Տեր-Մկրտչյան և այլք) ռուսական և եվրոպական համալսարաններում կրթություն

ստացած մասնագետներ էին:

30-ական թվականներին համալսարանը դեռևս չուներ այնպիսի կադրեր, որոնք կարողանային գիտական հետազոտություններ կատարել ու ղեկավարել երիտասարդ մասնագետների գիտական գործունեությունը: Այդ տարիներին համալսարանականները գործուղվում էին Մոսկվայի և Լենինգրադի համալսարաններ՝ ասպիրանտուրայում սովորելու: Առաջին գիտական աստիճանները ստացան Սերգեյ Մաշուրյանը (1938 թ.), Արտաշես Շահինյանը (1939 թ.), Վաչագան Սաղաթելյանը (1940 թ.), Նիկոլայ Գասպարյանը (1941 թ.), Գարուն Թումանյանը (1941 թ.), Լևոն Բերբերյանը (1941 թ.), որոնք, վերադառնալով Երևան, համալսարանում սկիզբ դրեցին գիտական կադրերի պատրաստմանն ու մաթեմատիկական հետազոտություններին: Շուտով պաշտպանվեցին նաև առաջին դոկտորական ատենախոսությունները՝ Արտաշես Շահինյան՝ 1944 թ. (ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս՝ 1947 թ.-ից), Մխիթար Զրբաշյան՝ 1949 թ. (ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս՝ 1956 թ.-ից), Սերգեյ Մերգելյան՝ 1949 թ. (ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ՝ 1953 թ.-ից և ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս՝ 1956 թ.-ից), որոնց շնորհիվ հիմնադրվեց այսօր արդեն լայն ճանաչում ստացած ֆունկցիաների տեսության հայկական դպրոցը: Հետագայում նրանց գործը հաջողությամբ շարունակեցին Ռաֆայել Ալեքսանդրյանը (ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս՝ 1986 թ.-ից), Նորայր Առաքելյանը (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս՝ 1990 թ.-ից), Ալեքսանդր Թալալյանը (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս՝ 1994 թ.-ից), պրոֆ. Հայկ Բադալյանը, դոց. Գոհար Համբարձումյանը, պրոֆ. Հրաչյա Մարտիրոսյանը և բազմաթիվ այլ մաթեմատիկոսներ:

Հիսունական թվականներին համալսարանում արդեն աշխա-



Ակադեմիկոսներ Մխիթար Զրբաշյան,
Արտաշես Շահինյան



Ակադեմիկոս Սերգեյ Մերգելյան

տում էին բարձրակարգ մաթեմատիկոսներ, այդ թվում ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոսներ և գիտության դոկտորներ, որոնք պատրաստում էին բարձրորակ մասնագետներ, միաժամանակ կատարում միջազգային մակարդակի գիտական հետազոտություններ:

Մաթեմատիկական հետազոտությունների սկիզբը դրվել է ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում, որն ունեցել է մաթեմատիկայի մեկ ամբիոն՝ Արշակ Տոնյանի ղեկավարությամբ, 1938 թ. հիմնադրվել են անալիզի և դիֆերենցիալ հավասարումների (վարիչ՝ Նահապետ Պետրոսյան), երկրաչափության (վարիչ՝ Արտաշես Շահինյան), բարձրագույն հանրահաշվի (վարիչ՝ Զեքեթ Խոջանեքյան) ամբիոնները: 1949 թ. ստեղծվել է բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնը՝ Վաչագան Սաղաթելյանի ղեկավարությամբ: Համալսարանում մաթեմատիկայի, հատկապես ֆունկցիաների տեսության զարգացման գործում առանցքային դեր է կատարել մաթեմատիկական անալիզի և ֆունկցիաների տեսության ամբիոնը, որը 1949 թ. հիմնադրել և շուրջ երեսուն տարի գլխավորել է ակադեմիկոս Արտաշես Շահինյանը: Հետագայում ամբիոնը շարունակել է իր բեղմնավոր գիտական գործունեությունը Մխիթար Ջրբաշյանի, այնուհետև՝ Նորայր Առաքելյանի ղեկավարությամբ: Կատարվել են մաթեմատիկական հիմնարար հետազոտություններ կոմպլեքս անալիզի և մոտավորությունների տեսության բնագավառում (Վալերի Մարտիրոսյան, Ալբերտ Պետրոսյան, Վիդոկ Մուսոյան, Կարեն Ավետիսյան, Հրաչիկ Հայրապետյան): Ալեքսանդր Թալալյանի ջանքերով 70-ական թվականներին ստեղծվել և այժմ էլ բուռն զարգացում է ապրում միջազգային լայն ճանաչում ստացած իրական անալիզի

հայկական դպրոցը, որի սաների մեծ մասը աշխատել կամ աշխատում է ԵՊՀ տարբեր ֆակուլտետներում՝ Գեղամ Գևորգյան (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս՝ 2010 թ.-ից), Արթուր Սահակյան (ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ՝ 2006 թ.-ից), պրոֆեսորներ Մարտին Գրիգորյան, Հակոբ Հակոբյան, Ֆելիքս Հարությունյան, դոցենտներ Գրիգոր Կարագուլյան, Ռուբեն Հովսեփյան, Ռոբերտ Դավթյան, Ռուբեն Ավետիսյան, Սեդրակ Հովհաննիսյան): Համալսարանի մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետը ՀՀ ԳԱԱ մաթեմատիկայի ինստիտուտի հետ միասին 1998 թվականից պարբերաբար կազմակերպում է «Հարմոնիկ անալիզ և մոտավորություններ» թեմատիկայով միջազգային գիտաժողովներ, որոնց մասնակցում են առաջնակարգ բազմաթիվ մաթեմատիկոսներ աշխարհի տարբեր երկրներից:

ԵՊՀ-ում մաթեմատիկայի կայացման գործում մեծ է ռուսական մաթեմատիկական դպրոցի խաղացած դերը: 1940-80-ականներին երիտասարդ բազմաթիվ համալսարանականներ գործուղվել են Ռուսաստանի առաջնակարգ մաթեմատիկական կենտրոնների ասպիրանտուրայում ուսանելու: Նրանցից շատերը դարձել են բարձրակարգ մաթեմատիկոսներ և, վերադառնալով համալսարան, շարունակել են հետազոտական աշխատանքը՝ զարգացնելով նոր գիտական ուղղություններ: Այսպես, 1954 թ. հիմնադրվեց դիֆերենցիալ հավասարումների ամբիոնը՝ Ռաֆայել Ալեքսանդրյանի գլխավորությամբ, իսկ 1967 թ.՝ հավանականությունների տեսության ամբիոնը (վարիչ՝ դոց. Գոհար Համբարձումյան):

1965 թ. հիմնադրվեց ֆիզիկայի ֆակուլտետի բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնը (վարիչ՝ Հանրի Ներսիսյան, 1996 թ.-ից՝ ՀՀ

ԳԱԱ ակադեմիկոս), 1975 թ.՝ կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի թվային անալիզի ամբիոնը (վարիչ՝ ակադեմիկոս Մերգել Մերգելյան) և 1988-ին՝ ռադիոֆիզիկայի ֆակուլտետի բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնը (վարիչ՝ պրոֆ. Սարգիս Հակոբյան): Այս ամբիոնները համալրվեցին որակյալ մաթեմատիկոսներով, որոնք մեծ ներդրում ունեցան համալսարանում մաթեմատիկական հետազոտությունների զարգացման գործում: Այդ հետազոտություններն ընդգրկում են մաթեմատիկայի տարբեր բնագավառներ. դիֆերենցիալ հավասարումներ և ֆունկցիոնալ անալիզ (պրոֆեսորներ Իշխան Խաչատրյան, Տիգրան Հարությունյան, Հայկ Ղազարյան, Ռոմեն Շահբաղյան, Մարտին Կարախանյան, Արթուր Հովհաննիսյան), հավանականությունների տեսություն (Ռուբեն Համբարձումյան՝ ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս՝ 1986 թ.-ից, պրոֆեսորներ Էդուարդ Դանիելյան, Վահան Սարաֆյան, Վիկտոր Օհանյան), հանրահաշիվ և երկրաչափություն (պրոֆեսորներ Վարուժան Աթաբեկյան, Սամվել Դալալյան, Յուրի Մովսիսյան, դոցենտ Վահագն Միքայելյան):

Մեխանիկայի տարբեր բնագավառներն ընդգրկող գիտական գործունեությունը ԵՊՀ-ում սկսվել է դեռևս 1930 թ. կազմավորված տեսական մեխանիկայի ամբիոնում (վարիչ՝ պրոֆ. Աշոտ Տեր-Մկրտչյան): Հետագայում այդ ուսումնասիրությունները մեծ զարգացում են ապրել: Համալսարանական կրթության կազմակերպման և հայրենական գիտության մեխանիկայի ոլորտի առաջընթացի գործում մեծ ներդրում են ունեցել պրոֆեսորներ Նազուշ Հարությունյանը (ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս՝ 1950 թ.-ից), Մերգել Համբարձումյանը

(ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս՝ 1965 թ.-ից), որոնց ջանքերով ստեղծված մեխանիկայի հայկական գիտական դպրոցը լայն ճանաչման է արժանացել ոչ միայն Հայաստանում, այլև արտերկրում: Զգալի է նաև պրոֆ. Վլադիմիր Սարգսյանի (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս՝ 1996 թ.-ից) ավանդը անհամասեռ անիզոտրոպ մարմնի առաձգականության տեսության գիտական դպրոցի կայացման գործում:

Ֆակուլտետում երկար տարիներ մեխանիկա են դասավանդել և նպաստել նրա զարգացմանը պրոֆեսորներ Բենիամին Աբրահամյանը (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս՝ 1996 թ.-ից), Լենսեր Աղալովյանը (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս՝ 1996 թ.-ից), Գևորգ Բաղդասարյանը (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս՝ 1994 թ.-ից), դոցենտ Գևորգ Բաբաջանյանը, Արա Ավետիսյանը (ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ՝ 2006 թ.-ից), Միքայել Մանուկյանը, Վանյա Բարսեղյանը, Արտուշ Դուկասյանը, Մելս Մինասյանը, Էդուարդ Գրիգորյանը, Մելս Բելուբեկյանը, Արտավազ Մխիթարյանը, Սամվել Սարգսյանը և ուրիշներ:

Ֆակուլտետի կյանքում կարևոր իրադարձություն էր «Ակտուարական մաթեմատիկա» մասնագիտության բացումը (2002 թ.՝ մագիստրատուրայում և 2006 թ.՝ բակալավրիատում): Այս մասնագիտությամբ շրջանավարտները լայն պահանջարկ ունեն աշխատաշուկայում, և այսօր արդեն «Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա» մասնագիտությամբ համալսարան է ընդունվում հարյուրից ավելի ուսանող, որոնց սպասարկում են 2006 թ. հիմնադրված ակտուարական մաթեմատիկայի և 2014 թ. հիմնադրված ֆինանսական մաթեմատիկայի ամբիոնները:

Գիտական և մանկավարժական բեղմնավոր աշխատանքի հա-

մար ֆակուլտետի դասախոսները տարբեր տարիների արժանացել են պետական պարգևների: Մասնավորապես, ԽՍՀՄ Պետական մրցանակի են արժանացել ակադեմիկոսներ Սերգեյ Մերգելյանը՝ 1952 թ. և Ռ-աֆայել Ալեքսանդրյանը՝ 1986 թ.:

Այսօր ֆակուլտետում գործում է 8 ամբիոն. ընդհանուր մաթեմատիկայի (վարիչ՝ ֆիզմաթ. գիտ. դոկտոր, դոց. Կարեն Ավետիսյան), հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության (վարիչ՝ ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆ. Վիկտոր Օհանյան), հանրահաշվի և երկրաչափության (վարիչ՝ ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆ. Վարուժան Աթաբեկյան), դիֆերենցիալ հավասարումների (վարիչ՝ ֆիզմաթ. գիտ. թեկն., դոց. Արմեն Քամալյան), մաթեմատիկական անալիզի և ֆունկցիաների տեսության (վարիչ՝ ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆ. Հրաչիկ Հայրապետյան), ֆինանսական մաթեմատիկայի (վարիչ՝ ֆիզմաթ. գիտ. թեկն., դոց. Միքայել Պողոսյան), ակտուարական մաթեմատիկայի և ռիսկերի կառավարման (վարիչ՝ տնտեսագիտ. թեկն., դոց. Նարեկ Մարտիրոսյան), մեխանիկայի (վարիչ՝ ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆ. Սամվել Սարգսյան): Ֆակուլտետում գործում են նաև մաթեմատիկական հետազոտությունների կենտրոն (գիտ. ղեկավար՝ ակադեմիկոս Գեղամ Գևորգյան), «Մեխանիկայի տեսական հարցեր և կիրառություններ» գիտահետազոտական լաբորատորիա (գիտ. ղեկավար՝ Սամվել Սարգսյան): Ֆակուլտետում դասավանդում են 16 պրոֆեսոր, 32 դոցենտ, 7 ասիստենտ և 12 դասախոս:

2008 թվականից ֆակուլտետի ղեկանն է ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆ. Արթուր Սահակյանը:

Ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում դեռևս 1957 թ. բացվել է հաշվողական մաթեմատիկայի ամբիոն: Հետագայում արդեն մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետում ներդրվել են մաթեմատիկական կիբեռնետիկա (1963 թ.), կիրառական մաթեմատիկա (1969 թ.) մասնագիտությունները:

Հաշվողական մաթեմատիկայի ամբիոնի հիմքի վրա 1971 թ. ստեղծվել է կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետը, և դեկան է նշանակվել դոց. Ռ-աֆիկ Տոնոյանը: 1972 թվականից ֆակուլտետում բացվել են մասնագիտական մի շարք նոր ամբիոններ. մաթեմատիկական կիբեռնետիկայի (վարիչ՝ Ռ-աֆիկ Տոնոյան, հետագայում՝ դոց. Համլետ Հակոբյան, պրոֆ. Ստեփան Մարկոսյան), ԷՀՄ մաթեմատիկական ապահովման (վարիչ՝ դոց. Աշոտ Պետրոսյան, ապա՝ դոց. Թեոդոր Տեր-Միքայելյան), թվային անալիզի (վարիչ՝ ակադեմիկոս Սերգեյ Մերգելյան, հետագայում՝ պրոֆեսորներ Հայկ Գազարյան, Ֆելիքս Հարությունյան), 1975 թ.՝ ԷՀՄ և ծրագրավորման (վարիչ՝ ԽՍՀՄ Պետական մրցանակի դափնեկիր, դոց. Մնացական Բունիաթյան, հետագայում՝ ՀԽՍՀ Պետական մրցանակի դափնեկիր, դոց. Աշոտ Բաղդասարյան): 1981 թ. ֆակուլտետում ստեղծվում է համակարգերի տեսության բազային ամբիոնը (վարիչ՝ պրոֆ. Կամո Աբգարյան, հետագայում՝ պրոֆեսորներ Անահիտ Չուբարյան, Արա Ալեքսանյան), որի ուսումնագիտական բազան ՀԽՍՀ ԳԱ և ԵՊՀ միացյալ հաշվողական կենտրոնն էր: 1982 թ. հիմնադրվում են նաև բնական գիտություններում հաշվողական տեխնիկայի միջոցների կիրառման (վարիչ՝ պրոֆ. Գևորգ Բաղդասարյան, հետագայում՝ դոցենտներ Բաբկեն Արարքցյան, Վլադի-

միր Բոնդորենկո), 1987 թ.՝ բնագիտության մաթեմատիկական մեթոդների և մոդելավորման (վարիչ՝ պրոֆ. Գևորգ Բաղդասարյան) ամբիոնները: Եվ այսպես, աստիճանաբար ձևավորվում է ֆակուլտետը, գնալով աճում նրա դերն ու հեղինակությունը: 1980-ական թվականների սկզբին կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետն արդեն համալսարանի ամենամեծ ֆակուլտետներից էր:

ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ 1990 թ. հոկտեմբերին կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետը բաժանվում է երկու՝ ինֆորմատիկայի և հաշվողական մաթեմատիկայի (դեկան՝ պրոֆ. Հայկ Ղազարյան) ու մաթեմատիկական կիբեռնետիկայի և հետազոտումների ավտոմատացման (դեկան՝ դոց. Ռաֆիկ Տոնոյան) ֆակուլտետների: Ինֆորմատիկայի և հաշվողական մաթեմատիկայի ֆակուլտետում ստեղծվում են կիրառական անալիզի (վարիչ՝ պրոֆ. Հայկ Ղազարյան, հետագայում՝ դոց. Գագիկ Հակոբյան) և ալգորիթմական լեզուների (վարիչ՝ պրոֆ. Սեմյոն Նիզիյան, ապա՝ պրոֆ. Ռիմա Պողոսյան, 1993-ից՝ ակադեմիկոս Սամվել Շուքուրյան) ամբիոնները:

1996 թ. ինֆորմատիկայի և հաշվողական մաթեմատիկայի ու մաթեմատիկական կիբեռնետիկայի և հետազոտումների ավտոմատացման ֆակուլտետները կրկին վերամիավորվում են և դրանց հիման վրա ստեղծվում է ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետը (դեկան՝ դոց. Վլադիմիր Եղիազարյան): 2000 թվականից ֆակուլտետը ղեկավարում է ֆիզմաթ. գիտությունների դոկտոր, պրոֆ. Վահրամ Դումանյանը:

ԵՊՀ գիտխորհրդի 2007 թ. որոշմամբ ֆակուլտետում կատար-

վում են կառուցվածքային փոփոխություններ և ամբիոնների միավորման հիմքի վրա ձևավորվում է երեք ամբիոն՝ թվային անալիզի և մաթեմատիկական մոդելավորման (վարիչ՝ ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆ. Յուրի Հակոբյան), դիսկրետ մաթեմատիկայի և տեսական ինֆորմատիկայի (վարիչ՝ ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆ. Արա Ալեքսանյան), ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների (վարիչ՝ ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆ. Սեմյոն Նիզիյան):

Ֆակուլտետում դասավանդում են 10 պրոֆեսոր, 28 դոցենտ, 18 ասիստենտ և 7 դասախոս:

Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը, քայլերով ժամանակի գիտական մտքին ու պահանջներին համընթաց, ծավալում է գիտամանկավարժական լայն գործունեություն, միաժամանակ հանրապետության տնտեսության ու գիտակրթական ոլորտներն ապահովում բարձրակարգ մասնագետներով:

Ֆակուլտետը գործուն կապեր ունի արտերկրի մի շարք համալսարանների և գիտական կենտրոնների հետ:

«Ֆիզիկա» մասնագիտությամբ կադրերի պատրաստումը համալսարանում սկսվել է 1922 թվականից: 1933 թ. ստեղծվել է ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը՝ մաթեմատիկայի և ֆիզիկայի առանձին բաժիններով:

Ֆիզիկայի զարգացումը խթանելու և նոր կադրերի պահանջարկը բավարարելու նպատակով 1959 թ. ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետից առանձնացվել և կազմավորվել է ֆիզիկայի ֆակուլտետը, որի առաջին դեկանն էր Նորայր Բոչարյանը (ՀԽՍՀ ԳԱ

թղթակից անդամ՝ 1956 թ.-ից): Հետագայում ֆակուլտետը ղեկավարել են դոց. Արշալույս Դադայանը, պրոֆ. Կարո Խաչատուրյանը, Միքայել Տեր-Միքայելյանը (ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս՝ 1982 թ.-ից), Գուրգեն Սահակյանը (ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս՝ 1982 թ.-ից), պրոֆեսորներ Պետրոս Բեգիրզանյանը, Բենիկ Թումանյանը, Էդուարդ Խաչիկյանը (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս՝ 1996 թ.-ից), Յուրի Չիլինգարյանը (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս՝ 1996 թ.-ից), պրոֆ. Սամվել Հարությունյանը: 2006 թվականից ֆակուլտետի ղեկանն է ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆ. Ռուսնդ Ավագյանը (ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ՝ 2006 թ.-ից):

Մանկավարժական աշխատանքի հետ մեկտեղ ֆակուլտետում կատարվել են գիտական հետազոտություններ: Դեռևս 1925 թ. ճարտարագետ Հովհաննես Ադամյանը ներկայացրել է գունավոր հեռուստատեսության առաջին նախագիծը և համալսարանի իր ղեկավարած լաբորատորիայում պատրաստել ու գործարկել «Հեռատես» եռագույն հեռուստացույցը: Հ. Ադամյանի գլուխը հեռուստատեսության բնագավառում առաջին անգամ կիրառվել է 1928 թ. Լոնդոնում, իսկ 1951 – 1953 թթ. դրա հիման վրա ստեղծված գունավոր պատկերների հաղորդման կայուն համակարգն ընդունվել է ԱՄՆ-ում:

Միջուկային ֆիզիկայի ոլորտում հետազոտությունները Երևանի պետական համալսարանում սկզբնավորվել են Աբրահամ Ալիխանովի (ԽՍՀՄ ԳԱ և ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս՝ 1943 թ.-ից), Արտեմ Ալիխանյանի (ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս՝ 1943 թ.-ից, ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ՝ 1946 թ.-ից) և Նորայր Քոչարյանի աշխատանքներով: Տիեզերական ճառագայթների հոսքերի չափմանը նվիրված առաջին գիտափորձերը կատարվել են Արագածի գիտական կայա-

նում: 1942 թ. ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում կազմակերպվել է միջուկային ֆիզիկայի ամբիոն՝ Արտեմ Ալիխանյանի ղեկավարությամբ: Ամբիոնի աշխատակիցների մասնակցությամբ կատարված փորձերով հաստատվել է տիեզերական ճառագայթների հոսքերում, բացի առաջին և երկրորդ (փափուկ և կոշտ) բաղադրիչներից, երրորդ՝ պրոտոնային բաղադրիչի առկայությունը: 1943 թ. ԵՊՀ տիեզերական ճառագայթների ու միջուկային հետազոտությունների լաբորատորիայի և Արագածի գիտական կայանի հիմքի վրա ստեղծվել է Երևանի ֆիզիկայի ինստիտուտը, իսկ միջուկային ֆիզիկայի ամբիոնը լուծարվել է: 1961 թ. այն վերաբացվել է, և այստեղ ծավալվել են տեսական ու փորձարարական հետազոտություններ: Ուսումնասիրվել են լիցքավորված մասնիկների ճառագայթումը անհամասեռ միջավայրում, Քոմպտոնի ոչ գծային երևույթը, ֆոտոն-էլեկտրոն փոխազդեցությունը: Ամբիոնը սերտորեն համագործակցել է Երևանի ֆիզիկայի ինստիտուտի (ԵրՖԻ) հետ:

1988 թ. ամբիոնին կից կազմակերպվել է բարձր էներգիաների ֆիզիկայի լաբորատորիա, որտեղ Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի (ՄՀՄԻ, ՌԴ, Դուբնա) հետ համատեղ կատարվել են բարձր էներգիաների ոլորտին վերաբերող գիտական ուսումնասիրություններ: Ներկայում այդ համագործակցությունը շարունակվում է, և հետազոտողների ուշադրության կենտրոնում են տաք միջուկային նյութում ֆազային անցումներին առնչվող մի շարք հարցեր:

Ելնելով ժամանակի պահանջից՝ այսօր ամբիոնը նաև ատոմային էներգետիկայի և արագարարների ֆիզիկայի բնագավառների

կադրեր է պատրաստում Հայկական ատոմակայանի և CANDLE գիտահետազոտական ինստիտուտի հետ:

1946 թ. Վիկտոր Համբարձումյանը (ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս՝ 1943 թ.-ից և ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս՝ 1953 թ.-ից) համալսարանում հիմնադրել և ղեկավարել է աստղաֆիզիկայի ամբիոնը: Այն սերտորեն համագործակցել է Բյուրականի աստղադիտարանի հետ, կատարել գիտահետազոտական համատեղ աշխատանքներ, որոնց արդյունքները կանխորոշել են 20-րդ դարի երկրորդ կեսի աստղաֆիզիկայի զարգացման հիմնական ուղղությունները և համաշխարհային համբավ բերել Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիային և ԵՊՀ-ին: Ամբիոնը զբաղվել է նաև Հայաստանում աստղագիտության պատմության ուսումնասիրությամբ (պրոֆ. Բենիկ Թումանյան):

Պրոֆ. Գուրգեն Սահակյանի ջանքերով 1951 թ. համալսարանում բացվել է տեսական ֆիզիկայի ամբիոն, որը կարևոր դեր է խաղացել Հայաստանում բարձրակ ֆիզիկոսների պատրաստման և ֆիզիկայի հայկական դպրոցի ստեղծման գործում: Գ. Սահակյանը Հայաստանում գրավիտացիայի տեսության գիտական դպրոցի և «Նեյտրոնային աստղերի ֆիզիկա» գիտական ուղղության հիմնադիրն է: Նա զարգացրել է այն գաղափարը, որ նեյտրոնային աստղերն առաջացել են տիեզերքի ընդարձակման վաղ շրջանում՝ մյուս բոլոր տեսակի երկնային մարմիններից շուտ, և որ գալակտիկաների կորիզները պետք է գերազանցապես բաղկացած լինեն նեյտրոնային աստղերից ու սպիտակ թզուկներից, բացահայտել նեյտրոնային աստղերի՝ գալակտիկաների միջուկների

ակտիվության մեջ ունեցած կարևոր դերը: 1991 – 1997 թթ. նա մշակել է բաբախիչների ռադիոճառագայթման և բաբախների տեսությունները: Վճռորոշ է նրա դերը բուհական առաջին գիտահետազոտական ինստիտուտի՝ «Լազերային տեխնիկա» գիտատատարական միավորման ստեղծման գործում:

Վիկտոր Համբարձումյանի և Գուրգեն Սահակյանի հիմնարար հետազոտությունները ցույց են տվել գերխիտ՝ բարիոնային աստղերի գոյության հնարավորությունը: Դրանց շնորհիվ ծնունդ է առել աստղաֆիզիկայի նոր ուղղություն՝ գերխիտ երկնային մարմինների ֆիզիկան (Դավիթ Սեդրակյան՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս՝ 1990 թ.-ից, Էդվարդ Չուբարյան՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս՝ 1996 թ.-ից, Յուրի Վարդանյան՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ՝ 2010 թ.-ից): Ստացված արդյունքներն ընդհանրացվել են Գ. Սահակյանի «Ալյասերված գազային զանգվածների հավասարակշիռ փոխադասավորություններ» (ռուս. 1972, անգլ. 1974) և «Նեյտրոնային աստղերի ֆիզիկա» (ռուս. 1995) մենագրություններում:

Տեսականորեն ուսումնասիրվել են գրավիտացիոն տարբեր համակարգերի հավասարակշռության և կայունության հարցերը մագնիսական դաշտում (պրոֆեսորներ Մարտին Աբրահամյան, Ռաֆիկ Հովհաննիսյան), տիեզերքի զարգացման տարբեր փուլերը (պրոֆեսորներ Ռոլանդ Ավագյան, Լևոն Գրիգորյան, Գոհար Հարությունյան, Կարեն Շահաբաբյան, Էդվարդ Չուբարյան, Վլադիմիր Պապոյան) և ուժեղ գրավիտացիոն դաշտերով պայմանավորված քվանտային երևույթները (պրոֆ. Արամ Սահարյան):

1960-ականների սկզբին պրոֆ. Միքայել Տեր-Միքայելյանի նա-

խաձեռնությամբ ԵՊՀ-ում սկսվել են հայկական առաջին լազերի ստեղծման աշխատանքները, իսկ առաջին լազերը պատրաստվել է 1962-ին:

1962 թ. ճառագայթման ֆիզիկայի պրոֆեսորային լաբորատորիան վերակոդմորոշվել է լազերային թեմայի ուղղությամբ: 1964-ին ստեղծված օպտիկայի ամբիոնում կատարված առաջին հետազոտությունները նվիրված էին ստիպողական ցրման առանձնահատկությունների ուսումնասիրմանը (Յուրի Չիլինգարյան):

Պրոֆեսոր Մելիստ Մովսիսյանը (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս՝ 1996 թ.-ից) 1965 թվականից զբաղվել է օրգանական հեղուկներում հարկադրական համակցված ցրման սպեկտրների, գազային միջավայրերում ատոմների էլեկտրոնային մակարդակների միջև համակցված, ինչպես նաև եռաֆոտոն ցրման և այդ պրոցեսների ժամանակային և բևեռային բնութագրերի ուսումնասիրությամբ: Հատկապես կարևոր են ալկալիական մետաղների գոլորշիների հետ հզոր լուսային ճառագայթման ոչ գծային փոխազդեցությանը նվիրված նրա աշխատանքները, որոնք ըստ էության ձևավորել են գիտական հետազոտությունների նոր ուղղություն: Կատարված աշխատանքներով սկզբնավորվել է ոչ գծային օպտիկայի նոր ճյուղ՝ ռեզոնանսային ոչ գծային օպտիկան, որի շնորհիվ Հայաստանը ճանաչվել է այդ ճյուղի ԽՍՀՄ կենտրոններից մեկը:

Օպտիկական քվանտային գեներատորների տեսության և ոչ գծային օպտիկայի բնագավառում զգալի է պրոֆ. Վիլիկ Հարությունյանի ներդրումը: Նա լազերներում կանխատեսել և փորձնականորեն հայտնաբերել է մի շարք կոհերենտ երևույթներ, առաջարկել

նոր տիպի բարակթաղանթային քվազիալիքատար լազեր և ստեղծել դրա տեսությունը: Ազատ էլեկտրոնների և լազերային ճառագայթման փոխազդեցության բնագավառում Վ. Հարությունյանի՝ դեռևս 1963 թ. սկսած հետազոտությունները հետագայում ժամանակակից հզոր լազերների ստեղծման հիմք են դարձել: Նրան է պատկանում ոչ գծային փոխազդեցություններում լազերային ճառագայթման բևեռացման երևույթների ուսումնասիրման առաջնությունը և բացառապես բևեռացմամբ պայմանավորված մի շարք երևույթների տեսական կանխատեսումն ու հաստատումը փորձով:

Ամբիոնում կատարվել են հետազոտություններ նաև հեղուկ բյուրեղների ոչ գծային օպտիկայի բնագավառում: Հրատարակվել է ՀԲ-ի ոչ գծային օպտիկայի վերաբերյալ աշխարհում առաջին «Հեղուկ բյուրեղների ոչ գծային օպտիկա» (ռուս. 1984) մենագրությունը (պրոֆեսորներ Սերգեյ Առաքելյան, Յուրի Չիլինգարյան), մշակվել է գերմաքուր գրադիենտային ապակի ստանալու եղանակ, ստեղծվել ճնշման օպտիկական մանրաթելային տվիչ: Օպտիկայի ամբիոնի լաբորատորիայում իրականացվել են լազերային գերկարճ (ֆեմտովայրկենային ժամանակային սանդղակում) իմպուլսների վերլուծության և սինթեզի մեթոդների ուսումնասիրություններ (պրոֆ. Լևոն Մուրադյան և ուրիշներ):

1956 թ. պրոֆ. Նորայր Քոչարյանը հիմնադրել է ԵՊՀ պինդ մարմնի ֆիզիկայի ամբիոնը: 1962 թ. կազմակերպել և ղեկավարել է ՀԽՍՀ ԳԱ կենտրոնական ֆիզիկատեխնիկական լաբորատորիան: Նրա նախաձեռնությամբ Հայաստանում պինդ մարմնի ֆիզիկայի և ֆիզիկայի այլ բնագավառների զարգացման համար անհրաժեշտ

կադրեր են պատրաստվել ԽՍՀՄ հեղինակավոր գիտական և ուսումնական կենտրոններում: Նա անիզոտրոպ պոլիմերներում հայտնաբերել է «մակաձված» պիեզոէրևույթը, ուսումնասիրել լուծույթներում անդրաձայնային ճառագայթման ազդեցությամբ պոլիմերների կառուցվածքափոխման մեխանիզմները: Ն. Քոչարյանի ստացած գիտական արդյունքներն ամփոփվել են «Տիեզերական ճառագայթներ: Պոլիմերների ֆիզիկա» (ռուս., Եր., 1973) մենագրության մեջ:

1960 – 1987 թթ. պրոֆեսոր Պետրոս Բեգիրզանյանը ղեկավարել է պինդ մարմնի ֆիզիկայի ամբիոնը: Նրա ղեկավարությամբ և անմիջական մասնակցությամբ իրագործված գիտական հետազոտություններն ընդգրկում են ռենտգենյան ճառագայթների ինտերֆերենցի և դիֆրակցիայի, բյուրեղային ցանցի կառուցվածքի ուսումնասիրման նոր եղանակների մշակման, գիտության և տեխնիկայի տարբեր ասպարեզներում կարևոր նշանակություն ունեցող եզակի սարքերի ու սարքավորումների ստեղծման և ռենտգենյան ֆիզիկայի այլ բնագավառներ:

Ամբիոնում և պրոբլեմային լաբորատորիայում՝ առաջինը ԽՍՀՄ-ում, մշակվել և պատրաստվել են նոր տիպի եռաբլոկ և քառաբլոկ ռենտգենային ինտերֆերաչափներ (դոց. Ֆերդինանդ Էյրամջյան և ուրիշներ), ռենտգենաօպտիկական ռեզոնատորներ, շրջանային մեներանգիչներ, ռեզոնատորային և ինտերֆերաչափական հոլակներ (առաջատար գիտաշխատող Արմանդ Ռոստոմյան և ուրիշներ), ռենտգենադիֆրակտային տեղագրական պատկերների տեսանելիացման ռենտգենահեռուստատեսային համակարգ (պրոֆ. Պետրոս Բեգիրզանյան, դոց. Կոլյա Ավետյան, Սերգեյ Շաբոյան, 1985 թ.՝



Բենիկ Թումանյանը գործընկերների հետ դիտում է արհեստական արբանյակը



Հարություն Անժուրը ֆիզիկայի լաբորատորիայում



Ակադեմիկոս Գուրգեն Սահակյանը ուսանողների հետ

ՀԽՍՀ Պետական մրցանակ):

Կատարվել են պինդ մարմինների ռենտգենակառուցվածքային և ռենտգենապեկտրային ուսումնասիրություններ, մշակվել են ռենտգենյան փնջերի ցրման կինեմատիկ և դինամիկ տեսությունների որոշ հարցեր (պրոֆեսորներ Պետրոս Բեգիրզանյան, Կարապետ Թրունի, դոց. Լևոն Լևոնյան և ուրիշներ): Հայտնաբերվել է լուսաձայնային երևույթը Ge և Si բյուրեղներում, հետազոտվել են դիսլոկացիաների թռիչքաձև շարժման օրինաչափությունները, և որոշվել է անդրաձայնի դիսլոկացիոն կլանման սպեկտրը (պրոֆ. Արշակ Դուրգարյան): Հայտնաբերվել են Կիկուչի-Էլեկտրոնագրերի առաջացման նոր՝ էլեկտրոնների կրկնակի դիֆրակցիայի երևույթը և արգելված Կիկուչի-գծերի գոյությունը (պրոֆ. Ռոբերտ Կարախանյան և ուրիշներ):

1970-ական թվականներից ամբիոնում սկսվել են ցածր չափայնության կիսահաղորդչային կառուցվածքների տեսական հետազոտությունները, մասնավորապես ուսումնասիրվել են էլեկտրոնային և խառնուկային վիճակները, էքսիտոնների և բարդ էքսիտոնային կոմպլեքսների գոյության, ինչպես նաև էքսիտոնների բոգե-կոնդենսացման հնարավորությունը (Էդուարդ Ղազարյան՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս՝ 1996 թ.-ից, Ալբերտ Կիրակոսյան՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ 2006 թ.-ից, դոց. Վլադիմիր Ա. Հարությունյան, պրոֆ. Հայկ Սարգսյան և ուրիշներ), տարբեր տիպի ֆոնոնային ցրումներով պայմանավորված ռելաքսային բնութագրերը և դրանց հետ փոխազդեցության ներդրումը քվազիպոլարոնային վիճակների էներգիաներում: Դիտարկվել են կիսահաղորդչային մանոկառուց-

վածքներում քվազի-մասնիկների էներգիական սպեկտրների և այդ կառուցվածքների ֆիզիկական բնութագրերի կառավարման հնարավորությունները արտաքին դաշտերի կիրառման, դիէլեկտրական շրջապատի ընտրության և կառուցվածքի ստեղծման պրոցեսի հսկման միջոցով (պրոֆեսորներ Ալբերտ Կիրակոսյան, Արշակ Վարդանյան և ուրիշներ):

Առաջատար գիտաշխատող Վիկտոր Ադամյանը մշակել է հսկվող պարամետրերով համաձուլվածքների հաշվարկման նոր մեթոդ և սինթեզել հազվագյուտ հողային մետաղների տարբեր միացություններ, ուսումնասիրել դրանց մագնիսական ընկալունակությունը: Հարթ կոճի նոր մեթոդով փորձնականորեն բացահայտվել է նորմալ-գերհաղորդիչ ֆազային անցման 3 կրիտիկական ջերմաստիճանների գոյությունը (պրոֆ. Սամվել Գևորգյան և ուրիշներ):

1965 թ. մոլեկուլային ֆիզիկայի և կենսաֆիզիկայի (1982-ից՝ մոլեկուլային ֆիզիկայի) ամբիոնի հիմնադրումը խթանեց Հայաստանում պոլիմերների ֆիզիկայի և հատկապես կենսաֆիզիկայի զարգացումը: Ամբիոնում ստացվել են կարևոր արդյունքներ ԴՆԹ-ի և ԴՆԹ-լիզանդ կոմպլեքսների կառուցվածքի (պրոֆ. Վիլեն Ասլանյան և ուրիշներ), սինթետիկ պոլիմերների կառուցվածքի և ֆիզիկական հատկությունների վրա արտաքին գործոնների (անդրամանուշակագույն և գամմա-ճառագայթում) ազդեցության ուսումնասիրությունների ոլորտում (պրոֆեսորներ Վ. Ասլանյան, Արտյոմ Դադիվանյան, Վիգեն Բարխուդարյան և ուրիշներ):

Տեսական հետազոտություններ են կատարվել կենսապոլիմերների (ԴՆԹ, ՌՆԹ, սպիտակուցներ) կառուցվածքների ուսումնա-

սիրման բնագավառում (պրոֆ. Վլադիմիր Մորոզով, դոց. Եվգենի Մամասախլիսով և ուրիշներ): Պարզաբանվել են նշված օբյեկտների հետ կապվող լիզանդների փոխազդեցության նախընտրելի մեխանիզմները, որոնք կնպաստեն հակաուռուցքային պատրաստուկների սինթեզմանը (պրոֆեսորներ Սամվել Հարությունյան, Եվա Դալյան և ուրիշներ):

2006-ից ամբիոնում ձևավորվել է կենսաբանական թաղանթների կայունության վրա տարբեր լիզանդների ազդեցությանը վերաբերող հետազոտությունների նոր ուղղություն (պրոֆ. Վալերի Առաքելյան և ուրիշներ):

1965 թ. ֆակուլտետում ստեղծված մաթեմատիկական ֆիզիկայի (1980-ից՝ բարձրագույն մաթեմատիկայի) ամբիոնում իրականացվել են հետազոտություններ՝ նվիրված ֆունկցիոնալ տարբեր տարածություններում դասական և ընդհանուր օրթոնորմալ համակարգերով գծային և ոչ գծային մոտարկումների հարցերին (պրոֆ. Մարտին Գրիգորյան):

Ուսումնասիրվել են դասական համակարգերով Ֆուրիեի շարքերի բացարձակ, ոչ պայմանական զուգամիտությունը, տարբեր դասերի միաչափ և բազմաչափ ֆունկցիաների ոչ գծային մոտարկումը, լուծվել, մասնավորապես, “Greedy” ալգորիթմով մոտարկմանը նվիրված մի շարք խնդիրներ (պրոֆ. Սերգո Եպիսկոպոսյան, Սմբատ Գոգյան և ուրիշներ):

Ֆակուլտետը գործուն գիտական կապեր ունի ֆիզիկայի և մաթեմատիկայի ասպարեզում արտերկրի ճանաչված բազմաթիվ կենտրոնների հետ: Նրա գիտնականների կատարած հետազոտական

աշխատանքները նպաստել են Հայաստանում գիտության զարգացմանը և միջազգային ասպարեզում մեր երկրի հեղինակության բարձրացմանը:

Այսօր ֆակուլտետում գործում է 7 ամբիոն՝ ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի անվան ընդհանուր ֆիզիկայի և աստղաֆիզիկայի (վարիչ՝ ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆ. Ատոմ Մուրադյան), բարձրագույն մաթեմատիկայի (վարիչ՝ ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆ. Մարտին Գրիգորյան), մոլեկուլային ֆիզիկայի (վարիչ՝ ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆ. Եվա Դալյան), պինդ մարմնի ֆիզիկայի (վարիչ՝ ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆ. Ալբերտ Կիրակոսյան), ակադեմիկոս Գուրգեն Սահակյանի անվան տեսական ֆիզիկայի (վարիչ՝ ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆ. Գոհար Հարությունյան), միջուկային ֆիզիկայի (վարիչ՝ ֆիզմաթ. գիտ. դոկտոր, դոց. Անահիտ Բալաբեկյան), օպտիկայի (վարիչ՝ ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆ. Ռոման Ալավերդյան):

ԵՊՀ ռեկտորի 2016 թ. ապրիլի 27-ի հրամանով ֆիզիկայի ֆակուլտետում ստեղծվել է «Ֆիզիկա» գիտահետազոտական ինստիտուտը, որի կազմում ընդգրկվել են մինչ այդ ֆակուլտետում գործող 9 գիտահետազոտական լաբորատորիաները՝ քվանտային երևույթների հետազոտման և մոդելավորման (գիտ. ղեկավար՝ պրոֆ. Ատոմ Մուրադյան), մակրոմոլեկուլների ֆիզիկայի (գիտ. ղեկավար՝ ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆ. Սամվել Հարությունյան), պինդ մարմնի ֆիզիկայի (գիտ. ղեկավար՝ պրոֆ. Ալբերտ Կիրակոսյան), տեսական ֆիզիկայի (գիտ. ղեկավար՝ պրոֆ. Արամ Սահարյան), օպտոէլեկտրոնիկայի և ֆոտոնիկայի (գիտ. ղեկավար՝ պրոֆ. Ռաֆիկ Հակոբյան), գերաբազ օպտիկայի և ֆոտոնիկայի, գծային և ոչ

գծային մոտարկման և դրանց կիրառման (գիտ. ղեկավար՝ պրոֆ. Մարտին Գրիգորյան), թաղանթների ձևագոյացման (գիտ. ղեկավար՝ տեխ. գիտ. դոկտոր, պրոֆ. Էռնեստ Նազարյան), աստղաֆիզիկական հետազոտությունների (գիտ. ղեկավար՝ ֆիզմաթ. գիտ. թեկն. Էմիլիա Կարապետյան): Ինստիտուտի տնօրեն է ընտրվել պրոֆ. Ռոման Ալավերդյանը:

Ֆակուլտետում դասավանդում են 36 պրոֆեսոր, 26 դոցենտ, 14 ասիստենտ և 2 դասախոս: Ակտիվ գիտական գործունեության վկայությունն է ֆակուլտետի գիտնականների՝ ֆիզիկայի ասպարեզում 6 անգամ ՀՀ Նախագահի և երկու անգամ ՀՀ Պետական մրցանակների արժանանալու փաստերը:

Անցյալ դարի 70-ական թվականները Հայաստանում ռադիոֆիզիկայի և կիսահաղորդչային էլեկտրոնիկայի բուռն զարգացման ժամանակաշրջան էր: Այդ ոլորտում բեղմնավոր գործունեություն էին ծավալում ինչպես մի շարք գիտահետազոտական ինստիտուտներ, այնպես էլ գիտաարտադրական միավորումներ: Առաջնահերթ խնդիր էր դարձել որակյալ կադրերի պատրաստումը, որով էլ պայմանավորված էր 1975 թ. ԵՊՀ-ում ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ստեղծումը: Այդ խնդրի անմիջական իրականացման գործում կարևոր դեր կատարեցին ՀԽՍՀ ԳԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի տնօրեն Էմիլ Միրզաբեկյանը (ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս՝ 1974 թ.-ից), գիտական աշխատանքների գծով փոխտնօրեն Ռադիկ Մարտիրոսյանը (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս՝ 1990 թ.-ից) և պրոֆեսոր Յուրի Վարդանյանը: Ֆակուլտետը, հիմնադրումից մին-

չև 2017 թ., ղեկավարել է ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆ. Յուրի Վարդանյանը, իսկ 2017-ից ֆակուլտետի ղեկանն է ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆ. Խաչատուր Ներկարարյանը:

Ֆակուլտետի կայացմանն էապես նպաստել է դեռևս անցյալ դարի կեսերին համալսարանում ստեղծված ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ամբիոնը, որի կազմավորումը մեծապես պայմանավորված էր Ֆրանսիայի առաջատար գիտական հաստատություններում մասնագիտացած պրոֆեսոր Հարություն Անժուրի (Չեքոսլավակի) հայրենաակալ գործունեությամբ:

Այսօր միկրոէլեկտրոնիկայի, կապի և տեղեկատվության մշակման համակարգերի աննախադեպ զարգացումը նորանոր պահանջներ է ներկայացնում որակյալ կադրերի պատրաստման գործընթացն ապահովող ուսումնական կառույցներին, որոնց իրականացումն անհնար է առանց արդի գիտության նվաճումների յուրացման և վերլուծման: Դա, իր հերթին, պարտադրում է ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմին ոչ միայն ակտիվորեն զբաղվել գիտական հետազոտություններով, այլև այդ աշխատանքներում ներգրավել ուսանողներին:

Ռադիոֆիզիկայի ֆակուլտետում այդ խնդիրն հիմնականում իրականացվում է հետազոտական կենտրոնի, երեք բազային լաբորատորիաների և մի շարք միջազգային ու հանրապետական ֆինանսավորմամբ դրամաշնորհների միջոցով, որոնցում գործնականում ամբողջությամբ ներգրավված է պրոֆեսորադասախոսական անձնակազմը:

Կիսահաղորդչային սարքերի և մանոտեխնոլոգիաների կենտրո-

նը, որի գիտական ղեկավարն է պրոֆեսոր Վլադիմիր Հարությունյանը (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս՝ 1996 թ.-ից), կատարում է բազմաբնույթ հետազոտություններ՝ սենսորիկայի, արեգակնային էներգետիկայի և օպտոէլեկտրոնիկայի ուղղություններով:

Ֆիզմաթ. գիտ. թեկնածուներ Վալերի Առաքելյանն ու Ջավեն Ադամյանը գործընկերների հետ հաջողությամբ շարունակում են մանոչափային կառուցվածքների հիման վրա տարբեր գազերի նկատմամբ զգայակների ստեղծման և հետազոտման աշխատանքները: Ջգայակների ընտրողունակությունը հետազոտելու նպատակով համեմատվել են մի շարք գազերի և գոլորշիների նկատմամբ դրանց արձագանքները: Ուսումնասիրվում են դեղերի ու բժշկական սարքավորումների մանրէազերծման ժամանակ ջրածնի պերօքսիդի կոնցենտրացիայի ճշգրիտ բաժնեվորման ու գործընթացի ավարտից հետո դրա մնացորդային քանակության վերահսկման համար արդյունավետ զգայակների ստեղծման հնարավորությունները:

Պրոֆեսոր Ֆերդինանդ Գասպարյանի խումբը հետազոտում է սիլիցիումային մանոլարերի և մանոթապավենների հիման վրա ստեղծված դաշտային տրանզիստորներ՝ նպատակ ունենալով դրանք օգտագործել որպես կենսաքիմիական զգայակներ: Քննարկվում են նշված զգայակների զգայության բարձրացման ուղիները:

Պրոֆեսոր Կարեն Դամբարյանին գործընկերների հետ հաջողվել է մշակել կիսահաղորդչային մանոմասնիկների աճեցման նոր տեխնոլոգիա, որի օգնությամբ ստացված արդյունքներն արժանացել են արտերկրի մի շարք հեղինակավոր լաբորատորիաների ուշադրությանը: Այլ մմանատիպ կառուցվածքների շարքում այս կառուց-

վածքները կարևոր դեր կունենան նոր սերնդի արագագործ մանոէլեկտրոնային սարքերի ստեղծման և գոյություն ունեցող սարքերի բնութագրիչների բարելավման գործում:

Կիսահաղորդչային սարքերում, կիսահաղորդչային գազազգայուն տվիչներում էլեկտրական հոսանքի ցածրահաճախային աղմուկների առաջացման, էլեկտրոնի շարժունության ֆլուկտուացիաների մեխանիզմի զարգացման և հստակեցման, ինչպես նաև կիրառական նոր հնարավորությունների բացահայտման նպատակով պրոֆեսոր Սլավիկ Մելքոնյանի խումբն ուսումնասիրում է կիսահաղորդչի հաղորդականության էլեկտրոնների համակարգի հավասարակշիռ վիճակից փոքր համաչափ շեղումների, այդ թվում՝ պատահական ֆլուկտուացիաների առաջացման և մարման օրինաչափությունները:

Ֆիզմաթ. գիտ. թեկնածու Հակոբ Մարգարյանի ղեկավարած խումբը մախագծել և ստեղծել է միաշերտ գրաֆենի ստացման սարքավորում հեղուկբյուրեղային պոլիմերների հիման վրա ստեղծված նոր սերնդի օպտիկական տարրերում օգտագործելու նպատակով: Այդ տարրերին էլեկտրական ղեկավարման համար որպես հպակային նյութ մինչ օրս օգտագործվել են ինդիումի և կապարի օքսիդները: Ունենեալով ակնհայտ առավելություններ՝ գրաֆենը հեղուկբյուրեղային տեխնոլոգիաներում օգտագործվելու լայն հեռանկարներ ունի:

Ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանի ղեկավարությամբ ենթամիլիմետրային ալիքների Գ-Հ լաբորատորիայում կատարվող հետազոտություններն առավելապես նվիրված են էլեկտրամագնիսական ալիքների սպեկտրի տերահերցային տիրույթում ազդանշան-

ների ձևավորման, տարածման, գրանցման խնդիրներին և այդ ճառագայթման օգնությամբ նյութի հատկությունների հետազոտմանը: Լաբորատորիան համալրված է տերահերցային տիրույթում սպեկտրադիտական հետազոտությունների համար անհրաժեշտ արդիական սարքավորումներով, որոնցից ֆեմտովայրկենային լազերի կիրառման հնարավորությունները բավականաչափ ընդգրկում են: Պրոֆեսոր Յուրի Ավետիսյանը գործընկերների հետ քննարկում է ինչպես լայնաշերտ հաճախանային տիրույթն ընդգրկող, այնպես էլ մեներանգ տերահերցային ճառագայթման աղբյուրների ստեղծման տաքեր եղանակներ: Դրանց թվում առավել նշանակալի արդյունքների է հաջողվել հասնել լիթիումի նիոբատի համասեռ և պարբերական բևեռացմամբ օժտված բյուրեղներում՝ իրականացնելով տերահերցային ալիքների գեներացումը ֆեմտովայրկենային լազերային իմպուլսի ուղղման միջոցով: Լաբորատորիայում դոցենտ Արմեն Մակարյանի խումբը ֆեռոմագնիսական, վակուումային և պլազմային սարքերի օգնությամբ հետազոտում է տերահերցային, օպտիկական և ԳԲՀ ճառագայթման դետեկտման հնարավորությունները: Դոցենտ Վիտալի Քալանթարյանը կենսաբանության ֆակուլտետի աշխատակիցների հետ համատեղ հետազոտում է կենսահամակարգերի վրա ենթամիլիմետրային և հարակից միլիմետրային տիրույթի էլեկտրամագնիսական ալիքների ազդեցությունը:

Պրոֆեսոր Յուրի Վարդանյանի ղեկավարությամբ նյութի էքստրեմալ վիճակների և դրանց աստղաֆիզիկական դրսևորումների ԳՀ լաբորատորիայում կատարվող հետազոտությունները վերաբերում են ծայրահեղ մեծ խտություններով և բարձր ջերմաստիճան-

ներում նյութի հատկությունների ու տիեզերքում դրա գոյության բացահայտմանը: Ուսումնասիրվել են տարօրինակ աստղերի, ինչպես նաև քվանտային կորիզով նեյտրոնային աստղերի ներքին կառուցվածքի և կայունության արդիական խնդիրները: Այս աշխատանքներում կարևոր ներդրում ունեն պրոֆեսոր Գևորգ Հաջյանն ու դոցենտ Գրիգոր Ալավերդյանը:

Պրոֆեսոր Խաչատուր Ներկարարյանի ղեկավարությամբ մանուպլազմոնիկայի ԳՀ լաբորատորիայում հետազոտվում են տեղեկատվության օպտիկական մշակմանը և փոխանցման բարելավմանը միտված հաջորդ սերնդի մանոմետրային և միկրոմետրային չափերով ինտեգրալային սարքերի տարրային հենքն ապահովող պլազմոնային պրոցեսները: Այս սարքերը պետք է համատեղեն օպտիկական մեթոդներին բնորոշ ազդանշանների գերաբազ մշակման հնարավորություններն ալիքի երկարությունից փոքր չափերով էլեկտրոնային շղթաների առավելությունների հետ:

Ֆիզմաթ. գիտ. դոկտոր Արսեն Բաբաջանյանի գլխավորած հայ-հարավկորեական դրամաշնորհի շրջանակներում իրականացվում են բարձրհաճախային ալիքների տարածման, արտապատկերման և նյութերի հետ փոխազդեցության տեսական ու փորձարարական հետազոտություններ: Հետաքրքրությունների հիմնական ուղղություններից է մոտակա դաշտի տեսածրող միկրոալիքային մանրադիտակը, որը մանոմասշտաբային ուսումնասիրություններ կատարելու յուրահատուկ փորձարարական գործիք է:

Դոցենտ Հովհաննես Հարոյանի մախաճեռնությամբ իրականացվող հայ-գերմանական դրամաշնորհի շրջանակներում, հիմնակա-

նում ուսանողների ուժերով, կատարվում է բարելավված բնութագրերով պլազմոնային մանոգրայակների մախագծում, սինթեզ և հետազոտում: Բացահայտվում են տարբեր երկրաչափական կառուցվածքներով մետաղական մանոմասնիկների համակարգերի հատկությունները և դրանց օգնությամբ կենսաբանական օբեկտների հետազոտման հնարավորությունները:

ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետի աշխատակիցներ, ֆիզմաթ. գիտ. թեկն. Տիգրան Աբրահամյանի և Միքայել Ալեքսանյանի մախսաճեռնությամբ իրականացվում են գիտական հետազոտություններ գազային և սեյսմիկ գազայակների ստեղծման ուղղությամբ: Աշխատանքներն իրականացվում են նորաստեղծ «ԵՊՀ ֆիզիկատեխնիկական հետազոտությունների կենտրոն»-ում, որը հագեցած է արդի պահանջներին բավարարող գիտատեխնիկական սարքավորումներով և գիտական հետազոտություններում ուսանողներին ներգրավելու մեծ հնարավորություններ է ստեղծում:

Ակտիվ գիտական գործունեության վկայությունն է ֆակուլտետի գիտնականների՝ երկու անգամ ՀԽՍՀ Պետական, մեկ անգամ Ուկրաինայի Պետական և երեք անգամ ՀՀ Նախագահի մրցանակների արժանանալու փաստերը:

Ֆակուլտետում դասավանդում են 14 պրոֆեսոր, 18 դոցենտ, 8 ասիստենտ և 4 դասախոս:

Քիմիայի դասավանդումը համալսարանում սկսել է 1921 թ. գյուղատնտեսական ֆակուլտետի քիմիայի ամբիոնը, որը այդ ոլորտի գիտական առաջին օջախն էր Հայաստանում, իսկ 1933 – 1934 ուստարում արդեն ստեղծվել է քիմիական ֆակուլտետը և առաջին ղեկան է նշանակվել պրոֆ. Ղազար Տեր-Ղազարյանը: Հետագայում տարբեր տարիների ֆակուլտետը ղեկավարել են Դերենիկ Մարուխյանը, Տիրան Ղազանչյանը, Վերգինե Թառայանը (ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ՝ 1956 թ.-ից), Կարո Խաչատուրյանը, Մամիկոն Դանդաշյանը, Սարգիս Ավագյանը, Սուրեն Նալչաջյանը, Աիդա Ավետիսյանը (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս՝ 1996 թ.-ից):

ԵՊՀ գիտխորհրդի 2014 թ. հունիսի 25-ի որոշմամբ ֆակուլտետը վերանվանվել է դեղագիտության և քիմիայի, իսկ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի 2016 թ. դեկտեմբերի 23-ի որոշմամբ դեղագիտության բաժնի հենքի վրա ստեղծվել է համալսարանական նոր ստորաբաժանում՝ Ֆարմացիայի ինստիտուտը (տնօրեն՝ Աշոտ Սաղյան՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս՝ 2010 թ.-ից), իսկ ֆակուլտետը կոչվել քիմիայի ֆակուլտետ: 2010 թվականից ֆակուլտետի ղեկանն է քիմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Տարիել Ղոչիկյանը:

ՀԽՍՀ կառավարության որոշմամբ համալսարան աշխատանքի հրավիրված անվանի գիտնականներ Ստեփան Ղամբարյանը, Լևոն Ռոտինյանցը, Հովհաննես Ակունյանը և ուրիշներ, մանկավարժական աշխատանքի հետ մեկտեղ համալսարանում հիմք դրեցին առաջին գիտական ուսումնասիրություններին:

Լինելով օրգանական քիմիայի ամբիոնի և լաբորատորիայի հիմնադիր ղեկավարը՝ պրոֆ. Ստեփան Ղամբարյանը հետազո-

տություններ է կատարել ֆիզիկական և օրգանական քիմիայի բնագավառում: Նրա ղեկավարությամբ մշակվել են քլորոպրենային կաուչուկի ստացման մի շարք գործընթացներ, որոնք հետագայում կարևոր նշանակություն ունեցան «Նաիրիտ»-ի գործարկման ընթացքում: Ստ. Ղամբարյանը Հայաստանում քիմիական գիտության և քիմիական արտադրության կազմակերպիչներից էր: Միաժամանակ նախաձեռնել ու մասնակցել է գիտական առաջին լաբորատորիաների ստեղծմանը Հայաստանում, որոնք հետագայում վերաճել են գիտահետազոտական ինստիտուտների:

Քիմիական ջերմադինամիկայի բնագավառում այսօր էլ ուշագրավ են Հայաստանում ֆիզիկական քիմիայի դպրոցի հիմնադիր, պրոֆ. Լևոն Ռոտինյանցի ուսումնասիրությունները:

Առաջինը Հայաստանում պրոֆ. Տիրան Ղազանչյանն էր, որ ստեղծեց ֆիզիկաքիմիական անալիզի լաբորատորիա և իր հետազոտություններում միջնադարյան մատենագրական նյութերի հիման վրա համակարգեց, քննարկեց ու ներկայացրեց Հայաստանում քիմիայի ծագման և զարգացման պատմությունը: Իսկ պրոֆ. Վերգինե Թառայանի գիտական հետազոտությունների շնորհիվ վերլուծական քիմիայի ամբիոնը ճանաչվել է որպես այդ ուղղության նշանավոր գիտական կենտրոններից մեկը:

Պրոֆ. Հովհաննես Չալթիկյանը (ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ՝ 1961 թ.-ից) մշակել է կուպրոկատալիզի հիմունքները: Ստեղծվել է պոլիմերացման գործընթացների կինետիկայի ճյուղային գիտահետազոտական լաբորատորիա, որի գործունեության արդյունքները ներդրվել են այն ժամանակ Հայաստանում մեծ թափով զարգացող

քիմիական արդյունաբերության մեջ:

Պրոֆ. Մամիկոն Դանդյանի՝ բազմաֆունկցիոնալ γ -լակտոնների սինթեզի ուսումնասիրությունների շնորհիվ հանրապետությունում լայն զարգացում ապրեց լակտոնների քիմիան: Նշանակալի են նաև պրոֆ. Կարո Խաչատրյանի՝ նյութի կառույցի սպեկտրոսկոպիական, ինչպես նաև հեղուկների և լուծույթների մակերևութային լարվածության ջերմադինամիկայի և հրթիռային շարժիչներում այրման պրոցեսների տեսության հարցերին վերաբերող հետազոտությունները:

Մեծ է ակադեմիկոս Աիդա Ավետիսյանի ներդրումը հատկապես թթվածին, ազոտ, ծծումբ պարունակող հետերոցիկլիկ օրգանական միացությունների սինթեզի և ուսումնասիրության ոլորտում: Իսկ պրոֆ. Նորայր Բեյլերյանի ղեկավարությամբ ամին-պերօքսիդներ համակարգերի բնագավառում իրականացված գիտական հիմնարար հետազոտությունները տվել են կարևոր արդյունքներ, որոնք կիրառություն են գտել հանրապետության քիմիական արտադրության մեջ:

Ֆակուլտետում ակտիվ գիտահետազոտական գործունեություն են ծավալում պրոֆեսորներ Սուրեն Խառատյանը (ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ՝ 2010 թ.-ից), Շիրազ Մարգարյանը, Գևորգ Փիրումյանը, Տարիել Դոչիկյանը, Նարինե Դուրգարյանը, Ռոմիկ Հարությունյանը, Համբարձում Խաչատրյանը և ուրիշներ: Նրանց գիտական հիմնարար ուսումնասիրությունների արդյունքները բարձր գնահատականի են արժանանում թե՛ հայրենական և թե՛ արտերկրի գիտական շրջանակներում:

Ֆակուլտետում կատարվող ակտիվ գիտական աշխատանք-

ների համար ՀՀ Նախագահի մրցանակի են արժանացել Շիրազ Մարգարյանը (2002 թ.), Աիդա Ավետիսյանը (2004 թ.), Աշոտ Սաղյանը (2004 թ., 2011 թ.), Համբարձում Խաչատրյանը (2005 թ.), Սուրեն Խառատյանը (2008 թ.), Խաչատուր Մանուկյանը (2008 թ.) և Հայկ Խաչատրյանը (2008 թ.):

Այսօր ֆակուլտետում գործում է 3 ամբիոն՝ անօրգանական և անալիտիկ քիմիայի (վարիչ՝ քիմ. գիտ. թեկնածու, դոց. Արմեն Մարտիրոսյան), օրգանական քիմիայի (վարիչ՝ քիմ. գիտ. դոկտոր, պրոֆ. Նարինե Դուրգարյան), ֆիզիկական և կոլոիդ քիմիայի (վարիչ՝ քիմ. գիտ. դոկտոր, պրոֆ. Շիրազ Մարգարյան), գիտահետազոտական 3 լաբորատորիա՝ անօրգանական քիմիայի (գիտ. ղեկավար՝ պրոֆ. Ռոմիկ Հարությունյան), օրգանական քիմիայի (գիտ. ղեկավար՝ պրոֆ. Տարիել Ղոչիկյան), ֆիզիկական քիմիայի (գիտ. ղեկավար՝ պրոֆ. Շիրազ Մարգարյան), ինչպես նաև էկոլոգիական անվտանգության կենտրոն (գիտ. ղեկավար՝ պրոֆ. Գևորգ Փիրումյան):

Ֆակուլտետում դասավանդում են 10 պրոֆեսոր, 18 դոցենտ, 6 ասիստենտ և 2 դասախոս:



Ստեփան Դամբարյանը քիմիայի
լաբորատորիայում



Լևոն Ռոտինյանցը գործընկերների հետ



Վերգինե Թառայանը լսարանում



Ակադեմիկոս
Միքայել Չայլախյան



Ակադեմիկոս Էզրաս Հասրաթյանը
ուսանողների հետ

Մեծ է ԵՊՀ-ի դերը Հայաստանում կենսաբանության բնագավառի բարձրակարգ գիտակրթական կադրերի պատրաստման և կենսաբանական գիտության տարբեր ոլորտների զարգացման գործում:

Կենսաբանական դասընթացներ համալսարանում դասավանդվել են սկսած 1921 թ.-ից, նախ բնագիտական, ապա՝ բժշկական ու գյուղատնտեսական ֆակուլտետներում, իսկ 1924 թ.-ից՝ մանկավարժական բաժնի կենսաբանական ենթաբաժնում: 1931 – 1932 ուստարում ենթաբաժինը դարձել է կենսաբանական, հետագայում կենսաբանության ֆակուլտետ, որը ղեկավարել են Դավիթ Գզգզյանը, պրոֆ. Ավետիք Տեր-Պողոսյանը, դոցենտներ Խորեն Գյուլբեկյանը, Ալմաստ Մինասյանը, Աշխեն Հարությունյանը, պրոֆ. Հրանտ Բատիկյանը, դոց. Դինա Չոլախյանը, պրոֆ. Միսակ Դավթյանը (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս՝ 1996 թ.-ից), Հենրիկ Սեմերջյանը, պրոֆ. Լիա Օսիպյանը (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս՝ 1996 թ.-ից): 2000 թվականից ֆակուլտետի ղեկանն է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ (2006 թ.), կենսաբ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Էմիլ Գևորգյանը:

Բուսաբանության, բույսերի ֆիզիոլոգիայի և անատոմիայի ոլորտների զարգացման գործում անուրանալի է պրոֆեսորներ Հովակիմ Բեդելյանի, Նիկոլայ Տրոիցկու, Արմեն Թախտաջյանի (ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս՝ 1971 թ.-ից, ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս՝ 1972 թ.-ից), Միքայել Չայլախյանի (ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս՝ 1968 թ.-ից, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս՝ 1971 թ.-ից) ներդրումը: Ա. Թախտաջյանի աշխատանքները համաշխարհային ճանաչում ստացան, իսկ հեղինակը 1981 թ. արժանացավ ԽՍՀՄ Պետական մրցանակի: Դարյա Տետերևնիկովա-Բաբայանի (ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ՝

1960 թ.-ից), տարիներ անց Լիա Օսիպյանի, պրոֆեսորներ Սիրանուշ Նանագուլյանի, Սուսաննա Բադալյանի գիտական գործունեության շնորհիվ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետը դարձավ անկախության բնագավառի ճանաչված գիտակրթական կենտրոն:

Համալսարանում կենդանաբանական հետազոտությունների սկիզբը կապված է հայտնի կենդանաբան Ավետիք Տեր-Պողոսյանի անվան, այնուհետև ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ Իլյա Դարևսկու գործունեության հետ, որն առաջինը Հայաստանում հայտնաբերեց և հայ գործընկերների անմիջական աջակցությամբ (պրոֆ. Ֆելիքս Դանիելյան) հետազոտեց ժայռամողեսների կուսածնության երևույթը:

Պրոֆեսորներ Տիգրան Մուշեղյանը, Էզրաս Հասրաթյանը (ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ՝ 1939 թ.-ից, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս՝ 1947 թ.-ից), Հովհաննես Բակլավաջյանը (ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս՝ 1947 թ.-ից), Սարգիս Հակոբյանը ֆիզիոլոգիական ուսումնասիրությունների բնագավառում հասան մեծ ձեռքբերումների՝ առաջնորդվելով հայ ֆիզիոլոգների հանրաճանաչ դպրոցի (Լևոն Օրբելի, Խաչատուր Կոչտոյանց, Անդրանիկ Քարամյան, Վիկտոր Ֆանարջյան և ուրիշներ) ավանդույթներով:

Դեռևս 20-ական թվականներից համալսարանում սկսված և այսօր էլ ակտիվորեն շարունակվող գենետիկայի և սելեկցիայի բնագավառի հետազոտություններում մեծ արդյունքների հասան պրոֆեսորներ Հրանտ Բատիկյանը և Ռուբեն Հարությունյանը (ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ՝ 2006 թ.-ից): Ագրոքիմիայի հիմնախնդիրներին վերաբերող գիտական ու գիտաարտադրական լայն

գործունեություն է ծավալել պրոֆ. Գագիկ Դավթյանը (ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս՝ 1950 թ.-ից):

Կենսաքիմիայի ոլորտում ուսումնասիրություններ կատարվել են 1922 թ. ԵՊՀ-ում բացված բժշկական ֆակուլտետում (պրոֆեսորներ Հակոբ Հովհաննիսյան, Հրաչյա Բունիաթյան՝ ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս՝ 1950 թ.-ից), հետագայում՝ կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի ամբիոնում կատարվել են ամինաթթուների կենսաքիմիայի (պրոֆ. Մկրտիչ Տեր-Կարապետյան՝ ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս՝ 1956 թ.-ից), համեմատական և էվոլյուցիոն կենսաքիմիայի (պրոֆ. Միսակ Դավթյան) հարցերին մվիրված հետազոտություններ:

Համալսարանի կենսաբանության ֆակուլտետի համապատասխան ամբիոններում այսօր էլ հաջողությամբ իրականացվում են կենսաբանության ժամանակակից ոլորտների՝ կենսաֆիզիկայի, կենսաքիմիայի ու մոլեկուլային կենսաբանության, կենսատեխնոլոգիայի, էկոլոգիայի հիմնախնդիրներին վերաբերող գիտական ուսումնասիրություններ (պրոֆեսորներ Գերասիմ Փանոսյան, Էմիլ Գևորգյան, Արմեն Թռչունյան (ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ՝ 2006 թ.-ից), Պողոս Վարդևանյան):

2015 թ. ֆակուլտետում ստեղծվել է «Կենսաբանության գիտահետազոտական ինստիտուտ», որն ունի 9 լաբորատորիա: Ինստիտուտի տնօրենն է կենս. գիտ. թեկն., դոցենտ Ալեքսանդր Եսայանը: Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ ֆակուլտետում գործում են նաև 2 գիտակրթական կենտրոններ՝ Կիրառական կենսաբանության գերազանցության կենտրոնը և Մանրէաբանական կենսատեխնոլոգիաների և կենսավառելիքի նորարարական կենտրոնը:



Ակադեմիկոս
Նորայր Սիսակյան



Նորայր Սիսակյանը Մխիթարյան
միաբանների հետ

Այսօր ֆակուլտետում գործում է 7 ամբիոն. բուսաբանության և սնկաբանության (վարիչ՝ կենս. գիտ. դոկտոր, պրոֆ. Սիրանուշ Նանագուլյան), կենդանաբանության (վարիչ՝ կենս. գիտ. դոկտոր, դոց. Մարինե Առաքելյան), կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի (վարիչ՝ կենս. գիտ. դոկտոր, պրոֆ. Արմեն Թռչունյան), գենետիկայի և բջջաբանության (վարիչ՝ կենս. գիտ. դոկտոր, պրոֆ. Ռուբեն Հարությունյան), Մուշեղյանի անվան մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի (վարիչի պաշտոնակատար՝ կենս. գիտ. թեկն., դոց. Անահիտ Առաքելյան), էկոլոգիայի և բնության պահպանության (վարիչ՝ կենս. գիտ. թեկն., դոց. Նելլի Հովհաննիսյան), կենսաֆիզիկայի (վարիչ՝ կենս. գիտ. դոկտոր, պրոֆ. Պողոս Վարդևանյան):

Ֆակուլտետում դասավանդում են 16 պրոֆեսոր, 38 դոցենտ, 25 ասիստենտ և 3 դասախոս:

Երևանի պետական համալսարանում աշխարհագրական և երկրաբանական դասընթացներ դասավանդվել են դեռևս 1921 թ.: 1933 – 1934 ուստարում Հայաստանի լուսժողովմատի որոշմամբ և ռեկտոր Տիգրան Մուշեղյանի, պրոֆեսորներ Հայրապետ Հովհաննիսյանի, Տիգրան Ջրբաշյանի, Հովհաննես Կարապետյանի աջակցությամբ ստեղծվել է երկրաբանաաշխարհագրական ֆակուլտետը, ղեկան է նշանակվել Տիգրան Ջրբաշյանը: Իր գոյության շուրջ 85 տարիների ընթացքում ֆակուլտետի աշխարհագրական և երկրաբանական բաժինները մի քանի անգամ առանձնացել են, դարձել ինքնուրույն աշխարհագրական և երկրաբանական ֆակուլտետներ,

ապա կրկին միավորվել: Այս ֆակուլտետները տարբեր տարիների ղեկավարել են պրոֆեսորներ Հայրապետ Հովհաննիսյանը, Հովհաննես Ստեփանյանը, դոցենտներ Արամ Օհանյանը, Թադևոս Կարապետյանը, պրոֆ. Թադևոս Հակոբյանը, դոցենտներ Պերճ Բոշնադյանը, Սերգեյ Բալասանյանը, Վաչե Հասրաթյանը, Հոդմիկ Սարգսյանը, Երեմ Եղիազարյանը, պրոֆ. Հրաչյա Գաբրիելյանը, դոցենտներ Կիրակոս Օհանյանը, Խաչիկ Նազարյանը, պրոֆ. Լեմվել Վալեսյանը, դոցենտներ Աշոտ Խոյեցյանը, Մարատ Գրիգորյանը: Վերջին միավորումը կատարվել է 2008 թ., աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ղեկան է ընտրվել երկր.-հանք. գիտ. թեկնածու, դոցենտ Մարատ Գրիգորյանը:

Ֆակուլտետում գիտական հետազոտություններ են կատարվել սոցիալ-տնտեսական և ֆիզիկական աշխարհագրության, բնական լանդշաֆտների, քարտեզագրության, գեոմորֆոլոգիայի, ֆիզիկաաշխարհագրական և ջրաօդերևութաբանական, օգտակար հանածոների որոնման և հետախուզման, երկրակեղևի խորքային կառուցվածքի երկրաշարժերի, սողանքային երևույթների ջրաերկրաբանական, հանքաբանության, երկրաֆիզիկական դաշտերի ուսումնասիրման ոլորտներում: Ստեփան Լիսիցյանի, Հրաչյա Գաբրիելյանի, Լեմվել Վալեսյանի, Սողոմոն Բալյանի, Խաչիկ Նազարյանի կողմից իրականացված՝ հանրապետության ռելիեֆի ուսումնասիրության ոլորտում ձեռք բերված արդյունքների հիման վրա կազմվել են խոշոր մասշտաբի տարբեր քարտեզներ: Գիտնականները հետազոտել են հանրապետության տարածքի էրոզիոն, սելավային և ընդհանուր տեղատարման երևույթները, կլիմայական

պայմանները:

Երկրաբանության բնագավառում արժեքավոր հետազոտություններ են կատարվել ՀՀ տարածքի խորքային երկրաբանական կառուցվածքի, սեյսմիկ շրջանացման (պրոֆեսորներ Արշալույս Գաբրիելյան՝ ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս՝ 1982 թ.-ից, Հոդմիկ Սարգսյան, Գառնիկ Սիմոնյան), օգտակար հանածոների հանքավայրերի (պրոֆ. Բաբկեն Վարդապետյան), մագմատիզմի (պրոֆ. Սերգեյ Բալասանյան), ջրաբանության (դոց. Վ. Ավետիսյան), ինժեներական երկրաբանության (դոց. Պ. Բոշնադյան), երկրաֆիզիկական դաշտերի (դոցենտներ Հ. Վանցյան, Էդ. Հաջիմամուդով, Լ. Թադևոսյան), սողանքային երևույթների (դոց. Մ. Գրիգորյան) ուսումնասիրության ոլորտներում:

Մեծածավալ աշխատանքներ են կատարվել տարբեր հիդրոտեխնիկական կառույցների ինժեներաերկրաբանական պայմանների հիմնավորման ուղղությամբ (պրոֆ. Վարդգես Ավետիսյան, դոց. Պերճ Բոշնադյան): Ֆակուլտետի աշխատակիցները գործուն մասնակցություն են ունեցել հանրապետության ստորերկրյա ջրային ռեսուրսների հետախուզման, շահագործողական պաշարների գնահատման, ինչպես նաև հիդրոերկրաբանական շահագործողական պաշարների և հանքային ջրերի քարտեզների կազմման գործում: Մեծ ավանդ է ներդրվել Երևանի, Գյումրիի, Վանաձորի, ինչպես նաև Երևանի մետրոպոլիտենի պաշտպանության միջոցառումների մշակման գործում:

Երկրաբան դասախոսների ջանքերով կազմվել և հրատարակվել են տարբեր մասշտաբների երկրաբանական, տեկտոնական,

սեյսմատեկտոնական և այլ քարտեզներ:

Արժանահիշատակ է պրոֆ. Հովհաննես Մաղաքյանի (ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս՝ 1948 թ.-ից) վաստակը: Նրա գիտական ղեկավարությամբ են սկսվել տարածքային մետաղածագումնաբանական հետազոտությունները, կազմվել Փոքր Կովկասի ու Հայաստանի առաջին մետաղածագումնաբանական քարտեզները: Նա Հայաստանում մետաղների ծագումնաբանության և հանքաքան-երկրաքան-քիմիկոսների դպրոցի հիմնադիրն է: Գիտության մեջ իր կարևոր ներդրումների համար Հովհաննես Մաղաքյանն արժանացել է ԽՍՀՄ (1950 թ.) և ՀԽՍՀ (1976 թ.) Պետական մրցանակների:

Այսօր էլ մեծ է ֆակուլտետի գիտնականների ավանդը երկրակեղևի կառուցվածքի, օգտակար հանածոների որոնման և հետախուզման, ջրամբարների, քաղաքների կառուցման, ինժեներաերկրաբանական, ջրաերկրաբանական, ջրաբանական, բնօգտագործման, բնապահպանական խնդիրների լուծման, երկրաշարժերի կանխատեսման, սողանքային երևույթների, ջրային պաշարների ուսումնասիրման և գնահատման հարցերում, ինչպես նաև բարձր որակավորման մասնագետների պատրաստման գործում:

Ուսումնական գործընթացը և գիտահետազոտական աշխատանքները առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով ֆակուլտետը համագործակցում է հանրապետության և արտերկրի բուհական ու գիտահետազոտական կազմակերպությունների հետ:

Վերջին տարիներին ֆակուլտետի աշխատակիցները հրատարակել են մի շարք արժեքավոր մենագրություններ և ուսումնական ձեռնարկներ:

Այսօր ֆակուլտետում գործում է 8 ամբիոն. օգտակար հանածոների հանքավայրերի որոնման և հետախուզման (վարիչ՝ երկր.-հանք. գիտ. թեկն., դոց. Ռուբեն Մովսեսյան), երկրաֆիզիկայի (վարիչ՝ երկր.-հանք. գիտ. թեկն., դոց. Գագիկ Մարկոսյան), ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության (երկրաբ. գիտ. դոկտոր, պրոֆ. Սարգիս Հայրոյան), ռեզիդուալ երկրաբանության, պետրոլոգիայի և օգտակար հանածոների հանքավայրերի (վարիչ՝ երկր.-հանք. գիտ. թեկն., դոց. Շահեն Խաչատրյան), ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության (վարիչ՝ աշխարհ. գիտ. թեկն., դոց. Հասմիկ Բալյան), սոցիալ-տնտեսական աշխարհագրության (վարիչ՝ աշխարհ. գիտ. թեկն., դոց. Նարեկ Հարությունյան), քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի (վարիչ՝ աշխարհ. գիտ. թեկն., դոց. Պետրոս Դավթյան), սերվիսի (վարիչ՝ աշխարհ. գիտ. թեկն., դոց. Գոռ Ալեքսանյան), ինչպես նաև կիրառական երկրաբանության ԳՀ լաբորատորիա (գիտ. ղեկավար՝ դոց. Մարատ Գրիգորյան)

Ֆակուլտետում դասավանդում են 6 պրոֆեսոր, 25 դոցենտ, 13 ասիստենտ և 18 դասախոս:

ԵՊՀ գիտնականները համատեղ գիտահետազոտական աշխատանքներ են իրականացում նաև արտերկրի տարբեր համալսարանների հետ, որոնց արդյունքները հրատարակվում են տեղական և արտասահմանյան հեղինակավոր պարբերականներում, ներկայացվում միջազգային գիտաժողովներում ու սեմինարներում: Նրանք ոչ միայն գործուն մասնակցություն են ունենում հանրապետական և

միջազգային տարբեր գիտաժողովների ու համաժողովների, գիտական սեմինարների ու քննարկումների, այլև հաճախ իրենք են հանդես գալիս նախաձեռնողի դերում: Դրանց ակտիվորեն մասնակցում են բարձրակարգ մասնագետներ արտերկրի տարբեր համալսարաններից: Նման միջոցառումները մեծապես նպաստում են համալսարանի գիտական ներուժի միջազգային ճանաչմանը, անշուշտ նաև համալսարանի գիտահետազոտական գործունեության խթանման և միջազգային կապերի ընդլայնման գործին:



Ֆակուլտետի դասախոսական կազմը, 1960 թ.



Ուսանողների արտադրական պրակտիկան



Հնդկաստանի նախագահ
դոկտոր Սարվապալի Ռադհակրիշնայի այցը ԵՊՀ, 1964 թ.



Ռուսաստանի Դաշնության նախագահ
Վլադիմիր Պուտինը ԵՊՀ-ում, 2001 թ.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Երևանի պետական համալսարանի միջազգային կապերը սկզբնավորվել են դեռևս նրա հիմնադրման առաջին տարիներից, երբ Ռուսաստանից, Եվրոպայից և այլ երկրներից անվանի մասնագետներ հրավիրվեցին Մայր բուհում դասավանդելու, իսկ սփյուռքահայ երիտասարդների առաջին խմբերը համալսարանում ուսանելու եկան 1926 – 1927 թվականներից: Հետպատերազմյան տարիներին սկիզբ է դրվել միջհամալսարանական կապերին, որի շնորհիվ աճել է արտերկրից եկած ուսանողների թիվը:

1981 թվականից, քսան տարի անընդմեջ, դոց. Ռաֆայել Մաթևոսյանը՝ զբաղեցնելով ԵՊՀ միջազգային կապերի գծով պրոռեկտորի պաշտոնը, մեծ աշխատանք է տարել տասնյակ երկրների առաջատար բուհերի հետ փոխադարձ կապերի լայն ցանցի, ինչպես նաև Հայաստան-Սփյուռք կապերի ստեղծման ու զարգացման գործում: 1994 թ. աշնանը մեծ շուքով նշվեց ԵՊՀ հիմնադրման 75-ամյակը, որը լայն հնչեղություն ունեցավ և մեծապես նպաստեց համալսարանի միջազգային ճանաչման ու կապերի ընդլայնման գործին:

Հայաստանի անկախացումից հետո 1995 – 1996 թթ. ԵՊՀ-ի ընդհանուր գործունեության վերափոխումների շարքում կարևորվում

Էին նաև միջազգային համագործակցության ոլորտի բարեփոխումները: Այդ ուղղությամբ կատարվեցին լայնածավալ աշխատանքներ, որոնք նպատակաուղղված էին օտարերկրյա հեղինակավոր համալսարանների, գիտակրթական հաստատությունների, դրամաշնորհներ հատկացնող հիմնադրամների և ծրագրերի, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ փոխշահավետ համագործակցության զարգացմանը և նոր կապերի հաստատմանը:

2006 թ. ԵՊՀ-ում ստեղծված Միջազգային համագործակցության վարչության (պետ՝ Ալեքսանդր Մարգարով) ջանքերով համալսարանի միջազգային կապերն ու համագործակցությունը, համաշխարհային գիտակրթական գործընթացներում ԵՊՀ-ի ինտեգրումը, տարբեր համալսարանների հետ պայմանագրերի կնքումը և բազմաթիվ այլ հարցեր նորովի իմաստավորվեցին և առավել արդյունավետ լուծումներ ստացան:

Վարչության կազմում այսօր գործում են միջազգային կապերի, օտարերկրյա սովորողների կրթության կազմակերպման և գրանտների բաժինները:

Միջազգային կապերի բաժինը (պետ՝ Մուրադ Նուրիջանյան) իրականացնում է արտերկրի համալսարանների գիտական կենտրոնների հետ պայմանագրերի և համաձայնագրերի կնքման բանակցային գործընթացների կազմակերպում, ծրագրերի աշխատանքային պլանների նախապատրաստում, դրանց համապատասխան՝ պայմանագրի կողմ հանդիսացող ԵՊՀ ստորաբաժանումների և անհատ դասախոսների, գիտնականների գործունեության կազմակերպում ու վերահսկում:



Ռումինիայի նախագահ
Իոն Իլիեսկուն ԵՊՀ-ում, 2001 թ.



Ղազախստանի նախագահ
Նուրսուլթան Նազարբաևի այցը
ԵՊՀ, 2001 թ.



Վրաստանի նախագահ
Էդուարդ Շվարցնաձեն
ԵՊՀ-ում, 2004 թ.



Լեհաստանի նախագահ
Ա. Կվաշնևսկին ԵՊՀ-ում



Լիտվիայի նախագահ
Վ. Ադամկուսի այցը
ԵՊՀ, 2003 թ.



Էստոնիայի նախագահ
Արնոլդ Ռոյտսելը ԵՊՀ-ում, 2004 թ.



Իրանի նախագահ
Մոհամմադ Խաթամի,
2004 թ.

Օտարերկրյա սովորողների կրթության կազմակերպման բաժնում (պետ՝ Ալեքսանդր Վիրաբյան) զբաղվում են ԵՊՀ սփյուռքահայ բարերարների, բարեկամների, շրջանավարտների հետ նոր կապերի հաստատմամբ, առկա կապերի ընդլայնմամբ, հայկական համայնքների հետ համագործակցության հնարավոր շահավետ ու լորտների որոնմամբ, աշխատանքային ծրագրերի մշակմամբ, օտարերկրյա քաղաքացիների ընդունելության և նրանց ուսումնառությանն առնչվող տարբեր գործառնություններով: Բաժինը սերտորեն համագործակցում է Գալուստ Գյուլպենկյան հաստատության հայկական ծառայությունների բաժանմունքի, ԱՄՆ Վարդանանց ասպետների միության, Ամերիկահայ արվեստագետների միության, Բեյրութի համագգայինի հայագիտական բարձրագույն հիմնարկի և հայկական այլ կառույցների հետ:

Գրանտների բաժինը կատարում է ԵՊՀ գիտակրթական հետաքրքրություններին համապատասխան՝ դրամաշնորհային ծրագրերին վերաբերող տեղեկատվության վերլուծություն, համալսարանի զարգացման հեռանկարային ուղղությունների մասին ձեռք բերված տեղեկատվության վերլուծություն ու կանոնակարգում, գիտակրթական գործող ծրագրերի համախմբում և դրանց վերաբերյալ համապատասխան տեղեկատվության տրամադրում ֆակուլտետներին, համահամալսարանական ֆինանսավորման ներկայացված նախագծերի նախապատրաստում և այլ գործառնություններ:

Այսօր Երևանի պետական համալսարանը տասնամյակների ընթացքում ձեռք բերած իր գիտական նվաճումներով և ընդլայնվող համագործակցային կապերի շնորհիվ միջազգային լայն ճանաչում

ու հեղինակություն է վայելում: Դրա վառ ապացույց են բազմաթիվ երկրների ղեկավարների ու դեսպանների, միջազգային խոշոր կազմակերպությունների ներկայացուցիչների ու պատվիրակությունների, նշանավոր գիտնականների այցելությունները համալսարան: Այցելուներից շատերին շնորհվել է պատվավոր դոկտորի կամ պրոֆեսորի կոչում: ԵՊՀ առաջին պատվավոր դոկտորի կոչմանն է արժանացել 1925 թ. համալսարան այցելած նորվեգացի գիտնական-հետազոտող, հումանիստ Ֆրիտյոֆ Նանսենը, ով հաղթահարելով բազում դժվարություններ, մարդասիրական ուղիներով հայթայթել է անհրաժեշտ միջոցներ ու կազմակերպել թուրքական յաթաղանից մազապուրծ 7 հազար հայ գաղթականների հայրենադարձությունը Խորհրդային Հայաստան:

ԵՊՀ-ն լայնորեն ներգրավված է միջազգային ծրագրերում և անդամ է Համալսարանների միջազգային ընկերակցության, Եվրոպական համալսարանների ընկերակցության, Եվրասիական համալսարանների ընկերակցության, Սևծովյան երկրների համալսարանների ցանցի ընկերակցության, Ռեկտորների ռուսաստանյան միության, Ֆրանկոֆոն համալսարանների միջազգային ասոցիացիայի, Կոլեկտիվ անվտանգության վերաբերյալ պայմանագրի իրագործման համալսարանական լիգայի և լիիրավ անդամ Համալսարանների ղեկավարների միջազգային ընկերակցության:

1995 – 1996 ուստարում համալսարանը համագործակցում էր 26 երկրների 84 համալսարանների ու այլ հաստատությունների հետ, որի շրջանակներում արտասահմանյան երկրներ են գործուղվել 184 մարդ (60-ը՝ ուսանողներ և ասպիրանտներ): Իսկ 2017 – 2018 ուս-



Ֆինլանդիայի նախագահ
Տարյա-Հալոնե, 2005թ.



Բուլղարիայի նախագահ
Գեորգի Պարվանով, 2004 թ.



Լատվիայի նախագահ
Վայրա-Վիկե Ֆրեյերգա, 2005 թ.



Ռումինիայի նախագահ
Տրայան Բասեսկուն ԵՊՀ-ում,
2006 թ.



Իրանի նախագահ
Մահմուդ Ահմադինեժադը
ԵՊՀ-ում, 2007 թ.



Խորվաթիայի նախագահ
Ստյեպան Մեսիչի այցը ԵՊՀ,
2009 թ.



Լատվիայի նախագահ Վալդիս
Ջատկերսը ԵՊՀ-ում, 2009 թ.



Հանդիպում
Հունաստանի նախագահ
Կարոլոս Պապուլիասի
հետ, 2007 թ.

տարում իրականացվել է 650 գործուղում (450 դասախոս և վարչական աշխատող, 200 ուսանող և ասպիրանտ):

ԵՊՀ-ն այսօր միջազգային համագործակցության պայմանագրեր ու համաձայնագրեր է կնքել աշխարհի շուրջ 50 երկրների 229 համալսարանների, գիտակրթական հաստատությունների և միջազգային կազմակերպությունների հետ, այդ թվում՝ Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարան, Սանկտ Պետերբուրգի պետական համալսարան, Կազանի դաշնային համալսարան (ՌԴ), Բոլոնիայի համալսարան, Պերուջիայի օտարազգիների համալսարան, Կա՝ Ֆոսկարիի համալսարան (Իտալիա), Ռոստոկի համալսարան, Ջիգենի համալսարան (Գերմանիա), Փոլ Վալերի Մոնպելիե-III համալսարան, Մոնպելիե-I համալսարան, Պրովանսի համալսարան, Արևելյան լեզուների և մշակույթների ազգային ինստիտուտ (Ֆրանսիա), Անտվերպենի համալսարան (Բելգիա), Վիլնյուսի համալսարան (Լիտվա), Կալիֆորնիայի համալսարան, Անն Արբոր Միչիգանի համալսարան, Արիզոնայի համալսարան (ԱՄՆ), Սալոնիկի Արիստոտելի անվան համալսարան, Կրետեի տեխնիկական համալսարան (Հունաստան), Վարշավայի համալսարան, Կրակովի Յագելոնյան համալսարան (Լեհաստան), Տոկիոյի Սոկա համալսարան (Ճապոնիա), Կահիրեի համալսարան (Եգիպտոս), Հալեպի համալսարան (Սիրիա), Թբիլիսիի Ի. Ջավախիշվիլու անվան պետական համալսարան (Վրաստան), Մադոբնգուլիի անվան թուրքմենական պետական համալսարան (Թուրքմենստան), Քուվեյթի համալսարան, Ն. Գումիլյովի անվան Եվրասիական ազգային համալսարան (Ղազախստան) և այլն:

ԵՊՀ-ի և արտերկրյա համալսարանների ու հաստատությունների հետ կնքված պայմանագրերի շրջանակներում կազմակերպվում են փոխայցելություններ, որոնց ընթացքում քննարկվում են երկկողմ հետաքրքրություններ կայացնող խնդիրներ՝ դրանով իսկ ամրապնդելով և էլ ավելի զարգացնելով արդեն առկա համագործակցային կապերը:

ԵՊՀ և օտարերկրյա համալսարանների ռեկտորների ու պատվիրակությունների փոխայցելությունները նույնպես նպաստում են երկկողմ համագործակցության և գիտակրթական կապերի ընդլայնմանը: Վերջին տարիներին ԵՊՀ են ժամանել մի շարք պատվիրակություններ Ռուսաստանի Դաշնությունից, Գերմանիայից, Եգիպտոսի Արաբական Հանրապետությունից, Քուվեյթից, Թուրքմենստանից, Ֆրանսիայից, Ամերիկայի Միացյալ Նահանգներից և այլ երկրներից:

Ավանդույթ է դարձել Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Գերմանիայի, Իտալիայի, Լեհաստանի, Բուլղարիայի, Եգիպտոսի, Իրանի, Վրաստանի, Ղազախստանի, Սիրիայի, Լիբանանի և այլ երկրների համալսարանների մասնագետների այցը Երևանի պետական համալսարան: Նրանք, ապահովելով աշխատանքի համար անհրաժեշտ պայմաններով, ԵՊՀ տարբեր ֆակուլտետներում ու գիտական կենտրոններում անց են կացնում մասնագիտական դասընթացներ, դասավանդում գերմաներեն, իսպաներեն, պորտուգալերեն, լեհերեն և արաբերեն: Օտարերկրյա մասնագետների համար կազմակերպվում են ճանաչողական այցեր և մշակութային ծրագրեր:

Համալսարանի մասնագետները, ուսանողներն ու ասպիրանտ-



ԵՊՀ պատվիրակությունը Տոկիոյի Սոկա համալսարանում, 2013 թ.



Թուրքմենստանի նախագահ
Գուրբանգուլի Բերդիմուխամեդովը ԵՊՀ-ում,
2012 թ.

ները գործուն մասնակցություն են ունենում միջազգային տարբեր գիտաժողովների, սեմինարների և քննարկումների կազմակերպմանը, ընդգրկվում միջբուհական փոխանակման նախագծերում, միաժամանակ գիտակրթական միջոցառումների և տեղեկատվական ցուցահանդեսների կազմակերպման գործում աջակցում ՀՀ-ում գործող միջազգային կազմակերպություններին և հավատարմագրված դեսպանություններին: Վերջին տարիներին առանձնակի ակտիվություն է նկատվում «Տեմպուս»-ի, «Էրազմուս Մոնդուս»-ի, «Էրազմուս+»-ի շրջանակներում իրականացվող նախագծերի մշակման, գիտակրթական ծրագրերի իրագործման ասպարեզում, որոնց նպատակն է խթանել միջազգային համագործակցությունը, ընդլայնել ուսանողների, դասախոսների և հետազոտողների փոխանակումները և աջակցել նրանց շարժունակությանը:

Համագործակցության շրջանակներում ԵՊՀ-ի ֆակուլտետներում սովորել են բազմաթիվ երկրների քաղաքացիներ: Այդ գործընթացն առավել արդյունավետ է դարձել ԵՊՀ բարեփոխումներից հետո: Եթե 1995 – 1996 ուստարում ԵՊՀ-ում սովորում էր 130 օտարերկրացի, ապա 2017 – 2018 ուստարում համալսարանն ունեցել է 422 օտարերկրացի ուսանող, ստաժոր ու ասպիրանտ:

Արդյունավետ են աշխատանքները նաև Սփյուռքի տարբեր կազմակերպությունների և հիմնադրամների հետ: «Գալուստ Գյուլպենկյան» հիմնադրամը ֆինանսավորել է համալսարանական կյանքի մի շարք բնագավառներ, այդ թվում՝ գիտական արժեքավոր բազմաթիվ աշխատությունների, դասագրքերի, ուսումնական ձեռնարկների հրատարակությունը: Երևանի պետական համալսարանը

գործուն մասնակցություն է ունենում նաև Սփյուռքի հայկական գաղթօջախների մշակութային և ուսումնական կենտրոնների համար անհրաժեշտ ուսումնական դասագրքերի, ձեռնարկների և օժանդակ գրականության ստեղծման ու առաքման գործում:



ԵՊՀ ռեկտոր Սերգեյ Համբարձումյանը
Ամենայն Հայոց կաթողիկոս
Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Ա-ի մոտ



Ամենայն Հայոց կաթողիկոս
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա-ն համալսարանում



Ամենայն Հայոց կաթողիկոս
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ն ԵՊՀ-ում



ԵՊՀ առաջին հրատարակությունը



Հրաչյա Աճառյանի «Հայերեն արմատական բառարան»-ի ձեռագիր օրինակը

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

ԵՊՀ հրատարակչությունը հանրապետության երբեմնի յոթ հրատարակչություններից մեկն էր ու միակ բուհականը, որի գործունեությունը սկսվել է համալսարանի հիմնադրման առաջին տարիներից: Այն Հայպետհրատի հետ միասին եղել է հանրապետության գրատպության սկզբնավորում:

Դեռևս 1920 թ. համալսարանը Ալեքսանդրապոլի «Շիրակ» տպարանում տպագրել է Հարվարդի համալսարանի պրոֆեսոր, ականավոր փիլիսոփա, հոգեբան Ուիլիամ Ջեմսի «Հոգեբանություն» դասագրքի առաջին պրակը (7 մամուլ), որը թարգմանել էր ԵՊՀ առաջին դասախոսներից իրավաբան, հոգեբան, մանկավարժ Սիրական Տիգրանյանը: Միաժամանակ տպագրվել է նաև Ս. Տիգրանյանի «Հոգեբանություն» դասախոսությունների գրքույկը: Այս գրքերը համարվում են Երևանի համալսարանի առաջին հրատարակությունները: Հաջորդիվ լույս են տեսել Հակոբ Մանանդյանի, Լեոյի, Մանուկ Աբեղյանի, Հրաչյա Աճառյանի, Արսեն Տերտերյանի, Աշխարհբեկ Քալանթարի հայագիտական ուսումնասիրությունները:

1927 թ. ձևավորված համալսարանի հրատարակչությունը ձեռնամուխ եղավ հայ լեզվաբանության անկյունաքարերից մեկի՝



Հր. Աճառյանի երկար տարիների տքնաջան աշխատանքով ստեղծված կոթողային «Հայերեն արմատական բառարան»-ի հրատարակությանը (7 հատորները լույս են տեսել 10 տարիների ընթացքում): Այն ԵՊՀ-ում լույս տեսած արժեքավոր աշխատությունների շարքում եզակի երևույթ էր:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին ԵՊՀ հրատարակչության գործունեությունը չի ընդհատվել, իսկ հետպատերազմյան առաջին տասնամյակում, ընդլայնելով իր նյութական հնարավորությունները, հրատարակչությունը լույս է ընծայել բարձրարժեք բազմաթիվ աշխատություններ:

1964 թ. կազմավորվեց Հայաստանի Մամուլի պետական կոմիտեն, և ԵՊՀ հրատարակչությունը վերանվանվելով «Միտք», ստացավ հանրապետական հրատարակչության կարգավիճակ և մինչև 1968 թ. մտնում էր այդ համակարգի մեջ: Համալսարանի տպարանը համալրվեց նոր սարքավորումներով և ստացավ 20-30 հազար տպաքանակով գրքեր տպագրելու հնարավորություն: Խոսում է այն փաստը, որ ԵՊՀ հրատարակչությունը կարողացավ մեծ հայագետ Հր. Աճառյանի «Հայերեն արմատական բառարան»-ի ապակետիպ հատորները վերահրատարակել բարձր տպագրության 4 սովորածավալ հատորներով՝ 20 հազար տպաքանակով:

Ուշագրավ է «Քրեատոմատիաներ» և «Ուսանողի գրադարան» մատենաշարերի ստեղծումը, որը մեծ նպաստ բերեց ոչ միայն ուսանողների գիտելիքների հարստացմանը, այլև հայագիտության զարգացմանն ընդհանրապես: Մեծ արձագանք ստացած «Ուսանողի գրադարան» մատենաշարը, որով ի թիվս համաշխարհային դա-





սականների, լույս տեսան մասն հայ մատենագիրներ Խորենացու, Ագաթանգեղոսի, Բուզանդի, Փարպեցու, Եղիշեի և ուրիշների երկերը՝ գրաբար և աշխարհաբար հանդիպադրությամբ: Հրատարակվել են մասն գիտության ամենատարբեր բնագավառներին, մասնավորապես հայագիտությանը, վերաբերող մեծ թվով արժեքավոր աշխատություններ: Դասագրքեր և այլ գրականություն հրատարակելիս հաշվի են առնվում ոչ միայն համալսարանի, այլև հանրապետության մյուս բուհերի և ընթերցող լայն շրջանների պահանջները:

Հայրենական գիտության զարգացման գործում զգալի է ԵՊՀ գիտնականների ներդրումը, որով պայմանավորվում է մասն հրատարակչության գիտական արտադրանքի նշանակալիությունը:

Հայոց մեծ եղեռնի 100-ամյա տարելիցին ընդառաջ 2012 թ. լույս է տեսել Հրաչիկ Միրզոյանի և Նատալիա Գոնչարի “Почему суд по факту геноцида армян Турция призывает доверить историкам” գրքույկը, որտեղ ցույց է տրվում 1915 թ. Օսմանյան կայսրության մեջ իրականացված Հայոց ցեղասպանության ժխտման նպատակով թուրք պատմաբան Փերինչեկի դրսևորած հակագիտական մեթոդները: 2014 թ. հրատարակվել է Սեդա Գասպարյանի «Հայոց ցեղասպանությունը. լեզվաճանաչողական մեկնակետ» անգլերեն աշխատությունը, որը Հայոց ցեղասպանությանը վերաբերող պատմագիտական գրականությունը, քաղաքական ելույթները քննում է լեզվաճանաչողական տեսանկյունից, վեր հանում տարբեր կարծիքների ներկայացման մեխանիզմները և բացահայտում խնդրի մատուցման հարցում երբեմն դրսևորվող ոչ ազնիվ ռազմավարությունը:

Հրատարակվել են նաև Ալեքսեյ Ջիվելեգովի «Թուրքիան և Հայկական հարցը» (2014) (կազմող՝ Է. Մինասյան) հոդվածների ժողովածուն, Լեոյի «Հայկական հարցը վավերագրերում» (2014) աշխատությունը (վերատպություն, կազմող՝ Է. Մինասյան), Ջուլիա Եսայանի «Հայոց տեղանունները. թուրքական այլափոխումներ» (2014, հայերեն, անգլերեն) մենագրությունը, որտեղ առաջին անգամ փորձ է արվում ներկայացնելու հայկական տեղանունների անվանափոխության մեթոդները թուրքական տիրապետության շրջանում և տալու թուրքականացված տեղանունների ստուգաբանությունները, Վահան Բայբուրդյանի «Օսմանյան կայսրության պատմություն» (2011) աշխատությունը, որտեղ ներկայացված է Օսմանյան կայսրության՝ որպես կրոնական ֆանատիզմի հիմքերի վրա կառուցված պետության ռազմամոլ ու անգուսպ նվաճողական քաղաքականությունը, որը մշտապես խոչընդոտել է այնտեղ ապրող ժողովուրդների տնտեսական, քաղաքական ու հոգևոր մշակութային բնականոն զարգացումը:




Ուշագրավ են ԵՊՀ հիմնադիր դասախոսներից մեկի՝ Հակոբ Ջորյանի միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերություններին ու հայ պատմագրությանը նվիրված «Պատմագիտական ուսումնասիրություններ» (2015) ժողովածուն (կազմող՝ Պետրոս Հովհաննիսյան), Էդիկ Մինասյանի «Հայաստանի երրորդ Հանրապետության պատմություն. 1991 – 2011 թթ.» (2013) մենագրությունը, որը գիտականորեն ներկայացնում է հայկական երկու անկախ հանրապետությունների՝ Հայաստանի երրորդ հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հասարա-

կական-քաղաքական ու սոցիալ-տնտեսական ոլորտի ձեռքբերումները, բացթողումներն ու թերությունները, Արման Եղիազարյանի «Աշոտ Ա Բագրատունի. թագավոր Հայոց» (2014) մենագրությունը՝ նվիրված Բագրատունյաց թագավորության հիմնադրմանը և Հայոց թագավոր Աշոտ Ա Բագրատունու գահակալությանը:

Արամ Սիմոնյանի «Ջանգեզուրի գոյամարտը 1920 – 1921 թթ.» (2000) մենագրությունը, որտեղ ներկայացված է Ջանգեզուրի հայության հերոսական գոյամարտը 1920 – 1921 թթ. և զորավար, քաղաքական ու պետական գործիչ Գարեգին Նժդեհի վճռորոշ դերը այդ տարիներին:

Հրատարակչության կարևոր ձեռքբերումներից է իսպանացի հանրաճանաչ գրող Գոնսալո Գուարչի Հայոց ցեղասպանությանը նվիրված եռագրության երկու հատորների՝ «Հայոց կտակը» (2011) և «Սպիտակ լեռը» (2015) (թարգմանիչ՝ Մերի Սուքիասյան) հրատարակությունը, որտեղ նկարագրվում են Մեծ եղեռնի սահմուկեցուցիչ տեսարանները, թուրքերի անասելի ոճրագործությունները, մազապուրծ հայերի հոսքը դեպի այլ երկրներ և նրանց ներդրումը այդ երկրների զարգացման գործում:

«Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկության հովանավորությամբ լույս են տեսել ավելի քան 150 անուն սովորածավալ գրքեր, որոնք խոշոր ներդրում են հայագիտության ասպարեզում: Այդ թվում՝ Ներսես Շնորհալու «Հաւատով խոստովանիմ (աղոթք 36 լեզվով)» (2012), Հրաչյա Աճառյանի «Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների. Իմաստաբանություն, Բառաբանություն, Շարահյուսություն» (2005), «Հայոց պատմություն,



հյուսված ընդհանուր պատմության հետ» (2004), Հակոբ Մանանդյանի «Երկեր. Բանասիրական ուսումնասիրություններ» (հ. Է, 2010), Ստեփան Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարան»-ի 4 հատորները (2010), Նիկողայոս Ադոնցի «Երկեր»-ի ութհատորյակը (հ. Ա-Ե, 2006 – 2018), Հայնրիխ Հյուբշմանի «Հայերենի քերականություն, առաջին մաս, Հայերենի ստուգաբանություն» (2003), Էդուարդ Ադայանի «Լեզվաբանական հետազոտություններ» (2003), Աշոտ Սուքիասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան»-ը (2003, 2009): Ուշագրավ է նաև Գարեգին Հովսեփյանի «Երկեր» ժողովածուն (2014), որը ականավոր հայագետ, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի մեծարժեք ստեղծագործությունների ընտրանին է: Այն ընթերցողին է ներկայացնում հեղինակի «Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության» Ա, Բ, Գ պրակները և «Հավուց թառի ամենափրկիչը և նույնանուն հուշարձաններ հայ արվեստի մեջ» պատմագիտական ուսումնասիրությունը:


Իրենց կարևորությամբ առանձնանում են ականավոր պատմաբան Հրաչիկ Սիմոնյանի «Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ)» (2009) մենագրությունը, «Ազատագրական պայքարի ուղիներում» (2003 – 2013) հինգհատորյա մեծարժեք աշխատությունը՝ նվիրված հայոց պատմության ամենաբարդ ու դրամատիկ ժամանակահատվածներից մեկի՝ 1903 – 1914 թթ. հանգամանալից լուսաբանմանը:

Հրաչիկ Միրզոյանի «Հովհաննես Մրքուզ Ջուղայեցի» (2001) մենագրությունը, որտեղ առաջին անգամ լուսաբանվում են XVII –

XVIII դդ. ականավոր մտածող, փիլիսոփա, աստվածաբան, հասարակական գործիչ Հովհաննես Մրքուզ Ջուղայեցու կյանքը, գործունեությունը, գրական ժառանգությունը, փիլիսոփայական, տրամաբանական, գեղագիտական և հասարակական-քաղաքական հայացքները, Հասմիկ Ստեփանյանի «Հայերի ներդրումը Օսմանյան կայսրությունում» (2012, թուրքերեն) գիրքը, որտեղ լուսաբանվում է արևմտահայության ունեցած դերը օսմանյան կայսրության դիվանագիտության, պալատական, վարչական, դատական, գիտության, ճարտարապետության, բժշկության և այլ ասպարեզներում (հայերեն հրատարակությունն արժանացել է ՀՀ Նախագահի մրցանակի):

Հայագիտական շարքից են նաև Վարդ Բդոյանի «Ջավախքի հայոց ազգագրություն և ժողովրդական բանարվեստ» ժողովածուն (2014), ինչպես նաև Անահիտ Բեքարյանի «Բայրոնը և հայ իրականությունը» (2013, հայերեն և անգլերեն) գիրքը, որտեղ ուսումնասիրված են հատկապես Բայրոնի և Միսիթարյան միաբանության կապերը, բայրոնիզմի դրսևորման նշանակալից երևույթները հայ գրականության մեջ: Հրատարակվել են նաև բազմաթիվ այլ աշխատություններ, դասագրքեր, բառարաններ, ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկներ: Միայն 2017 – 2018 ուստարում լույս է տեսել 100 անուն գիրք:

ԵՊՀ հրատարակչությունն իր տպագրած լավագույն գրքերով բազմիցս մասնակցել է հանրապետական և միջազգային ցուցահանդեսների: 2014 թ. Մայր բուհի 95-ամյակի միջոցառումների շրջանակում կազմակերպվել է «Գրքի տոնավաճառ-2014» ցուցահանդեսը, որի ընթացքում տեղի է ունեցել ավելի քան 200 անուն գրքերի



ցուցադրություն և նվիրատվություններ են արվել ՀՀ մարզային, ՊՆ ռազմաուսումնական բուհերի, Արցախի պետական համալսարանի, Երևանի Ավ. Իսահակյանի անվան քաղաքային գրադարաններին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մատենադարանին:

Նույն տարում համալսարանի կենտրոնական մասնաշենքի բակում կազմակերպված գրքի տոնավաճառում ԵՊՀ հրատարակչության հետ իրենց ուսումնագիտական գրականությունն են ներկայացրել նաև Հայաստանի մի շարք առաջատար հրատարակչություններ՝ «Անտարես», «Էդիթ Պրինտ», «ՄանՄար», «Չանգակ-97», «Պրինտինֆո»: Այս միջոցառումը բացառիկ երևույթ էր ԵՊՀ հրատարակչության բազմամյա պատմության մեջ:

2014 թվականից սկսած ԵՊՀ հրատարակչությունն իր տպագրած գրքերի ընտրանիով մասնակցել է Ֆրանկֆուրտի գրքի միջազգային ցուցահանդեսին: ԵՊՀ հրատարակած գրքերը ցուցադրվել են նաև Ստամբուլում, Մոսկվայում, Լոնդոնում կայացած գրքի միջազգային ցուցահանդեսներում:

2014 թ. ԵՊՀ հրատարակչությունում ձեռնարկվել և ընթացք է տրվել ինտերնետային կայքի ստեղծման, հրատարակված գրքերի թվայնացման, ինչպես նաև Android, iOS օպերացիոն համակարգերի և Kindle-ի համար նախատեսված էլեկտրոնային գրքերի ստեղծման աշխատանքներին:

Համալսարանն իր հրատարակչական գործունեության ընթացքում մշտապես կարևորել է գիտական հանդեսների հրատարակումը:

«Գիտական տեղեկագիր» քառամսյա հանդեսը Երևանի համալսարանում 1925 թ. հիմնադրված «ՀՄԽՀ պետական համալսարանի

րանի գիտական տեղեկագրի» ժառանգորդն է, որը որոշ ձևափոխումներով ու տարբեր անվանումներով լույս է տեսնում մինչ օրս: Վստահորեն կարելի է ասել, որ այն հանրապետությունում հրատարակվող ամենաերկարակյաց գիտական պարբերականն է և միշտ էլ մեծ հեղինակություն է վայելել ոչ միայն մեր երկրում, այլև նրա սահմաններից դուրս: «Գիտական տեղեկագիր»-ը կարևոր դեր է ունեցել Հայաստանում բնական և հումանիտար գիտությունների զարգացման գործում: Նրա էջերում տեղ են գտել ինչպես համալսարանի, այնպես էլ հանրապետության և այլ երկրների տվյալ ոլորտների լավագույն մասնագետների գիտական հոդվածները: Մինչև 1930 թ. լույս է տեսել հանդեսի 6 համար, այնուհետև երկրում համալսարանների վերակառուցման հետևանքով ընդհատվել է նրա տպագրությունը: 1933 թ. Երևանի համալսարանի վերաբացումից հետո վերսկսվել է «Գիտական տեղեկագիր» հրատարակությունը: Այն տպագրվել է շարքերով (ունեցել է 15 շարք), որոնցից յուրաքանչյուրը նվիրված էր գիտության որոշակի ոլորտի: Համալսարանի խորհրդի 1966 թ. որոշմամբ վերակառուցվել ու բարելավվել է «Գիտական տեղեկագիր» հրատարակությունը, միաժամանակ հիմնադրվել են նոր հանդեսներ: «Գիտական տեղեկագիր»-ը վերածվել է միայն բնական գիտությունների քառամսյա հանդեսի, իսկ նրա հասարակագիտական շարքերի փոխարեն 1967 թ. ստեղծվել է «Բանբեր Երևանի համալսարանի» քառամսյա հանդեսը:

«Գիտական տեղեկագիր» խմբագրական աշխատանքներով զբաղվել են հեղինակավոր մի շարք գիտնականներ, իսկ 1967 – 1972 թթ. գլխավոր խմբագիրն է եղել ճանաչված քիմիկոս, պրոֆ.

Հովհաննես Չալթիկյանը: Հետագայում այդ պատասխանատու աշխատանքը ստանձնել են պրոֆեսորներ Վիլեն Ասլանյանը (1972 – 1988), Էդվարդ Չուբարյանը (1989 – 1992), Վալերի Տեր-Անտոնյանը (1993 – 1999), Ռուբեն Հարությունյանը (1999 – 2009):

2009 թվականից ի վեր «Գիտական տեղեկագիր»-ը լույս է տեսնում դարձյալ տարեկան երեք համարով՝ երեք առանձին շարքերով՝ “Proceedings of the Yerevan State University Physical Mathematical Sciences” («Ֆիզմաթ գիտություններ») (խմբագիրներ. 2009 – 2011 թթ.՝ պրոֆ. Էդուարդ Դանիելյան, 2012-ից՝ պրոֆ. Վարուժան Աթաբեկյան), «Քիմիա և կենսաբանություն» (խմբագիր՝ պրոֆ. Ռուբեն Հարությունյան), «Երկրաբանություն և աշխարհագրություն» (խմբագիր՝ դոց. Մարատ Գրիգորյան):

«Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի հիմնադրումը մեծ իրադարձություն էր Երևանի պետական համալսարանի համար: Այն, փոխարինելով «Գիտական տեղեկագիր» հասարակագիտական շարքերին, ի մի բերեց հասարակական և հումանիտար գիտությունների շատ բնագավառներ, որոնց խնդիրներով զբաղվում են ոչ միայն համալսարանում, այլև հանրապետության մյուս ուսումնագիտական օջախներում, նաև արտերկրում:

Հաշվի առնելով գիտության զարգացման պահանջներն ու հետաքրքրությունները ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ 2010 թվականից հանդեսը տպագրվել է «Հայագիտություն», «Բանասիրություն», «Իրավագիտություն», «Փիլիսոփայություն, հոգեբանություն», «Սոցիոլոգիա, տնտեսագիտություն» և «Միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն» մասնագիտական շարքերով: 2015 թվա-



կանից շարքերն, ըստ էության, դարձել են առանձին հանդեսներ՝ պահպանելով նախկին անունը՝ «Բանքեր Երևանի համալսարանի. Հայագիտություն», «Բանքեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», «Բանքեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն» և այլն: Նույն թվականից լույս է տեսնում նաև “Вестник Ереванского университета. Русская филология” հանդեսը: Դրանցից ամեն մեկն ունի իր պատասխանատու խմբագիրը, որը տվյալ ոլորտի ճանաչված մասնագետ է, իսկ բոլոր հանդեսների աշխատանքները ղեկավարում է գլխավոր խմբագիրը: Հանդեսներից յուրաքանչյուրը լուսաբանում է հասարակական և հումանիտար գիտությունների տվյալ ոլորտում կատարվող աշխատանքները, որոնք նպաստում են հայ ժողովրդի պատմության, լեզվի ու մշակույթի, գրականության ու արվեստի, իրավագիտության, փիլիսոփայության և մյուս գիտությունների զարգացման ու տարածման գործին: 2010-ից հանդեսի համարները տեղադրվում են ԵՊՀ կայքում, մուտքագրվում են նաև նախորդ տարիների համարները:

Հանդեսի գլխավոր խմբագիրներ են եղել պրոֆեսորներ Էդվարդ Ջրբաշյանը (1967 – 1977), Հարություն Ֆելեքյանը (1978 – 1986), Էդուարդ Ադայանը (1986 – 1991), իսկ 1992 թվականից պրոֆ. Հրաչիկ Միրզոյանն է:

1965 – 1982 թթ. լույս է տեսել «Երիտասարդ գիտաշխատող» կիսամյա հանդեսը: 1965 թ. առաջին երկու համարները տպագրվել են «Հոդվածների ժողովածու» խորագրով, այնուհետև 1966-ից՝ «Երիտասարդ գիտաշխատող» վերտառությամբ՝ բնագիտական, հասարակական և հումանիտար գիտաճյուղերով: Բնագիտական

ճյուղի խմբագիրներն են եղել պրոֆեսորներ Ռաֆիկ Հովհաննիսյանը և Էդվարդ Չուբարյանը, իսկ հասարակականին ու հումանիտարին՝ պրոֆեսորներ Արշակ Թովմապյանը և Մեհենդակ Մելիքյանը: Հանդեսն ունեցել է գիտության տարբեր բնագավառներին նվիրված բաժիններ, որոնցում տպագրվել են հանրապետության երիտասարդ գիտնականների հետազոտությունների արդյունքները հայերեն և ռուսերեն՝ համապատասխան ամփոփումներով:

1967 – 2000 թթ. լույս է տեսել «Երևանի համալսարան» (1993-ից՝ «Հանդես Երևանի համալսարանի») քառամյա գիտատեղեկատվական լրատուն, որի էջերում լուսաբանվել են ԵՊՀ ուսումնական, գիտական, կրթադաստիարակչական աշխատանքները և հասարակական-մշակութային կյանքը: Հանդեսում տպագրվել են համալսարանի, հանրապետության տարբեր բուհերի, կրթական այլ հաստատությունների պատմությանը, նաև՝ անվանի դասախոսների գործունեությանը վերաբերող հոդվածներ, գրքերի գրախոսականներ և այլն:

Հանդեսի գլխավոր խմբագիրներն են եղել երկր.-հանք. գիտ. թեկն., դոց. Թադևոս Թադևոսյանը, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆ. Յուրի Վարդանյանը, բան. գիտ. թեկն. Վլադիմիր Մադալյանը:

1940 թվականից անկանոն պարբերականությամբ լույս է տեսնում «Ուսանողական գիտական տեղեկագիր»-ը, որը լուսաբանում է ուսանողների կատարած հետազոտական աշխատանքները և գիտաժողովներում կարդացած լավագույն զեկուցումները:

1920 թ. հունվարի 31-ին՝ Երևանի համալսարանի հանդիսավոր բացման օրը, լույս է տեսել «Հայաստանի համալսարան» մեկօրյա

թերթը, որով և հիմք է դրվել ԵՊՀ մամուլին:

1924 թ. մարտին, Նաիրի Զարյանի խմբագրությամբ, հրատարակվել է ուսանողական խորհրդի օրգան «Նոր ուսանող» ամսագրի առաջին և միակ համարը՝ 80 էջ ծավալով, իսկ 1929 թ. նոյեմբերի 29-ին՝ «Նոր կադրեր» ապակետիպ երկշաբաթաթերթի անդրանիկ համարը (տպագրվել է ընդամենը 3 համար): Հրատարակումը դադարել է համալսարանի վերաձևավորումից հետո: 1933 թ. այն կրկին լույս է տեսել «Հարվածային ուսանող» վերտառությամբ և տպագրվել մինչև 1936 թ. ավարտը:

Շուրջ 15 տարվա ընդմիջումից հետո, 1950 թ. նոյեմբերի 29-ին, վերսկսվել է «Սովետական ուսանողություն» շաբաթաթերթի հրատարակությունը, որը 1955 թ. մայիսի 15-ից վերանվանվել է «Երևանի համալսարան» և 1992 թ. ապրիլից դարձել երկշաբաթաթերթ: 2003 թ. հունվարի 1-ից այն վերածվել է տասնօրյա թերթի, 2006-ից՝ ամսաթերթի:

Հրատարակչության տնօրեններ են եղել Վսեվոլոդ Սկաբլուկինը (1957), Արմեն Հակոբյանը (1957 – 1964), Արամայիս Ասրյանը (1964 – 1976), Գառնիկ Անանյանը (1976 – 1985), Բաբկեն Հարությունյանը (1986 – 1988), Սարգիս Փանոսյանը (1988 – 1994), Դավիթ Գասպարյանը (1994 – 1998), Պերճ Ստեփանյանը (1999 – 2014), իսկ 2014 թվականից Կարեն Գրիգորյանն է:





Գիտական գրադարանի շենքը



ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ

Նոր հիմնադրված Երևանի համալսարանի ղեկավարությունը քաջ գիտակցում էր, որ ուսումնական և գիտական աշխատանքների կազմակերպման համար շատ կարևոր է ունենալ գիտական գրադարան: Եվ 1920 թ. փետրվարի 28-ին ռեկտոր Յու. Ղամբարյանի ջանքերով Երևանի ուսուցչական սեմինարիայի գրադարանի ֆոնդի (10 հազար միավոր) հիման վրա ստեղծվում է համալսարանի գրադարանը: 1920 թ. ապրիլի 1-ից հաստատվում է հաստիքակազմը և գրադարանի ժամանակավոր կառավարիչ է նշանակվում Հակոբ Մանանդյանը, որի նախաձեռնությամբ ձեռք է բերվում մեծ քանակությամբ գրականություն: 1921 թ. հունվարին համալսարանի գրադարանին են հանձնվում տեղի նախկին թեմական դպրոցի, Արտաքին գործերի նախարարության, Էջմիածնի Գևորգյան ճեմարանի և այլ հիմնարկների գրքային ունեցվածքը: Մոսկվայի Լազարյան ճեմարանից բերվում է 163 արկղ արժեքավոր գրականություն: Երևանի արական գիմնազիայի, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի, առանձին անհատների (Վ. Տերյան, Ալ. Ծատուրյան, Պ. Մակինցյան, Գ. Չուբարյան և ուրիշներ) նվիրատվությունների և գնումների շնորհիվ 1921 թ. վերջին գրադարանի գրքային ունեցվածքը համալրվում է՝ հասնելով 25 հազար միավորի:

1922 թ. նոյեմբերի 8-ին տեղի է ունենում գրադարանի հանդիսավոր բացումը: Իր գործի նվիրյալ գրադարանապետ Գաբրիել Ռոտինյանի (պաշտոնավարել է 1920 – 1929 թթ.) տքնաջան աշխատանքի շնորհիվ նորաստեղծ գրադարանը դրվում է համալսարանական կարգավիճակին արժանի գիտական հիմքերի վրա: Գրադարանային ֆոնդը տարեցտարի համալրվում է բազմալեզու գրականությամբ: Այդ գործում մեծապես օգնում են նաև սփյուռքահայ գործիչներն ու կազմակերպությունները: 1927 թ. գրադարանի տպագիր նյութերի քանակը հասնում է շուրջ 52 հազար միավորի:

1937 թ. գրադարանում ձևավորվում են կառուցվածքային ստորաբաժանումներ, ստեղծվում է գրականության մշակման ու համալրման բաժին, բացվում են ընթերցասրահներ, գիտական աշխատանքի կաբինետ, ինչպես նաև ստեղծվում է գրադարանային խորհուրդ: 1944 թ. գրադարանին տրվում է գիտական 3-րդ կարգ:

Հետպատերազմյան տարիներին զգալիորեն հարստանում են գրադարանի ֆոնդերը, կազմավորվում են նոր բաժիններ, անձնակազմը համալրվում է լավագույն մասնագետներով և գրադարանային գործունեությունը ստանում է գիտական ուղղվածություն:

1964 թ. լույս է տեսնում գրադարանի առաջին հրատարակչական աշխատանքը՝ «Երևանի պետական համալսարանի հրատարակությունների բիբլիոգրաֆիա (1922 – 1963)» մատենաշարի 1-ին պրակը, որը դառնում է գրադարանում հրատարակչական գործի նախակարգայինը:

1965 թ. գրադարանը տեղափոխվում է համալսարանի նորակառույց շենք, բարելավվում են աշխատանքային պայմանները, որն էլ

խթանում է սպասարկման գործի արդյունավետությունը, զգալիորեն համալրվում է գրքային ֆոնդը, ավելանում ընթերցողների թիվը: Այդ նույն տարում հիմնվում է սփյուռքահայ բարերար Գալուստ Գյուլպենկյանի նվիրատվության ֆոնդը, որի շնորհիվ գրադարանը հարստանում է բազմաթիվ արժեքավոր հրատարակություններով:

1966 թ. համալսարանի գրադարանը ստանում է գիտական 2-րդ կարգ: 1970 թ. այն դառնում է հանրապետության բուհական գրադարանների մեթոդական կենտրոն, որը կազմակերպում է գրադարանային գործին վերաբերող գիտաժողովներ, տարածում առաջավոր փորձը՝ բազմիցս արժանանալով ԽՍՀՄ և ՀԽՍՀ մշակույթի նախարարությունների դիպլոմների ու պատվոգրերի:

1991 թ. գրադարանին տրվում է գիտական 1-ին կարգ: Նույն տարում ստեղծվում է ամերիկահայ բարերար Հելեն Թաքեսյանի անվան ֆոնդը (2468 միավոր), որը պարունակում է անգլերեն լեզվով արժեքավոր գրականություն:

1994 թ. հոկտեմբերի 12-ին ԵՊՀ հիմնադրման 75-ամյակի հանդիսությունների շրջանակում տեղի է ունենում կենտրոնական մասնաշենքին կից համալսարանի գիտական գրադարանի նորակառույց շենքի բացումը⁶:

1995 թ. գրադարանում ստեղծվում է ավտոմատացման և տեղեկատվության բաժին, որը կարևոր դեր է կատարում գրադարանային աշխատափուլերի արդիականացման գործում: Կազմվում է գրադարանային գործընթացների լիակատար ավտոմատացման երկարամ-

⁶ Շենքի կառուցումն սկսվել է 1984 թ. (ճարտարապետ՝ Լևոն Բալայան, քանդակագործ՝ Վահան Դազարյան):

յա ծրագիր, որի առաջին փուլում նախատեսված էր հայաստանյան համահավաք էլեկտրոնային քարտարանում մուտքագրել շուրջ 2 միլիոնանոց գրքային ունեցվածքի մատենագիտական տվյալները:

Գրադարանի արդիականացման և զարգացման գործում առանձնահատուկ նշանակություն ունի նաև միջազգային համագործակցության և փորձի փոխանակման գործընթացը: Միջազգային կազմակերպությունների նախաձեռնությամբ ստեղծվում են քաղաքական գրականության և միջազգային նշանակության փաստաթղթային նյութերի պահոցներ՝ Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) գանձատունը, որն իր հիմնադրման շրջանում (1996 թ.) դեռևս միակն էր Հայաստանում, և Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) գրատունը (1997 թ.):

1995 – 1996 թթ. գրադարանին զգալի օգնություն է ցուցաբերվում «Իզմիրլյան» հիմնադրամի կողմից: 1995 թ. շվեյցարահայ բարերար Տիգրան Իզմիրլյանը համալսարանին է նվիրաբերում մեկ միլիոն ԱՄՆ դոլար՝ գրադարանի տեխնիկական վերագինման և աշխատատար գործընթացների արդիականացման նպատակով, իսկ Բեռլինի գրադարանային ինստիտուտի աջակցության եռամյա ծրագրով համալսարանին հատկացվում է 150 հազար գերմանական մարկ՝ գրադարանային անհրաժեշտ նյութերի ձեռքբերման և Ռոստոկի համալսարանի գրադարանի հետ աշխատանքային փոխայցելությունների կազմակերպման նպատակով:

1997 թ. հոկտեմբերի 7-ից ԵՊՀ գիտական գրադարանն անվանակոչվում է Տիգրան Իզմիրլյանի ծնողների՝ Սարգիս և Մարի Իզ-

միրլյանների անունով:

2001 թ. «Իզմիրլյան» հիմնադրամը «Բաց հասարակության ինստիտուտ» հիմնադրամի հետ համատեղ հանդես է գալիս աջակցության նոր նախաձեռնությամբ, ինչը ապահովում է գրադարանի էլեկտրոնայինացման գործընթացի շարունակականությունը:

Համալսարանի գրադարանի արդի գործունեությունը՝ տեղեկատվական հասարակության նորօրյա պահանջներին համահունչ, նպատակաուղղված է աշխատափուլերի ավանդական և ժամանակակից ձևերի ներդաշնակ զարգացմանը, որին էապես նպաստում են ինչպես գրականության ֆոնդերի շարունակական համալրումը, մշակումը, համակարգումն ու սպասարկումը, այնպես էլ էլեկտրոնային պաշարների հարստացումը, գրականության թվայնացումը, գրադարանի ամբողջ տարածքում ազատ ինտերնետային անլար կապի (WIFI) ապահովումը:

Գրադարանի շուրջ 2 միլիոն միավոր գրքային ունեցվածքը պարունակում է բազմալեզու և բազմաբովանդակ (գիտական, ուսումնական, գեղարվեստական) գրքեր ու հանդեսներ, որոնք ընթերցողին են տրամադրվում հիմնական, առձեռն և առանձնացված ֆոնդերի միջոցով: Հնատիպ և հազվագյուտ գրքերից (շուրջ 20 հազար միավոր) պատմամշակութային առավել մեծ արժեք ունեցողները պահպանվում են առանձնացված ֆոնդերում (հայերեն՝ 2417, ռուսերեն՝ 5559, այլ լեզուներով՝ 2987): Նշյալ ֆոնդերում պահպանվում են պատմամշակութային արժեք ունեցող գրավոր այնպիսի հուշարձաններ, ինչպիսիք են՝ Գրիգոր Տաթևացու «Քարոզգիրք» ձեռագիրը (14-րդ դ.), գրադարանի ամենահին հնատիպները՝ “The

genealogies recorded in the Sacred Scriptures according to every family and tribe. With the line of our Saviour Isus Christ observed from Adam, to the Blessed Virgin Mary. By J.S” ստվարածավալ տոհմաբանությունը (Լոնդոն, 1613), Ֆրանչիսկոս Ռիվոլայի «Բառագիրք հայոց» հայերեն-լատիներեն բառարանը (Փարիզ, 1633), Հայկական հարցն ուսումնասիրողների շրջանում մեծ պահանջարկ ունեցող հազվագյուտ գրքերից Հենրի Բարկլեյի «Ride Through Asia Minor and Armenia...» աշխատությունը (Լոնդոն, 1891) և այլն:

Այսօր գրադարանն ունի վիրտուալ ընթերցասրահ, որտեղ օգտվողին հասանելի են ավելի քան 700.000 ատենախոսությունների և սեղմագրերի էլեկտրոնային տարբերակները, 10.000 ամսագրեր՝ շուրջ 10 միլիոնի հասնող գիտական հոդվածներով և 60.000 գրքերի էլեկտրոնային տարբերակները: Ընթերցողը կարող է ազատ մուտք գործել ռուսալեզու 201 ամսագրերի էլեկտրոնային շտեմարաններ: Ֆրեզնոյի համալսարանի և “SUBITO” էլեկտրոնային հոդվածների գերմանական ծառայության միջոցով ԵՊՀ դասախոսներն ու ասպիրանտները հնարավորություն ունեն պատվիրելու իրենց հետաքրքրող էլեկտրոնային հոդվածները: Գրադարանի ավտոմատացման բաժնում շարունակվում են թվայնացվել, մշակվել և կայքէջում տեղադրվել մեծ պահանջարկ ունեցող ուսումնական ձեռնարկներ, մշակութային արժեք ունեցող գրքեր, գիտական հոդվածներ, որոնցից հնարավոր է անվճար օգտվել համալսարանական տարածքն ընդգրկող համացանցով:

Գրադարանն ունի 6 բաժին՝ գրականության և մամուլի սպասարկման, գրապահոցի, արժեքների, համալրման և մշակման,

հնատիպ, հազվագյուտ և արվեստի գրականության, համակարգչային ծառայությունների և ավտոմատացման: Դրանց ենթակառուցվածքում գործում են 4 ընթերցասրահ, գիտական 3 կաբինետ:

Գրադարանի տնօրեններ են եղել. Գաբրիել Ռոտինյանը (1920 – 1929), Վահե Միքայելյանը (1929 – 1936), Ասատուր Հայկազյանը (1936 – 1957), Հակոբ Հակոբյանը (1957 – 1959), Հակոբ Խաչատրյանը (1959 – 1964), Սահակ Առաքելյանը (1964 – 1977), Աննա Մակարյանը (1977 – 1987), Վարդգես Ասլանյանը (1987 – 2006), Աշոտ Ալեքսանյանը (2006 – 2012): 2012 թվականից գրադարանը ղեկավարում է Եզնիկ Միրզոյանը:





ԵՊՀ ռեկտորի առանձնասենյակի կահույքը



Ուլունքաշար, երկաթի դար,
Ք. ա. 8-6-րդ դդ.

ԵՊՀ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԸ

ԵՊՀ պատմության թանգարանը Հայաստանի Հանրապետությունում գործող բուհական ամենամեծ թանգարանն է:

Դեռևս 1957 թ. ամվանի իրավաբան, դասախոս Գրիգոր Չուբարյանը առաջ քաշեց համալսարանում թանգարան հիմնելու գաղափարը՝ Մայր բուհի հիմնադրման և անցած ուղու լիարժեք պատմությունը ներկայացնելու նպատակով: ԵՊՀ ռեկտոր Գագիկ Դավթյանի հանձնարարությամբ կուսկոմիտեի առաջին քարտուղար Լյուդվիգ Ղարիբջանյանը մեծ նվիրումով ձեռնամուխ եղավ թանգարանի հիմնադրման դժվարին գործին: Հանդիպելով ԵՊՀ երախտավորների հարազատներին, տարեց դասախոսներին՝ նա գրի առավ նրանց հուշերը, հավաքեց համալսարանի պատմությանը վերաբերող զգալի թվով հին փաստաթղթեր, անձնական իրեր, լուսանկարներ, գրքեր: Ըստ այդմ, ռեկտորի 1960 թ. մարտի 22-ի հ. 5 որոշմամբ դրվեց ԵՊՀ պատմության թանգարանի հիմքը: Սկզբում այն գործում էր որպես կաբինետ և տեղակայված էր համալսարանի առաջին շենքում (Աբովյան փ. 52): 1965 թ. կաբինետը տեղափոխվեց համալսարանի նորակառույց համալիրի կենտրոնական մասնաշենքի 5-րդ, հետագայում՝ 7-րդ հարկ: 1988 թ. պատմության

կաթինետի հիմքի վրա, գիտահետազոտական մասի կազմում, ստեղծվեց Հայաստանի բարձրագույն կրթության պատմության գիտահետազոտական լաբորատորիա՝ նրան կից թանգարանով: 1995 թ. հունվարի 1-ից թանգարանը դարձավ ինքնուրույն կառուցվածքային միավոր՝ կոչվելով Երևանի պետական համալսարանի պատմության թանգարան:

Տնօրեն պրոֆ. Լ. Դարիբջանյանի և աշխատակից Ս. Սարգսյանի ջանքերով տարիների ընթացքում թանգարանը հարստացավ համալսարանի պատմությանը վերաբերող բազմապիսի հավաքածուներով ու արժեքավոր նյութերով:

Թանգարանը մշտապես գտնվում է ԵՊՀ ղեկավարության ուշադրության կենտրոնում: 2009 թ. ռեկտոր Արամ Սիմոնյանի հոգածության շնորհիվ համալսարանն ունեցավ բարենորոգված, ցուցադրությունների տրամաբանությանը համապատասխան թանգարան, որտեղ ԵՊՀ հիմնադրման 90-ամյա հոբելյանի առթիվ բացվեց նոր ցուցադրություն՝ մի քանի բաժիններով:

Առանձնապես կարևորվում է Մայր բուհի պատմությանը վերաբերող ցուցադրությունը, որը պատմում է ԵՊՀ կառուցվածքի, ֆակուլտետների, 24 ռեկտորների, հիմնադիր դասախոսների ու երախտավորների, ուսանողական ակտիվ կյանքի, ինչպես նաև համալսարանի միջազգային համագործակցական կապերի մասին: Թանգարանի այս բաժնի ցուցավահանակներում կարելի է ծանոթանալ նաև Հայաստանում բարձրագույն կրթության ձևավորման ընթացքին և ԵՊՀ համապատասխան ֆակուլտետների հիմքի վրա հանրապետությունում ստեղծված բուհերի մեծ մասի տարեգրությանը:



Եռոտանի պատվանդան,
վաղ բրոնզե դար (Շենգավիթյան մշակույթ)
Ք. ա. III հազարամյակ, I քառ., Մոխրաբլուր



Կարաս, պղնձի, քարի դար, Էնեոլիթ,
Ք. ա. V հազարամյակ, Աղաբլուր



Նետասլաքներ, վաղ երկաթի դար
(Լճաշեն - Մեծամորյան մշակույթ)
Ք. ա. 11-9-րդ դդ.



Ուշագրավ են Հայրենական մեծ պատերազմում և Արցախյան գոյապայքարում զոհված համալսարանականներին նվիրված ցուցավահանակները՝ լուսանկարներով, փաստաթղթերով, անձնական իրերով, ինչպես նաև նրանց մասին գրված տպագիր նյութերով:


Հետաքրքիր ցուցանմուշներով աչքի է ընկնում թանգարանի հնագիտության բաժինը, որը ձևավորվել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի հնագետների կատարած պեղումներով հայտնաբերված բազմաթիվ գտածոների հիմքի վրա՝ քարի դարից մինչև միջնադար: Այս ցուցանմուշները դիդակտիկ արժեք ունեն ոչ միայն համալսարանի ուսանողների մասնագիտական գիտելիքների հարստացման առումով, այլև կարևոր են հայրենական և արտերկրի մասնագետների գիտահետազոտական ուսումնասիրությունների համար:

Թանգարանը համագործակցում է ԵՊՀ պատմության ֆակուլտետի, Հայաստանի ազգային արխիվի, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հետ, որի շնորհիվ վերականգնվել են հին մի շարք փաստաթղթեր ու առարկաներ:

Թանգարանը պարբերաբար կազմակերպում է ժամանակավոր և շրջիկ ցուցադրություններ, դաս-էքսկուրսիաներ, կլոր սեղաններ, համալսարանական զոհված ազատամարտիկներին նվիրված միջոցառումներ: Հատկապես ուշագրավ էր Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված «Համալսարանի հիմնադրումը որպես հայ ժողովրդի հետցեղասպանական հոգևոր վերածնունդ» խորագրով բաց դասը, որի ընթացքում ուսանողներին ներկայացվեց Հայոց ցեղասպանությանը հաջորդող պատմական ժամանակաշրջանում Երևանի համալսարանի հիմնադրման կարևորությունը:

Թանգարանում ցուցադրվում են այնպիսի եզակի մնուշներ, ինչպիսիք են 1919 թ. Երևանի համալսարանի կազմակերպիչ հանձնաժողովի նիստերի սղագրություններն ու արձանագրությունները, 1919 թ. ստեղծված Երևանի համալսարանի առաջին կանոնադրությունը, բազմաթիվ հին փաստաթղթեր, Հր. Աճառյանի «Հայերեն արմատական բառարան»-ի, «Ձեռագրական սրբագրություններ հայ մատենագրության մեջ» գրքի, Լեոյի «Անի» աշխատության, Հովհաննես Նավակատիկյանի «Վերլուծական երկրաչափություն» դասագրքի, Հարություն Անժուրի երկու դասախոսության ձեռագիր օրինակները, մաս Գ. Ասատուրի բազմաթիվ ձեռագրեր: Ռեկտոր Ա. Սիմոնյանի ջանքերով 2014 թ. թանգարանի ձեռագրերի հավաքածուն հարստացավ ԵՊՀ առաջին ռեկտոր Յուրի Դամբարյանի 1885 – 1886 թթ. Մոսկվայի համալսարանում կարդացած դասախոսությունների եզակի ձեռագիր օրինակով (164 էջ):

Համալսարանի հիմնադրման 100-ամյակին ընդառաջ թանգարանը համալրվել է համալսարանին և Հայաստանում բարձրագույն կրթության զարգացմանը վերաբերող բազմաթիվ նյութերով (լուսանկարներ, անձնական իրեր, արժեքավոր փաստաթղթեր, հնագիտական ու ազգագրական մնուշներ, կերպարվեստի գործեր, ԵՊՀ երախտավորների դիմանկարներ, ընծայագրերով գրքեր, տեխնիկական սարքեր և այլն): Ստեղծվել է 1930-ականների բռնաճնշումների ենթարկված համալսարանականների անկյուն: Բացվել է մաս նոր ցուցասրահ, որտեղ ներկայացված են տարբեր այցելությունների առթիվ ԵՊՀ հյուրերից ստացված բազմաթիվ հուշանվերներ:



Սափոր և պնակ,
Վանի թագավորության շրջան
Ք. ա. 8-6-րդ դարեր



Գավաթ, վաղ բրոնզե դար
(Շենգավիթյան մշակույթ)
Ք. ա. III հազարամյակ, I քառորդ



Թանգարանում զբաղվում են նաև ԵՊՀ պատմությանը, անվանի դասախոսների կյանքին ու գործունեությանը, Արցախյան գոյամարտում զոհված համալսարանական ազատամարտիկներին վերաբերող նյութերի ուսումնասիրությամբ: Ըստ այդմ հրատարակվել են Լ. Ղարիբջանյանի «Երևանի պետական համալսարանը (1919 – 1930 թթ.)» (Եր., 1965, 1994, ռուս. 1971), «Երևանի պետական համալսարանի ռեկտորները (1919 – 1999 թթ.)» (Եր., 1999, կազմող՝ Լ. Ղարիբջանյան): Շարունակելով ԵՊՀ երախտավորների և անվանի դասախոսների կյանքի ու գործունեության լուսաբանման ավանդույթը, որը սկզբնավորվել էր Մ. Ներսիսյանի, Թ. Թադևոսյանի և Էմ. Պիվազյանի խմբագրությամբ 1970 թ. հրատարակված «Մեր անվանի դասախոսները» գրքի 1-ին հատորով՝ 2006 թ. և 2009 թ. թանգարանի նախաձեռնությամբ լույս են տեսել «Մեր անվանի դասախոսները» գրքի 2-րդ և 3-րդ հատորները (կազմողներ՝ Լ. Ղարիբջանյան, Հ. Գասպարյան): Հրատարակվել են նաև «Երևանի պետական համալսարան. Տարեգրություն» (Եր., 2009, կազմող՝ Ժ. Մանուկյան), «Երևանի պետական համալսարանը Արցախյան գոյապայքարում» (Եր., 2011, կազմող՝ Ժ. Մանուկյան) գրքերը: Համալսարանի հիմնադրման 100-ամյակի առթիվ նախապատրաստվում է 2009 թ. տպագրված «ԵՊՀ կենսագրական հանրագիտարան» գրքի 2-րդ, լրամշակված վերահրատարակությունը:

Թանգարանի բազմաթիվ այցելուները՝ ուսանողներ, հանրակրթական դպրոցների աշակերտներ, հյուրեր ինչպես մեր հանրապետությունից, այնպես էլ արտերկրից, մեծ հետաքրքրությամբ են ծանոթանում Մայր բուհի պատմությանը և իրենց գրառումները թող-

նում տպավորությունների գրքում:

Թանգարանի տնօրեններ են եղել պատմ. գիտ. թեկն., պրոֆեսոր
Լյուդվիգ Ղարիբջանյանը (1960 – 2006), պատմ. գիտ. թեկն., դոց.
Ժակ Մանուկյանը (2006 – 2013): 2013 թվականից թանգարանը ղե-
կավարում է Հեղինե Գասպարյանը:



Չախից աջ՝
Կճում, Բ. ա. 12 – 11-րդ դդ.,
Չճում, Բ. ա. 11 – 9-րդ դդ.,
Ծիսական անոթ, Բ. ա. 11 – 9-րդ դդ.,
Վաղ երկաթի դար, Լճաշեն-Մեծամորյան մշակույթ, Թալին



Բուրվառ, 11-12-րդ դդ.
Գլաձոր



Քրեղան, միջին բրոնզի դար,
Կարմիր-Բերդյան մշակույթ,
Բ. ա. 18 – 16-րդ դդ., Վերին նավեր

ԵՊՀ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

Երևանի պետական համալսարանի արհեստակցական կազմակերպությունը ձևավորվել է 1940 թ.: Գործունեության առաջին տարիներին կազմակերպությունը հիմնականում զբաղվել է երկրորդ համաշխարհային պատերազմին մասնակցած համալսարանականների և նրանց ընտանիքների սոցիալական խնդիրներով: Այնուհետև կազմակերպության գործունեությունը միտված է եղել ԵՊՀ աշխատողների աշխատանքային և դրա հետ կապված մասնագիտական, տնտեսական, սոցիալական իրավունքներն ու շահերը ներկայացնելու և աշխատանքային հարաբերություններում դրանք պաշտպանելուն՝ ինչը և իրականացվում է առ այսօր:

1955-ից մինչ օրս ԵՊՀ արհմիությունն իրականացրել է առանձին հաշվապահական գործունեություն, ունեցել բանկային հաշիվներ:

Տարբեր տարիների կազմակերպությունը ղեկավարել են Նատալյա Մելիքյանը (1940 – 1944 և 1945 – 1946 թթ.), Սմբատ Բադալյանը (1944 – 1945 թթ.), Ռաֆիկ Մխիթարյանը (1946 – 1947 թթ.), Մելիքսեթ Տեր-Ղազարյանը (1947 – 1953 և 1954 – 1955 թթ.), Հովհաննես Չալքիկյանը (1953 – 1954 թթ.), Ռուսեթ Հովհաննիսյանը (1955 – 1956 թթ.), Արշակ Վարդապետյանը (1956 – 1957 թթ.), Հովհաննես Ֆահրադյանը (1957 – 1958 թթ.), Մկրտիչ Նալբանդյանը

(1958 – 1963 թթ.), Միքայել Ամիրխանյանը (1963 – 1971 թթ.), Կարլեն Աբգարյանը (1971 – 1975 թթ.), Ռոբերտ Դավթյանը (1975 – 1976 թթ.), Հովհաննես Մկրտչյանը (1976 – 1992 թթ.), Վաչագան Գալստյանը (1992 – 2006 թթ.): 2006-ից ԵՊՀ արհեստակցական կազմակերպության նախագահն է Արմեն Ավետիսյանը:

Կազմակերպության գործունեության օրենսդրական դաշտն առավել հստակեցվեց 2000 թ.՝ ՀՀ Ազգային Ժողովում «Արհեստակցական միությունների մասին» օրենքի ընդունումից հետո: Ելնելով նոր օրենքի պահանջներից՝ ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունը 2002 թ. փետրվարի 12-ին կայացած համաժողովում ընդունեց որոշում, ըստ որի մինչ այդ գործող «ԵՊՀ միացյալ արհեստակցական կազմակերպությունը» (որին անդամակցում էին նաև ուսանողները) վերակազմավորվեց «ԵՊՀ արհեստակցական կազմակերպության» (այժմ անդամակցում են միայն ԵՊՀ աշխատողները): Համաժողովում քննարկվեց և հաստատվեց կազմակերպության առաջին կանոնադրությունը: Նույն թ. մարտի 5-ին «ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունը» գրանցվեց ՀՀ արդարադատության նախարարությունում՝ ստանալով իրավաբանական անձի կարգավիճակ:

Կազմակերպության բարձրագույն մարմինը համաժողովն է, ղեկավար մարմինը՝ արհկոմիտեն, որի կազմը հաստատվում է համաժողովում՝ հինգ տարի ժամկետով: Արհկոմիտեն ձևավորվում է ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների արհբյուրոների նախագահներից և գործում կազմակերպության կանոնադրության շրջանակներում:

Կազմակերպության կանոնադրական և ֆինանսատնտեսական գործունեությունը ստուգում է վերստուգիչ հանձնաժողովը, որը նույնպես ընտրվում է համաժողովի կողմից՝ հինգ տարի ժամկետով:

ԵՊՀ արհեստակցական կազմակերպության առաջարկությամբ, գործատու-արհկոմիտե բանակցությունների արդյունքում, համալսարանի պատմության մեջ առաջին անգամ, 2007 թ. հունվարի 5-ին կնքվեց առաջին ԵՊՀ կոլեկտիվ պայմանագիրը, ինչի շնորհիվ ստեղծվեցին հավելյալ սոցիալական երաշխիքներ և հնարավորություններ ԵՊՀ աշխատողների աշխատանքային և այլ իրավունքների պաշտպանության համար:

Արհկոմիտեն մեծ ուշադրություն է դարձնում համալսարանի աշխատողների սոցիալական և իրավական խնդիրների լուծմանը, այդ ուղղությամբ մշտապես մշակում և իրականացնում է սոցիալական ու իրավական բնույթի ծրագրեր, այդ թվում՝ «Հավելավճար հաշմանդամություն ունեցող համալսարանականներին», «Անվճար իրավաբանական օգնություն համալսարանականներին», «Մատչելի հանգստի կազմակերպում համալսարանականներին», «Ներկայացումների անվճար տոմսեր համալսարանականներին», «Ծաղկաձորի ուղեգիր նորապսակ համալսարանականներին», «Դրամական աջակցություն համալսարանականներին», «Բուժօգնություն համալսարանականներին» և այլն:

ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունն ակտիվորեն համագործակցում է ՀՀ պետական բուհերի, արտասահմանյան տարբեր երկրների համալսարանների արհեստակցական կազմակերպությունների հետ:

1996 թ. ԵՊՀ արհկոմիտեն հիմնադրել է «Հայաստանի բուհերի արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միություն»-ը և որպես լիիրավ անդամ ընդգրկվել «Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի» մեջ:

1997-ից ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունը «Համալսարանների արհեստակցական կազմակերպությունների եվրասիական ասոցիացիայի» լիիրավ անդամ է, 2007-ից՝ նախագահության անդամ, «Արհմիությունների համընդհանուր կոնֆեդերացիա» միջազգային միավորման ասոցիացված անդամ: 2015-ից անդամակցում է նաև “Education International” կազմակերպության եվրոպական կոմիտեին, որն, ըստ էության, բարձրագույն կրթության ոլորտի աշխատողների արհեստակցական ազգային կազմակերպությունների համաեվրոպական հարթակ է:

Հայաստանի արհեստակցական կազմակերպությունների մեջ առաջինը ԵՊՀ արհկոմիտեն 2007 թ. գործարկեց իր համացանցային եռալեզու կայքէջը՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն: Կայքէջի հասցեն է www.ysutu.am



4-րդ գումարման արհկոմիտեի կազմը



Ֆակուլտետային «ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ»
ինտելեկտուալ խաղի հաղթողները



Ուսանողները հերթական հաղթանակից հետո

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Ուսանողների արտալսարանային հարուստ և բազմազան առօրյան կազմակերպում են համալսարանի ուսանողական կառույցները. Ուսանողական խորհուրդ (ՈւԽ), Ուսանողական գիտական ընկերություն (ՈւԳԸ), Մշակույթի կենտրոն, ինչպես նաև վարչական ստորաբաժանումները:

Երևանի պետական համալսարանի ուսանողական խորհուրդը գործել է դեռևս Մայր բուհի հիմնադրման առաջին իսկ տարիներից: Հետագայում այդ դերը ստանձնել է կոմերիտական կազմակերպությունը: Խորհրդային կարգերի փլուզումից հետո, 1994 թ. վերստին ստեղծվել է ուսանողական այդ կառույցը, որի հիմնադիր անդամները վերջին երկու տասնամյակում զգալի աշխատանք են կատարել ՀՀ ուսանողական ինքնակառավարման զարգացման և քաղաքացիական հասարակության ձևավորման գործում:

ՈւԽ-ն ուսանողների ինքնակառավարման ընտրովի մարմին է, որը ղեկավարվում է ուսանողների կողմից: Յուրաքանչյուր ֆակուլտետ ունի իր ուսանողական ինքնակառավարման մարմինը: Ֆակուլտետի ՈւԽ անդամ կարող են դառնալ այն ուսանողները, ովքեր ստանում են կուրսի կամ հոսքի ուսանողների մեծամասնության վստահության քվեն և ունեն բարձր առաջադիմություն: ԵՊՀ յուրա-

քանչյուր ուսանող կարող է մասնակցել ՈւԽ-ի աշխատանքներին՝ ընդգրկվելով ՈւԽ նախագահության կազմում գործող իրավական, արտաքին կապերի, լրատվության և հասարակայնության հետ կապերի, գիտակրթական, ֆինանսատնտեսական, մշակույթի, սոցիալական, սպորտի, հեռակա ուսուցման ուսանողների հարցերով զբաղվող հանձնաժողովներում:

ՈւԽ-ն ապահովում է ուսանողների մասնակցությունը համալսարանի կառավարման գործընթացին: Ըստ «Կրթության մասին» ու «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքների՝ ուսանողական խորհուրդներին վերապահված է բուհերի կառավարման մարմիններում (ԵՊՀ հոգաբարձուների խորհուրդ, գիտական խորհուրդ, ֆակուլտետային գիտական խորհուրդ) առնվազն 25% ուսանողի առաջադրման իրավունք:

Խորհուրդը մասնակցում է ուսումնական գործընթացի կազմակերպմանը և ուսուցման արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակմանն ու իրականացմանը, ուսանողներին իրազեկում է նրանց պարտականությունների և իրավունքների մասին: Ֆակուլտետային ուսանողական խորհուրդները աջակցում են ուսանողների սոցիալական վիճակի բարելավմանը, ինչպես նաև քննարկում և ընտրում են այն ուսանողներին, ովքեր արժանի են ստանալու պետական, ինչպես նաև անվանական կրթաթոշակներ: ՈւԽ-ն զբաղվում է սովորողների իրավունքների պաշտպանության, շահերի ներկայացման և առաջացած տարբեր խնդիրների լուծման հարցերով, միաժամանակ կազմակերպում է ուսանողների ազատ ժամանցն ու հանգիստը:



Ուսանողները Հատիսի գագաթին





«Վարդանանք» ակումբի սաները
Պարույր Սևակի հուշաքարի մոտ

Յուրաքանչյուր կիսամյակ ՈւԽ-ն կազմակերպում է մարզական մրցաշարեր (ֆուտբոլ, բասկետբոլ, վոլեյբոլ, շախմատ, սեղանի թենիս և այլն), մտավոր զարգացումը խթանող խաղեր, մշակութային միջոցառումներ (համերգներ, ցուցահանդեսներ, հանդիպումներ արվեստի, գրականության, գիտության և հասարակական-քաղաքական անվանի գործիչների հետ): Ամեն տարի ապրիլի 14-ին, ԵՊՀ ՈւԽ վերահիմնադրման օրը, անց է կացվում «Տարվա լավագույն ուսանող» միջոցառումը, որի նպատակն է խրախուսել հասարակական ակտիվություն ցուցաբերած ուսանողներին: Ամեն տարի նոյեմբերի 17-ին՝ Ուսանողների միջազգային օրը ՈւԽ-ն կազմակերպում է «Ուսանողական ռեկտորատ» միջոցառումը, որի ընթացքում մեկ օրով ուսանողներին է վստահվում բուհի «ղեկավարումը», իսկ մայիսի 16-ին՝ ի նշանավորումն ԵՊՀ հիմնադրման, Հայաստանի Հանրապետությունում նշվում է Երիտասարդության և ուսանողության օրը:

Երևանի պետական համալսարանի Ուսանողական գիտական ընկերությունը (ՈւԳԸ) ստեղծվել է 1947 թ., իսկ առաջին կանոնադրությունը հաստատվել է 1948-ին: Մինչ այդ, համալսարանում դեռևս 1922 թ. գործել են ուսանողական գիտական խմբակներ, որոնց նպատակն էր պատշաճ մակարդակով կազմակերպել գիտաստեղծագործական կարողություններով օժտված ուսանողների ինքնուրույն աշխատանքները, նրանց մեջ սեր ու հետաքրքրություն առաջացնել գիտության ու մշակույթի նկատմամբ: ԵՊՀ ՈւԳ խմբակները 1940 թ. հիմք են դնում «Ուսանողական գիտական տեղեկագիր» տարեգրքին, որը տարբեր խորագրերով լույս է տեսնում

մինչ օրս:

Վերակազմավորված ՈւԳԸ-ն ուսանողներին և ասպիրանտներին միավորող համալսարանական ստորաբաժանում է, որի նպատակն է նպաստել ուսանողության գիտական, ստեղծագործական և հոգևոր զարգացմանը: Տասնամյակների ընթացքում կազմակերպությունը կարևոր դեր է կատարել, թե՛ որպես ուսանողական կառույց, թե՛ որպես համալսարանի ստորաբաժանում: Ընկերությունը մշտապես կազմակերպում է գիտաժողովներ, նատաշրջաններ, սեմինարներ ու գիտահանրամատչելի դասախոսություններ, գիտական և կրթական ուղղվածություն ունեցող միջոցառումներ՝ դրանցում ընդգրկելով նաև արտահամալսարանական գիտական ներուժը:

1948 թ. սեպտեմբերի 28-ին ՈւԳԸ երկրաբանական և աշխարհագրական ֆակուլտետային բաժանմունքների հրավիրած նիստում, որը նվիրված էր աշխարհահռչակ աշխարհագրագետ ու երկրաբան, Սոցիալիստական աշխատանքի հերոս, Պետական մրցանակի դափնեկիր, ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս Վ. Ա. Օբրուչևի ծննդյան 85-ամյակին, որոշվեց երկրաբանության գծով լավագույն աշխատանքի համար սահմանել Վ. Օբրուչևի անվան մրցանակ, իսկ ակադեմիկոսին ընտրել ԵՊՀ ՈւԳԸ պատվավոր անդամ:

Մեծանուն գիտնականը, տեղեկանալով այս մասին, համալսարանին հղած իր նամակում գրում էր. «Թանկագին ընկերներ, Երևանի պետական համալսարանի երկու ֆակուլտետների ուսանողներ, սրտանց շնորհակալություն եմ հայտնում ձեզ շնորհավորանքի համար՝ իմ ծննդյան 85-ամյակի և երկրաբանության գծով ուսանողական լավագույն աշխատանքի համար իմ անվան մրցանակ սահմա-



ՈւԳԸ հերթական միջազգային գիտաժողովը



Տրվել է ԵՊՀ ՈՒԳԸ-ին հայապահպանության գործում նշանակալի ավանդի համար



նելու առթիվ: Մեծարման այդպիսի ձևը ես հատկապես ողջունում եմ և շոյված եմ դրանով, քանի որ դա նպաստում է գիտության զարգացմանը և խրախուսում է երիտասարդ գիտնականներին: Շնորհակալություն և պատվավոր անդամ ընտրելու համար: Հայաստանում լինել, դժբախտաբար, ինձ չհաջողվեց, թեև պատանեկության տարիներից երազել եմ բարձրանալ Արարատ լեռը, որպեսզի համոզվեմ նրա հրաբխային բնույթի մեջ: Աշխատությունները Արագած լեռան հրաբխայնության մասին ինձ հայտնի են, ինչպես և սքանչելի Սևանա լճի մասին

Սրտագին ողջույնով և հետագա աշխատանքի համար հաջող ուսման մաղթանքով՝ Վ. Օբրուչև:

ՈւԳԸ-ն աջակցում է շնորհաշատ ուսանողներին և ասպիրանտներին, սատարում գիտական և կրթական ոլորտներում ուսանողության մախաճեռնությունները, պարբերաբար հրատարակում երիտասարդ գիտնականների և ուսանողների գիտական աշխատանքները: ՈւԳԸ-ի գործուն քայլերի շնորհիվ ապահովվում է ուսանողների ներգրավումը տարբեր գիտական ծրագրերում և գիտական խմբերում:

ԵՊՀ ՈՒԳԸ-ն, կարևորելով միջբուհական ուսանողական գիտական համագործակցությունը և գիտության ու նորագույն տեխնոլոգիայի ոլորտներում տեղեկատվության փոխանակումը, սերտորեն համագործակցում է հայաստանյան բուհերի ուսանողական գիտական ընկերությունների հետ, համատեղ կազմակերպում գիտակրթական ուղղվածություն ունեցող տարաբնույթ միջոցառումներ (սեմինարներ, բանավեճեր, քննարկումներ և այլն): ՈՒԳԸ-ն կապեր է հաստատում և տեղեկատվություն փոխանակում այլ գիտական

կենտրոնների, ինչպես նաև արտասահմանյան բուհերի համանման կազմակերպությունների հետ, համապատասխան քայլեր ձեռնարկում դրանց խորացման ուղղությամբ:

ՈՒԳԸ-ի աջակցությամբ ԵՊՀ ուսանողներն ու ապիրանտները մասնակցում են ինչպես հանրապետությունում, այնպես էլ արտերկրում անցկացվող տարաբնույթ գիտաժողովների, դասընթացների, սեմինարների ու մրցույթների:

Ընկերությունը ձևավորել է տարբեր ավանդույթներ, որոնք անհրաժեշտ են ցանկացած համալսարանի լիակատար ու լիարժեք գործունեության համար:

Ուսանողների առօրյան հարուստ ու բովանդակալից է դարձնում համալսարանի մշակույթի կենտրոնը՝ ուսանողական միջոցառումներ, տոնահանդեսներ, փառատոներ, ցուցահանդեսներ, հանդիպումներ մշակույթի անվանի գործիչների հետ, գեղարվեստական ինքնագործ խմբեր:

Դեռևս 1923 թ. համալսարանի առաջին դասախոսներից գրականագետ Յուլակ Խանգադյանի ջանքերով ԵՊՀ-ում ստեղծվել է «Գրական խմբակ», հետագայում՝ «Գրական ստուդիա», որը տարբեր տարիների ղեկավարել են Արսեն Տերտերյանը, Մկրտիչ Մկրյանը, Էդվարդ Զրբաշյանը և ուրիշներ: Ստուդիայի շրջանակներում կազմակերպվում էին գրական քննարկումներ, ասմունքի երեկոներ, թատերական ներկայացումներ: Միջոցառումներին իրենց մասնակցությունն էին բերում Եղիշե Չարենցը, Նաիրի Զարյանը, Սողոմոն Տարոնցին, Հովհաննես Շիրազը, Սիլվա Կապուտիկյանը, Պարույր Սևակը, Վահագն Դավթյանը և այլ մեծանուն գրողներ:



«Վարդանանք» ակումբի սաները Արցախում



ԵՊՀ երգչախումբը, դիրիժոր Հովհաննես Չեփիջյան



Չեփիջյանական արվեստի մոգական ուժը
կախարդում է ունկնդրին

1959-ին ԵՊՀ գրական խմբակը սկիզբ է դնում «Ուսանողի քնար» գրական-գեղարվեստական ժողովածուի հրատարակությանը՝ Էդվարդ Ջրբաշյանի և Հրանտ Թամրազյանի խմբագրությամբ: Այն տպագրվել է մինչև 1965 թ. և ունեցել է չորս համար: Շուրջ մեկուկես տասնամյակի ընդհատումից հետո, 1981 թ. «Երևանի համալսարան» թերթի խմբագիր Վլադիմիր Մադալյանի նախաձեռնությամբ ԵՊՀ-ում վերականգնվել է գրական-գեղարվեստական ժողովածուի հրատարակությունը «Գրական համալսարան» վերտառությամբ, որը պարբերաբար տպագրվում է մինչ օրս՝ իր էջերում ընդգրկելով մայր բուհի ստեղծագործող ուսանողների, դասախոսների և աշխատողների ինքնուրույն ու թարգմանական գործերը:

1930-ականներին համալսարանում ստեղծվել է նաև «Կոմիտաս» երգչախումբը, որի գեղարվեստական առաջին ղեկավարը հայ երգարվեստի մեծ երախտավոր, նշանավոր խմբավար Թաթուլ Ալթունյանն էր: Հետագայում երգչախումբը ղեկավարել են Կարո Զաքարյանը, Նորայր Սնգրյանը, Կարո Կարապետյանը, Հովհաննես Չեփիջյանը, Մեղրակ Տեր-Ղազարյանը, Խորեն Մեյխանաջյանը, Հարություն Թովիկյանը: 1952 թ. երգչախումբը բարձր կատարողական վարպետության համար արժանացել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության պատվոգրի:

Քառաձայն երգչախումբն իր կատարողական բարձրակետին հասավ 1960-ականներին, մեծանուն խմբավար և դիրիժոր Հովհաննես Չեփիջյանի ղեկավարությամբ: Երգացանկում մեծ տեղ ունեին կոմիտասյան երգերը, նաև հայ այլ երգահանների ու եվրոպական դասականների ստեղծագործություններ: Անգնահատելի է համալ-

սարանի երգչախմբի դերը ուսանողների գեղագիտական դաստիարակության գործում: Երգչախումբը մայրաքաղաքի 1960-ականների երաժշտական կյանքի ինքնատիպ դրսևորումներից էր և հանրապետության այլ բուհերում ուսանողական երգչախմբերի սկզբնավորման նախատիպը: Այն, տարիների ընթացքում, մեծ հեղինակություն է բերել համալսարանին. 1967 թ. Տարտուում կազմակերպված «Ուսանողական երգի» III փառատոնում մեծ հաջողությունների հասնելու առիթով Տարտուի համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Ֆեոդոր Կլեմենտը մեր երգչախմբի մասին ասել է. «Երևանի պետական համալսարանի ուսանողության ինքնագործ քառաձայն խումբը ինձ զարմացրեց իր կատարողական բարձր արվեստով: ԱՀԱ ԹԵ ՈՒՄԻՅ ԿԱՐԵԼԻ Է ՍՈՎՈՐԵԼ»:

Երգչախումբը մասնակցել է նաև 1971 թ. Չեխոսլովակիայում անցկացվող «Միջազգային երգի» մրցույթին, արժանացել ջերմ ընդունելության և հաղթողի դափնիների:

Հարություն Թովիկյանի ղեկավարությամբ երգչախումբը հաղթողի կոչման է արժանացել «Յուվենտուս-87» ավանդական բուհական ինքնագործ երգչախմբերի VII փառատոնում, բազմիցս վաստակել դափնիներ՝ մասնակցելով ավանդույթ դարձած «Ուսանողական գարուն» և «Քաղաքական երգ» փառատոններին: 1987 թ. երգչախմբի հիմնադրման 50-րդ տարեդարձի առթիվ նրան շնորհվել է ՀԽՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարարության և արհմիության հանրապետական կոմիտեի պատվոգրեր:

1965 թ. համալսարանի շրջանավարտ Հայրիկ Մուրադյանի նախաձեռնությամբ համալսարանականները մեծ ոգևորությամբ սկսե-



ԵՊՀ երգչախումբը,
դիրիժոր Հովհաննես Չեքիջյան



ԵՊՀ երգչախումբը,
դիրիժոր Հարություն Թովիկյան



ԵՊՀ երգչախումբը,
դիրիժոր Հարություն Թովիկյան

ցին սովորել հայկական ազգագրական երգեր:

ԵՊՀ-ում, սկսած 1930-ականների կեսերից, գործել է մաս թատերախումբ, որի կազմը տարբեր տարիների թարմացվել ու նորացվել է՝ ընդգրկելով դերասանական ու ասմունքի ակնհայտ ձիրք ու շնորհք ունեցող ուսանողների: Համալսարանական թատերախումբն ու ասմունքողների խմբակը ելույթներ են ունեցել ոչ միայն մայր կրթօջախում, այլև հանրապետության մյուս բուհերում ու շրջաններում՝ արժանանալով գովեստների ու խրախուսանքի, ինչպես մաս պատվոգրերի ու մրցանակների:

1962 – 1966 թթ. համալսարանում կազմակերպվել է ջազային նվագախումբ (ղեկավար՝ Մարտին Վարդազարյան), 1981 – 1991 թթ.՝ կամերային նվագախումբ (ղեկավար՝ Վիլեն Չարչոլյան): Երգչախումբը և կամերային նվագախումբը արժանացել են «Ժողովրդական կոլեկտիվ»-ի կոչման: 1996 – 2005 թթ. ԵՊՀ կամերային նվագախմբի ղեկավարն ու դիրիժորն էր Դանիել Երաժիշտը:

1970-ականներին բանասիրական ֆակուլտետում ստեղծվել է հայ հոգևոր երգի համույթ (ղեկավար՝ Խորեն Պալյան):

1964 թ. համալսարանի ԼԿԵՄ կոմիտեի նախաձեռնությամբ հիմնադրվել է համալսարանի միջազգային կապերի ակումբը, որը 1965-ի հոկտեմբերից կոչվեց «Կռունկ» (նախագահ՝ Բ. Հարությունյան, ապա՝ Ռ. Մաքապետոյան): Ակումբն ուներ ԽՍՀՄ բուհերի ուսանողության, Ասիայի ու Աֆրիկայի, սփյուռքահայության և եվրոպական երկրների առաջադիմական երիտասարդության հետ կապերի մասնաճյուղեր: «Կռունկը» նամակագրական կապեր ուներ ԽՍՀՄ համանման ակումբների, ինչպես մաս արտասահմանի ավելի

քան 25 երկրների երիտասարդության հետ: Ակումբն անցկացրել է բազմաթիվ միջոցառումներ. երեկոներ ու սեմինարներ, հանդիպումներ ու գիտաժողովներ, որոնք մեծապես նպաստել են մեր ուսանողության գիտելիքների հարստացմանն ու դաստիարակությանը: Նրա պատվավոր անդամներ են ընտրվել սփյուռքի 40 երախտավորներ, այդ թվում՝ Շառլ Ազնավուրը, Լուսին Ամարան, Գառզուն, Ռոզի Արմենը և ուրիշներ:

1977 թ. մարտին համալսարանում ստեղծվել է «Կռունկ» ակումբի լարային քառյակը, որի բազմաթիվ ելույթները ռադիոյով ու հեռուստատեսությամբ նրան ճանաչում բերեցին: Շատ շուտով քառյակը հայտնի դարձավ ինչպես մեր հանրապետությունում, այնպես էլ Խորհրդային Միության սահմաններից դուրս: 1978 թ. սեպտեմբերին՝ մասնակցելով երաժշտախմբերի միջազգային փառատոնին, լարային քառյակը ճանաչվել է լավագույնը և արժանացել առաջին կարգի մրցանակի:

Համալսարանում 1967 – 1970 թթ. գործել է նաև «Հայ մշակույթի ակումբը» (նախագահ՝ Վ. Մխիթարյան), որը ուսանողության համար կազմակերպել է մշակութային բազմաթիվ միջոցառումներ. Երևան քաղաքի հիմնադրման 2750-ամյակին նվիրված դասախոսություններ ու էքսկուրսիաներ, անվանի արվեստագետների հետ հանդիպումներ ու զրույցներ, արտերկրի նշանավոր ճարտարապետների ու նկարիչների այցելություններ մայր կրթօջախ, արվեստին նվիրված գրքերի քննարկումներ և այլն:

Թորոս Ռոպինի անվան արվեստասերների ակումբը ստեղծվել է 1977 թ. և գործել մինչև 1979 թ.: Ակումբի նախագահը Լևոն Չու-



ԵՊՀ մշակույթի կենտրոնի
կամերային նվագախումբը, դիրիժոր՝
Ռուբեն Կարասեֆերյան



ԵՊՀ մշակույթի կենտրոնի
պարային համույթը



«Վարդանանք» ակումբի սաները Արցախում

գասգյանն էր: Իր միջոցառումների ընթացքում ակումբը ուսանողներին ծանոթացնում էր հայ և աշխարհի մյուս ժողովուրդների արվեստի գլուխգործոցներին, աշխարհի թանգարաններում գտնվող հայկական մանրանկարների եզակի նմուշների լուսանկար-պատճեններին, ինչպես նաև միջնադարի վարպետների գեղարվեստական, ստեղծագործական սկզբունքների, ոճերի, գեղագիտական ընկալումների ինքնատիպության հետ:

Ուսանողներին հայրենասիրական ոգով դաստիարակելու գործին նպաստել է նաև 1960-ականներից մինչև 80-ականների կեսերը ԵՊՀ ԼԿԵՄ կոմիտեին կից գործող հայ լեզենդար զորավար Գայի (Հայկ Բժշկյանց) անվան ռազմահայրենասիրական դաստիարակության ակումբը, որը կազմակերպել է բազմաթիվ միջոցառումներ՝ նվիրված քաղաքացիական և Հայրենական մեծ պատերազմներին մասնակցած հայ ռազմիկներին ու զորավարներին, Խորհրդային Միության հերոսներին և նրանց սխրագործությունների լուսաբանմանը:

Այսօր ուսանողների շրջանում մեծ աշխատանք է կատարում 2006 թ. համալսարանում կազմավորված Մշակույթի կենտրոնը (տնօրեն՝ Կարինե Դավթյան), որի կազմում գործում են «Համալսարանական» թատրոն-ստուդիան, պարային համույթը, երգչախումբը, կամերային նվագախումբը, կինոակումբը, ուրախների և հնարամիտների ակումբը (ՈւՀԱ), երիտասարդ ստեղծագործողների գրական ստուդիան և նախաձեռնող, իրագործող կամավոր երիտասարդների (ՆԻԿԵ) ջոկատը:

Կենտրոնը համակարգում է բուհի մշակութային կյանքը. ստեղ-

ծում է միջբուհական կապեր, անցկացնում ներհամալսարանական, արտահամալսարանական և միջբուհական մշակութային մրցույթներ, փառատոներ, կազմակերպում համերգներ, ներկայացումներ, ֆիլմերի դիտումներ ու քննարկումներ, մաս մշակույթի տարբեր ոլորտներին վերաբերող դասախոսություններ: Այս բազմաբնույթ միջոցառումները ձևավորում են ուսանողի աշխարհայացքը, զարգացնում մշակութային ունակություններն ու ճաշակը: Կենտրոնի միջոցառումներին մասնակցում են բուհի ինչպես շնորհալի ուսանողները, այնպես էլ դասախոսները:

«Համալսարանական» թատրոն-ստուդիան (գեղ. ղեկավար ու բեմադրիչ՝ Կարինե Դավթյան) հիմնադրվել է 2005 թ.: Ստուդիան բեմադրել է Վիլյամ Մարոյանի «Հե՛յ, ով կա...», «Պատասխանում է Ջիմ Դենդին», Դերենիկ Դեմիրճյանի «Քաջ Նազար», Եղիշե Չաբենցի «Ես իմ անուշ Հայաստանի...», Պարույր Սևակի «Եվ այդ մի՛ Մաշտոց անուն», Աղասի Այվազյանի «Ցուցակը», Երվանդ Օտյանի «Ընկեր Բ. Փանջունի», Նոդար Դումբաձեի «Կարոտ» և շատ այլ հեղինակների գործերի հիման վրա ստեղծված ներկայացումներ, պարբերաբար մասնակցել է «ArtFest» և «Հայֆեստ» թատերական միջազգային փառատոներին: ԵՊՀ-ն՝ հանձնիս «Համալսարանական» թատրոն-ստուդիայի 2008 թվականից ընդգրկված է Եվրամիության արվեստների լիգայի՝ (ELIA) կազմում:

Աղջիկների պարային համույթը (գեղ. ղեկավար՝ Իրեն Ուլիխանովա) ստեղծվել է 2006 թ.: Մասնակցում է բազմաթիվ միջոցառումների, համերգների, թե՛ համալսարանում և թե՛ նրա շրջանակներից դուրս:



ԵՊՀ մշակույթի կենտրոնի
թատրոն-ստուդիայի սաները



Երգչախումբը (գեղ. ղեկավար՝ ՀՀ վաստակավոր արտիստ Կարեն Սարգսյան, խմբավար՝ բազմաթիվ մրցույթների դափնեկիր Ռուբեն Կարասեֆերյան) համերգներով հանդես է գալիս ՀՀ մարզերում, Արցախում, Ջավախքում, մասնակցում միջբուհական և հանրապետական մրցույթների՝ գրանցելով հաղթանակներ: Երգչախմբի երգացանկում տեղ են գտել հայ, ռուս և եվրոպական երգահանների ստեղծագործություններ:

Կամերային նվագախումբը (գեղ. ղեկավար՝ Կարեն Սարգսյան) վերակազմավորվել է 2006 թ.: Նվագախումբը հանդես է գալիս հայ և եվրոպական կոմպոզիտորների ստեղծագործությունների կատարմամբ:

Կինոռեժիսորները գործում է 2010 թվականից: Ազգային կինոկենտրոնի հետ համատեղ պարբերաբար կազակերպում է կինոկենտրոնի նկարահանած մոթ ֆիլմերի ցուցադրություններ, հայ կինոյի ոսկե ֆոնդի կինոֆիլմերի, ինչպես նաև «Ոսկե ծիրան» կինոփառատոնին ներկայացված ֆիլմերի դիտում-քննարկումներ:

Մշակույթի կենտրոնը կազմակերպում է նկարիչների մրցույթներ, որոնց իրենց մասնակցությունն են բերում նաև համալսարանի շնորհալի ուսանողներն ու դասախոսները: Առանձնակի հետաքրքրությամբ ընդունվեցին «Անկախությունն իմ աչքերով» (2006 թ.՝ նվիրված ՀՀ անկախության 15 ամյակին), «Երազ իմ, երկիր հայրենի» (2007 թ.) և ԵՊՀ հիմնադրման 90-ամյակին նվիրված (2009 թ.) մրցույթները: Վերջինում ներկայացված էին գեղանկարչական, լուսանկարչական, գրաֆիտի, գոբլենի, ուլունքագործության ու շագրավ աշխատանքներ:

Կենտրոնի գրական ստուդիան համագործակցում է Հայաստանի գրողների միության հետ, կազմակերպում ներհամալսարանական և միջբուհական երիտասարդ ստեղծագործողների (այդ թվում նաև Արցախի համալսարանի ուսանողների մասնակցությամբ) գրական մրցույթներ: Ներկայացված լավագույն ստեղծագործությունները տպագրվել են «Արմատ և լույս», «Բարի երթ», «Զայլեր և արձագանք» գրքույկներում:

1996 թ. համալսարանի 20-ից ավելի տարբեր բնույթի ակումբներ ներգրավվեցին ԵՊՀ արհկոմիտեի ակումբների համադաշնության մեջ (նախագահ՝ Սաթենիկ Աբրահամյան), որը գործեց մինչև 2007 թ.: Կազմակերպված բազում միջոցառումների շրջանակներում բացահայտվում էին ուսանողների նախասիրությունները, ստեղծագործական ներուժը: 1996 թ. ԵՊՀ միացյալ արհկոմիտեի, ուսանողական ակումբների համադաշնության և համալսարանական զոհված ուսանող ազատամարտիկների ծնողների ջանքերով հիմնադրվել է «Վարդանանք» ռազմահայրենասիրական դաստիարակության ակումբը, որի նպատակն է անմար պահել հայրենիքի համար իրենց կյանքը նվիրաբերած հերոսների հիշատակը, նրանց օրինակով նպաստել հայ երիտասարդների, հատկապես ուսանողների, հավաքական ներուժի արդյունավետ կենսագործմանը:

ԵՊՀ-ն ունի ուսանողական բազմաթիվ այլ ավանդույթներ: 1960-ականներին ծնունդ առած ամենամյա «Ուսանողական գարուն» փառատոնը նպատակաուղղված էր բարձրացնելու ուսանողների գիտելիքների մակարդակը, խթանելու հասարակական-քաղաքական ակտիվությունը և զարգացնելու գեղարվեստական ինքնա-





Ուսանողների դիպլոմների հանձնման արարողությունը
Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու մոտ



Ուսանողների դիպլոմների հանձնման արարողությունը
Դավիթ Անհաղթի արձանի մոտ

գործունեությունը:

«Լավագույն ուսանող» ամենամյա մրցանակաբաշխությունը ծնունդ է առել 2001 թ. և այսօր էլ այն ԵՊՀ սիրված ուսանողական տոնակատարությունների շարքում է: Մրցանակաբաշխության խորհրդանիշը համաափյուռ ծաղիկն է, որն ըստ ժողովրդական ավանդության ունի բուժիչ հատկություն, իսկ նրա բույրն ուժ ու եռանդ է հաղորդում մարդուն: Ծաղկի 12 թերթիկներից յուրաքանչյուրը խորհրդանշում է գիտության մի ոլորտ, և նոր գիտաճյուղերի ձևավորմանը զուգընթաց ավելանում են ծաղկի թերթիկները: Մրցույթի նպատակն է խրախուսել ուսանողների կրթական, գիտական և հասարակական գործունեությունը:

Դեռևս 1960-ականներից ԵՊՀ ուսանողների ուժերով, պրոֆ. Գուրգեն Մելիքյանի ղեկավարությամբ հանրապետության տարբեր վայրերում կատարվել են պատմական հուշարձանների մաքրման ու խնամման, ինչպես նաև ծառատնկման աշխատանքներ: 1989 թ. ապրիլին Գ. Մելիքյանի ղեկավարությամբ Ամարասի ձորակում՝ Մաճկալաշենում, ուսանողները տնկեցին 1500 ծառ: Բերձորում ստեղծվել են համալսարանական պուրակներ, որտեղ 2009 թ. ԵՊՀ հիմնադրման 90-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում տնկվել է 90 ընկուզենի: 1996 թվականից ի վեր «Գուրգեն Մելիքյանի Քաշաթաղի բազմազավակ ընտանիքներ հիմնադրամի» նախաձեռնությամբ, ԵՊՀ ռեկտոր Ա. Սիմոնյանի աջակցությամբ, դասախոսների և ուսանողների անմիջական մասնակցությամբ Բերձոր քաղաքում ամեն տարի երկուսից չորս անգամ կազմակերպվում է ծառատունկ: Այս գործընթացը շարունակական է: Այսօր արդեն տնկված

ծառերի թիվը գերազանցում է 8500-ը:

Համալսարանի գեղեցիկ ավանդույթներից են նաև առաջին կուրսեցիների երդման, Գիտելիքի և դպրության օրվան, Թարգմանչաց տոնին նվիրված, հայ մշակույթի նշանավոր գործիչների հուշարձանների մոտ կամ տուն-թանգարաններում ու Հայաստանի պատմական վայրերում՝ Օշականում, Անիում, Աղթամարում և այլուր, ուսանողական տոմսերի ու դիպլոմների հանձնման արարողությունները:



«Լավագույն ուսանող» մրցանակաբաշխությունից հետո



Համալսարանականների հերթական ծառատունկը

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՊՈՐՏԸ ԵՊՀ-ՈՒՄ

Ուսանողների ֆիզիկական դաստիարակության ու կրթության խնդիրները մեծ ուշադրության են արժանացել Երևանի պետական համալսարանում նրա հիմնադրումից ի վեր, և այդ հարցում մշտապես առաջնակարգ դեր է ունեցել ֆիզիկական դաստիարակության ու սպորտի ամբիոնը: Այն գործում է 1924 թվականից, սկզբում հատուկ (գինվորական) ամբիոնի հետ համատեղ և ապա՝ 1933-ից, որպես համահամալսարանական ուսումնագիտական առանձին միավոր:

Ամբիոնում, նրա կազմավորման առաջին իսկ օրերից, որպես մարզիչ-մանկավարժներ աշխատել են մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ԽՍՀՄ չեմպիոն Արամ Տեր-Հովհաննիսյանը (թեթև ատլետիկա), բժշկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գուրգեն Մինասյանը, ԽՍՀՄ վաստակավոր մարզիչ Արտյուշա Նազարյանը (ըմբշամարտ) և ուրիշներ: Տարիների ընթացքում ամբիոնը համալրվել է բարձրագույն կրթությամբ, մասնագիտական հարուստ գիտելիքներով զինված դասախոսական փորձառու կադրերով: Այսօր ամբիոնում աշխատում են 24 դասախոս, այդ թվում՝ 4 պրոֆեսոր, գիտությունների 3 թեկնածու-դոցենտներ, ասիստենտներ: Դասախոսներից 8-ը ունեն

պատվավոր կոչումներ, 11-ը սպորտի վարպետներ են:

Սպորտի գծով առաջավոր ուսանողներից շատերը՝ ավարտելով համալսարանը, դարձել են անվանի գիտնականներ, նաև հանդես եկել հանրապետության և համալսարանի տարբեր մարզածների հավաքականների կազմում: Առանձնապես աչքի են ընկել ՀԽՍՀ բարձրագույն կրթության փոխնախարար Սարգիս Թումանյանը (շախմատ), ՀԽՍՀ արտաքին գործերի նախարար, պրոֆեսոր Ջոն Կիրակոսյանը (վոլեյբոլ), ակադեմիկոսներ Ռաֆայել Ալեքսանդրյանը (շախմատ), Էդուարդ Ղազարյանը (ֆուտբոլ), Վլադիմիր Սարգսյանը (սեղանի թենիս և բասկետբոլ), Միսակ Դավթյանը (բասկետբոլ), պրոֆեսորներ Բենիկ Թումանյանը, Գեորգի Նալբանդյանը, Լևոն Եզեկյանը, Արծրուն Ավագյանը (վոլեյբոլ), Մուշեղ Հովսեփյանը (բռնցքամարտ), ԽՍՀՄ չեմպիոն, դոցենտ Էռնեստ Նազարյանը (ակրոբատիկա), հանրապետության բազմակի չեմպիոն, սպորտի վարպետ Վահագն Ոսկանյանը (շախմատ), ՀՀ ֆիզկուլտուրայի և սպորտի վաստակավոր գործիչ, դոցենտ Գագիկ Հովհաննիսյանը (շախմատ) և շատ ուրիշներ:

Սկզբնական շրջանում համալսարանը ուսանողների սպորտային պարապմունքների համար չուներ բավարար պայմաններ: 1962 – 1964 թթ. համալսարանի նոր մասնաշենքի տարածքում կառուցվեց բացօթյա մարզահրապարակ՝ թեթև ատլետիկական վազբուղիներով: Հետագայում այս մարզահրապարակի տեղում կառուցվեց համալսարանի նոր մասնաշենք, և ամբիոնն իր պարապմունքներն անցկացնում էր հանրապետության տարբեր մարզադահլիճներում, «Հաղթանակ» զբոսայգու տարածքում:

1970-ական թվականներին ՀԽՍՀ կառավարության որոշմամբ կառուցվեց սպորտային նոր համալիր՝ 5 մարզադահլիճներով, հանդերձարաններով, տաք ջրի ցնցուղարաններով, սանհանգույցներով, բժշկական անձնակազմի աշխատասենյակներով, մեթոդ-կաբինետով, դասախոսությունների ընդարձակ դահլիճով: Այս պայմաններում հնարավոր դարձավ ֆիզիկական դաստիարակության աշխատանքները կազմակերպել ժամանակակից պահանջներին համահունչ, անցկացնել սպորտային մեծամասշտաբ մրցաշարեր, միջազգային հանդիպումներ:

Շատ համալսարանականներ ու ԵՊՀ սպորտային թիմեր կանոնավոր մարզումների շնորհիվ հասան զգալի հաջողությունների, տարբեր մարզաձևերից մասնակցեցին բազմաթիվ առաջնությունների, դարձան չեմպիոններ. Օլիմպիական ոսկե և արծաթե մրցանակակիրներ Էդուարդ Ազարյան (մարմնամարզություն), Սիրվարդ Էմիրզյան (ջրացատկ), Հայաստանի բազմակի չեմպիոն Էռա Ոսկանյան (թեթև ատլետիկա), ԽՍՀՄ բազմակի չեմպիոն Դավիթ Թորոսյան (բռնցքամարտ), ԽՍՀՄ հավաքականի անդամ, սպորտի վաստակավոր վարպետ Վ. Ջաստուխով (բասկետբոլ), ԽՍՀՄ բազմակի չեմպիոն Գագիկ Ջոհրաբյան (հրաձգություն), Հայաստանի բազմակի չեմպիոններ Վազգեն Սողոյան (բազկամարտ), Վ. Մովսիսյան (ձյուդո), Սեդա Գալոյան, Անահիտ Մարուխյան (լեռնադահուկային սպորտ), Գագիկ Ղազարյան (ուժային եռամարտ): Համալսարանում են սովորել «Արարատ» ֆուտբոլային թիմի անվանի ֆուտբոլիստներ, ԽՍՀՄ սպորտի վարպետներ Հովհաննես Ջանազանյանը, Ալյոշա Աբրահամյանը, Ժակ Սուփրիկյանը և այլք:

Մեր բասկետբոլիստները խորհրդային տարիներին միջազգային հանդիպումներ են ունեցել Շրի Լանկայի թիմի հետ, Լեհաստանի Լյուբլին քաղաքում մասնակցել միջազգային հանդիպումների: Համալսարանի ձեռնագնդորդները Թբիլիսիում կայացած փնջային մրցումներում գրավել են 3-րդ մրցանակային տեղը: Բասկետբոլի տղաների հավաքականը 2006 – 2008 թթ. մասնակցել է հանրապետության բարձրագույն խմբի առաջնություններին, երկու անգամ գրավել 2-րդ և մեկ անգամ՝ 3-րդ մրցանակային տեղերը: ԵՊՀ հավաքական թիմերը տարբեր տարիների ընկերական հանդիպումներ են ունեցել Մոսկվայի, Սանկտ Պետերբուրգի, Տարտուի, Օդեսայի, Դոնեցկի, Թբիլիսիի, Աշխաբադի, Թեհրանի, Սպահանի և այլ քաղաքների համալսարանների սպորտսմենների հետ:

Ֆիզդաստիարակության դասերից զատ ուսանողներն այսօր էլ ներգրավված են համալսարանում գործող ավելի քան 20 խմբերում՝ 15 մարզաձևերից՝ վոլեյբոլ, բասկետբոլ, ձեռքի գնդակ, ֆուտբոլ, սեղանի թենիս, շախմատ, աթլետիկա, բռնցքամարտ, ըմբշամարտ, ծանրամարտ, քիք բոքսինգ, արևելյան մարտարվեստ, լող և այլն: Երկար տարիներ միջազգային մրցումներում հաջողությամբ հանդես է եկել միջազգային հարաբերությունների ֆակուլտետի նախկին ասպիրանտ, հունահռոմեական ոճի ըմբիշ, Եվրոպայի և աշխարհի չեմպիոն Արսեն Ջուլֆալակյանը:

Վերջին տարիներին անց են կացվում ՀՀ բուհերի ֆիզիկական դաստիարակության ամբիոնների պրոֆեսորադասախոսական մրցաշարեր՝ վոլեյբոլ, սեղանի թենիս, հրաձգություն մարզաձևերից: Համալսարանը նշված բոլոր մարզաձևերում հանդես է գալիս հաջո-

դությամբ, գրավում մրցանակային տեղեր:

Կարևոր միջոցառումներից են ՀՀ ԿԳ նախարարության ավանդական ուսանողական մարզական խաղերը՝ 10 մարզածներից, որոնց 16-րդ մարզական փուլն ավարտվեց 2015 թվականին: Համալսարանի հավաքականները ընդհանուր հաշվարկով բոլոր մարզական խաղերում զիջել են միայն Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի մարզիկներին, իսկ շատ ասպարեզներում մշտապես գրավել են մրցանակային տեղեր: Առանձին մարզածներում (շախմատ, կրոսավազք, ֆուտբոլ) չենպիտոներ են դարձել աղջիկները:

Համալսարանի ուսումնադաստիարակչական աշխատանքներում մշտապես կարևոր տեղ է ունեցել նաև տուրիզմը: Հանգստյան օրերին կազմակերպվել են մեկօրյա արշավներ և էքսկուրսիաներ, վերելքներ Արագածի հարավային գագաթ, Աժդահակ, Արայի և Հատիսի լեռներ: ԵՊՀ-ում տուրիստական արշավների կազմակերպման գործում մեծ աշխատանք է կատարել սպորտի վարպետ, Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր գործիչ, ամբիոնի դոցենտ, երջանկահիշատակ Հարություն Երանոսյանը: Այս արշավները կարևորվում են ուսանողների ոչ միայն ֆիզիկական դաստիարակության, այլև նրանց բնության հետ կապելու և հայրենասիրությամբ տոգորելու գործում:

Համալսարանական երիտասարդների սպորտային հակումները խթանելու հարցում կարևոր դեր խաղաց 2016 թ. դեկտեմբերին շահագործման հանձնված բարենորոգված ԵՊՀ մարզահամալիրն իր դահլիճներով, տրիբունաներով, հրաձգարանի նոր մասնաշենքով՝

օդափոխության, ջեռուցման, ավտոմատ հովացման և լուսավորության համակարգերով: Մարզահամալիրի մասնաշենքերից մեկը վերակառուցվեց որպես Ժամանակակից հարմարություններով հագեցած եռահարկ հյուրատուն: Կառուցվեց նաև ջեռուցմամբ, տաք ջրամատակարարմամբ, սանհանգույցներով և ավտոմատ հակահրդեհային ահազանգման համակարգով համալրված եռահարկ մասնաշենք՝ 10 աշխատասենյակով, 8 լսարանով և շուրջ 200 քմ տարածք զբաղեցնող դահլիճով:

Ամբիոնը հետբուհական մասնագիտական կրթության վարչության հետ համատեղ երկար տարիներ կազմակերպում է դասախոսների որակավորման բարձրացման դասընթացներ, որոնց մասնակցում են նաև այլ բուհերի ներկայացուցիչներ:

Գիտամեթոդական և հետազոտական աշխատանքները, որոնք զվիսավորապես նվիրված են ուսանողների ֆիզիկական պատրաստականության ու առողջական վիճակի, ֆիզիկական կուլտուրայի սոցիալական դերի ու նշանակության հարցերի քննությանը, ամբիոնի գործունեության կարևոր բաղադրամասեր են:

Ամբիոնը սերտորեն համագործակցում է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի, Արցախի համալսարանի, Գյումրու մանկավարժական ինստիտուտի, Տարիքային ֆիզիոլոգիայի գիտահետազոտական ինստիտուտի, ինչպես նաև Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի հետ:

Ամբիոնը ղեկավարել են ՀԽՍՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր գործիչ Հարություն Գարգալյանը (1933 – 1936), Խ. Չերենցովը (1936 – 1941), Ն. Մուշլյանը (1941 – 1944), Օ. Ավագյա-

նը (1944 – 1951), Փ. Բոյախչյանը (1951 – 1961), մանկ. գիտ. թեկն., պրոֆ., ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր գործիչ Գ. Պետրոսյանը (1962 – 1998), մանկ. գիտ. թեկն., պրոֆ., ՀՀ ֆիզիկական կուլտուրայի վաստակավոր աշխատող Հենրիկ Թումանյանը (1998 – 2010), ՀՀ ֆիզիկական կուլտուրայի վաստակավոր աշխատող Սարգիս Սանթրոսյանը (2010 – 2015), իսկ 2015 թվականից ամբիոնի վարիչն է ՀՀ ֆիզկուլտուրայի և սպորտի վաստակավոր աշխատող, ՀՀ վաստակավոր լրագրող Ռուդիկ Բարսեղյանը:



Հաղթանակ հրաձգության մարզական
ուսանողական խաղերում



Տարբեր մրցույթներում
համալսարանականների շահած գավաթներից



Յու. Ղամբարյանի՝ 1885 – 1886 թթ.
Մոսկվայի համալսարանում կարդացած
դասախոսությունների ձեռագիր օրինակը

ԵՊՀ ՌԵԿՏՈՐՆԵՐ

Համալսարանի ռեկտորները, ըստ կարելիության, նպաստել են ոչ միայն համալսարանի բարգավաճմանն ու համընդհանուր ճանաչմանը, այլև գիտական ներուժի հզորացմանն ու հայրենի գիտության նվաճումները միջազգային ասպարեզ դուրս բերելուն:



Ղամբարյան Յուրի Ստեփանի
1850 – 1926

Իրավաբան, պրոֆեսոր,
ռեկտոր՝
1919 թ. հուլիս – 1920 թ. դեկտեմբեր

«Մեր անկախության ճանաչումը մեզ տալիս է թե՛ անհատական ազատության և թե՛ հասարակության դեմոկրատիկ կազմակերպության բարիքներ, որոնք նույնքան անհրաժեշտ են ճշմարիտ լուսավորության

համար, որքան և ճշմարիտ լուսավորությունը անհրաժեշտ է ազնիվ դեմոկրատիայի համար»:

1920 թ.



Մանանդյան Հակոբ Համազասպի
1873 – 1952

Պատմաբան, բանասեր, աղբյուրագետ,
պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ԽՍՀՄ ԳԱ և ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ,
ռեկտոր՝
1920 թ. դեկտեմբեր – 1921 թ. հոկտեմբեր

«Ապրում եմ միայն համալսարանի ստեղծագործման գաղափարով, որը մեր երկրի վերաշինության ու վերածնության միակ ուղիղ ճանապարհն է»:

1921 թ.



Հ. Մանանդյանին Երևանի համալսարան
հրավիրելու մասին փաստաթուղթը



Զափրիյան Դավիթ Քրիստափորի
1889 – 1957

Քիմիկոս, պրոֆեսոր,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ,
ռեկտոր՝
1921 թ. հոկտեմբեր – 1922 թ. փետրվար



Հովհաննիսյան Հակոբ Գարեգինի
1875 – 1941

Քիմիական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ,
ռեկտոր՝ 1922 թ. փետրվար – 1930 թ. հուլիս

«Ժողովրդական Համալսարանը բարձրագույն դպրոցի՝ Պետական համալսարանի վերածելու իրական հիմքը մեր տնտեսական կյանքի վերականգնման և նրա հետագա զարգացման հեռանկարների մեջ է»:

1926 թ.



Ռեկտոր Հակոբ Հովհաննիսյանի ծառայողական կառքը



Մանքրոսյան Մուշեղ Հայրապետի
1894 – 1972

Մանկավարժական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ,
ռեկտոր՝ 1930 – 1931 թթ.



Հայրապետյան Սահակ Սիմոնի
1892 – 1943

Մանկավարժ, պրոֆեսոր,
ռեկտոր՝ 1931 – 1933 թթ.



Մուշեղյան Տիգրան Պետրոսի
1886 – 1935

Ֆիզիոլոգ,
ռեկտոր՝
1933 հուլիս – 1935 ապրիլ



Ենգիբարյան Միքայել Ավետիսի
1902 – 1937

Կուսակցական- պետական գործիչ,
ռեկտոր՝ 1937 թ. հունվար – 1937 թ. ապրիլ



Կոստանյան Վրամ Քրիստափորի
1899 – 1941

Տնտեսագետ, պրոֆեսոր,
ռեկտոր՝
1935 թ. հուլիս – 1937 թ. հունվար



Գաբրիելյան Հենրի (Հարություն) Գաբրիելի
1903 – 1981

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ,
ռեկտոր՝ 1937 թ. ապրիլ – 1937 թ. օգոստոս

«Համալսարանի դերը մեր կյանքում նրանով է բարձր, որ նրա գիտնականները քայլում են ժամանակի հետ, տիրապետելով գիտության ձեռք բերած նվաճումներին, ուսումնական, ինչպես նաև գիտահետազոտական աշխատանքի գործընթացը կազմակերպում են այնպես, որ երիտասարդությունը ձեռք բերի այն ամենը, ինչ անհրաժեշտ է երկրի գիտակից կառուցողներին»:

1966 թ.



Արղումանյան Անուշավան Աղաֆոնի
1904 – 1965

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,
ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս,
ռեկտոր՝
1937 թ. օգոստոս – 1937 թ. սեպտեմբեր



Առաքելյան Կամսար Արշակի
1900 – 1964

Պատմաբան,
ռեկտոր՝
1937 թ. նոյեմբեր – 1938 թ. հունվար



Դաբադյան Նորայր Հարությունի
1904 – 1955

Գրականագետ, պրոֆեսոր,
ռեկտոր՝
1937 թ. հոկտեմբեր – 1937 թ. նոյեմբեր



Պետրոսյան Գարեգին Բախշիի
1902 – 1997

Մաթեմատիկոս,
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ,
ռեկտոր՝
1938 – 1941 թթ., 1949 թ. հունիս – 1957 թ.
փետրվար



Բունիաթյան Հրաչյա Խաչատուրի
1907 – 1981

Կենսաքիմիկոս,
կենսաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ,
ռեկտոր՝ 1942 թ. օգոստոս – 1946 թ. մայիս



Դավթյան Գագիկ Ստեփանի
1909 – 1980

Ագրոքիմիկոս, կենսաբանական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ,
ռեկտոր՝ 1957 թ. փետրվար – 1961 թ. մայիս

*«Համալսարանը, որը սերտորեն կապված
է Հայաստանի գիտությունների ակադեմիա-
յի հետ, մեր հանրապետության գիտության*

երկրորդ խոշոր կենտրոնն է»:

1961 թ.



Պողոսյան Հովհաննես Գևորգի
1895 – 1948

Հասարակական-քաղաքական գործիչ,
ռեկտոր՝ 1946 թ. – 1948 թ. դեկտեմբեր



Հարությունյան Նազուշ Խաչատուրի
1912 – 1993

Մեխանիկոս,
տեխնիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ,
ռեկտոր՝ 1961 թ. մայիս – 1963 թ. ապրիլ



Քատիկյան Հրանտ Գևորգի
1909 – 1983

Գեներալիոս, կենսաբանական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ,
ռեկտոր՝ 1963 թ. հունիս – 1966 թ. ապրիլ

*«Այսօր Երևանի պետական համալսարանի
հոյակապույց նոր համալիրի գլխավոր
մասնաշենքի հանդիսավոր բացումը բոլո-
րիս պարզևել է մեծ ուրախություն: Համալ-*

*սարանի այս նոր շենքը հայ ժողովրդի մեծ նվերն է իր անդրա-
նիկ բարձրագույն ուսումնական հաստատությանը: Այն լայն հնա-
րավորություններ է բացում մեր առաջ՝ էլ ավելի բարձրացնելու
Մայր բուհի ուսման որակը, ծավալելու ու բարելավելու գիտահե-
տազոտական աշխատանքները, ստեղծագործական մակարդակի
հասցնելու ուսանողների կրթության գործը»:*

1965 թ.



Ներսիսյան Սկրտիչ Գեղամի
1909 – 1999

Պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ,
ռեկտոր՝ 1966 թ. ապրիլ – 1977 թ. մայիս

*«Համալսարանի հիմնադիրների ու առաջին
անվանի դասախոսների անունները ոսկյա
տառերով են գրված հայկական բազմա-*

դարյա մշակույթի տարեգրության էջերում»:

1970 թ.



Համբարձումյան Սերգեյ Ալեքսանդրի
1922 – 2018

Մեխանիկոս, տեխնիկական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս,
ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ,
ռեկտոր՝ 1977 թ. մայիս – 1991 թ. փետրվար

*«Երևանի պետական համալսարանը գիտու-
թյան ու կրթության, մշակույթի նորօրյա
զարգացման նախահիմքերից մեկն է»:*

1981 թ.



Առաքելյան Նորայր Հունանի
Ծնվել է 1936 թ.

Մաթեմատիկոս, ֆիզիկամաթեմատիկական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
ՀՀ գիտության վաստակավոր գործիչ,
ռեկտոր՝
1991 թ. փետրվար – 1993 թ. հոկտեմբեր

*«Երևանի պետական համալսարանը մեր
ազգային հպարտությունն է»:*

1992 թ.



Մարտիրոսյան Ռադիկ Մարտիրոսի
Ծնվել է 1936 թ.

Ռադիոֆիզիկոս, ֆիզիկամաթեմատիկական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
ռեկտոր՝
1993 թ. հոկտեմբեր – 2006 թ. հունվար

*«Երևանի պետական համալսարանը հայ
դպրության բազմադարյա ավանդույթների
արժանի շարունակողն է»:*

2003 թ.



Միմոնյան Արամ Հրաչիկի
Ծնվել է 1955 թ.

Պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
ռեկտոր՝ 2006 թ-ից առ այսօր

*«Երևանի պետական համալսարանը կրթա-
մշակութային ու ազգապահպան կենտրոն
է, ազգային-մշակութային հարուստ ավան-
դույթների և արժեքների ժառանգորդը»:*

2009 թ.



Ռեկտորի արարողակարգային
վզնոցը և զգեստը





Ֆրիտյոֆ Նանսեն
համալսարան է այցելել 1925 թ. հունիսի 19-ին:

ԵՊՀ ԱՅՑԵԼԱԾ ԱՆՎԱՆԻ ՀՅՈՒՐԵՐ

Երևանի պետական համալսարանում տարբեր տարիների հյուրընկալվել են բազմաթիվ երկրների նախագահներ, պետական և հասարակական անվանի գործիչներ, գիտնականներ, հրապարակախոսներ, գրողներ, մշակույթի և արվեստի ճանաչված անհատականություններ: Նրանցից շատերի դասախոսությունները մեծ հետաքրքրություն են առաջացրել համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության շրջանում: Հաճախ նրանք իրենց սրտի խոսքն են ուղղել ոչ միայն համալսարանականներին, այլև ողջ հայ ժողովրդին: Ներկայացնում ենք դրանցից մի քանիսը:

Ֆրիտյոֆ Նանսեն

Նորվեգացի բևեռախույզ, մեծ հումանիստ,
ԵՊՀ առաջին պատվավոր դոկտոր

«Նույն օրը ճաշից առաջ այցելեցինք նաև համալսարան: Այն մի գեղեցիկ շենք էր կենտրոնական փողոցի վերջում՝ հրաշալի այգով շրջապատված: Հանդիպում ունեցանք ռեկտորի և պրոֆեսորների հետ, որոնք մեզ ուղեկցեցին տարբեր ինստիտուտներ: Համալսարանը նոր էր հիմնադրվել և նոր պետք է զարգանար, բայց նյութա-

կան քիչ միջոցներ ուներ: Սակայն զարմանալի էր, որ, հակառակ մեծ դժվարություններին, շատ բան էր արված: Ինձ համար մեծ անակնկալ էր, որ պրոֆեսորներից մեկը նորվեգերեն գիտեր, նա լավ ծանոթ էր նաև Նորվեգիային: Նա բուսաբան, դոկտոր, պրոֆեսոր Հովակիմ Բեդելյանն էր, որ բուսաբանություն ուսումնասիրել էր Կոպենհագենում և, բազմիցս ճանապարհորդելով Նորվեգիայով, երկու անգամ հասել էր մինչև Հյուսիսային հրվանդան: Չափազանց համակրելի մի անձնավորություն էր նա:

Շենքը դիտելուց հետո շրջեցինք պարտեզում, ուր գյուղատնտեսական տարբեր փորձեր էին դրված: Համալսարանին կից էր նաև գյուղատնտեսական մի բարձրագույն դպրոց: Այստեղ կառուցվում էր նոր շենք լաբորատորիաների համար: Ստվերախիտ ծառերի տակ սեղան էր գցված՝ հրաշալի ծիրանով ու կեռասով, նաև գինի կար այնտեղ, որն ամռան այս շոգին առանձնապես հաճելի էր: Պրոֆեսորներից շատերը գերմաներեն ու անգլերեն լեզուներով ծառեր արտասանեցին, իսկ ռեկտորը, ողջույնի խոսքը ասելով, հրապարակեց՝ ինձ համալսարանի պատվավոր դոկտորի աստիճան շնորհելու մասին որոշումը»:

1925 թ.

Հայ ժողովրդի մեծ բարեկամ Ֆ. Նանսենի բազմաթիվ ելույթներ, հոդվածներ ու գրքեր նվիրված են Հայաստանին ու հայ ժողովրդի պատմությանը: Հաղթահարելով բազում դժվարություններ, նա մարդասիրական ուղիներով հայթայթել է անհրաժեշտ միջոցներ ու կազմակերպել թուրքական յաթաղանից մազապուրծ 7 հազար հայ գաղթականների հայրենադարձությունը Խորհրդային Հայաստան:



Ակադեմիկոսներ Հովսեփ Օրբելին և Օտտո Շմիդտը համալսարանում, 1940 թ.



Արմին Վեգները համալսարանում

Արմին Վեգներ

Գերմանացի գրող, հրապարակախոս,
իրավագիտության դոկտոր

«Երբ թուրքական կառավարությունը ձեռնամուխ եղավ 2 մլն. հայերի՝ երկրի երեսից ջնջելու իր հրեշավոր ծրագրի իրականացմանը, չկար մեկը, որ խանգարեր խելագարված հանցագործների գործողությունները»:

Արմին Վեգները 1927 թ. խորհրդային կառավարության հրավերով այցելել է Մոսկվա, ապա՝ եղել Հայաստանում, դասախոսություններ կարդացել ԵՊՀ-ում: Հայաստան է եկել նաև 1968 թ.:

Նա մասնակցել է Առաջին համաշխարհային պատերազմին (1915 – 1916 թթ.), Թուրքիայում ականատես եղել Դեր Էլ Ջորի անապատները քշված հազարավոր հայերի ողբերգությանն ու խոշտանգումներին: Լուսանկարել է եղեռնի շատ տեսարաններ, գրի առել իր տեսածը և ուղարկել Գերմանիա: 1919 թ. հրապարակել է բաց նամակ՝ ուղղված ԱՄՆ-ի պրեզիդենտ Վիլսոնին, փաստերով հաստատել թուրքական կառավարության նախապես ծրագրած Հայոց ցեղասպանությունը և խարազանել արևմուտքի պետություններին՝ որպես մեղսակիցներ:

Վեգները Բեռլինում ներկա է եղել Սողոմոն Թեփերյանի դատավարությանը և, հավաքելով սղագրական նյութերը, գրել է առաջաբան ու հրատարակել առանձին գրքով՝ «Թալեաթ փաշայի դատավարությունը» խորագրով: Նա իր «Ճիշ Արարատից» գրքույկում ներկայացրել է Ջմյուռնիայի հայության կոտորածը: Մինչև իր կյանքի վերջը հետաքրքրվել է Հայաստանով ու հայերով:

1972 թ. ԱՄՆ-ի տարբեր քաղաքներում լուսանկարների ցուցադրումով զեկուցումներ է կարդացել Հայոց Մեծ եղեռնի և Հայաստանի մասին:

Վիլյամ Սարոյան

Հայ մեծ գրող

«Մենք իրավունք ունինք հպարտ զգալու, որ հայ ենք: Հայը միշտ զբաղված է կրթության գաղափարով, և մենք պետք է օգտակար ըլլանք մեր գաղափարներով իրարու և օտարի:

Շատ կսիրեմ երիտասարդությանը, որովհետև ինքս ալ երիտասարդ եմ»:

1978 թ.

Հովհաննես Բաղրամյան

Խորհրդային Միության մարշալ

«Հպարտանում եմ Երևանի պետական համալսարանով և այն խոշոր ներդրումով, որ նա ունի մեր երկրի զիտության և ժողովրդական տնտեսության զարգացման գործում»:

1981 թ.



Վիլյամ Սարոյանը
համալսարանականների հետ, 1978 թ.



Հովհաննես Բաղրամյանը
համալսարանում, 1981 թ.



Գոհար Գասպարյան,
բազմիցս այցելել է
համալսարան

Գոհար Գասպարյան

Աշխարհահռչակ սուպրանո

«Ես հպարտանում եմ, որ հայկական մշակույթն ունի գիտության այնպիսի նշանավոր օջախ, ինչպիսին Երևանի պետական համալսարանն է: Այդ ուսումնական հաստատության հետ ինձ կապում են բարեկամական սերտ հարաբերությունները: Ուսանողական լսարանի առջև ես միշտ ելույթ եմ ունենում առանձնահատուկ բերկրանքով: Ինձ համար թանկ է երիտասարդ, խստապահանջ ունկնդրի զգայուն ռեակցիան, որի հետ մեկ անգամ չէ, որ առիթ եմ ունեցել հանդիպելու ոչ միայն համերգային բեմերից, այլև ստեղծագործական երեկոների, բանավեճերի և քննարկումների ընթացքում:

Երիտասարդությունը միշտ էլ սթափ ու ճշմարտացի է երաժշտական նոր ստեղծագործությունները գնահատելիս ու ազգային մշակույթի զարգացման ուղիների մասին դատողություններ անելիս: Նման խստապահանջ քննադատի հետ ամեն մի հանդիպում ինձ նոր լիցք է հաղորդում և բարերար կերպով ազդում իմ ստեղծագործական տրամադրության վրա:

Մեծ և փառավոր տոնն այսօր եկել ու մտել է լույս ու բանականություն սերմանող Երևանի համալսարանի բազմանդամ ընտանիքը: Եվ այդ գեղեցիկ տոնի առթիվ շնորհավորում եմ Ձեզ, իմ թանկագին բարեկամներ»:

1970 թ.

Մարտիրոս Սարյան

Հայ մեծ նկարիչ

«Իմ հինավուրց ժողովրդի համար համալսարան հասկացությունը նոր չէ: Դեռևս հեռավոր անցյալում մարդիկ նրան կոչում էին ժողովրդական խիղճ»:

1970 թ.

Հովհաննես Շիրազ

Հայ մեծ բանաստեղծ

ԻՄ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Չգիտեմ՝ երգով մարդ դառա՞, թե՞ ոչ,
Ի սեր իմ ազգի մասիսահառաչ,
Բայց խոնարհում եմ գլուխս դողդոջ,
Իմ համալսարան, քո լույսի առաջ:

Քանզի դու ես ինձ երկնել մոր նման,
Վայրենի կալս քեզնով սափորվեց,
Ո՛վ մտքի բրուտ, իմ համալսարան,
Երգս քո լույսով վեր ծիածանվեց...

Բայց կուզենայի դեռ այնպես բուրեն
Քնարիս դաշտերն հայրենահույսով,
Որ ողջ ազգերը քեզ վարդեր բերեն,
Քեզ քո Մասիսը բերեն քո լույսով,-

Իմ համալսարա՞ն, իմ հայ ժողովուրդ,
Բախտդ կալ, դու միշտ հանճարեղ բրուտ...

1965 թ.



Մարտիրոս Սարյան,
համալսարան է այցելել 1970 թ.



Հովհաննես Շիրազ,
քանիցս այցելել է համալսարան



Միլվա Կասյուտիկյան,
քանիցս այցելել է համալսարան

Միլվա Կասյուտիկյան

Բանաստեղծ, հրապարակախոս

«Դու եղար այն առաջին կետը պատասխանի, որ իր հետագա կյանքով հայ ժողովուրդը տվեց ճակատագրին՝ ջարդին, եղեռնին ու ավերումին հակադրելով իր կառուցող, խորհող ու ստեղծագործող ոգին: Քո կամարների տակ նոր մի ուժգնությամբ դողանջեցին Սանահինի, Գլաձորի և Տաթևի դարանոցների դարերով համրացած զանգերը: Մովսես Խորենացուց, Դավիթ Անհաղթից, Անանիա Շիրակացուց շառավիղվող մեր գիտական միտքը, հովանավորված պետությամբ ու պետականությամբ, նոր մի փայլատակումով ճանազեց քո տանիքի տակ, Երևանի պետական համալսարան:

Ամենուր են քեզնով սնված ու հարստացված քո շրջանավարտները, Մոսկվայի ֆիզիոլոգիայի ինստիտուտում ու Երևանի հաշվիչ մեքենաների գործարանում, Ղարաբաղյան բարձրաբերձ Տումի գյուղի դպրոցում և Շամշադինի շրջանային թերթի խմբագրությունում, Սուխումի գրական միավորման մեջ և Բյուրականի աստղադիտարանում: Եվ ամենուր նրանք հայրենի ժողովրդին են հաղորդում այն լույսը, որ քեզնից են առել: Ու թեև մեր ժողովուրդը հետագայում շատ ինստիտուտներ ու գիտական հաստատություններ ունեցավ, բայց դու մնացիր ամենից թանկն ու նվիրականը, դո՛ւ առաջնեկը որդիների մեջ, մեր հարազատ համալսարան:

Թող միշտ ծաղկառատ լինեն քո գարունները, որ սկսվում են ամեն աշուն սեպտեմբերին, և թող գիտելիքներով ծանրացած ու պտղավոր լինեն քո աշունները, որ վրա են հասնում ամեն գարուն՝ պետական քննությունների օրերին:

Թո՛ղ այսուհետև ոչ մի արհավիրք ու պատերազմ չխանգարի քո զանգերի հաջորդականությունը, հարատևես դարե՛ր, և թող 2920 թվականին քո բյուրավոր շրջանավարտներից մեկը նույն լեզվով, բայց առավել գեղեցիկ ողջունի քո 1000-ամյա հոբելյանը»:

1961 թ.

Կիմ Բախշի

Գրող, հրապարակախոս, մեծ հայագետ ու հայասեր,
«Մատենադարան» ֆիլմաշարի սցենարի հեղինակ

«Շա՞տ կենդանի ազգեր գիտեք արդյոք, որոնց մասին, ինչպես հայերի, կարելի է վստահորեն ասել, որ նրանք ամենասկտիվ դերն են ունեցել պատմության մեջ՝ սկսած Բաբելոնի, այնուհետև Պարսկաստանի՝ հին հույների հետ պատերազմների ժամանակաշրջանից: Պարադոքսալ չէ՞ արդյոք, որ դարեր շարունակ ինքնուրույնությունից զրկված հայերը, ովքեր անընդհատ տնտեսական ու ֆինանսական լուրջ խնդիրներով են շրջապատված, և ովքեր սփռված են ամբողջ աշխարհով, շարունակում են պահպանել իրենց լեզուն, հոգևոր հարստությունը, ավանդույթներն ու ընդհանրապես մշակույթը»:

2011 թ.

Պետեր Լանգեր

Գերմանացի քիմիկոս,
Ռոստոկի համալսարանի պրոֆեսոր

«Ինձ համար մեծ պատիվ է Մայր բուհի պատվավոր դոկտորի կոչում ստանալը: Բարձր եմ գնահատում հայ գործընկերների, ուսանողների և ընդհանրապես Հայաստանի հետ համագործակցությունը: Վստահ կարող եմ ասել, որ դուք պետք է հպարտ լինեք, որ այսպիսի հարուստ մշակույթով, ավանդույթներով, գիտական հզոր ներուժով լի պետություն ունեք:

Երևանի պետական համալսարանը տարածաշրջանի լավագույն ուսումնական այն հաստատություններից է, որը բաց է նորարարությունների համար»:

2011 թ.

Սերժ Վենտուրինի

Ֆրանսիացի բանաստեղծ

«Այն պահից սկսած, երբ ոտքս դրել եմ «Զվարթնոց» օդանավակայան, հասկացել եմ, որ մտել եմ առասպելներով լեցուն մի հնագույն քաղաքություն: Զգացել եմ սևաթև մագաղաթների արագընթաց ճախրանքի վեհությունն ու լսել, թե ինչ էին երգում Հայաստանի երաշտահավերք: Խմել եմ Երևանի շատրվանների սառը ջուրը: Անմիջապես սիրել եմ տուֆի կարմիր փոշին, ինչպես նաև նահրյան աղջիկների գեղեցկությունը, հրաբխային գեղեցկությունը:

Չեմ քաքցնում հայ բանաստեղծների ազդեցությունն իմ այսօրվա գրվածքներում. կուզենայի ասել՝ իմ մութ խռովությունը Չարենց կարդալիս, իմ մարդկային հուզմունքը Սայաթ-Նովայի սիրային քնարի առջև, իմ զգայական գլխապտույտը Քուչակ կարդալիս ու իմ խորին շլացումը Գրիգոր Նարեկացու առջև: Նրանք եղան զգայական բախում, իսկական հեղաշրջում, սիրո պատմություն»:

2011 թ.

Ժորես Ալֆյորով

Ռուս ֆիզիկոս, ակադեմիկոս,
Նոբելյան մրցանակի դափնեկիր

«Երևանի պետական համալսարանը ոչ միայն Հայաստանի, այլև տարածաշրջանի առաջատար գիտակրթական հաստատություններից է: Ես պատիվ եմ ունեցել Ծաղկաձորում հանդիպելու հայ մեծ գիտնական, հանճարեղ ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի հետ: Այդ հանդիպումը ես երբեք չեմ մոռանա, քանի որ բավականին հետաքրքիր զրույց ենք ունեցել... Ընդհանրապես ես համարում եմ, որ Հայաստանը մեծ և հզոր գիտական ներուժ ունի»:

2011 թ.

Խուան Վալդես Ֆիգերուա

ՀՀ-ում Կուբայի արտակարգ և լիազոր դեսպան

«Առաջին անգամ եմ այցելում Երևանի պետական համալսարան: Իրոք, շատ տպավորված եմ այս հսկա ուսումնական կառույցով: Այս բուհը գրեթե մեկդարյա վեհ պատմություն ունի: Վստահ եմ՝ Երևանի պետական համալսարանում շատ նոր բաներ կարող են սովորել մեր երկրի ուսումնաստենչ երիտասարդները»:

2012 թ.

Անրի Ռենո

ՀՀ-ում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան

«Մի երկիր, որ այսպիսի հարուստ պատմություն, մշակույթ ունի, նաև 36 հնչյուն պարունակող հրաշալի այբուբեն, պարզապես դատապարտված է այլ լեզուներ և, մասնավորապես, ֆրանսերեն ուսումնասիրելու»:

2012 թ.

Գոնսալո Գուարչ

Իսպանացի գրող, մեծ հայասեր,

Հայոց ցեղասպանությանը նվիրված գրքերի հեղինակ

«Գնալով ինձ շատ ավելի հայ եմ զգում, քան իսպանացի: Հավատացե՛ք: Կուզենայի ինձ դիմեին ոչ թե որպես Գոնսալո Գուարչ, այլ Գուարչյան. չէ՞ որ ես էլ ձեզանից մեկն եմ. ես հայ եմ»:

2013 թ.

Կարդինալ Ջեանֆրանկո Ռավազի

Վատիկանի կարդինալ

«Գրիգոր Լուսավորիչը մի մեծ կերպար է, ով գերիշխում է հայ ժողովրդի և նրա պատմության վրա: Հպարտ ենք, որ ծանոթ ենք հայ ժողովրդին, նրա պատմությանն ու հոգևոր արժեքներին: Համարում ենք ձեզ առաջին քրիստոնյա ազգը, որը 301 թ. ընդունեց քրիստոնեությունը: Պետք է ասել, որ Գրիգոր Լուսավորիչը նաև արևմտյան մշակույթի մի մասն է, և նրան արժևորելը ոչ միայն կրոնական ու մշակութային, այլև ինքնության հարց է:

Հաջորդ տարի ամբողջ աշխարհը կնշի մեծ արհավիրքի՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը: Երիտասարդ տարիներից ես հայ ժողովրդի այդ ահավոր ողբերգության մասին տեղյակ եմ եղել Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» ստեղծագործության միջոցով: Ուրախ եմ, որ ոչ միայն հայությունն է հիշում այդ ողբերգությունը, այլև ողջ մարդկությունը: Կարևոր է, որ երիտասարդները հիշեն, թե ինչ է կատարվել, որպեսզի չլինի ինքնության կորուստ, քանի որ սպանելով ինքնությունը՝ սպանում են ազգին»:

2014 թ.

ԵՊՀ ՊԱՐԳԵՎՆԵՐ



①



②



③



④



⑤



⑥





7



8



9



10





⑪



⑫

- ① Մեղալ ԵՊՀ «Գիտական ուսումնասիրությունների և բարձրագույն կրթության բնագավառում ձեռք բերած բացառիկ նվաճումների համար» (մինչև 2009 թ. եղել է ԵՊՀ բարձրագույն պարգևը), թողարկվել է 1981 թ.:

Պարգևատրվել են.

- | | | |
|----------------------------|------------------|--------------------|
| 1. Վիկտոր Համբարձումյանը | ԽՍՀՄ ԳԱ և ՀՀ ԳԱԱ | |
| | ակադեմիկոս | 1981 թ. |
| 2. Սերգեյ Համբարձումյանը | ՀՀ ԳԱԱ | ակադեմիկոս 1985 թ. |
| 3. Ամենայն հայոց կաթողիկոս | Վազգեն Ա-ն | 1990 թ. |
| 4. Գևորգ Ջահուկյանը | ՀՀ ԳԱԱ | ակադեմիկոս 1990 թ. |
| 5. Մկրտիչ Ներսիսյանը | ՀՀ ԳԱԱ | ակադեմիկոս 1994 թ. |
| 6. Գուրգեն Սահակյանը | ՀՀ ԳԱԱ | ակադեմիկոս 1994 թ. |
| 7. Ռադիկ Մարտիրոսյանը | ՀՀ ԳԱԱ | ակադեմիկոս 2006 թ. |

- | | | |
|---|-------------------------|---------------------|
| ② | ԵՊՀ հուշամեդալ | թողարկվել է 1981 թ. |
| ③ | ԵՊՀ ոսկե հուշամեդալ | թողարկվել է 1994 թ. |
| ④ | ԵՊՀ արծաթե հուշամեդալ | թողարկվել է 1994 թ. |
| ⑤ | ԵՊՀ բրոնզե հուշամեդալ | թողարկվել է 1994 թ. |
| ⑥ | ԵՊՀ ոսկե հուշամեդալ | թողարկվել է 1999 թ. |
| ⑦ | ԵՊՀ ոսկե հուշամեդալ | թողարկվել է 2009 թ. |
| ⑧ | ԵՊՀ արծաթե հուշամեդալ | թողարկվել է 2009 թ. |
| ⑨ | ԵՊՀ բրոնզե հուշամեդալ | թողարկվել է 2009 թ. |
| ⑩ | ԵՊՀ ոսկե հուշամեդալ | թողարկվել է 2012 թ. |
| ⑪ | ԵՊՀ «Պատվո շքանշան» | թողարկվել է 2009 թ. |
| ⑫ | «ԵՊՀ բարձրագույն պարգև» | թողարկվել է 2009 թ. |

ԵՊՀ ՊԱՏՎԱՎՈՐ ԴՈԿՏՈՐՆԵՐ

Հ.հ.	Անուն, ազգանուն	Երկիր	Դիպլոմի բնութագիր	Հանձնման տարեթիվ
1	2	3	4	5
1.	Ֆրիտյոֆ Նանսեն	Նորվեգիա	Հայանպաստ մեծ վաստակի համար	19.06.1925
2.	Ալեք Մանուկյան	ԱՄՆ	Հայանպաստ մեծ վաստակի համար	22.09.1994
3.	Լուիս Սիմոն Մանուկյան	ԱՄՆ	Հասարակական, հայրենասիրական բեղուն գործունեության համար	22.09.1994
4.	Վարդան Գրիգորյան	ԱՄՆ	Գիտության ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների համար	22.09.1994
5.	Ռոբերտ Գյուլբենկյան	Պորտուգալիա	Գիտության ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների համար	22.09.1994
6.	Երվանդ Թերզյան	ԱՄՆ	Գիտության ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների համար	22.09.1994
7.	Սիիրան Աղաբաբյան	ԱՄՆ	Գիտության ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների համար	22.09.1994
8.	Ռիչարդ Հովհաննիսյան	ԱՄՆ	Գիտության ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների համար	22.09.1994
9.	Ոսկան Պարսեղյան	ԱՄՆ	Գիտության ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների համար	22.09.1994
10.	Շահեն արքեպիսկոպոս Աճեմյան	ՀՀ	Հասարակական, հայրենասիրական բեղուն գործունեության և գիտության ասպարեզում ձեռք բերած նվաճումների համար	22.09.1994
11.	Քերոլայն Զոքս	Մեծ Բրիտանիա	Մարդասիրական անձնվեր գործունեության համար	22.09.1994
12.	Դենիս Պոլան	Ֆրանսիա	Գիտության ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների համար	22.09.1994
13.	Ժիրայր Դեդեյան	Ֆրանսիա	Գիտության ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների համար	22.09.1994
14.	Վիկտոր Սադովնիչի	Ռուսաստան	Գիտության ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների համար	22.09.1994
15.	Բուտրոս Բուտրոս-Ղալի	Եգիպտոս	Գիտության ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների համար	27.10.1994
16.	Ֆրեդերիկո Մալոր	Ֆրանսիա	Գիտության ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների համար	29.06.1995

1	2	3	4	5
17.	Ամենայն Հայոց կաթողիկոս, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա	Հայաստան	Հասարակական, հայրենասիրական բեղուն գործունեության և գիտության ասպարեզում ձեռք բերած նվաճումների համար	14.12.1995
18.	Ալեքսեյ Սիսակյան	Ռուսաստան	Գիտության ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների համար	14.12.1995
19.	Ռիթա Պալեան	ԱՄՆ	Հասարակական, հայրենասիրական բեղուն գործունեության համար	14.12.1995
20.	Քրիստիան Շնիցլեր	Գերմանիա	Գիտության ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների համար	14.12.1995
21.	Քլոդ Մութաֆյան	Ֆրանսիա	Գիտության ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների համար	14.12.1995
22.	Վալենտին Օսկոցկի	Ռուսաստան	Գիտության ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների համար	29.02.1996
23.	Տիգրան Իզմիրլյան	Շվեյցարիա	Բարեգործական մեծ ներդրումների և հասարակական, հայրենասիրական բեղուն գործունեության համար	25.05.1997
24.	Յոզեֆ Բրիլա	Սլովակիա	Գիտության ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների համար	25.05.1997
25.	Անդրեյ Բիտով	Ռուսաստան	XX դարի գրականության ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների և ժողովուրդներին մերձեցնող հասարակական գործունեության համար	30.10.1997
26.	Գերհարդ Ջոնգեն	Գերմանիա	Գիտակազմակերպչական բեղուն գործունեության համար	23.12.1997
27.	Երվանդ Ազատյան	ԱՄՆ	Գիտության բնագավառում ձեռք բերած նվաճումների և հայրենասիրական բեղուն գործունեության համար	25.12.1998
28.	Զավեն Եկավյան	Պորտուգալիա	Գիտության բնագավառում ձեռք բերած նվաճումների և հայրենասիրական բեղուն գործունեության համար	25.12.1998
29.	Կոստանտինոս Ստեֆանոպոլոս	Հունաստան	Գիտության բնագավառում ձեռք բերած նվաճումների և հասարակական բեղուն գործունեության համար	29.04.1999
30.	Ժան-Ժակ Սերանո	Ֆրանսիա	Գիտության ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների համար	01.10.1999
31.	Ժան-Կլոդ Գրիյո	Ֆրանսիա	Գիտության ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների համար	01.10.1999
32.	Սիշել Գերոյի	Ֆրանսիա	Գիտության ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների համար	01.10.1999

1	2	3	4	5
33.	Յուրի Հովհաննիսյան	Ռուսաստան	Գիտության ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների համար	01.10.1999
34.	Ստեֆան Ֆովին	Ֆրանսիա	Գիտության ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների համար	01.10.1999
35.	Բարլո Տեր-Սկրտչյան	ԱՄՆ	Գիտության ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների համար	23.12.2000
36.	Լևոն Զեքեյան	Իտալիա	Գիտության ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների համար	23.12.2000
37.	Նուրսուլթան Նազարբաև	Ղազախստան	Հասարակական բեղուն գործունեության համար	24.05.2001
38.	Վլադիմիր Պուտին	Ռուսաստան	Հասարակական բեղուն գործունեության համար	11.09.2001
39.	Էդուարդ Շևարդնաձե	Վրաստան	Հասարակական բեղուն գործունեության համար	18.10.2001
40.	Իոն Իլիեսկու	Ռումինիա	Հասարակական բեղուն գործունեության համար	25.10.2001
41.	Կոյիչիրո Մացուուրո	Ճապոնիա	Գիտության ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների համար	25.10.2001
42.	Նենսի Հեմֆերս	ԱՄՆ	Գիտության ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների համար	25.10.2001
43.	Ռոբեր Տեր-Սերկերյան	Ֆրանսիա	Գիտության ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների համար	18.12.2003
44.	Մոհամմադ Խաթամի	Իրան	Հասարակական, քաղաքական ակնառու գործունեության համար	04.09.2004
45.	Գեորգի Պարվանով	Բուլղարիա	Հասարակական, քաղաքական ակնառու գործունեության համար	30.09.2004
46.	Արնոլդ Ռյույտել	Էստոնիա	Հասարակական, քաղաքական ակնառու գործունեության համար	21.10.2004
47.	Ամենայն Հայոց կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Բ	Հայաստան	Հասարակական, հայրենասիրական, մշակութային բեղուն գործունեության և քրիստոնեության քարոզչության ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների համար	21.10.2004
48.	Ռոնալդ Քեննեթ Նոբլ	ԱՄՆ	Իրավապահպան և հասարակական-քաղաքական ոլորտներում միջազգային ակնառու գործունեության համար	05.09.2005
49.	Տարյա Կաարինա Հալոնեն	Ֆինլանդիա	Հասարակական, քաղաքական ակնառու գործունեության համար	05.09.2005
50.	Վայրա-Վիկե Ֆրեյբերգա	Լատվիա	Հասարակական, քաղաքական ակնառու գործունեության համար	06.10.2005

1	2	3	4	5
51.	Գևորգ Բարդակչյան	ԱՄՆ	Գիտության ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների համար	06.10.2005
52.	Ռուզան Օհանջանյան	ԱՄՆ	Գիտության ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների համար	21.12.2005
53.	Սեյմուր Փափերթ	ԱՄՆ	Գիտության ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների համար	01.06.2006
54.	Տրայան Բասեսկու	Ռումինիա	Հասարակական և քաղաքական ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների համար	29.09.2006
55.	Կարոլոս Պապուլիաս	Հունաստան	Հասարակական և քաղաքական ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների համար	27.06.2007
56.	Բերնարդ Դյուրան	Ֆրանսիա	Գիտության և կրթության ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների համար	20.09.2007
57.	Յարոսլավ Ռոմանի Դաշկևիչ	Ուկրաինա	Գիտության և կրթության ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների համար	15.10.2007
58.	Մահմուդ Ահմադինեժադ	Իրան	Հասարակական և քաղաքական ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների համար	18.10.2007
59.	Հերման Գոլց	Գերմանիա	Գիտության և կրթության ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների համար	24.11.2007
60.	Ստյեպան Մեսիչ	Խորվաթիա	Հասարակական և քաղաքական ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների համար	16.04.2009
61.	Սիլվայիլ Սաակաշվիլի	Վրաստան	Հասարակական և քաղաքական ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների համար	25.06.2009
62.	Վալդիս Զատլերս	Լատվիա	Հասարակական և քաղաքական ակտիվ գործունեության և Լատվիայի Հանրապետության ու ՀՀ-ի միջև հաստատուն հարաբերությունների կերտման գործում ունեցած ձեռքբերումների համար	10.12.2009

1	2	3	4	5
63.	Նորին Սրբություն Մոսկվայի և համայն Ռուսիո պատրիարք Կիրիլ I	ՌԴ	Աստվածաբանության բնագավառում ունեցած բացառիկ ձեռքբերումների, ռուս և հայ ժողովուրդների միջև կապերի խորացման գործում ունեցած անգնահատելի ավանդի և խաղաղասիրական բազմաբնույթ ու բեղուն գործունեության համար	18.03.2010
64.	Վիլֆրեդ Մարտենս	Բելգիա	Հասարակական և քաղաքական բեղուն գործունեության և Եվրոպական միության ու Հայաստանի Հանրապետության միջև հաստատուն հարաբերությունների կերտման գործում ունեցած ձեռքբերումների համար	05.05.2011
65.	Վահագն Ն. Տատրյան	ԱՄՆ	Հասարակական և հայրենասիրական բեղուն գործունեության և գիտության բնագավառում նշանակալի ձեռքբերումների համար	05.05.2011
66.	Ջեանֆրանկո Ռավազի	Վատիկան	Հասարակական, քաղաքական և մշակութային բեղուն գործունեության և աստվածաբանության ու քրիստոնեական քարոզչության ասպարեզում ունեցած ակնառու նվաճումների համար	02.06.2011
67.	Դաիսակու Իկեդա	Ճապոնիա	Խաղաղասիրական անձնվեր գործունեության, մարդասիրական արժեքների տարածման և արմատավորման գործում ձեռք բերած ակնառու նվաճումների համար	27.09.2012
68.	Դորա Սաքայան	Կանադա	Հասարակական և հայրենասիրական բեղուն գործունեության և հայագիտության բնագավառում նշանակալի ձեռքբերումների համար	27.09.2012
69.	Գուրբանգուլի Բերդիմուհամեդով	Թուրքմենստան	Հասարակական և քաղաքական ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների և հայ-թուրքմենական հարաբերությունների զարգացման գործում ունեցած նշանակալի ավանդի համար	29.11.2012
70.	Չարլզ Թեննոք	Մեծ Բրիտանիա	Հասարակական և քաղաքական ասպարեզում ակնառու ձեռքբերումների, Եվրոպա-Հայաստան հարաբերությունների ամրապնդման գործում նշանակալի ներդրման և խաղաղասիրական գնահատելի հանձնառությունների համար	25.04.2013

1	2	3	4	5
71.	Դին Շպիլման	Լյուքսեմբուրգ	Հասարակական բեղուն գործունեության, գիտության ասպարեզում ակնառու ձեռքբերումների, մարդու իրավունքների պաշտպանության գործում նշանակալի հանձնառությունների համար	27.06.2013
72.	Յուրի Անտոնյան	Ռուսաստան	Գիտության և կրթության ոլորտում պատկառելի ավանդի, Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև գիտական կապերի խորացման գործում ունեցած նշանակալի ներդրման և հասարակական բեղուն գործունեության համար	25.06.2014
73.	Թոմաս Լիր	Գերմանիա	Գիտության և կրթության ոլորտում ակնառու նվաճումների, Յենայի Ֆրիդրիխ Շիլլերի համալսարանի և Երևանի պետական համալսարանի միջև գիտական կապերի խորացման, Հայաստանում և ԵՊՀ-ում մոլեկուլային բջջագենետիկայի զարգացման գործում ունեցած մեծ ներդրման և ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի զարգացմանը ցուցաբերած զգալի աջակցության համար	25.06.2014
74.	Տապաշ Չակրաբորտի	Կանադա	Գիտության և կրթության ոլորտում նշանակալի ձեռքբերումների, Մանիտոբայի համալսարանի և Երևանի պետական համալսարանի միջև գիտական կապերի խորացման գործում ունեցած նշանակալի ներդրման և ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի զարգացմանը ցուցաբերած մեծ աջակցության համար	25.06.2014
75.	Խոսե Սարուխան	Մեքսիկա	Գիտության և կրթության ոլորտում պատկառելի ավանդի, հասարակական բեղուն գործունեության, Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման ուղղությամբ գործադրած մեծ ջանքերի և Մեքսիկայի ազգային ինքնավար համալսարանի ու Երևանի պետական համալսարանի միջև համագործակցություն ծավալելու հանձնառության համար	19.02.2015
76.	Գոնսալո Գուարչ	Իսպանիա	Գրական, հասարակական բեղուն գործունեության, Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման ուղղությամբ գործադրած մեծ ջանքերի համար	25.06.2015

1	2	3	4	5
77.	Ասո Տավիտյան	ԱՄՆ	Հասարակական բեղուն գործունեության, Հայաստանում կառավարման համակարգի և կրթության ու գիտության զարգացմանն ուղղված մեծ ջանքերի, ԱՄՆ-ի առաջատար համալսարաններում և գիտական կենտրոններում Երևանի պետական համալսարանի երիտասարդ կադրերի մասնագիտական վերապատրաստմանը ցուցաբերած մեծ աջակցության համար	17.12.2015
78.	Վիկտոր Մատվեև	Ռուսաստան	Գիտության և կրթության ոլորտում պատկառելի ավանդի, Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև գիտական կապերի խորացման գործում ունեցած նշանակալի ներդրման ու հասարակական բեղուն գործունեության համար	12. 10.2016
79.	Նիկոս Կոցիաս	Հունաստան	Հասարակական և քաղաքական ասպարեզներում ձեռք բերած ակնառու նվաճումների և Հայաստանի Հանրապետության ու Հունաստանի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման գործում ունեցած նշանակալի ավանդի համար	07.03.2017
80.	Մոհամմադ Համիդ Անսարի	Հնդկաստան	Հասարակական և քաղաքական ասպարեզներում ձեռք բերած ակնառու նվաճումների և Հայաստանի Հանրապետության ու Հնդկաստանի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման գործում ունեցած նշանակալի ավանդի համար	25.04.2017

ԵՊՀ ՊԱՏՎԱՎՈՐ ՊՐՈՖԵՍՈՐՆԵՐ

Հ.հ.	Անուն, ազգանուն	Երկիր	Դիպլոմի բնութագիր	Հանձնման տարեթիվ
1.	Վլադիմիր Սիխայիլի Ֆիլիպով	ՌԴ	Գիտության և կրթության բնագավառում բացառիկ ձեռքբերումների, հայ և ռուս ժողովուրդների միջև կապերի խորացման գործում ունեցած նշանակալի ավանդի և հասարակական բազմաբնույթ ու բեղուն գործունեության համար	31.03.2011
2.	Աբդրալիմ Բակրաթան Ժարըկասընուլ	Ղազախստան	Գիտության և կրթության բնագավառում բացառիկ ձեռքբերումների, Ղազախստանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության ժողովուրդների միջև կապերի խորացման գործում ունեցած նշանակալի ավանդի և հասարակական բազմաբնույթ ու բեղմնավոր գործունեության համար	21.04.2011
3.	Տեսաա Հոֆման	Գերմանիա	Գիտության և կրթության բնագավառում բացառիկ ձեռքբերումների, Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման գործում նշանակալի ավանդի և Երևանի պետական համալսարանի հետ բազմամյա ու բեղուն համագործակցության համար	22.10.2015
4.	Էդվարդ Ադվանի Նալբանդյան	Հայաստան	Հասարակական-քաղաքական բեղուն գործունեության, գիտության բնագավառում ձեռքբերումների և Երևանի պետական համալսարանի հետ բազմամյա արգասավոր համագործակցության համար	11.02.2016

ԵՊՀ ՊԱՏՎԱՎՈՐ ԲԱՐԵՐԱՐՆԵՐ

Հ.հ.	Անուն, ազգանուն	Երկիր	Դիպլոմի բնութագիր	Հանձնման տարեթիվ
1.	Անուշ Մաթևոսյան	ԱՄՆ	ԵՊՀ կրթամշակութային կենտրոնի ստեղծման գործում բարեգործական խոշոր ներդրման համար	28.08.1997
2.	Ժորժ և Շուշիկ Մարտիրոսյաններ	ԱՄՆ	ԵՊՀ համակարգչային կենտրոնի ստեղծման գործում բարեգործական խոշոր ներդրման համար	28.08.1997
3.	Արքեպիսկոպոս Խաժակ Պարսամյան	ԱՄՆ	ԵՊՀ-ին հումանիտար օգնություն կազմակերպելու համար	25.02.1999
4.	Լևոն Մակարյան	ՀՀ	ԵՊՀ-ին բարեգործական օգնություն կազմակերպելու համար	26.08.1999
5.	Հելեն Թաթևյան	ԱՄՆ	ԵՊՀ-ին բարեգործական օգնություն կազմակերպելու համար	26.08.1999
6.	Աբրահամ Մութաֆյան	ԱՄՆ	ԵՊՀ-ի ուսանողությանը բարեգործական օգնություն ցուցաբերելու համար	21.12.2005

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԱՇԽԱՏՈՂ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ

1. Բաղդասարյան Գևորգ Երվանդի
2. Գևորգյան Գեղամ Գրիգորի
3. Խաչատրյան Գուրգեն Հայկի
4. Հարությունյան Վլադիմիր Միքայելի
5. Դազինյան Գագիկ Սերգեյի
6. Մարտիրոսյան Ռադիկ Մարտիրոսի
7. Մելքոնյան Աշոտ Ադասու
8. Շահինյան Արամ Արտաշեսի
9. Շուքուրյան Յուրի Հայկի
10. Շուքուրյան Սամվել Կիմի
11. Չուբարյան Էդվարդ Վարդանի
12. Սադյան Աշոտ Սերոբի
13. Սաֆրաստյան Ռուբեն Արամի
14. Սեդրակյան Դավիթ Միքի
15. Օսիպյան Լիա Լևոնի

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ

1. Աբրահամյան Լևոն Հմայակի
2. Ավագյան Ռուբանդ Մամիկոնի
3. Ավետիսյան Արա Սերգեյի
4. Ավետիսյան Պավել Սեդրակի
5. Գասպարյան Սեդա Քերոբի
6. Գևորգյան Էմիլ Սոսի
7. Թռչունյան Արմեն Համբարձումի
8. Խառատյան Ալբերտ Արմենակի
9. Խառատյան Սուրեն Լևոնի
10. Կարայան Համլետ Սուրենի
11. Կիրակոսյան Ալբերտ Ավետիսի
12. Հախումյան Արսեն Ալեքսանդրի
13. Հարությունյան Ռուբեն Միքայելի
14. Դարիբյան Գրիշա Ալեքսանի
15. Մանասյան Ալեքսանդր Սարգսի
16. Սահակյան Արթուր Արտուշի
17. Սիմոնյան Արամ Հրաչիկի
18. Վարդանյան Յուրի Լազարի

ՀՀ գիտության վաստակավոր գործիչներ

1. Ավագյան Արծրուն Արգարի
2. Բաղդասարյան Գևորգ Երվանդի
3. Գաբրիելյան Վազգեն Արշալույսի
4. Գասպարյան Սեդա Քերոբի
5. Գևորգյան Էմիլ Սոսի
6. Հարությունյան Վլադիմիր Միքայելի
7. Դարիբյան Գրիշա Ալեքսանի
8. Մուրադյան Սամվել Պարգևի
9. Շուքուրյան Յուրի Հայկի
10. Չուբարյան Էդվարդ Վարդանի
11. Սադյան Աշոտ Սերոբի
12. Սիմոնյան Արամ Հրաչիկի
13. Վարդանյան Յուրի Լազարի
14. Փանոսյան Գերասիմ Հարությունի
15. Փիրումյան Գևորգ Պետրոսի
16. Քալանթարյան Ժենյա Անդրանիկի
17. Օսիպյան Լիա Լևոնի

ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչներ

1. Էդոյան Հենրիկ Անտոնի
2. Չուգասզյան Լևոն Բաբկենի
3. Աբրահամյան Լևոն Հմայակի

ՀԽՍՀ Պետական մրցանակակիր

1. Ավետյան Կոլյա Թորգոմի

Ուկր. ԽՍՀ Պետական մրցանակակիր

1. Մարտիրոսյան Ռադիկ Մարտիրոսի

ՀՀ Պետական մրցանակակիրներ

1. Ավետիսյան Համլետ Կարոյի
2. Էդոյան Հենրիկ Անտոնի
3. Մկրտչյան Աննա Ֆելիքսի
4. Շուքուրյան Սամվել Կիմի
5. Սադյան Աշոտ Սերոբի
6. Սիմոնյան Հայարփի Մանթաշի

ՀՀ Նախագահի մրցանակակիրներ

1. Ադամյան Զավեն Նիկոլայի
2. Աթաբեկյան Վարուժան Սերգեյի
3. Առաքելյան Վալերի Բեյբուդի
4. Առաքելյան Վալերի Միքայելի
5. Ավետիսյան Համլետ Կարոյի
6. Բաբաջանյան Արսեն Ժորայի

7. Բաղդասարյան Գևորգ Երվանդի
8. Բարսեղյան Մանուկ Գևորգի
9. Բարսեղյան Վանյա Ռաֆայելի
10. Գրիգորյան Մարտին Գևորգի
11. Գևորգյան Գեղամ Գրիգորի
12. Էդոյան Հենրիկ Անտոնի
13. Թռչունյան Արմեն Համբարձումի
14. Խաչատրյան Համբարձում Գուրգենի
15. Խառատյան Սուրեն Լևոնի
16. Կարագուլյան Գրիգոր Արտաշեսի
17. Կիրակոսյան Ալբերտ Ավետիսի
18. Հակոբյան Նունե Հրանտի
19. Հակոբյան Տիգրան Ստեփանի
20. Հայրապետյան Սերգեյ Սուրենի
21. Հարությունյան Վլադիմիր Միքայելի
22. Մամասախլիսով Եվգենի Շամիլի
23. Մարգարյան Հակոբ Լևոնի
24. Մարգարյան Շիրազ Ալեքսանդրի
25. Մորոզով Վլադիմիր Ֆյոդորի
26. Մուղնեցյան Վռամ Ներսեսի
27. Ներկարարյան Խաչատուր Վլադիմիրի
28. Ներսեսյան Արմեն Պետրոսի
29. Շահնազարյան Գոհար Էմիլի
30. Պետրոսյան Համլետ Լենսերի
31. Սահարյան Արամ Ազատի

32. Սադյան Աշոտ Սերոբի
33. Սարգսյան Հայկ Արայի
34. Վարդանյան Արշակ Լյուդվիգի
35. Վարդևանյան Պողոս Հովհաննեսի
36. Տոնոյան Շուշանիկ Արմենի
37. Օհանյան Վադիմ Ռոբերտի

ՀՀ վաստակավոր մանկավարժներ

1. Գրիգորյան Մարատ Արիսի
2. Հարությունյան Նազիկ Կարապետի
3. Մելիքյան Գուրգեն Վրեժի
4. Մուրադյան Ամալյա Գրիգորի
5. Չուբարյան Անահիտ Արտաշեսի
6. Քիլիմջյան Գևորգ Ստեփանի

ՀՀ վաստակավոր իրավաբաններ

1. Դանիելյան Գևորգ Բալաբեկի
2. Ղազինյան Գագիկ Սերգեյի
3. Գաբուլյան Արա Հարությունի

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աղապյան Ժ. Ա., Ղազարյան Է. Մ., Ղարիբջանյան Լ. Պ., Մարտիրոսյան Ռ. Մ., «Երևանի պետական համալսարանը երեկ, այսօր, վաղը», Եր., Երևանի համալսարանի հրատ., 1999:
2. Ասլանյան Վ. Ս., Հայրապետյան Հ. Գ., «Երևանի պետական համալսարանի գիտական գրադարան», Եր., Երևանի համալսարանի հրատ., 2001:
3. Ավագյան Կ. Ա., «Երևանի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերությունը 1922 – 1972 թթ.», Եր., «Լուսաբաց» հրատ., 2009:
4. Ենգոյան Փ. Ի., «Երևանի համալսարանը Մեծ հայրենականի տարիներին», Եր., Երևանի համալսարանի հրատ., 1975:
5. «Երևանի պետական համալսարան», խմբ. Հ. Ի. Աղամյան և ուրիշներ, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1970:
6. «Երևանի պետական համալսարան», խմբ. Գ. Ա. Ղարիբջան և ուրիշներ, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1981:
7. «Երևանի պետական համալսարան», Եր., ԵՊՀ հրատ., 2009:
8. «Երևանի պետական համալսարան. 2017 – 2018 ուստարվա գործունեություն», Եր., ԵՊՀ հրատ., 2017:
9. «ԵՊՀ Կենսագրական հանրագիտարան», Եր., ԵՊՀ հրատ., 2009:
10. Ղարիբջանյան Լ. Պ., «Երևանի պետական համալսարանը (1920 – 1930 թթ.)», Եր., «Միտք» հրատ., 1965:
11. Ղարիբջանյան Լ. Պ., «Երևանի պետական համալսարանը (1919 – 1930 թթ.)», Եր., Երևանի համալսարանի հրատ., 1994:
12. Մաղալյան Վ. Ս., «Երևանի պետական համալսարանը վավերագրերում», Եր., ԵՊՀ հրատ., 2009:
13. Մաղալյան Վ. Ս., «Սրտի խոսք», Եր., ԵՊՀ հրատ., 2009:
14. Մաղալյան Վ. Ս., «Գրական-մշակութային կյանքը Երևանի համալսարանում», Եր., ԵՊՀ հրատ., 2010:
15. Մաղալյան Վ. Ս., «Երևանի համալսարանի հոբելյանները», Եր., ԵՊՀ հրատ., 2011:
16. Մանուկյան Ժ. Ս., « Երևանի պետական համալսարանը Արցախյան գոյապայքարում», Եր., ԵՊՀ հրատ., 2011:
17. Մովսիսյան Ա. Խ., «Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության (X – XV դարեր)», Եր., Հայպետուսմանկհրատ, 1958:
18. Гарибджанян Л.П. “Ереванский государственный университет”, Ер., 1971.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայ մշակույթի և դպրության նշանավոր կենտրոնները	14
Երևանի համալսարանի հիմնադրումը	20
Համալսարանի վերաբացումը	30
1919 – 1928 թթ. համալսարան հրավիրված դասախոսներ	32
ՀՍԽՀ պետական համալսարանի վերակառուցումը	49
Համալսարանը ստալինյան բռնաճնշումների տարիներին	51
Համալսարանը Հայրենական մեծ պատերազմի և հետպատերազմյան տարիներին	66
ԵՊՀ-ն պատմական հիշողության կրող ու ազգային ազատագրական պայքարի առաջամարտիկ	82
Կրթական բարեփոխումները ԵՊՀ-ում	114
Համալսարանի անվանափոխությունները և ֆակուլտետների փոփոխությունները 1919 – 1930 թթ	126
«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2018 թ. կառուցվածքը	128
ԵՊՀ երախտավորներ	130
Գիտական ձեռքբերումները ԵՊՀ-ում	140
Միջազգային համագործակցությունը	204
Հրատարակչությունը	212
ԵՊՀ գիտական գրադարանը	222
ԵՊՀ պատմության քանդարանը	226

ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունը	232
Ուսանողական կյանքը համալսարանում	234
Ֆիզիկական դաստիարակությունը և սպորտը ԵՊՀ-ում	250
ԵՊՀ ռեկտորներ	254
ԵՊՀ այցելած անվանի հյուրեր	262
ԵՊՀ պարգևներ	271
ԵՊՀ պատվավոր դոկտորներ, պրոֆեսորներ, բարերարներ	276
ԵՊՀ-ում աշխատող ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ և թղթակից անդամներ, Գիտության և մշակույթի վաստակավոր գործիչներ, ՀՀ Նախագահի և Պետական մրցանակակիրներ, վաստակավոր մանկավարժներ և իրավաբաններ	285
Օգտագործված գրականություն	288
Բովանդակություն	289

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Կազմի ձևավորող՝ Էդիկ Պողոսյան
Համակարգչային ձևավորող և
նկարների մշակող՝ Շուշան Դադիկյան

Չափսը՝ 64 x 90 1/8
Թուղթը՝ կավճապատ, անփայլ
Տպագրական 36 մամուլ
Տպաքանակը՝ 150 օրինակ

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1

Տպագրվել է

